



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 2-3 1897

ՓԵՏՐԻԱՐ-ՄԱՐՏ

1897 № 2-3

ԻՆՆԵՐԱՐԳ ՏԱՐԻ

երես

|                               |     |                                                                                                                     |
|-------------------------------|-----|---------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1 ՄՈՊԱՍԱՆՆԻՑ ԴԵՄԻՐՃԵԱՆ . . .  | 183 | Միաշուկիւն (պատմածք):                                                                                               |
| 2 ՆԱԴՍՈՆՆԻՑ ՏԼՐ-ԳԷՈՐԳԵԱՆ, Յ.  | 190 | Քրիստոնէութիւն (պոէմա):                                                                                             |
| 3 ԱԴԵԼԵԱՆՑ, Ա. . . . .        | 197 | Տգիտութեան զոհեր (վերջ):                                                                                            |
| 4 ՇԱՆԹ . . . . .              | 252 | Փիլիսոփաները, Կեանք տուր ինծի,<br>Սերինադ մը, Սրինգը (բանաստ.):                                                     |
| 5 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ. . . . . | 257 | Խորատակած կեանք (վէպ շար.):                                                                                         |
| 6 ՊՐՈՒՏԿՈՎՆԻՑ—ՅԱԿՈԲԵԱՆ, Յ.    | 283 | Եթէ դու տեսնես (բանաստ.):                                                                                           |
| 7 ԲԱԲԿԵՆՑ, Գ. . . . .         | 284 | Նորեկ (վէպ, շարունակ.):                                                                                             |
| 8 ԲԵՕՐՆՍՈՆՆԻՑ-ՀԵՂ. ՆԱԲԱԹԵԱՆ   | 303 | Արձաի բոլն (դրոշմ):                                                                                                 |
| 9 ԶԱՔԱՐԵԱՆՑ, ԹԱԴԷՈՍ, ԲԺ. . .  | 307 | Ամուսն. առողջապահութիւն (վերջ):                                                                                     |
| 10 ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԴՐԻԳՈՐ. . . . . | 319 | Ռուսիայի արդիւնաբերութիւնը և<br>գրամական ունեւորմը:                                                                 |
| 11 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, Ա. . . . .    | 326 | Լեզական դրոշմներ                                                                                                    |
| 12 ԱՂԲԱԼԵԱՑ, Ն. . . . .       | 332 | Փափաղ. «Տուրիտի վիշտութիւն»:                                                                                        |
| 13       » . . . . .          | 337 | Ինգրահամի «Աղինալի նամակները»:                                                                                      |
| 14 Թ. Տ.-Մ. . . . .           | 340 | «Կենդան. բնազդն և հասկացողու-<br>թիւնը» «Զրուցներ բնութեան մեծ<br>ու ահեղ երեւոթիւների մասին»:<br>«Զարմանալի ուրդ»: |
| 15 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն. . . . .       | 344 | «Վալրի կարասներ», «Աչի. ու Մար-<br>գարիտը», «Գոհարիկն ու Աստղիկը»:<br>Ժամանակ. տեսութիւն. Հալկ. ինդ.:               |
| 16 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, Ա. . . . .    | 350 | Կովկ. կառավարչ. լիազօրութիւնը:                                                                                      |
| 17 Ա. Ա. . . . .              | 368 | Գրական արարեսկ:                                                                                                     |
| 18 ԼՈՒՍԻՆԻ. . . . .           | 374 | Թատրոնի շուրջը, XI, XII.                                                                                            |
| 19 ՍԵԻԵԱՆ, Հ. . . . .         | 381 | Գործերի ընթաց. Կրետէի խնդրում:                                                                                      |
| 20 Ա. Ա. . . . .              | 385 | Զանազան լուրեր:                                                                                                     |
| 21 ԽՄԲ. . . . .               | 393 |                                                                                                                     |


Տեղեկատու եւ Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՈՒ

Типография М. Д. Ротинианна, Гол. пр., д. № 41.

1897



# Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 2 — 3 1897

ՓԵՏՐԻԱՐ—ՍՅՐՏ

1897 № 2—3

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1897

Дозволено цензурою. Тифлисъ, 17-го Февраля 1897 г.

## ՄԻԱՅՆՈՒԹԻՒՆ

Գի ԴԸ ՄՈՊԱՍԱՆԻ.—Թարգմ. Դ. Դեմիրճեանի

Ամուրիները մի շրջանում ուրախ ճաշկերոյթից յետոյ, վաղեմի բարեկամս ասաւ ինձ.

—Կ'ուզե՞ս մի անցնենք Ելիսեան դաշտերը <sup>1)</sup>:

Եւ մենք ելանք գնացինք հանդարտ քայլերով երկար ծառուղիով, որ ձգւած էր թեթև-սաղարթապատ ծառերի մէջ: Բացի այն մշտական ու խուլ զղրկոցից, որ բարձրանում էր Պարիզեան անընդհատ շարժողութիւնից, ուրիշ ձայն-ծպտուն չկար: Թարմաշունչ հովը փչում էր մեր երեսին եւ թուխ երկնքի վրայ դրիւ էր դալիս անթիւ աստղերի ոսկեգոծ փոշին:

Ընկերս սկսաւ խօսել.

—Ինչիցն է՝ չգիտեմ, բայց գիշերը այստեղ ազատ եմ շնչում աւելի, քան թէ մի ուրիշ տեղ: Միտքս կարծես աճելիս լինի, բուսկներ կան, երբ խելքս լուսաւորւում է լոյսի յանկարծակի պայծառ փայլատակումից եւ այդ վայրկեաններին ինձ թւում է, թէ մենք դուշակում ենք կեանքի ասուածային գաղտնիքը: Բայց յանկարծ պատուհանը գոցւում է... Եւ վերջ: Ծառերի արանքում մէկ մէկ աչքի էին ընկնում զոյգ-զոյգ սուերներ. մենք անցկացանք մի նստարանի մօտով. նրա վրայ իրարու մօտ մի զոյգ նստած միախառն ունի մի մութ բիծ էր դառնում:

<sup>1</sup> Այդպէս է կոչվում Պարիզի ամենանշանաւոր բուլւարը, մինչ երկու վերստ երկարութեամբ, շրջապատւած բազմաթիւ ծառուղիներով:

Բարեկամս շարունակեց խօսել.

— Խեղճ մարդիկ: Ոչ թէ զգուհում, այլ անսահման կերպով խղճում եմ նրանց: Մարդկային կեանքի բոլոր զաղանիքներից ես միայն մէկին հասաց. մեր գոյութեան տանջանքը այն է, որ մենք միշտ մենակ ենք, և այն, ինչ որ մենք անում ենք, այդ միայնութիւնից խուսափելու համար ենք անում: Ահա նստարանների վրայ շարուած այս սիրահար զոյգերը բաց երկնքի տակ մեզ և միւս բոլոր արարածների նման հնար են որոնում խուսափելու իրանց միայնութիւնից, բայց նրանք մենակ են և ընդմիշտ մենակ էլ կը մնան. մենք նոյնպէս:

Մարդկանցից ոմանք այդ աւելի սաստիկ են զգում, ոմանք էլ աւելի թոյլ, այ թէ ինչ:

Քանի ժամանակ է, որ ես ընկել եմ մի անտանելի տանջանքի մէջ. ես իմացայ, հասկացայ իմ սարսափելի միայնութիւնը, և գիտեմ, որ ոչ մի բան—հասկանում ես արդեօք—ոչ մի բան աշխարհիս մէջ նրան չի կարող վերջ տալ: Մեր բոլոր աշխատանքը, արտի բռնկումը, մեր շրթունքների բոլոր հրաւէրը՝ ի զուր և դատարկ բաներ են—մենք միշտ մենակ ենք:

Ես քեզ բերի այստեղ զբօսնելու, որ չգնամ տուն—բնակարանիս միայնութիւնը ինձ համար անտանելի է հիմա: Բայց դեռ այս ոչինչ: Ես խօսում եմ, դու ինձ ականջ ես դնում, մենք քայլում ենք երկուսով, իրար հետ, միասին, բայց մեզանից ամեն մէկը մենակ է: Սրդեօք դու ինձ հասկանում ես:

«Նրանի աղքատաց հոգւով» ասում է ս. Գիրքը: Դրանք չեն կորցրել բաղդաւորութեան ուրաւականը: Նրանք չգիտեն մեր միայնութեան տանջանքը, նրանք ինձ նման կեանքի ճանապարհի վրայ չեն զառանցում, մարդկանց հետ միայն արմուկներով դիպչելով, առանց մի այլ ուրախութեան, բացի եսական այն բաւականութիւնից, որ հասկանում ես, տեսնում ես, նախատեսնում ես և անվերջ տանջում ես քո մշտական միայնութեան գիտակցութիւնով:

Նրաւի դու կարծում ես, որ ես խելագարեցի ձշմարիտ:

Բայց լսիր ինձ: Հէնց այն ժամանակից, երբ ես զգացի իմ գոյութեան միայնութիւնը, ինձ թւում է, որ ես օր օրի վրայ աւելի ու աւելի եմ խորասուզւում մի ինչ որ անդունդի մէջ, որի ոչ ավերն եմ

տեսնում, ոչ ծայրը և որից գուցէ հէնց անցք էլ չկայ զուրս գալու: Ես գնում եմ նրա միջով, բայց ոչ հետս, ոչ էլ մօտս կայ մի կենդանի արարած: Այդ անդունդը—մեր կեանքն է: Երբեմն լսում եմ աղմուկ, ձայներ, աղաղակ... Ես խարխալելով նրանց մօտ եմ շտապում: Բայց թէ նրանք որտեղից են գալիս՝ ճիշտը երբէք չեմ կարողանում իմանալ. ես ոչ ոքին չեմ հանդիպում, ինձ շրջապատող խաւարի մէջ մի ուրիշ մարդու ձեռ չեմ կարողանում գտնել:

Կային մարդիկ, որ երբեմն հասկանում էին այդ տանջանքը: Միւսսէն բացականչում է.

Ո՞վ է գալիս: Խնձ է կանչում: Մարդ չը կայ:

Մենակ եմ ես՝ ինչպէս և միշտ:—Ժամն հնչեց...

Օ, միայնութիւն! Օ, աղքատութիւն!

Բայց նրա մէջ այդ մի փութանցիկ կասկածանք էր և ոչ թէ ստոյգ մի բան, ինչպէս իմ մէջ: Նա բանաստեղծ էր, տեսիլներով ու անուրջներով էր իր կեանքը լցնում. նա ինձ նման երբէք կատարեալ մենակ չէ եղել:

Գուստաւ Ֆլորբերը, աշխարհի այս մեծ անբախտը, որովհետեւ սակաւաթիւ մեծ նախատեսողներից էր, գրում էր իր ընկեր—կնոջը հետեւեալ հիասթափեալ խօսքերը. «Մենք բոլորս անապատի մէջ ենք, ոչ ոք ոչ ոքի չի հասկանում»:

Այո, ոչ ոք ոչ ոքի չի հասկանում. ինչ էլ որ մտածէք, ինչ էլ որ ասէք, ինչ էլ որ անէք—ոչ ոք ոչ ոքի չի հասկանում: Նրկիրը դիտէ թէ ինչ է ստեղծագործւում այն աստղերի վրայ, որ այն հեռաւոր տարածութեան մէջ ցրած են հրաշէկ հատիկների նման, այնպէս հեռու, որ նրանց միայն ամենաանշան մասն ենք տեսնում, երբ նրանց փնայած անթիւ միւս խմբերը կորչում են անհունութեան մէջ: Կամ գուցէ հէնց այդ աստղերը այնքան մօտ են իրարու, որ մի ամբողջութիւն են կազմում, մի մարմնի մոլեկուլների նման:

Եւ ինչպէս որ երկիրը չգիտէ թէ ինչ է ստեղծագործւում այն աստղերի վրայ, այնպէս էլ մարդս չգիտէ թէ ինչ է կատարւում մի այլ մարդու մէջ: Մենք աւելի հեռու ենք մէկմէկուց քան այդ ջահերը, իսկ որ գլխաւորն է— իրարից անջատ ենք նրա հա-

մար, որովհետև միտքը անյատակ է: Եւ ի՞նչ կայ աւելի սարսափելի էակների այդ շարունակ դիպչելուց, երբ հնար չկայ նրանց հետ միանալու: Մենք այնպէս ենք սիրում, որ կարծես իրարու մօտ շղթայւած լինենք. ձեռներս մեկնում ենք, չենք կարողանում միանալ: Մեզ կրճում է միանալու տանջող հարկազրու՜մ: Բայց մեր բոլոր ջանքերը իզուր են, բռնկումները անպտուղ, միաւորումները անօգուտ, գրկախառնումները անուժ, փաղաքշանքները դատարկ: Մենք ուզում ենք միանալ, բայց մեր բոլոր այդ ձգտումների ժամանակ մենք միայն բաղխում ենք մէկմէկու: Ես ինձ մենակ եմ զգում տւելի այն ժամանակ, երբ սիրտս տալիս եմ մի այլ մարդու. այդ ժամանակ ինձ այդ անկարելիութիւնը երևում է աւելի ակնյայտնի: Ահա նա—այդ մարդը,—նա նայում է ինձ իր պարզ աչքերով. բայց նրանց չեմ, նրա հոգին, ես չգիտեմ: Նա ինձ լսում է: Բայց նա ի՞նչ է մտածում: Այո, ի՞նչ է մտածում: Գու՜շեմ հասկանում այս տանջանքը: Գուցէ նա ինձ ստիճում է, արհամարհում է, ծիծաղում է իմ վրայ: Նա իմ բոլոր խօսքերը կշռաւորում է, ծաղրում է, մեղադրում է ինձ, ինձ մի հասարակ բանի կամ չիմարի տեղ է դնում: Ի՞նչպէս իմանամ՝ նա ի՞նչ է մտածում: Ի՞նչպէս իմանամ, արդեօք սիրում է նա ինձ, ինչպէս ես եմ նրան սիրում, կամ ի՞նչ է անցնում նրա փոքրիկ կրոր զլխով: Ինչ սարսափելի դաղտնիք է—մի այլ արարածի անյայտ միտքը, ծածուկ և ազատ միտքը, որին ոչ հասկանալ կարող ես, ոչ ուղղել, ոչ սանձահարել, ոչ էլ յաղթել:

Իսկ ես... Ինչքան էլ ուզում եմ նւիրւել, բաց անել հոգուս բոլոր դռները—այդ ինձ անկարելի է լինում: Բայց դարձեալ չատակում, հէնց խոր յատակում՝ «ես»-իս գաղտնի յատակը մնում է, ուր ոչ ոք չի թափանցում: Ոչ ոք չի կարող բանալ նրան ու մտնել այնտեղ, որովհետև ոչ ոք նման չէ ինձ և ոչ ոք ոչ ոքի չի հասկանում:

Բայց գոնէ այս բոպէիս արդեօք դու ինձ հասկանում եմ: Գու՜ ինձ խելագարի տեղ ես դնում: Գու՜ դիտում ես ինձ. դու զգուշանում ես ինձանից: Գու՜ քեզ հարց ես աւլիս. ի՞նչ է պատահել սրան: Բայց եթէ երբ և իցէ քեզ կը յաջողւի հասկանալ իմ այս սոսկալի և նրբութեան հասցրած տանջանքը, ո՛հ, այն ժամանակ արի՛

մօտս, որ միայն ասես. «ես քեզ հասկացայ», և ես զոնէ մի վայրկեան երջանիկ կը լինեմ:

Մանաւանդ կանայք ինձ աւելի սաստիկ են զգալ տալիս մենակութիւնս:

Վայ ինձ: Նրանք ինձ որքան են տանջել. նրանք տղամարդկանցից աւելի յաճախ իմ մէջ ունայն յոյսեր էին զարթեցնում, թէ ես մենակ չեմ:

Երբ սկսում ես սիրել, թուում է թէ ընդարձակում ես ու քեզ տիրապետում է ոչ-մարդկային մի երջանկութիւն: Գիտե՞ս ինչից է: Գիտե՞ս արդեօք թէ որտեղից է ահագին բաղդաւորութեան այդ զգացումը: Հէնց միայն նրանից է, որ երեակացում ես թէ արդէն էլ մենակ չես: Երեւում է թէ միայնութիւնը, մարդկային էակի օտարանալը վերջացաւ: Ի՛նչ խղճալի մոլորութիւն:

Կինը մեզնից աւելի խիստ է տանջւում սիրոյ այդ մշտական պահանջից, սիրոյ, ու կրծում է մեր միայնակ սիրտը. հէնց այդ կինը ցնորքի զլիաւոր սուտն է, որ կայ:

Քեզ պէտք է որ ծանօթ լինեն այն ժամերը, երբ երես երեսի ես տալիս այդ երկարահեր, գերող արարածի հետ, որի միայն հայեցքները բաւական են, որ մեզ խելքից հանեն: Այնպէս է թւում թէ ահա ես ու նա ի մի կը ձուլւենք: Մի անմիտ ուրախութիւն մշուշապատում է մեր խելքը: Մեզ ընդգրկում է մի հրաշալի իլլիւզիա: Բացց այդ միայն թւում է. և մի շաբաթ սպասելուց, յոյսերից և դատարկ ուրախութիւնից յետոյ, ես աւելի շատ, քան թէ առաջ, ինձ մենակ եմ զգում:

Ամեն մի համբոյրից, ամեն մի գրկախառնումից յետոյ միայնութիւնը զարգանում է: Եւ այդ ինչպէս սարսափելի է, ինչպէս տանջում է: Բանաստեղծ Սիւլլի Պրիւզոմը ասում է.

Մեր զրգւանքները — սին բռնկումներ են:

Հասնելն միացման մեր հոգիների

Թոյլ շաղկապովը մեր մարմինների՝

Խղճալի սիրոյ անգոր ջանքեր են:

Իսկ յետոյ մնան բարեւա: Վերջացաւ ամեն ինչ: Մենք հազիւ կը ճանաչենք այն կնոջը, որը մի վայրկեան մեզ համար ամեն ինչ

էր և որի ծածուկ և ի հարկէ ստոր միտքը մինչև անգամ չգիտէինք էլ:

Մինչև անգամ այն րուպէներին, երբ մեզ թւում է, թէ մեր արարածների գաղտուկ համաձայնութեան, մեր ցանկութիւնների և բոլոր ձգտումների կատարեալ խառնաշփոթութեան մէջ, մենք թափանցել ենք նրա հոգու հէնց խորքը—նրա խօսքը, պատահաբար ասած մի խօսքը բաց է անում մեր ինքնախաբէութիւնը և գիշերային փայլակի պէս լուսաւորում է մեր ու նրա մէջ բացւած անդունդը:

Բայց և այնպէս, սիրած կնոջ հետ անցկացրած այդ երեկոններից աւելի լաւ բան չկայ—այն լռիկ երեկոններից, երբ հէնց միայն նրա ներկայութեամբ քեզ համարեա երջանիկ ես զգում: Աւելի էլ չպահանջենք, որովհետև երբ և իցէ երկու արարածներ իրար հետ չեն միախառնուում:

Իսկ ինչ ինձ է վերաբերում, ես հիմա ամենքի համար հոգուս փականք եմ դրել: Ես ոչ ոքի չեմ ասում թէ ինչին եմ հաւանում, ինչ եմ մտածում կամ ինչ եմ սիրում: Վիտենալով, որ ես դատապարտւած եմ սարսափելի միացնութեան, անտարբեր եմ նայում ամեն բանի վրայ և իսկի էլ չեմ բացւում: Խնչ գործ ունիմ ուրիշների կարծիքների, վէճերի, բաւականութիւնների և հաւատալիքների հետ: Բաժանելու ոչինչ չունենալով մարդկանց հետ՝ ոչ մի բանի չեմ մասնակցում: Իմ անտեսանելի միտքը փնտում է անհասկանալի: Սովորական հարցերի դէմ ես ունիմ շատ հասարակ փրագներ և ժպիտ, երբ ես չեմ ուզում պատասխանել:

Արդեօք դու ինձ հասկանում ես:

Մենք ծառուղիով անցանք մինչև յաղթական կամարը:

Ասողերը թեքւեցին դէպի Համաձայնութեան հրապարակը: Նա խօսում էր հանդարտ և էլի ուրիշ շատ բան տասց, որ ես մինչև անգամ մոռացայ:

Վերջապէս նա կանգ առաւ բարձր գրանիտեայ կոթողի առաջ, որ կանգնած էր Պարիզեան մայթի վրայ: Ասողերի ցոլցւանքից հազիւ նկատուում էր այդ աքսոր բերած արձանի եզիպտական կիսադէմքը, որի կողերին տարօրինակ նշաններով զօհադրւած է նրա

երկրի պատմութիւնը: Եւ յանկարծ ձեռքի շարժումով բարեկամս  
ցոյց տւեց այդ կոթողը և բացականչեց.

—Մենք բոլորս—այդ տեսակ քարեր ենք:

Եւ նա հեռացաւ, չասելով էլ ուրիշ ոչ մի խօսք:

Արդեօք նա հարբած էր, խելագար էր, թէ իմաստուն, այդ  
ես հիմա էլ չգիտեմ: Երբեմն ինձ թւում է, թէ նա ճշմարիտ էր,  
երբեմն էլ—թէ նա խելագարուել էր:

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒՅԻ

(ՊՕԷՄԱ)

Ս. ՆԱԴՍՈՆԻ. — Թարգմ. Յակոբ Տէր-Գէորգեանցի

Дѣла давно минувшихъ дней,  
Преданья старины глубокой.  
Пушкинъ „Русл. и Людм.“.

### I

Ննջում է գոռոզ Հռոմը մէզի մէջ,  
Ճոխ աջգիների սուերների տակ.  
Լհռռ, կարգով շարւած պալատներ անվերջ  
Խաւարում անդորր քընած են անյագ:  
Կէս գիշերային գարնան հանգիստը  
Պատել է քնէած հրապարակները,  
Լուսնի քմահաճ, վառվռուն ցոլքը  
Տարուբերում է ջրերի միջին.  
Եւ Տիրոս գետը պսպղուն շերտով  
Մութ ափերի մէջ վազում է առաջ,  
Եւ հեռն փախչող ալեաց հոսանքով  
Մտախոհ սահում, հանում է շառաչ:  
Խաչելութիւնը ձեռքին պինդ սեղմած,  
Հին, խոնաւ բանտի պատերի միջին,  
Կրծքի վրայ հանգիստ գլուխը խոնարհած,  
Ննջում է ջահէլ Քրիստոնէութիւն:  
Անօգուտ անցան բոլոր միջոցներ

Անգութ ու դաժան իւր դահիճների.  
 Ահեղ տանջանքներ, անթիւ խոստումներ  
 Նորա հաւատը չը խորտակեցին:  
 Դատաւորները ի վերջոյ նորան  
 Վճիռ կարգացին մօտալուտ մահւան.  
 Բայց առաւօտեան այլ Դատաւորին  
 Վերեւ, երկնքում կը ներկայանայ:  
 Եւ ահա լցած սուրբ ցանկութիւնով  
 Իւր ամբողջ կեանքը երկնին զոհելու,  
 Վստահ անցնում է իւր փշոտ շաւղով,  
 Դառնութեան բաժանին իսպառ քամելու:

Եւ երազում էր հայրենի դաշտեր,  
 Վրաններ կիտրոնի և կաղնիների,  
 Գետի ոլորուն, կապոյտ ծփանքներ  
 Եւ յարկ—ապաստան ջահէլ օրերի:  
 Անցած, զընացած խաղաղ զւարճութիւն  
 Նա ճաշակում է, նա զգում է դարձեալ—  
 Բայց ոչ ափսոսանք և ոչ շփոթութիւն  
 Ձեն զարթեցընում նորա մէջ անցեալն:  
 Ողջ երկրացիին վըրայ նա արդէն  
 Ընտելացել է անտարբեր նայել.  
 Երկրացին բարիք նորան էլ պէտք չէն,—  
 Կեանքում խնայելու ոչինչ չէ մնացել:  
 Նա, յափշտակած երկնացին լուսով,  
 Առանց արցունքի, համարձակ, վստահ,  
 Յաղթեց երկրացին ցանկութիւններին,  
 Խորտակեց շքեղ ցնորքների աշխարհն,—  
 Եւ նա Բրիստոսի և Ասուածային  
 Սեղանի առաջ պատրաստ է զոհել  
 Ամեն բան, ինչով պերճ էր նրա ուղին,  
 Ինչ լոյս էր սփռում նրա ընթացքին:

## II

Գետի եզերքին բարձրացած հպարտ,  
 Ներոնի պալատը քնած է հանդարտ.  
 Շուրջը կանաչած, իբրև ընկերներ  
 Կարգով կան շարւած կաղամախիներ.  
 Եւ անուշաբոյր խաւարի միջին  
 Հանգիստ ու թովիչ շնչում է այգին.  
 Նորա ծառերի հով սուերներում  
 Սառն աղբիւրներ են հանդարտ խոխոջում.  
 Երկինքը անքակ ունի միացրած  
 Հեռու լեռների կեռ ատամները,  
 Եւ մէգը, ինչպէս վերարկու, հագած՝  
 Անշարժ կանգնած են սուրբ անտառները:

Քնած է ամեն ինչ: Տխուր, մտահար,  
 Պատուհանի մօտ, Արինը մի'այն  
 Մռայլ նստած է... Եւ անմխիթար,  
 Ու ծանր մի խոհ վրդովում է նրան:  
 Անհաշտ թշնամի քրիստոնեաների,  
 Անւանի պատրիկ և հերոս փորձւած,  
 Գլուխը խոնարհեց, նման մի սարկի.  
 Ինքնակամ կրքի լծիցը ճնշւած,  
 Կէս գիշերային համր երկնքի տակ,  
 Հեռու ամբոխից և խնճոյքներից,  
 Դարձեալ նոյն խոհը, ինչպէս վառ կրակ  
 Ճնշում է նորա կուրծքը թախծալից:  
 Անհամեստ մի ցնորք շշնջում է նրան  
 Մի երջանկութիւն անդրաշխարհային.  
 Միտքը բերում է առաջ յանդիման,  
 Կրքոտ պատկերներ նրա աչքերին:  
 Եւ գարնանային աղջամղջի մէջ  
 Տեսնում է ահա թանկագին պատկեր,

Աչքեր—լի, վառւած սրբազան յոյսով,  
Եւ ծանօթ դէմքի սիրելի դժեր:

## III

Այն օրից երբ որ այն ջահէլ կոյսին  
Բերին դատելու նորա մօտ բանտից,  
Նորա համր կուրծքը զարթեց վերստին  
Իւր անլուր քնի երկար խաւարից:  
Նրա մէջ գեղիւթիւնն պալատի կեանքի  
Մաքուր զղացմունքներն սպանեց առ ժամայն,  
Բայց սիրոյ լոյսը բեռը յանցանքի  
Պատժաբեր սրով խորտակեց համայն:  
Եւ երբ պալատի և Հոռմի որդին  
Մարիայի վճիռն էր կարգում,  
Անյուն, սենկատ արդէն իւր հողին  
Քրիստոնեայ էր—բայց նա չէր զգում:  
Եւ քարոզներին ղեղ բանտարկեալի  
Նա ազահաբար ականջ էր դնում,  
Եւ հզօր լոյսը մաքուր հաւատի  
Նորա մէջ անջինջ արմատ էր գցում:  
Նախկին օրերի մոլորութիւններն  
Սէրը, հաւատը նրա մէջ յաղթեցին  
Եւ իրանց անբիծ գեղեցիկութիւնով  
Յուզեցին նորա մեծապանծ հողին:

## IV

Արդէն շողշողուն ճառագայթներով  
Կապոյտ երկնքում վառեց արշալոյս,  
Եւ շուրջը հրացայտ, ալեձև շերտով  
Յոլաց, սփռեց սքանչելի մի լոյս:  
Ապա գլուխ անցրած շողերի պսակ՝  
Ջարթեց արևը գետի եզերքից,  
Ի յոյց հանելով սլացճառ սկաւառակ,  
Հսկարտ փայլում է երկնականարից...

Ձարթեց և Հռոմը: Ամբոխը խուճախումբ  
Ուրախ շտապում է ամֆիթէատրոն.  
Եւ խայտաբղէտ շարքերով լեցուն,  
Կրկէսը ամբողջ եռում է, փրփրում:  
Հարուստ զարդարւած օթեակում շքով,  
Իւ ճաճանչափայլ ծիրանին զցած,  
Ներոնը, պճնւած ոսկով, արծաթով,  
Սիրելիներով է շրջապատւած:  
Բայց ջահէլ պատրիկ Ալբինը միայն  
Ճնշւած նոյն խոհից անսփոփ ու անշէջ,  
Հրապուրի: և մռայլ գիշերւայ նման,  
Իւր գեղեցկութեամբ փայլում է նրանց մէջ:

Ամբոխը իրանց նստած տեղերում  
Անհամբեր գոռում, աղմուկ է հանում:

Նշանը տրեց,

Եւ դուռը ժանգոտ օղակների վրայ

Ճւինչով բացւեց:

Իսկոյն կրկէսի հրապարակի վրայ

Կատաղի մի վազը ցատկեց ու անցաւ.

Նորա յետեից համարձակ քայլով,

Խաչելութիւնը ձեռքին, — ներս եկաւ

Տանջակիր կոյսը սպիտակ զգեստով,

Հանդիստ, անվրդով.

Եւ մի վայրկեանում աղմուկ ու շառաչ

Գերեզմանային փոխւեց լուծեան,

Ինչպէս մի պարզ և անխօս հիացման,

Երկնային շքնաղ պատկերի առաջ:

Ալբինը տխուր, գլուխը խոնարհած,

Գունատ, կանգնած էր ինչպէս ուրւական

. . . . .  
. . . . . , . . . . .

Եւ լուռ ամբոխի ականջին յանկարծ  
Հնչեց մի թովիչ, ձայն կախարդական:

## V

«Վերջին անգամ ես բանում եմ  
Իմ զոզոթունն շրթունքներ.  
Ներիր, ó Հում, ես մեռնում եմ  
Քրիստոսի հաւատին ՚ի սէր:  
Եւ իմ մահւան բուռներում  
Ներում եմ դահիճներին,  
Նոցա համար վերջին աղօթք  
Առաքում եմ երկնքին:  
Թափւած արեանս փոխարէն  
Թող չը դատէ նրանց Փրկիչը,  
Եւ իւր մեծ ընտանիքի մէջ  
Ընդունէ Սուրբ Ուսուցիչը:  
Թող պաշտառ ջահ իւր գիտութեան  
Վառէ սառած սրտերում  
Եւ դրախտ սիրոյ ու հաշտութեան  
Սփռէ նոցա մռայլ կեանքում:

Նա լռեց,—սակայն ամբողջ կրկնում  
Թագաւորում էր խորին լուրթիւն,  
Կարծես քարացած նրանց սրտերում  
Զարթեց դէպի նա խիղճ, կարեկցութիւն:

.....

Յանկարծ հանդարտւած  
Ամբոխի դիմաց

Սլբինը կանգնեց հրաշեաց, վեհադէմ,  
Եւ բացականչեց.—«Քեզ հետ կը մե'ռնեմ,  
Օ' Հում, չեմ ծածկիլ, ես Քրիստոնեայ եմ:

Կրկէսը սարսռաց, զղրղաց, սթափւեց,  
 Խիտ, մրրկայոյզ անտառի նման.  
 Գազանը շփոթւած, երկչոտ տատանւեց  
 Եւ ամուր սեղմեց օրհասի զուան:  
 Ահա նա, զաղտնի, զգոյշ, օձի նման,  
 Առաջ է գալիս փորսողին տալով.  
 Ահա մի ոստիւն... և վարդի նման,  
 Հողը շաղախեց, կարմիր տրիւնով:

Հռոմը հրեշային ծաղր ու ծանակով  
 Սուրբ նահատակի դիակը ծաղրեց,  
 Եւ դազանային ծափով, աղմուկով  
 Վերջին աղերսի ձայնը խլացրեց:

1896 թ. Օգոստոսի 20.

Ժընեւ:

## ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԶՈՋԵՐ

Վէպ գիւղական կեանքից

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ)<sup>1)</sup>

### ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գլուխ Ե.

Տարիները արագ-արագ անցնում էին, և Գալուստը դեռ սպասում էր, թէ երբ պիտի Նոյզառը հասունանայ, որ իրան կնութիւն անի: Վերջին ժամանակները սակայն, նա եկաւ այն եղբակացութեան, որ Նոյզառից այլ ևս մի բան յուսալ աւելորդ է:

Ձնայած որ Նոյզառը 17 տարեկան էր արդէն, բայց նորա մէջ կանացիութեան ոչ մի նշան դեռ չէր երևում: Եւ որքան Նոյզառը տարիքով մեծացել էր, այնքան էլ նա բթացել էր, այնքան էլ նա ապուշ, անխելք էր կտրել:

Վառվառը այժմ համոզւած էր, որ Նոյզառը խելքից պակաս է և անուղղելի: Այնուամենայնիւ որքան ծանր, որքան դառն էր նրա համար այդ ճշմարտութիւնը:

Գալուստն ևս տեսնում էր այդ դժբախտ դրութիւնը: Նա հասկանում էր, որ Նոյզառը այսուհետեւ իր համար ոչ թէ մի

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8, 9, 10—11, 12 և 1897 թ. № 1:

մխիթարիչ ու սիրալիր ընկեր է լինելու, այլ մի ցաւ ու կրակ է Ո՞վ գիտէ ինչեր է բերելու այդ աղջիկը նրա գլուխը...

Փալուստը նրա վրայ դեռ չէր նայել իբրեւ կողակցի վրայ։ Նոյզառը նրա տանը աչնպէս էր, ինչպէս մի որբ աղջիկ, որին վերցրել են պահելու, կամ ինչպէս տան երեխաներից մէկը։ Փալուստը դեռեւս իւր հարսի հետ ոչ մի անգամ ամուսնական սիրային խօսակցութիւն կամ խաղեր չէր ունեցել, երբէք նրա հետ չէր առանձնացել, գէթ մի րոպէ իւր սիրային զգացմունքներին նւիրելու։ Բայց անհա, նա մի գիշեր վճռեց առանձնանալ Նոյզառի հետ, նրա մասին բոլորովին ամփոփ դադափար կազմելու նպատակով։ Վառվառը չկարողացաւ համոզել Նոյզառին Փալուստի մօտ քնելու։ Նա ստիպւած բռնեց հարսի կռնից, քաշեց իր յետեւից Փալուստի մօտ, իսկ ինքը դուրս եկաւ։ Փալուստը երիտասարդ կնոջը գիրկն առաւ։ Սակայն որքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ տեսաւ, որ աղջիկը նրան բոլորովին չէ հասկանում։ Նոյզառը դէպի նրա զգացմունքների արտայայտութիւնները վերաբերւում էր կատարեալ սառնութեամբ և անտարբերութեամբ։ Նա ինչպէս մի երեխայ, չէր հասկանում այդ ամենը և նոյն իսկ Փալուստի սիրային զրոյցները։ Երբեմն նա արտասանում էր բոլորովին անմիտ ու անկապ պատասխաններ։

Նոյզառը կարճ միջոցից յետոյ կամք յայտնեց հեռանալու ամուսնու մօտից։ Փալուստը սկզբում ուզեց ստիպել նրան մնալու, բայց յետոյ խղճալով, զիջեց։ Նոյզառը զնաց Վառվառի մօտ քնելու։

Եւ այդպէս սարիներով սպասող ամուսինը չարժանացաւ այն բաւականութեան, որ փափագում էր նա ձեռք բերել այդ գիշեր, իւր ութամեայ ամուսնութեան մեղրամսի առաջին գիշերը... Յուսահատուեց Փալուստը, ձեռքը գլխին խփեց և ինքն իրան շշնջաց։

— Վայ ինձ, կորած եմ... Մովսէսին չլսեցի. նա ասիւր ասում էր, թէ դա Մատիի աղջիկն է, հօր նման կը լինի. չլսեցի... անի...

Փալուստը դրանից յետոյ վճռեց բոլորովին հրաժարւել Նոյզառից, մանաւանդ երբ լսեց՝ թէ Նոյզառը իւր անցկացրած գիշերի մասին աղբիւրի մօտ բոլոր աղջիկներին պատմել է։

Օր օրի վրայ այդ միսքը լաշն ծաւալ էր ստանում և ամենայն սաստկութեամբ պաշարում Գալուստին: Շաբաթներով շարունակ նրա գլխում մի հարց էր պտտում. բաժանւե՞լ Նոյզառից, թէ ոչ: Հարկաւոր էր արիութիւն, վճռականութիւն և կայունութիւն, խոր արմատ առած աւանդութեան հակառակ գնալու համար: Բայց ուրիշ ի՞նչ ելք էր մնում ազատելու այդ ցանցից:

Սաստիկ ճնշող և վհատեցնող էին Գալուստի համար այդ մտածմունքները: Նա մինչև վերջը չկարողացաւ իր մէջ պահել անխուսափելի հարցի պատճառող մտատանջումները և ահա մի օր նա իր սրտինը բաց տրաւ Վառվառի առաջ:

—Հարս, ասաց նա. քեզ մատաղ, դու ինչ խորհուրդ ես տալիս: Ես էսպէս չեմ կարող մնալ. Նոյզառը ինձ համար մի ցաւ ու կրակ է դարձել և միւսնոյն ժամանակ մեր տան անունը խաչառակել: Խմ խելքիցն էր, թէ ինչիցն էր, էդ մնաց. եղածը եղել պրծել է. հիմա մի ճար պիտի անենք. իմ վերջը ինչ կը լինի, եթէ էսպէս մնալու լինեմ: Ես ասում եմ խնամի Գրիգորին կանչենք և ասենք, թէ ձեր աղջիկը մեզ համար հարսնութիւն անող չի. ասենք թէ նա բոլորովին անխելք է, խելագար է և խընդրենք, որ իր ապրանքը յետ վերցնի: Աղջկաց վրայ ինչ որ ինձ տւել են, բոլորն էլ յետ կը տամ, միայն թէ ես ազատեմ նրանից և մի կերպ իրաւունք ստանամ ինձ համար մի նոր կնիկ առնելու: Հը, հարս, ի՞նչ ես ասում, լաւ չի լինիլ:

—Ել ուրիշ ի՞նչ ճար կայ. հէնց էդ է, որ ասում ես: Եթէ դու չես ուզում որ կենքդ սև անցնի, պիտի էդպէս անես. Նոյզառից բաժանես և նորից կնիկ տանես. հասած, խելօք, կարգին աղջիկ տանես:

—Ձան, հարս, ուրախ եմ, որ դու իմ մտքինի հետ համաձայն ես. դժւար է, շատ դժւար է, երբ միշտ կարծում ես, թէ ամենքն էլ քեզ զրա համար կը մեղադրեն: Եդ անիծած աղջկան տանելու համար խաչառակւել եմ զիւղում, հիմա էլ պիտի նրանից բաժանեմ ու էլի խալխի բերանի զրոյցը դառնամ: Բայց երբ տեսնում եմ, որ մի մարդ ինձ հետ մի խօսքի է, ուսերը չի շարժում, էն ժամանակ ես սիրտ եմ առնում: Վնաս չունի, թող թուք ու մուր ընդունեմ, միայն թէ ինձ համար մի կարգին կնիկ առնեմ:

Վա իմ սիրտը չի՞ ուզում, որ կնկանս հետ ասեմ, խօսեմ, ծիծաղեմ. սկսեալ չի՞մ ուզում երախաներ ունենալ, նրանցով ուրախանալ: Երեսունից անց տղամարդ եմ. էլ երբ ինձ համար մի տղայ պիտի ծնւի, որ գայ ջանիս հասնի և ինձ ձեռք հասցնի: Էդ մի կողմից, հարս ջան. միւս կողմից քեզ եմ խղճում, երբ տեսնում եմ, որ էդ խելագարի ձեռքին մնացել ես եսիր 1):

—Այո, Գալուստ եղբայր, տանջւել եմ Նոյզառի ձեռքին, բայց քեզ չեմ ասել. չեմ ասել, որ քո սիրտը չկոտրեմ: Հիմա որ սրտիդ ցաւը իմ առաջ բաց ես արել և ուզում ես էս վիճակից ազատուել, էն ժամանակ, իհարկէ, ես էլ կուզեմ, որ դու բաժանւես Նոյզառից և նորից կնիկ տանես: Գրիգոր խնամու՛ն կանչենք և էս բանը ասենք նրան:

—Նառ լաւ. քրոջս ու փեսիս էլ կը յայտնենք. տեսնենք նրանք ինչ են ասում. շատ մարդկանց խորհուրդը լաւ կը լինի:

Վառվառը իմաց տւեց այդ մասին իր տալին և նրա ամուսնուն ու ցանկացաւ իմանալ նրանց կարծիքը:

—Հալա նոր էք էդ բանը ուզում անել, դուքեց Անուշկան անբաւականութիւն և հոգս արտայայտող եղանակով. ես շուտունց եմ ասել՝ թէ էն տեղը դատարկ մնացողին պիտի հեռացնենք և մի նոր կնիկ բերենք եղբորս համար: Խօմ նրա կեանքը սև չպիտի մնայ:

—Իհարկէ, ուրիշ ճար չկայ, կցեց Անուշկայի ամուսինը. խեղճ է Գալուստը, էն օր չի, որ նա է քաշում:

Գորանից յետոյ Գալուստն ու Վառվառը գործադրեցին իրանց վճիռը: Մի օր երեկոյեան, Գրիգորն ու Սիմին եկան իրանց փեսայի տուն, վերջինիս հրաւերի համաձայն:

Վառվառը զինի և մազա 2) բերաւ: Մի քանի բաժակ խմելուց յետոյ, Գրիգորը դարձաւ Գալուստին և հարցրեց.

—Պա մեզ ի՞նչ բանի համար ես կանչել, Գալուստ, դէ ասա տեսնենք ա:

—Ի՛նչ պիտի ասեմ, կանչել եմ էլի, յուզւած և շփոթւած եղանակով պատասխանեց Գալուստը. չէք գալիս, չէք դնում՝ էս տունը:

1) Գերի. 2) Զակուսկի:

—Դու հէնց գալով էիր մնացել, պատասխանեց Սիմին հանաքով։ Փեսան ոչինչ չպատասխանեց դրան։ Տիրեց ընդհանուր լուռ-  
թիւն։ Գալուստը երերւում էր և չէր վստահանում յայտնելու իւր  
մտքինը։ Գրիգորը կարծում էր, որ իրան անպատճառ մի անախորժ  
բան է սպասում։ Նրա ականջին արդէն մի քանի լուրեր էին հա-  
սել Գալուստի մտադրութեան վերաբերեալ։ Այդ լուրերի տարած-  
ւելուն նպաստել էր Լնուշկան, որը սկսել էր այստեղ այնտեղ տըր-  
տունջներ ու բողոքներ յայտնել իւր եղբոր դրութեան առիթով։

Վառվառը սրտատրոփ սպասում էր այն րոպէին, երբ Գալուստը  
պիտի յայտնէր իր սրտինը։ Իսկ Սիմին զբաղւած էր իր աղջկանով։

—Ձեզ էլ յայտնի է, «կսեց Գալուստը՝ վերջապէս սիրտ առ-  
նելով, որ ձեր աղջիկը ինձ համար կնկութիւն անող չի։ Պատճառ-  
ները չեմ ուզում հստակ մին-մին թելել, քանի որ սաղ զիւղը գիտէ,  
թէ ձեր աղջիկը ինչ է։ Բայց ես չեմ կարող մնալ առանց կնկայ  
և երեսացի։ Սա մեր մեծ հարսը, երեսին եմ ասում, վաղը վեր  
կացաւ մարդու գնաց՝ ես խոմ չեմ կարող նրա կռնից բռնել, պա-  
հել ու ասել. չէ, մի գնալ. կամքը իրանը չի։ Լաւ, պտ էն ժա-  
մանակ իմ ու էս տան ճարը ի՞նչ կը լինի։ Հիմա ես ձեզ խնդրում  
եմ, որ դուք ձեր աղջկանը յետ վերցնէք. ինչքան որ վրան բա-  
ժինք էք տւել՝ տուն, հող, տնամէջ, շորեղէն՝ բոլորը, բոլորն էլ  
յետ կը տամ ձեզ, միայն թէ ձեր աղջկան յետ վերցնէք և ես մի-  
ջոց ունենամ նորից կնիկ տանելու։

Գրիգորն ու Սիմին պարզ լսեցին այդ ամենը սկզբից մինչև  
վերջ և կախեցին իրանց գլուխները։ Վիրաւորւած ինքնասիրու-  
թիւնը և շոշափւած նամուսը կատաղի յուզմունք յառաջացրին  
նրանց հոգու մէջ, բայց նրանք այնուամենայնիւ մի առ ժամանակ  
լուռ կացան, չկարողանալով իսկոյն ոչինչ պատասխանել և սպասե-  
լով շարունակութեանը։ Բայց Գալուստը իր ասելիքը վերջացրել  
էր և պատասխանի էր սպասում։

Սիմին երկար չկարողացաւ տանել այդ լուռութիւնը. նա վիրա-  
ւորւած և վրդովւած ձայնով գոչեց.

—Մեզ կանչել էք հստակ պատիւ տալ, թէ խայտառակ էք.  
էս ի՞նչ բարեկամութիւն է. իմ աղջկայ անւան իմ առաջ ցիւ էք  
կպցնում. պա էդ խղճմտանք է. ամօթ, ամօթ ձեզ համար։

Եւ նա սկսեց արտասուել:

—Սիմի խնամի, խօսաց Վառվառը. աղջկանդ անունը մենք զրանով վեր չենք գցում. նա ինչ որ կայ, էն էլ մնում է: Գիւղացիք ամենքը ճանաչում են, և, հաւատացիր, ով որ լսի, թէ Գալուստ եղբայրը բաժանւել է նրանից, կ'սաի. շատ լաւ է արել, ապրի, ինքն էլ է խեղճ, աղջիկն էլ, աղջկատէրն էլ: Բացի բարու-թիւնից ուրիշ բան չկայ էս գործում: Աւելի վատ կը լինի մեզ բոլորիս համար, եթէ Գալուստ եղբայրը Նոյզառի հետ մնայ. մեր սիրտն էլ նեղ կը լինի միշտ, ձերն էլ: Ամենալաւ էն կը լինի, որ մենք մի խօսք դառնանք և սիրով վերջացնենք էս բանը:

Սիմին աւելի ևս բորբոքւեց այդ խօսքերից: Նա յանկարծ վեր թռաւ նստած տեղից, յարձակւեց աղջկայ վրայ և սկսեց իւր կատաղութիւնը նրա գլխին թափել:

—Աղջի, վեր կաց, գոչում էր նա. վեր կաց... Տափը մտնես դու, պրծնեմ քեզանից... վեր կաց գնանք:

Աղջիկը վախութիւնից խկոյն վեր կացաւ տեղից և մնաց արձանացած: Սիմին ջուխտ ձեռքով խփեց նրա գլխին և բռնելով աղջկայ կռնից, սկսեց դուրս գալ սենեակից:

—Գնանք, չուզեցի սրանց բարեկամութիւնը. ինչ վատութիւն որ անում են, Աստուծ իրանց առաջը բերի:

—Խնամի Սիմի, ո՛ւր ես գնում, սպասիր, հալա նստիր, ասացին միաբերան Գալուստն ու Վառվառը:

Բայց Սիմին ականջ չդրաւ նրանց. նա բղաւելով և անէծքներ թափելով դուրս եկաւ սենեակից, հեռը տանելով և Նոյզառին:

Գրիգորը նստած մնաց: Նա տեսնում էր, որ այդ գործը ուրիշ ելք չէր ունենալու և մտածում էր ցանկալի վերջ տալ նրան:

—Թող իմ ուղածը անի, մտածում էր Գրիգորը. նրանից յետոյ ուզում է թող գնայ տաքը կնիկ տանի:

—Խնամի Գրիգոր, պա դու ի՞նչ ես ասում, ասաց Վառվառը, ընդհատելով Սիմու վարմունքից առաջացած լռութիւնը:

—Ինչ արած, խնամի Վառվառ, ասաց նա խղճացած ձայնով. էս էլ երեւի մեր բախտիցն է էլի, որ մեր բարեկամութիւնը քանդւում է: Դու էլ, Գալուստ, ի հարկէ, էնքան մեղաւոր չես, որովհետեւ Նոյզառը, իսկապէս կնկացու չէ. աղջիկը մերը չի, ի՞նչ ծածկեմ,

յիմար է, ամենքը գիտեն. մայրը չգիտէ. ասենք էնպէս հարաջ հուրաջ անելով գնաց: Վնաս չունի, մենք մեր աղջկան կը տանենք, բայց դէ ասիւր օրէնքը էնպէս է, որ Նոյզառի ապրուստի համար տարեկան մի բան պիտի տաս: Զէ որ նա քո կնիկն է:

— Գրիգոր ապեր, խղճմտանքի զցենք. ի՞նչու պիտի տամ. առաջինը՝ որ ձեր աղջիկը աղջիկ էլ մնացել է, երկրորդ՝ վրան բերածները սաղ էլ յետ եմ տալիս. մէջ տեղ մնում է իմ աշխատանքս, որ Նոյզառին 8—9 տարի պահել եմ: Ի՞նչու փող էլ հալա պիտի տամ:

— Ի՞նչու, որովհետեւ օրէնքը էպէս է ասում: Միւսնոյն է. եթէ, օրինակի համար, ասենք դու չտաս էդ ծախսը և ես զանգատ տամ, սուղը անպատճառ իմ օգտին կը վճռի գործը: Օրէնքով Նոյզառը քո կնիկն է, ուրեմն նրա ծախսը դու պիտի տաս:

Գալուստը, որ այդ բոլորին պատրաստ էր ամեն բան տալու, միայն թէ ազատուէ Նոյզառից, ասաց.

— Շատ լաւ, յօժար եմ. տարեկան ի՞նչքան տամ:

— Դէ էդ հեշտ է, մեր մէջ կարող ենք հաշուել:

— Ասա, հիմա հէնց ասա:

— Տարեկան յիսուն մանէթ:

— Շատ է, Գրիգոր ապեր:

— Շատ է, քիչ է — յիսուն մանէթ եմ ասում. պա Նոյզառը տարեկան մի յիսուն մանէթ էլ չի նստիլ ինձ վրայ:

— Լաւ, դրան էլ եմ համաձայն:

— Դէ մի թուղթ բեր պայման գրենք:

— Ի՞նչ պայման, հէր օխնած, ես խոմ չեմ փախչում. սաղ գիւղը իմանալու է էս գործը:

— Շատ լաւ, համաձայնեց Գրիգորը. թող քո ասածը լինի. տարեկան յիսուն մանէթ կը տաս. մի մասը բամբակաքաղին, միւսը՝ բոժոժաքաղին:

— Աչքիս վրան:

Գրիգորը մի բաժակ գինի էլ խմեց և վեր կացաւ տեղից: Նա դուրս եկաւ բաւականին ուրախ տրամադրութեան ներքոյ: Այդ դէպքը թէն մի կողմից նրա վրայ անախորժ տպաւորութիւն էր թողել, բայց այլ կողմից պատճառել էր մի ներքին ցնծութիւն:

—Նոյզառի հոգերը էլի իմ ձեռքը կ'ընկնեն, մտածում էր Գրիգորը. տարեկան յիսուն մանէթ էլ նազդ փող կը ստանամ: Գալուստը էս փողը չի կարող չտալ. պաշմանագիրը ինձ համար նշանակութիւն չունի, որովհետեւ նրան թողնեն նորից կնիկ տանել կամ չթողնեն՝ Գալուստը օրէնքով իր առաջւայ կնկայ ծախսը պիտի տայ: Ո՞վ գիտէ. դուցէ խկի իրաւունք չտան. շատ-շատ, էն ժամանակ ծածուկ պսակւի. բայց էս դէպքում էլ նա օրէնքով պիտի Նոյզառի ծախսը վճարի: Աղջիկը իմ տանը կը մնայ, որովհետեւ լսել եմ, թէ մայրը մարդու է գնում: Ուր մնաւն ինչ իմ ձեռքին կը լինի: Ել էսպէս բան չէր լինիլ, որ պատահեց: Թող ինչ որ ուզում են խօսան...

Գալուստի տրամադրութիւնը այդ օրը լսւ էր: Նա ուրախ էր, որ կարողացաւ ազատել իրան մաշող ցաւից: Բայց որ Նոյզառը խկապէս դեռ մի խոչնդոտ էր նրա նպատակների առաջ, Գալուստը այդ րոպէին չէր հասկանում: Տարիների ընթացքում շարունակ ճնշող ծանրութիւնից փոքր ինչ թեթեւութիւն զգալով, նրան թւում էր, թէ բոլորովին ազատել է դրանից: Եւ նա այդ օրը ասում, խօսում, ծիծաղում էր:

## Դ. Զ.

Ամբողջ զիւղում զանազան լուրեր էին պտտում այդ դէպքի առիթով: Բոլոր խօսակցութեան նիւթը Գալուստի և Նոյզառի բաժանելին էր: Այդ եղելութիւնը զանազան կերպ էին բացատրում: Ոմանք ասում էին.

—Ի՞նչ անէր խեղճ տղան. ախր Նոյզառի վրայ խկի կնկայ շնորհք կայ: Ի՞նչ գիտէր թէ անխելք է դուրս գալու, որ իմանար՝ չէր տանիլ: Հիմա խոմ առանց կնկայ չի մնալու:

Ուրիշներն ասում էին.

—Գալուստը Նոյզառին շատ է եղել ծեծում ու ասում. սա ինձ համար կնիկ չի, այլ ցաւ ու կրակ: Դրա համար մայրն ու հօրեղբայրը իրանց աղջկան խղճալով չետ են տարել:

Ոմանք էլ այս կերպ էին բացատրում.

—Դա Գրիգորի բաներն են, ասում էին նրանք. գործը հէպէս է սարքել, որ աղջկայ հոգերը կրկին իր ձեռքն ընկնեն և տարե-

կան մի բան էլ Գալուստից ստանայ. չէ՞ որ Գալուստը Նոյզառին պիտի խարջ տայ: Մի ղո՛չաղն է, մի անգէսն է...

—Պա էսպէս էլ անսմօթութիւն կը լինի, ասում էին հասակաւորները. էս ի՞նչ բան է. թուրքի օրէնք չի խում: Ամօթ Գալուստի համար. մարդամէջ թողնելու չի նրան: Յետոյ էլ ասում են խեր, բարաքաթը կտրւել է. պա ի՞նչ կը լինի, երբ հաւատ չկայ, երբ Աստուծանից վախենալ չկայ: Առաջները էսպէս բաներ ճիշդ էր տեսել կամ լսել...

Այս ամենը հասնում էին Գալուստի ականջին և նրա մէջ ոչ թէ զղջումն ու վհատութիւն յառաջացնում, այլ, ընդհակառակն, զրդում էին աւելի ևս խոր մտածելու իւր ներկայ դրութեան մասին: Նա առայժմ ուրախ էր, որ ազատւել է Նոյզառից: Այն գումարը, որ նա խոստացել էր վճարել Գրիգորին, զգալի չէր այնքան, համեմատած իւր նոր ու թեթեւացած դրութեան հետ: Վարձեւ մի ծանր բան կտրւել և վայր էր ընկել նրա վզից: Սկզբներում Գալուստը կարծում էր, թէ հարցը դրանով էլ վերջացել է և ուրեմն ինքը բոլորովին ազատ է: Բայց յետոյ, երբ անցաւ նոր դրութեան պատճառած կարճատեւ ուրախութիւնը և երբ նա սկսեց աւելի խոր մտածել իր ապագայ դրութեան մասին, այն ժամանակ միայն Գալուստը տեսաւ, որ դեռ շատ արգելքներ կան իր առաջ ընտանեկան խաղաղ ու բախտաւոր կեանք ստեղծելու համար: Գուցէ դիւղի տէրտէրը չստակի իրան, հոգեւոր իշխանութիւնը նրան օրինական ապահարդան և նորից ամուսնանալու իրաւունք պիտի տար:

Այդ բարդ հարցերը Գալուստին մոտտանջութեան ենթարկեցին: Դոցա ներկայութիւնը, իբրեւ նոր խոչնդոտ ցանկալի նպատակին ուղղակի հասնելու, յուզում էր Գալուստի հոգին և մի խուլ տրտունջ յառաջացնում նրա մէջ: Նրա դէմքը նորից հոգսալիւր ու վհատած արտայայտութիւն ստացաւ և թախիժն ու մեղամաղձոտութիւնը կրկին պաշարեցին նրան:

—Յղբայր, ինչ հարկաւոր է էդքան յուսահատւելը, ասում էր նրան Վառվառը. դու հալա դործը սկսիր, յետոյ կը տեսնենք:

—Այ հարս, ուղիղ ես ասում, բայց դէ էլի երկմիտ եմ, վախենում եմ. եթէ երկար ժամանակ տեւի մեր հոգեւոր իշխանութեան

հրամանը կամ թէ իսկի նորից պատկերու հրաման չտան, էն ժամանակ ես ի՞նչ պիտի անեմ. Նոյզառին խարջ տամ և ինքս կնկանից զուրկ մնամ. պա խղճմոմներ է...

— Ես էլի ասում եմ, որ յուսահատելը զուր է, Գալուստ եղբայր. հալա գործի սկզբումն ես, որ էդպէս ես խօսում, յետոյ ինչպէս բան տալ կը տանես:

— Հարս, իմ բնաւորութիւնն էլ էսպէս է էլի, ինչ արած:

— Զուր է էդքան վսկսալը <sup>1)</sup>. Դու մի քանի հասկացող մարդկանց կանչիր և նրանցից խորհուրդ հարցուր, թէ հիմա ի՞նչպէս անես:

— Ո՞ւր կանչեմ, Վառվառ:

— Զգիտե՛ս, էլ ում պիտի կանչես...

— Մովսէսին ու Պետրոսին:

— Ի հարկէ:

— Ի՞նչ երեսով զնամ նրանց մօտ. նրանք ինձ առաջուց ասին, թէ ա՛յ տղայ, էդ աղջկան մի տանիլ, գլուխդ փորձանքի մէջ կ'ընկնի. չլսեցի, և նրանց ասածը կատարւեց: Հիմա ես ի՞նչ երեսով զնամ նրանց մօտ:

Բայց մինչև որ մեր երիտասարդը կը դիմէր Մովսէսին ու Պետրոսին, սրանք իրանք մի օր մօտեցան նրան և հարցրին, թէ նա ի՞նչ է մտադիր անելու իւր ամուսնական կնճռոտ հարցի համար:

— Ես էլ հէնց էդ բանի մասին եմ մտածում, Մովսէս ապեր, պատասխանեց Գալուստը. բայց չեմ իմանում ինչպէս անեմ: Ուզում էի զալ քեզ մօտ խորհուրդ հարցնելու, հիմա... շնորհակալ եմ... Համեցէք երկուսդ էլ զնանք մեզ մօտ, ասաց Գալուստը խնդրանօք. զնանք, մի երկու ստաքան (բաժակ) գինի կը խմենք, կը խօսանք:

— Լաւ, զնանք, համաձայնեցին համագիւղացու ցաւով հետեքրքրուողները:

Մի քանի րոպէից յետոյ նրանք տուն հասան և ստան հիւրասենեակը: Հիւրերին ընդառաջ զուրս եկաւ Վառվառը և ընդունեց նոցա բարեւը:

— Ի՞նչպէս ես, Վառվառ, հարցրեց Մովսէսը. հիմա ի՞նչպէս ես կառավարւում:

<sup>1)</sup> Յուսահատ արտունջներ:

—Փառք Աստծոյ, շնորհակալ եմ:

—Ախր Վեժ հարսդք էլ չկայ, ծիծաղելով ասաց Պետրոսը, մենակ կարողմնում ես տան գործերը վարել:

—Վճւյ, Պետրոս եղբայր, մի տալ նրա անունը...

—Էղպէս մի ասիլ, աղջիկ, ընդհատեց Մովսէսը. Գալուստի սրահն կը զիպչի. մարդու կնկանը ինչու էք մասխարա գցում:

Յետոյ ձեռքով Գալուստի ուսին խփելով ասաց.

—Է՛հ, Գալուստ, Գալուստ, չլսեցիր ինձ, ինքդ զուր տեղից քեզ թալակի մէջ գցեցիր և հիմա պիտի թալրտաս, որ կարողանաս միջից զուրս գալ:

—Մովսէս ապեր, ի սէր Աստծոյ, էլ ինձ էդ բանը մի ասիր. ամեն անգամ որ քեզանից էդ խօսքերը լսում եմ, ասես թէ մէկը խանչալով կողքս ծակում է: Երեխայութիւն էր թէ էշութիւն — ամեն ինչ եղիլ պրծել է. հիմա ճար ունիս — ինձ ճար արա:

—Քո ճարը առաջժամ մի խնդիր կը լինի հոգեւոր կառավարութեան: Ես կը գրեմ այդ խնդիրը քո անունից մի առ մի բացատրելով քո ամուսնութեան ամբողջ պատմութիւնն ու Նոյզառի կին լինելու անընդունակութիւնը: Կը նկարագրեմ քո ընտանեկան կեանքի դժոխային դրութիւնը և կը խնդրեմ այն, ինչ որ հարկաւոր է մեզ: Գու ինչ ծախս որ հարկաւոր է՝ կ'անես և թուղթը կ'ուղարկես հոգեւոր կառավարութեան՝ Էջմիածին:

—Խնդիրքում պիտի պարզել և հարցի այն կողմը, աւելացրեց Պետրոսը. որ Գալուստը պարտաւոր չէ Նոյզառին ծախս վճարելու. չէ՞ որ Գալուստը աղջկայ հետ վերադարձրել է այն ամենը, ինչ որ ստացել էր. բացի այդ՝ աղջիկը կոյս է մնացել:

—Այո, այո, կցեց Գալուստը. դրա մասին էլ գրիր, Մովսէս ապեր, ես խում չեմ կարող մինչև կեանքիս վերջը Մատու եղբօրը տարեկան յիսուն մանէթ տալ: Նրա աղջիկը ինչքան որ իմ սիրտը նեղ է պահել, էն էլ հերիք է ինձ համար իբրև պատիժ: Ես ընդունեցի Գրիգորի առաջարկութիւնը, որ կարողանամ Նոյզառին զլխիցս հեռացնել. յետոյ ձի է նրան փող տուղը:

—Խնդիրը կը գրեմ, կ'ուղարկենք. դա հեշտ է. բայց բանն էն է, թէ հոգեւոր կառավարութիւնը ինչ է պատասխանելու. մի նոր ցաւ էլ էդ է:

—Դու գրիր, քեզ մատաղ, ասաց Վառվառը. դէնն էլ յետոյ կը մտածենք:

—Աչքիս վրան:

Հիւրերը վեր կացան և դուրս գնացին: Գորանից մի շաբաթ յետոյ, Գալուստը Մովսէսի զրած խնդիրքը ծոցն առնելով, նստեց իր ջորին և ճանապարհեց դէպի Տ. ի վիճակային կոնսիստորիան:

Գլ. Է.

Շուտով կը բոլորէր մի տարին այն օրից, երբ Գալուստը իր խնդիրքը ուղարկել էր Եջմիածին, սակայն հոգևոր կառավարութիւնից դեռ ոչ մի պատասխան չկար: Գալուստը այդ պատճառով շատ անհանգիստ էր, մանաւանդ որ մօտիկ ժամանակներում նա պիտի վճարէր Նոյզառի երկրորդ տարւայ ծախքը: Գալուստը ցանկանում էր, որքան կարելի է, շուտ ապահարդան ստանայ, որ վերջապէս ամուսնանայ և կարողանայ ազատել իւր դէպի Նոյզառը վերցրած պարտականութիւնից: Վերջինս շատ կարեւոր հանգամանք էր նրա համար, որովհետև Գալուստի վրայ տարեկան 50 ուռլին պարտք էր բերում: Սինոդ Ղուկասի և գլխաւորապէս Համբարձումի օրերում եղած տունը այլ ևս այն չէր. քամու բերածը քամին էլ տարել էր. տակը մնացածը այնքան էր, որ կարողանում էր ծածկել Գալուստի տան տարեկան ծախքերը: Երբ արդէն Նոյզառի համար վճարելիք փողի տալու ժամանակը մօտեցել էր, իսկ հոգևոր իշխանութիւնից պատասխան չկար, Գալուստը անճարացած յանախայս ու այն մարդու մօտ բաց էր անում իր սրտի ցաւը և ասում.

—Այ եղբայր, աղջկան սաղ-սաղամսթ ետ եմ տւել իրանց. ինչ որ վրան եղել է, էն էլ եմ տւել. էլ ի՞նչ են ուզում ինձանից. ախր ո՞ր մեղքիս համար փող էլ տամ:

Լսողները պատասխանում էին.

—Իհարկէ, մեղաւոր չես, չսխալի վճարես:

Բայց ոմանք երկգլխի էին պատասխանում.

—Այ մարդ, ո՞վ գիտէ, ասում էին այդպիսիները. երևի օրէնք է, կնոջդ ծախսը պիտի քաշես. կնիկդ է եղել:

—Ի՞նչ օրէնք, ասում էր Գալուստը տաքացած. էդ պայմանը մեր մէջն ենք կապել: Վերջապէս ես իմ տունը չսխալի քանդեմ

նրա համար, որ սխալմամբ մի յիմար, անպէտք աղջիկ եմ տարել. աղջիկը ինձ համար բոլորովին կնկութիւն չի արել:

Ամուսնանալու խնդրի հետ Գալուստին զրազեցնում էր և «ծախքի» հարցը: Նա իւր գործի դանդաղ ընթացքի մասին տեղեկանալու համար յաճախ դիմում էր Մովսէսին.

—Այ Մովսէս ապեր, ախր հսպէս բան չի լինիլ. հրէս շուտով մի տարին կը թամամի, որ խնդիր եմ տւել, բայց կառավարութիւնից ախր պատասխան չկայ: Պա իմ տուն տեղս պիտի մոխիր դառնայ թափւի գլխիս, որ էն ժամանակը պատասխանեն:

—Դա մեր կառավարութեան խասիւթն է) է, եղբայր, պատասխանում էր Մովսէսը դառնութեամբ և զզւանքով. ի՞նչու ես զարմանում. էդպիսի գործերի համար մէջ տեղ պիտի կաշառք խաղայ, որ բան գլուխ գայ: Հալա դու գիւղացի ես, քո գործը աւելի դժուար է:

Մովսէսը նորից մի խնդիրք գրեց: Դալուստը առաւ թուղթը, ջորի նստեց ու կրկին ճանապարհեց դէպի վիճակային յաջորդութիւնը: Երեք օրից յետոյ նա հասաւ այնտեղ և խնդիրը ձեռքին մտաւ յաջորդի մօտ:

Վերջինս, որ արդէն առիթ էր ունեցել ծանօթանալու Գալուստի և նրա գործի հետ, լաւ յիշում էր մեր հերոսին: Երեք ռուբլի աջահամբոյժը, որ տւել էր Գալուստը իւր առաջին այցելութեան ժամանակ, ստիպել էր յաջորդին լաւ յիշելու թակարդի մէջ ընկած երիտասարդին:

Յաջորդը այս անգամ ևս ծիծաղերես ընդունեց Գալուստին, յաճախ իր աչքերը նրա ձեռքին ու դրպանին գցելով:

—Համեցէք, որդի, համեցէք նստիր, ասաց նա, մեկնելով դէպի Գալուստը իւր աջը:

Գալուստը մօտ գնաց, համբուրեց հայր սուրբի աջը և մի ռուբլի աջահամբոյժ տւաւ:

—Օրհնեալ լինես, ասաւ յաջորդը ժպտերես և բաց անելով բարձի տակ դրած աւետարանը, թղթադրամը մէջը դրեց:—Էհ, ի՞նչ նոր խարար կայ, Գալուստ, հարցրեց նա եկւորին, խմբ լինի:

1) Բնաւորութիւնը

—Էնպէս ոչինչ չկայ, հայր սուրբ, պատասխանեց Գալուստը քաշելով. բայց դէ քեզ յայտնի է էլի, թէ ինչ դործի համար եմ եկել. ուզում եմ նորից խնդիրք տալ: Սխր էսպէս բան չի լինիլ. մի սաղ տարի է, կառավարութիւնից պատասխան չկայ: Պա ես խեղճ չեմ. ախր ես էլ գիւղացի մարդ եմ, ինձ կնիկ, տուն է հարկաւոր. փառք Աստծոյ, հայր սուրբ, դու գիտես, որ գիւղացին առանց կնկայ չի կարող եօլա գնալ. կը քանդւի՝ կը գնայ. պա ես խեղճ չեմ:

—Որդի, հասկանում եմ քեզ, ճշմարիտ ես ասում, բայց դէ ինչ արած, պիտի համբերել: Քո առաջին խնդիրքը ուղարկել եմ հոգեւոր իշխանութեանը և իմ կողմից էլ ինչ որ հարկաւոր է՝ գրել եմ. չգիտեմ ինչու մինչև հիմա չեն պատասխանում: Դէ ասե՛նք դա նրանց գործն է: Եթէ ինձանից կախած լինէր, ես էս րոպէին քեզ նորից պսակելու իրաւունք կը տայի և պսակողն էլ ես կը լինէի: Ի՞նչ արած, պիտի սպասել և համբերել:

—Մինչև երբ ախր սպասեմ. մի տարին շուտով կը թամամի, որ առաջին խնդիրքըս ուղարկել եմ:

—Ի՛նչ արած, որդի. երեւի ծանր դործ է, վճռելը դժւար է. ինձ էլ մինչև օրս դեռ ոչինչ չեն գրել:

—Հայր սուրբ, յոյս կ'ա՛յ, որ կնոջս բաժանեն և ինձ թոյլատրեն նորից պսակելու:

—Ես կարծում եմ՝ այո, պատասխանեց հայր սուրբը քաղցր ժպիտը երեսին և աչքերը Գալուստի աչքերին յառելով. ես էս անգամ էլ կը գրեմ և յոյս ունեմ, որ մի վճիռ կը տան. դու համբերիր: Էնտեղ մի լաւ եպիսկոպոս ունեմ, նրան որ գրեմ, ամեն ինչ կ'անի. միամիտ կաց:

—Ո՞վ գիտէ, էլի մի տարի կը քաշի, ասաց Գալուստը յուսահատ:

—Ձէ, չի քաշիլ. առանց հոգ էլ բաւականին ժամանակ է անցկացել, ինչպէս կարելի է, շուտ կը պատասխանեն: Դու խնդիրքը ինձ տուր:

Գալուստը ծոցից հանեց թուղթը և մեկնեց յաջորդին:

—Այ տղայ, Անտօն, կանչեց հայր սուրբը ծառային. էս խրնդիրքը տուր քարտուղարին և ասա մի յայտարարութիւն պատրաստի, որ էսօր էս խնդիրքը ուղարկենք:

Անտօնը, որ մօտիկ գիւղացի մի կարմրերես և ամօթխած երիտասարդ էր և հայր սուրբի մօտ ծառայում էր քահանայ ձեռնադրւելու յուսով, մօթալ փափախը գլխին, երեաց սենեակի առաջ։ Նա շէմքատակին հանեց իւր անագին քոշերը, մտաւ սենեակ և մոռացաւ փափախը վերցնել։

—Այ տղայ, ես քեզ քանի անգամ եմ ասել, թէ սենեակ մըտնելիս փափախդ վերցուր, նկատեց հայր սուրբը լի նախատինքով. պա դու երբ պիտի մարդ դառնաս։

—Հայր սուրբ, ներողութիւն, մոռանում եմ, պատասխանեց Անտօնը ամաչկոտ ձայնով ու կարմրելով։ Նա առաւ խնդիրքը, փափախը գլխին դրեց, բաց ջանկարծ չիշելով հայր սուրբի խօսքերը, արագութեամբ վերցրեց նորից և դուրս գնաց։

—Հայր սուրբ, խօսաց Գալուստը. դէ ես էս օր գնալու եմ տուն, քեզ մատաղ, դու էլ քո կողմից աշխատիր, որ ես կարողանամ էս թալակից դուրս դալ։

—Շատ լաւ, որդի, միամիտ կաց, կ'աշխատեմ. ինչու, ես չգիտեմ, թէ ինչքան ծանր է քո դրութիւնը։

Գալուստը վեր կացաւ չոքած տեղից, մօտեցաւ հայր սուրբին համբուրեց նրա աջը և կսմենում էր դուրս գալ, որ հայր սուրբը ասաց.

—Գալուստ, էս անգամ քեզ վրայ մի թեթեւ պարտք եմ դնում. եթէ բան է, մէկ էլ եկար էստեղ, ինձ համար մի քիչ գինի բերես. լաւ գինի լինի։

—Լաւ, այսինքն քմնի մանէթանոց, հայր սուրբ։

—Փողով չեմ ասում, օրհնած, լաւ, պա դու չեմ կարող ինձ համար մի բեռը գինի փեշքէշ <sup>1)</sup> բերել։

—Շատ լաւ, հայր սուրբ, որ եկայ՝ կը բերեմ։

Գալուստը շարունակ մտածում էր իւր խճճած դրութեան և մի խաղաղ ապագայի հասնելու մասին։ Այդ մտածմունքներէ ազդեցութեան տակ նրա մէջ առաւել ևս բորբոքւում էր իրեն շրջապատող ծանր հանգամանքների դէմ կռւելու եռանդը։

—Ասե՛նք սխալւել եմ, մեղաւոր եմ. չեմ կարող իմ սխալը ուղղել. խոմ գերի չպիտի մնամ ուրիշների ձեռքին։

<sup>1)</sup> Նւէր։

ԴԼ. Ը.

Գալուստը դեռ ևս սպասում էր, յուսալով, որ մի օր իւր բողոքը իղձերը կը կատարեն, բայց իզուր։ Ամիսները անցնում էին, բայց պատասխան չկար ու չկար։ Նա մի անգամ ևս յաջորդի մօտ գնաց, նրանից մի վերջնական խորհուրդ ու տեղեկութիւն իմանալու համար։

— Հա, որդի, ասաց յաջորդը. մի թուղթ եմ ստացել քո գործի մասին. մարդ չկար ձեր գիւղը գնացող, որ յայտնեմ քեզ. շատ լաւ ես արել, որ ինքդ ես եկել։

— Ինչ խաբար է, հայր սուրբ։

— Քննութեան համար են գրել. տեղեկութիւն են պահանջում ինձանից։ Գրել են, որ ես բժշկական քննութեան միջոցով տեղեկանամ, թէ արդեօք էն աղջիկը՝ քո կինը, կոյս է մնացել, թէ ոչ։ Տեսնո՞ւմ ես. ասում էի, որ դժւար գործ է, վճռելը հեշտ չի։ Հիմա, որդի, դու ինքդ էս գործը կատարիր. բժշկի միջոցով վկայական առ և շուտով ինձ հասցրու. իսկ ես ուր հարկն է կ'ուղարկեմ։ Երեւի ստանալուն պէս հոգեւոր իշխանութիւնը խկոյն կը պատասխանի։

— Ուրեմն, հայր սուրբ, էդպէս անեմ էլի, գնամ բժիշկ բերեմ, որ աղջկան քննի։

— Սյո, անպատճառ. որքան բժշկի վկայականը շուտ բերես, էնքան էլ լաւ։

— Հայր սուրբ, դա ինձ վրա ասիւր մեծ ծախս կը նստի։

— Ի՞նչ արած, որդի. օրէնքը էդպէս է պահանջում։

Գալուստը ոչինչ չպատասխանեց և մոռամոռնքի մէջ ընկաւ։

— Եէ, Գալուստ, դէ հիմա ասա տեսնեմ, գինին բերիր, թէ չէ, ասաց հայր սուրբը ժպտալով։

— Զէ, մոռացայ, ներողութիւն կ'անես, հայր սուրբ։

— Էհ, օրհնած, մոռանում ես, որ գործերդ յաջող չեն գնում մա։

— Եկող լինի՝ կ'ուղարկեմ։

— Իէ էս անգամ չմոռանաս։

Գալուստը յաջորդի պատէրն ընդունելով, նորից ուղևորւեց գիւղը։ Գիւղ հասնելուն պէս Գալուստը գնաց Մովսէսի մօտ և յայտնեց նրան կառավարութիւնից եկած հրամանի մասին։

— Էդ շատ լաւ է, պատասխանեց Մովսէսը. որ նրանք ուզում են հաստատոր իմանալ էդ բանը. էն ժամանակ քեզ, արդարեւ, ամեն ինչից կ'ազատեն. էն ժամանակ քո ուսերից դէն կը շարտեն էն մեղքը, որի պատճառը իրանք էլ են: Դու որքան կարող ես շուտ դնայ բժշկի յետեից. ինչքան փող է հարկաւոր տուր, միայն թէ վկայականը ստացիր և իսկոյն ուղարկիր: Ստանալուն պէս իշխանութիւնը անշուշտ մի վճիռ կը կացացնի:

Գալուստը հեռացաւ Մովսէսի մօտից և նորից նւիրւեց իւր հոգսերին:

Այդ օրերում Գալուստը Նոյզառի երկրորդ տարւայ առաջին կիսամեակի ծախքը պիտի վճարէր: Ժամանակից արդէն մի քանի շաբաթ անցել էր: Գալուստը գիտէր, որ Գրիգորը շուտով պահանջ է անելու և գուցէ խիստ ձեռով, քանի որ Գրիգորին յայտնի էին Գալուստի մտադրութիւնները: Գալուստը վճռել էր չտալ այդ գումարը, և նա օր օրի վրայ սպասում էր այն անախորժ ընդհարումին, որ պիտի տեղի ունենար իր և կնոջ խնամակալի մէջ: Այդպէս էլ եղաւ. յաջորդի մօտից վերադառնալուց երկու օր անցած, Գրիգորը զիւղամիջում մօտեցաւ Գալուստին և տասց.

— Գալուստ, դէ էն փողը տուր ան, հէնց պիտի ուզեմ, որ տան... Պարտքդ չես ճանաչում:

— Զուենեմ հալա, Գրիգոր ապեր:

— Զուենես, մի տեղից գտիր տուր. ինձ էլ հարկաւոր է ասր. ես էլ ուրիշից առնում եմ, ծախսում կնկանդ վրայ:

Գրիգորի խօսքերից կուրի և խռովութեան հոտ էր փչում: Վերջին ժամանակները փեսայ և հօրեղբայր ներքուստ լարւած էին իրար դէմ, քաջ իմանալով միմեանց մոքինը: Գալուստը, ցանկանալով նորից կին տանել, միւսնոյն ժամանակ մտադիր էր ազատուել Նոյզառի վճարելիք ծախքից: Իսկ Գրիգորի նպատակն էր մինչև Նոյզառի մահը ծախք ստանալ Գալուստից: «Քանի հատ կնիկ որ ուզում է, թող տանի, մտածում էր Գրիգորը. միայն մեր աղջկայ ծախսը պիտի տայ»: Եւ Գրիգորը պատրաստ էր փեսայի առաջին ընդլիմութիւնից գործի կաշել: Տարեկան չիտուն ռուբլին, որ նրա համար կուշտ պատառ էր, Գրիգորը ձեռքից հեշտութեամբ չէր թողնի:

—Հը՞, ի՞նչ ես ասում, Գալուստ, դիմեց Գրիգորը խոժոռած դէմքով. ես ախր ժամանակ չունեմ, գործի եմ գնում:

—Փող չեմ տալու, Գրիգոր ապեր. դա անարդարութիւն է. ականջդ բաց՝ լաւ լսիր:

—Խոչալէս թէ չեմ տալու, ասաց Գրիգորը զարմանքով և զայրոյթով. այ տղայ, կնիկդ է՝ պիտի պահես. ես քեզ պարտական չեմ, որ պահեմ:

—Նա հիմա էլ իմ կնիկը չի, հողերն էլ են քեզ մօտ, ամեն ինչ էլ:

—Հողերն էլ են քեզ մօտ. էդ հողերից երկու շահու եկամուտ չի գալիս. հիմա դու հողերն ես մէջ տեղ բերե՛լ. Խոչ հող. քո օրինաւոր կնիկն է, պիտի պահես: Զէ որ խոստացել էլ ես ծախսը տալու:

—Շատ էլ ասել եմ. հիմա ես իմ ասածը ետ եմ վերցնում և էլի ասում եմ, որ ես պարտական չեմ ձեր աղջկանը ամեն տարի փող տալու: Անցած տարի էլ վճարեցի՝ որ զաւմաղալը գլխիցս հեռանայ:

—Պա հիմա ի՞նչու ես զաւմաղալ անում:

—Տեսնում եմ, որ դու ամեն տարի առանց ամաչելու, առանց խղճմտանքի էդ փողը ինձանից առնելու ես, դրա համար ես էլ վճռել եմ չտալ:

—Այ տղայ, ի՞նչեր ես խօսում, գոչեց Գրիգորը բարկացած. սարսաղ ես, ախմախ ես... Զեւ տալիս, եկ կնիկդ տար պահիր: Էգուց դուրս կ'անեմ ճանապարհի երեսը, կ'ուղարկեմ տունդ... Դու էդ ինչե՛ր ես մտածում:

—Դուրս կ'անես փողոցը, փողոցումն էլ կը մնայ. ես էնքան էլ ախմախ չեմ, որ տանեմ տանս պահեմ նորից ու ցաւ ու կրակը էլի գցեմ ջանս:

—Դէ որ չես պահում, ծախսը տո՛ւր. այ մարդիկ, սրան ի՞նչ կ'ասէք, դարձաւ Գրիգորը իւր շուրջը ժողոված մարդկանց:

—Զեմ տալու է՛, չեմ տալու, պատասխանեց Գալուստը կըտրական. ականջդ մին էլ բաց՝ լսիր. չեմ տալու:

—Զեւ տալ, կաշիդ հանելով կ'առնեմ... Սրա հունարին նայեցէք:

—Մի քո հունարդ էլ փորձիր... Ուր ուզում ես՝ դնա զանգատւիր...

—Կը դանդառւեմ էլ, աչքդ էլ կը հանեմ. պա քո ձեռքին էլ չեմ խեղճ մնալու:

—Թամիզ խօսա, շան մարդ, գոչեց Գալուստը բարկացած. աչքդ էլ հանեմ, լոյսդ էլ խառնեմ:

—Ինքդ շատ թամիզ ես, որ հալա ինձ շուն էլ ես ասում... Քո հէրն անիծած, էդ ում ես հայհոյում...

Եւ Գրիգորը յարձակեց Գալուստի վրայ: Նրանք իրար մի քանի անգամ հարձակեցին: Մէկի քիթը արիւնկալեց, միւսի աչքի տակը կապտեց: Հանդիսատես և զարձացող գիւղացիներից ոմանք ծիհաղելով մէջ տեղ ընկան և բաժանեցին կուռղներին:

—Գնա, դնա, տանդ միամիտ նստիր, ասում էր Գալուստը, քիչ հեռու կանգնած և երեսը դէս ու դէն շրջելով. ինձանից մի կոպէկ էլ չես ստանալ, որ աչքդ կոխես:

—Հոգիդ հանելով կ'առնեմ, հոգիդ, գողում էր Գրիգորը կատաղած:

—Կը տեսնենք:

—Կը տեսնենք:

Նոքա հեռացան գիւղամիջից: Գալուստը գնաց իւր գործին. նա պիտի պատրաստէր մօտիկ գտնուող գաւառական բժշկի յետեւից գնալու:

Գրիգորը նոյնպէս իր գործին կացաւ. նա գնաց գիւղական դատաւորներին մի խնդիր տւեց, որ նրանք Գալուստից ստանան Նոյզառի ծախսը:

Վառվառի ականջին հասաւ կուռի լուրը, որը նրան բաւականին տխրեցրեց:

—Տէր Աստուած, մտածում էր նա. ինչով պիտի վերջանայ էս ամենը. խեղճ էս տղան, մի կերպ էս թալակից աղատւէր, որքան բախտաւոր կը լինէինք. էսքան էլ սրտնեղութիւն, էսքան էլ չարանք, էսքան էլ ծախս. հիմա էլ բժշկի յետեւից պիտի գնայ:

—Մոլսէս ապեր, ասաց Գալուստը իւր ճանապարհւելու նախընթաց երեկոեան, գիւղամիջում հանդիպելով իւր բարեկամին. էգուց գնում եմ բժիշկ բերեմ և Գրիգորի հէրը անիծեմ:

—Լաւ, դու դեռ ասա տեսեմ՝ էն ինչ կռիւ էք սարքել զիւղի հրապարակում:

—Ի՞նչ անեմ ախր. անիծածի տղան կպել է ինձ, թէ փողը տուր հա տուր:

—Քանի անգամ է ասած, թէ զիւղամիջում կռիւներ մի սարքէք. հաշիւ ունէք—գնացէք տանների տեսէք և կամ մի առանձին, ծածուկ տեղ: Ախր էս փոքրները ձեզանից ինչ պիտի սովորեն:

—Յս ինչ անեմ. ինքը Գրիգորը եկաւ թէ տուր էս սհաթին, ես էլ ասացի—չեմ տալու, որ ջանդ էլ դուրս գայ:

—Ի՞նչու չպիտի տաս. որ խօսք ես տուի, պիտի վճարես, մինչև որ օրինաւոր ճանապարհով գործդ կը վերջանայ:

—Գուցէ իմ գործը հալա տասը տարի քաշելու է, ուրեմն յիսուն մանէթ պիտի վճարեմ Ծառի անամօթ եղբօրը:

—Դէ սա դեռ երկրորդ տարին է, տուր, յետոյ եթէ իշխանութիւնից ոչինչ չեկաւ, էն ժամանակ կը մոտճենք, թէ ինչպէս անենք. մի քանի մարդ մէջ տեղ կ'ընկնեն ու կը խնդրեն, որ Գրիգորը քեզանից միանաւոք մի գումար ստանայ և գործը դրանով էլ վերջանայ:

—Ձեմ տալու, Մովսէս սուրբ, իբր թէ դու Գրիգորին չես ճանաչում. մի կոպէկի համար հոգին կը ծախի, դու ինչեր ես խօսում. հիմիկանից որ շարունակեմ վճարել, վատ կը սովորի:

—Էդ միենոյն է. նա դանդատներով և դատարանի միջոցով կ'առնի քեզանից. քանի որ հոգեւոր կառավարութիւնը կնոջդ քեզանից դեռ չի արձակել, դու, օրէնքի համաձայն, պիտի ծախս վճարես: Արձակման թուղթը որ ստացանք, այնուհետեւ ամեն ինչ հեշտ կը լինի:

—Դէ ստանանք... Քանիդի էսպէս... հը՛, մեղայ Ստոժոյ, ինչ էր եկել բերանս հաա...

—Դու գնա բոշկին բեր և նրանից անպատճառ երկու վիսյական առ. մէկը կ'ուղարկես յաջորդին, խի միւսը, բան է, հարկաւոր կը գայ. թող ձեռքիդ էլ լինի:

Նրանք բաժանուելին միմեանցից: Հետեւեալ առաւօտ շատ շուտ Գալուստը ճանապարհուց զէպ գաւառական քաղաքը բոխի բերելու:

Գիւղական զատաւորները յարգեցին Գրիգորի գանգաւը և գործը վճռեցին յօգուտ նրա, այն հիման վրայ, որ Գալուստը մի տարի ծախսը վճարել է և ուրեմն Նոյզառը նրա օրինաւոր կնիկն է, որի ծախսը նա պիտի քաշի:

Երկու օրից յետոյ Գալուստը վերադարձաւ բժշկի հետ: Սկզբում Սիմին և Գրիգորը չկամեցան իրանց աղջկանը բժշկի ձեռքն յանձնել, բայց տանուտէրի միջնորդութիւնը վերջ դրեց նրանց յամառութեան: Բժշկական քննութիւնը ցոյց տուեց, որ Նոյզառը իսկապէս կոյս է մնացել: Բժիշկը երկու վկայական դրեց Գալուստի համար և 40 ո. վարձ ստանալով, վերադարձաւ իւր տեղը: Բժիշկը այդ գումարը ստացաւ 15 վերստ հեռաւորութիւնից Գալուստի գրաստով և նրա ուղեկցութեամբ դալու և վերադառնալու համար: Գիւղում նա երկու օր հիւր մնաց Գալուստի տանը և այդ 40 մանէթից ոչ մի կոպէկ չզիջեց, որովհետև նրա ասածը ասած էր:

Գլ. Թ.

Արկին ամիսներ էին անցել այն օրից, երբ Գալուստը պոստն էր գցել բժշկի տաճ վկայականը, բայց հոգեւոր իշխանութիւնից պատասխան չկար ու չկար: Նա իրեն յատուկ Զաքարիայի լուծութիւնն էր պահպանում: Գալուստը յաճախ մտածում էր անել այն, ինչ որ իր խելքն ու կամքը պահանջում էին, բայց խոհեմութիւնը ստիպում էր նրան դեռ էլի համբերել:

Այդ ժամանակամիջոցում տանուտէրը նրանից Նոյզառին հասնելիք դումարը պահանջել էր, համաձայն գիւղական զատաւորների վճռին: Գալուստը մինչև վերջին օրերն էլ յամառում էր տալ, պատճառ բերելով այն, թէ ինքը բողոքելու է զատաւորների վճռի դէմ: Մի քանի անձինք, որոնց սրտերում դեռ ուրիշին կարեկցելու կայծեր էին մնացել, մէջ մտան և խորհուրդ տւին Գալուստին վճարել Նոյզառի ծախսը, որպէս զի դա զանազան խռովութիւնների և չարութիւնների տեղիք չտայ: Նոքա առաջարկեցին այդ հարցը իրանց միջնորդութեամբ վերջացնել, Գրիգորին մի կերպ համոզելով: Գալուստը համաձայնեց, և ահա մի օր, երեք անձինք գնացին Գրիգորի մօտ: Նրանք իրանց հետ վերցրել էին 100 ո.: Եկողները այդ փողը առաջարկեցին Գրիգորին և խնդրեցին, որ նա այդպիսով ընդմիշտ վերջացնի Նոյզառի ծախսի հարցը:

—Վատ բան է, ասաց միջնորդներին մէկը. մէկ շինացի էք, ինչու ձեր մէջ խռովութիւն ծագի. մեզ համար էլ վատ է:

—Ի հարկ է, կցեց միւսը. Գրիգոր, դու արի էս 100 մանէթը միանգամից ստացիր և գործը սրանով էլ վերջանայ զնայ:

—Շատ էլ լաւ կը լինի, ձայնակցեց երրորդ պատգամաւորը. ինզճ Գալուստը տարեկան 50 մանէթ տալով բոլորովին կը քանդուի: Համ էլ ախր իսկի արդարութիւն չի ծախս առնելը. Գրիգոր, մարդը ամեն ինչ աղջկայ հետ քեզ է տուել և աղջկանն էլ սաղ սալամաթ է պահել: Եկ մեր խօսքին ականջ դիր, էս գործը խաղաղութեամբ վերջացնենք: Յետոյ ինքն է իմանում, ուղում է կնիկ տանի, ուղում է չտանի:

—Համաձայն եմ, պատասխանեց Գրիգորը, փոքր ինչ մտածելուց յետոյ. բայց 100 մանէթը քիչ է. 200 մանէթ թող տայ էս զլխից, ես նրանից ձեռք վերցնեմ:

—Երկու հարիւրը շատ է, ասաց հիւրերից մէկը:

—Շատ չի, պատասխանեց Գրիգորը կտրական և վճռական եղանակով:

—Մի բան պակեցրու, էդ շատ շատ է:

—Երկու հարիւր մանէթն էլ քիչ է:

—Ձէ, Գրիգոր, թարսութիւն ես անում: Լաւ, մենք Գալուստին կը համոզենք, որ 125 մանէթ տայ. դու էս գործը վերջացուր: Փողը կը ստանաս և մի թուղթ կը տաս, թէ Գալուստից էդ մասին էլ ոչ մի պահանջ չես անելու: Մենք զօռով էլ է Գալուստից 125 մանէթը կ'առնենք:

—Ձէ, խօսքս խօսք է, կրկնեց Գրիգորը. 200 մանէթ կ'առնեմ, կը հաշուեմ: Յետոյ՝ թուղթ ինչու պիտի տամ. Գալուստը ինձ թուղթ ուսմ, երբ եղբօրս աղջկանը դուրս արաւ տնից: Ես նրան հաւատացի, հիմա նա էդպէս թարսութիւն է անում: Որ նրանից թուղթ առած լինէի, հիմա խոմ կը գար կ'ընկնէր ոտներս, կ'աղաչէր:

—Դէ տեսնում ես, Գրիգոր, որ թուղթը էսպիսի գործերում պէտքական է. ուրեմն պիտի ընդունես մեր առաջարկութիւնը:

—Լաւ, ասենք թէ ընդունեցի, էդ թուղթը տւի. բայց Գալուստը 200 մանէթ տեսնենք տալու է:

—Ելի 200 մանէթի անունը տւիր. ասա չեմ ուզում խաղ անել էլի. ասա ես ուզում եմ կռիւս շարունակել էլի: Ի՞նչ դուրս եկաւ դրանից. մենք եկել ենք ձեզ հաշտեցնենք, բայց դու էլի հէնց քո հէն ես քշում:

—Դրանից պակասով չեմ կարող համաձայնել:

—Եդ չեղաւ, Դրիգոր, պա էն անպիտանը էդպիսի բան կընդունի:

—Յարմար տեղն ես գցել, ուզում ես էն խեղճին խեղղբէլ, գոչեց միջնորդներից ամենահասակաւորը՝ բարկացած. Գալուստը քեզ խօսք էր տւել Նոյզառի ծախքը վճարել իր չիւնարութեան պատճառով: Եթէ թուղթ տւած լինէր, ասա տունը գլխին կը քանդէիր էլի... Հէր օխնած, ի՞նչ է եկել քեզ. էս ես Գալուստն եմ. ինչի՞ ախր ձեր աղջկանը փող տամ. ասա, ինչի՞ համար. մի անասունի մէկը կապել են վզիս, Ծ—Ծ տարի հաց եմ տւել պահել. հիմա տեսնում եմ, որ ինձ կնկութիւն անող չի, միայն իմ կեանքս պիտի սեւացնի. ուղարկում եմ քեզ մօտ. ի՞նչու էլ ախր փող տամ. մեղքս ո՞րն է: Մի քիչ էլ ախր խղճմանք ունեցիր և էն փողովը, որ մենք տալիս ենք, ուրախ կաց:

Դրիգորը լուռ էր:

—Հը', ի՞նչ ես ասում, խօսաց նորից հասակաւորը:

—Լաւ, համաձայն կը լինեմ 150 մանէթով և թուղթ չեմ տալ, պատասխանեց Դրիգորը:

—Այ մարդիկ, վեր կացէք գնանք, ասաց ամենահասակաւորը. սրանից բան չի դուրս գալ. չգիտէք թէ սա ի՞նչ զաւակ է, — յետոյ դառնալով Դրիգորին, ասաց. հարիւր մանէթ էլ վերցրինք հեռներս, որ հէնց հիմա տանք քեզ և գործը վերջացնենք. դէ որ չես ուզում, մեղքը քո վիզը. գնա գլուխդ քարերովը տուր. էնքան իրար բերան կռծեցէք, որ ջաններդ դուրս գայ: Մենք ուզում ենք, որ գործը խաղաղութեամբ վերջանայ. շատ հարկաւորս է, թէ ամեն օր Գալուստի հետ գիւղամիջում իրար գլուխ կը պատռէք, տարին տասներկու ամիս զատարաններում քաշ կը գաք: Դէ որ մեր խորհուրդին ականջ չես դնում, էլ մենք ինչ զատացու ենք էստեղ նստած: Եւ վերկացաւ տեղից:

Դրիգորը դրան էլ լուռութեամբ պատասխանեց: Նա հիւրերին

ուղեկցեց մինչև բակը, որից յետոյ նա կրկին վերադարձաւ սենեակ և սկսեց մտածել իւր մերժումի մասին: Նա դտաւ, որ այդպէս էլ հարկաւոր էր: «Լուչադութեան» զաւաճանքի ջերմ հետեւող Գրիգորը Գալուստի և Նոյզառի արձակման հարցը իր համար աշխատանքի աղբիւր էր դարձնելու: Ի՞նչ թուղթ տալ, քանի որ 100 մանէթը ստանալուց յետոյ, նա կարող է էլ ի նորանոր պահանջներ անել: Եւ հէնց դրա համար էլ ինչու 100 մանէթով համաձայնել և ոչ 200-ով: Քանի զեռ Նոյզառը կենդանի է, Գրիգորը կարող է իր համար մի շահաւէտ դործ դարձնել այդ հարցը:

Միջնորդող անձինք եկան և յայտնեցին Գալուստին իրանց այցելութեան հետեւանքը:

—Մի կոպէկ էլ չտաս Գրիգորին, լսեցիր, ասաց ամենահասակաւորը:

—Ո՞վ է տուղը, պատասխանեց Գալուստը լի արհամարհանքով: Թող գնա գանգատուի, որտեղ ուզում է. լաւ դառաւ, որ 100 ո. մնաց իմ գրպանում:

Գորանից յետոյ Գալուստը վերջնականապէս յայտնեց տանուտէրին, թէ զառաւորների վճռի դէմ՝ բողոքել է և ուրեմն մինչև պատասխան ստանալը ոչինչ չի վճարիլ: Տանուտէրը համաձայնեց սպասել:

Մի ամբողջ տարի ևս բոլորեց: Հոգեւոր իշխանութիւնից դարձեալ պատասխան չկար, իսկ նահանգական կառավարութիւնից նոր քննութիւն էր նշանակւած Գրիգորի պահանջի համար. զիւղական դատաւորները, պրիստաւի օգնականի ներկայութեամբ, պիտի նորից քննէին Գրիգորի ու Գալուստի գործը, որից յետոյ նահանգական կառավարութիւնը կը տար Գալուստին իւր պատասխանը:

Իրերի այդ դրութիւնը Գալուստին յուսահատացրել և կատաղութեան էր հասցրել: Երեք տարի էր անցել այն օրւանից, երբ նա թողել էր Նոյզառին: Երեք տարի իզուր սպասելուց յետոյ, նա վճռեց վերջապէս արհամարհել ամեն ինչ և ամուսնանալ:

Փոյրը, այդ ժամանակի ընթացքում և մանաւանդ վերջին երկու տարին, յաճախ նրան կրկնում էր.

—Այ եղբայր, մինչև երբ դու պիտի ամուրի մնաս. ախր էդ տանը կնիկ է հարկաւոր. խո՞ւմ դու անպսակ չես մնալու. սպասում

ես յիսուն տարեկան դառնաս, որ յետոյ կնիկ տանեմ: Ախր քեզ մի ժառանգ է հարկաւոր. խոմ օջախներս հպիտի քողանայ:

—Պսակելու եմ, ասում էր Գալուստը. տեսնեմ ճիւղ է իմ կըռները յետեիս կապելու: Ինձ ասա, որ էսքան տարի սպասել եմ... Թող ինձ անիծեն, թող կռներս տանեն մէջքիս կապեն: Գիտեմ մեր տէրտէրը չի պսակիլ ինձ. ասելու է՝ դու օրինաւոր կին ունիս, իրաւունք ունիս նորից կնիկ տանելու, քանի որ նոյզաւը հոգեւոր իշխանութեան կողմից չի արձակւած. բայց ես գիտեմ, թէ որտեղից տէրտէր կը բերեմ ու իմ ուղածը կ'անեմ:

—Թշնամիների աչքն էլ կը հանենք, ասաց Անուշկան արագ-արագ. Ակոբենց Ակոբի աղջիկը նախշուն, շնորհքով ու հասած աղջիկ է. նրան նշանենք, Գալուստ: Վառվառի հետ խօսանցել ես էդ բանի մասին, թէ չէ:

—Ձէ, չեմ խօսացել. դու գնա առաւ և միասին խնամախօսութեան գնացէք: Որքան կարող էք՝ շուտ վերջացրէք:

—Այ մարդ, պա՛ղու ի՞նչու չես մի բան ասում, դարձաւ Անուշկան իւր ամուսնուն:

—Ի՞նչ ասեմ. էնպիսի գործ է, որ կարողանամ մի բան ասել:

—Ինչպիսի գործ է, ասաց Գալուստը. ուզում եմ կնիկ տանել, որ տունս չքանդւի, որ օրերս ուրախ անցնի. մեղք եմ անում:

Փեսան ոչինչ չպատասխանեց և գլուխը օրօրելով դարձեալ մտածմունքի մէջ ընկաւ:

Այս խօսակցութիւնը կատարւում էր Գալուստի քրոջ տանը, որից յետոյ Անուշկան Վառվառի մօտ գնաց և յայտնեց նրան իրանց մտադրութիւնը:

—Դու ի՞նչ ես ասում, Վառվառ, լաւ չի լինիլ. մինչև երբ խեղճ եղբայրս սպասի:

—Ես գիտեմ ախր, ղէ ասում են եթէ պսակեն էլ, ծածուկ պիտի պսակեն. զուցէ վառ բաներ եղաւ: Ես գիտեմ. ինչպէս իր խելքն ու կամքն է, էնպէս էլ թող անի. ես կարող եմ արգելք լինել: Ես էլ շատ ուրախ կը լինեմ, որ էս տանը Գալուստ եղբօր և իմ ուղած հարսը լինի: Շատ ուրախ կը լինեմ, որովհետեւ տեսնում եմ, թէ ինչպէս խեղճ մարդը էնքան չարչարւում, նեղութիւններ է քաշում և սիրտն էլ միշտ նեղ է ու նեղ:

—Դէ, ծաղկես, լաւ ես ասում. մեր մտքինն էլ էդ է. Գալուստ ապերը Ակոբենց Ակոբի աղջկանն է հաւանել:

Վառվառը փոքր ինչ կարգի բերեց իր գլխի զարդը և Անուշկայի հետ գնաց խնամախօսութեան:

Ակոբենց Ակոբի կինը՝ Շուշանը, խնամախօսներին պատասխանել էր, թէ ինքը համաձայն է իր աղջիկը Գալուստին տալու, բայց պիտի մարդու հետ ևս խորհրդակցէ, այնպէս որ, նա Վառվառին պատասխան կը տար երկու-երեք օրից յետոյ:

ԳԼ. Ժ.

Ակոբենց Ակոբը տատանւում էր իր աղջկանը Գալուստին տալ, որովհետեւ վերջինս ղեռ կնկաց տէր էր. սակայն նրա բարեկամները և մանաւանդ օտարութիւնից նոր եկած եղբայրը, որ յաճախ նիւթական օգնութիւն էր հասցրել Ակոբին և աչքպիսով նրա վրայ ազդեցութիւն ձեռք բերել, ստիպեցին աղջկայ հօրը ընդունել Գալուստի առաջարկութիւնը:

—Մարիամը տասնեւեց տարեկան աղջիկ է, ասում էր նորեկը. եթէ էլի պահենք, էդ ձեր կ'երթայ... Հազիր դուռ է բացւել նրա համար. տանք գնաց:

—Ես դրան ոչինչ չեմ ասում, պատասխանեց ի վերջոյ Ակոբը. ամա դէ ինձ համար ծանր է թւում աղջկանս էդպիսի մարդու տալը. նա ինքը դործի մէջ ընկած, մինչև օրս հալա չի ազատւել: Վերջը մի վատ բան պատահի, աղջիկս ինձ անէծք տանջ... Պա ես էն ժամանակ կարող եմ մեղքի տակից ազատւե՛լ...

Կրկին անգամ համոզեցուցիչ խորհուրդներ տւին բարեկամները, էլի ձայն բարձրացրեց նորեկ եղբայրը և Ակոբը վերջնականապէս պատասխանեց.

—Դուք զիտէք. ինչ ուզում էք արէք:

Շուշանը իրանց վճիռը խկոյն յայտնեց Վառվառին, իսկ սա Գալուստին և իրանց մօտիկ ազգականներին: Խնամիները, փոխադարձ այցելութիւններ անելուց յետոյ, որոշեցին մի շաբաթեայ ընթացքում ամեն ինչ վերջացնել: Որովհետեւ ժամանակամիջոցը կարճ էր աղջկատիրոջ պատրաստութեան համար, ուստի Շուշանը իր խնամիների համաձայնութիւնն առաւ աղջկայ բաժինքը պսակից

յետոյ տալու: Գալուստը ցանկանում էր կարճ միջոցում և զաղանի կերպով վերջացնել այդ գործը, որպէս զի մինչև պսակը խոչնդոտներ չկանգնեն նրա առաջ: Այժմ նրան գլխաւորապէս զբաղեցնում էր քահանայի հարցը: Տեղական քահանաներից ոչ մէկը չէր համաձայնիլ պսակել Գալուստին, որովհետև նրանք միմեանց հետ շոուն ու կատուէն էին: Անհամերաշխութիւնը և մէկի մշտական կասկածը դէպ միւսը կը վնասէր նրանց այդ գործում: Բացի այդ, նրանք վախենում էին և գործակալից, որը իւր քննութեան առաջին քայլափոխում տեղական քահանաների փեշից կը բռնէր:

— Ի՛նչ ես էղբան միտք անում դրա համար, ասում էր Ակոբի եղբայրը իր փեսայ Գալուստին. ես էնպէս պսակել տամ քեզ, որ քէֆդ գայ: Իմ ձեռքից բան չի կարող պրծնել. միամիտ կաց. դառը ընկնի <sup>1)</sup> փողի զօռով առնէ ինչ անել կը տամ. քո խելքը ռըր է...

— Ես մտաւիր եմ էղուց ջորի նստել ու գնալ Շէն գիւղի քահանայի մօտ: Թէ որ նա համաձայնեց, իսկոյն վեր կ'առնեմ կը դամ: Էնտեղից էնպէս կը ճանապարհւեմ, որ գիշերով էստեղ հասնեմ: Հասնելուս պէս կը գնանք պսակ, որ ոչ ոք չիմանայ:

— Շատ էլ լաւ ես ասում. դու քահանային կը պահես Ասքաւաձորում, իսկ ինքդ կը գաս մեզ իմաց կը տաս: Մենք աղջկան կը վերցնենք կը բերենք էնտեղի եկեղեցում պսակել կը տանք և քահանային էն սրաթին ճանապարհ կը դնենք: Միւս օրը կամ երբ որ յարմար լինի, հարսանքահաց կը տանք:

— Դրա բանը հեշտ է, ասաց Գալուստը երկմտութեամբ. դըլխաւորը պսակի դործն է:

— Հեշտութեամբ գլուխ կը բերենք, միամիտ կաց: Թէ որ Շէն գիւղի տէրտէրը չհամաձայնէ, ես ինքս ձի կը նստեմ, Արազը կ'անցնեմ, կը գնամ էն կողմից քահանայ կը բերեմ և քեզ պսակել կը տամ. խելքդ ռըրտեղ է, պա ես կը թողնեմ որ քո և Մարիամի սիրտը կոտորւի. ինչ մեռածն եմ, որ սար ու ձոր տակն ու վրայ չանեմ:

Այսպէս սիրտ էր տալիս փեսին Ակոբի փոքր եղբայրը, որ մեծ-մեծ խօսելու հետ միասին ունէր իսկապէս և զոչաղութիւն:

Գալուստը գնաց Շէն գիւղի քահանայի յետեից: Քահանան

<sup>1)</sup> Նեղն ընկնի:

սկզբում տատանւում էր մի աշդպիսի ապօրինի դործ կատարելէ ասելով.

—Այ որդի, ակն զու հալա կնիկ ունես, հոգևոր կառավարութիւնը ձեզ արձակում չի տւել. ակն թուրքի օրէնք չի սա. մի կնիկ տանն ունես, մինն էլ ես ուզում...

Բայց և այնպէս, դա չէր խանդարում տէրտէրին սակարկութիւն անել փողի հարցում: Վերջապէս երբ Գալուստը համաձայնեց 25 ուրբի տալ նրան, այն ժամանակ քահանան համաձայնեց գնալ պսակը կատարելու:

Ճանապարհ ընկնելով Շէն գիւղից, նրանք գիշերով տեղ հասան: Քահանան մնաց Վաքաւաձորում, իսկ Գալուստը գիւղ գնաց, որ այդտեղից տասը րոպէի ճանապարհ էր:

Վաքաւաձորը մի աւերակ գիւղ էր, որի հինաւուրց եկեղեցին դեռ կանգնած էր մնացել: Պարսից տիրապետութեան ժամանակ, այդ գիւղի բնակիչները թողել էին իրանց ծննդավայրը ու գաղթել այլ տեղեր, գլխաւորապէս աղքատութեան պատճառով. իսկ սա հետեանք էր պարսից բռնակալ խաների անվերջ հարստահարութեան և նրանց պէս-պէս քմահաճոյքների... Բնակիչների ցիր ու ցան լինելուց. յետոյ, գիւղը աւերակ էր դարձել: Միայն եկեղեցին էր մնացել կանգուն, որտեղ Գալուստի հայրենի գիւղի հասարակութիւնը տարեկան մի անգամ պատարագ և մատաղ էր անել տալիս:

Գալուստը գիւղ մտնելով, ջորին քշեց զէպ աղջկատուն, յայտնեց այնտեղ դործի բարեյաջող ելքը և խնդրեց շտապել: Այնուհետ նա գնաց իւրայինների մօտ:

Այոքը տանը մնաց, իսկ նրա եղբայրը, կինը և երկու ազգական հարսները վերցրին Մարեամին և սուս ու փուս շտապեցին զէպի Վաքաւաձորի եկեղեցին: Գիւղի ծայրին նրանց միացան Գալուստը, Վառվառը և Անուշկան:

Հարսնացուն գնում էր գլխակոր և տխուր: Արտասուքը հանդարտիկ հոսում էր նրա աչքերից, որ աննկատելի էր գիշերային խաւարի մէջ: Միայն նրա երբեմնակի դուրս թռչող հեկեկանքներն էին, որ յայտնի էին դարձնում պսակ գնացողներին հարսնացուի ողբը: Մարիամը լաց էր լինում, ինչպէս և ամեն մի հարսնացու, իր մայրական տնից դուրս բերելուս: Բայց նրա լացը ողորած էր

մի ալլ զգացմունքով ևս, որը կսկծեցնում էր նրա սիրտը և հոգեկան դառն մրմունջ յառաջացնում: «Հողը հսպէս բախտի գլխին, մտածում էր Մարիամը. երեկ նշանեցին, հսօր մարդու են տալիս. տղի հետ մէկ չնստեցի, վեր չկացայ, որ տեսնեմ ինչպէս մարդ է: Ամեն ինչ ծածուկ են անում: Սա էլ հարսանիք է էլի... Ոչ զուռնա, ոչ դափ, ոչ բաղմութիւն... Ընկերուհիներ էլ չունիմ հետս, որ մի քիչ սիրաս բացւի: Ասես որբեայրի կնիկ լինեմ. հինգ հոգի վերցրել են ինձ, գնում պսակ. էն էլ որսեղ... մի հին, քանդած եկեղեցի...»:

Բացի պսակի անշուք պայմաններից, որոնք սաստիկ ճնշում էին մատաղահաս օրիորդի կուրծքը, Մարիամն ունէր և մի ալլ ցաւ. նա չէր ուզում գնալ Գալուստին, որովհետեւ չէր սիրում նրան: Հակակրութիւնը դէպի Երիտասարդը նրա մէջ սաստկացել էր աւելի այն պատճառով, որ Մարիամի ընկերուհիներից մէկը ծաղրալիւր և առեւի յղանակով ասել էր. «Գալուստը թիւ է, որ գնում ես նրան. խո՛ւ՛ ազաբ տղայ չէ. ինքը կնկայ տէր, զիւղումն էլ պատիւ չունի»: Այդ հանգամանքը խոր խոցել էր նրա սիրտը և շարունակում էր տանջել խեղճ աղջկան: Մարիամը սկզբում վախւել-խելով յայանեց իր մօրը, թէ ցանկութիւն չունի Գալուստին գնալու, նրան չի սիրում, բայց մօր նախատինքները և զանազան սպառնալիքները միանգամից լուցրին նրան: Խեղճ աղջիկը այնուհետ ամեն ինչ թաղեց իր կրծքում և այժմ հեզ, անբառբառ, բայց արտասուլից և ալեկոծ հոգով գնում էր պսակ: Ոչ ոք նրա վրայ ուշադրութիւն չէր դարձնում: Միայն Վառվառն էր, որ կամենալով հանգստացնել հարսնացուին, մէկ անգամ նկատեց.

—Լաց չեն լինիլ, զոչաղ կաց. երեսայ չես խոմ:

Վերջապէս պսակաւորները տեղ հասան: Գալուստը վերցրաւ եկեղեցու բանալին, որ պատի մի յաչտնի ձեղքումն էր, բացաւ դուռը, և նրանք ամենքն էլ ներս մտան: Շուտով խոնաւ, ցած և կատարեւապէս աղքատ եկեղեցու ներսը լուսաւորեց ձէթի կանթեղի աղօտ լոյսով և քահանան շուրջաւր ուսերն առնելով, սկսեց իւր աղօթքները:

Մօտ մի ժամից յետոյ, նա վերջացրեց իւր դործը, ստացաւ, մնացած վարձը և դուրս եկաւ եկեղեցուց: Գալուստը նստելով իր

ջորին, զնաց տէրտէրին ուղեկցելու մինչև Շէն գիւղը, իսկ մնացածները վերադարձան տղատուն: Վառվառը հիւրերին մի թեթեւ ընթրիք տւեց, որից յետոյ Ակոբի եղբայրը վերկացաւ և բնաց տուն: Հարսնացուի մայրը մնաց այդտեղ գիշերելու, որպէս զի աղջըկայ համար առաջին անգամ օտար տան մնալը ծանր չլինի:

Հետեւեալ օրը առաւօտեան շատ վաղ արդէն գիւղացոց մէջ իրարանցում էր ընկել:

—Սինոդենց Գալուստը էս գիշեր ծածուկ պսակել է Ակոբենց Ակոբի աղջկայ վրայ, լսում էր ամեն կողմից:

—Հողը նրա մօր գլխին, ասում էին կանայք զայրացած և ատելութեամբ. մէկը լինի նրան ասի, թէ այ երւած, աղջկանդ ուր ես տուել էի տղին. պա խեղճ չի զաւակդ. էլ տղայ չկար...

—Տեսնես ո՞վ է պսակել, ասում էին միմեանց տղամարդիկ, լի հետաքրքրութեամբ:

—Տէր-Գրիգորի բանը կը լինի:

—Տէր-Սահակն էլ դոչաղ է:

—Սպասենք, տեսնենք ինչ խաբար դուրս կը գայ:

Լուրը գիւղական քահանաների ականջներին հասաւ և նրանք գիւղամէջ դուրս եկան: Տէրտէրները հանդիպելին այդտեղ և կատաղութեամբ ու լի հայհոյանքներով միմեանց վրայ յարձակեցին:

—Գետինը մօնես դու, ասաց տէր-Սահակը. էդ ի՞նչ զալաթ ես արել. զնացել ես ապօրինի պսակ կատարել, հմա... Պա չես ամաչում, պա միւռոն չկայ քո ճակատին... պա դու կարգի տէր չես:

—Աղւէսութիւն մի արա, պատասխանեց տէր-Գրիգորը. չես կարող ինձ խաբել. ուզում ես էսքան մարդու աչքին թող փչել... Ամեն ինչ ծածուկ արել ես, հարիւր մանէթը ջէբդ դրել, հիմա ուզում ես խալխի առաջ հարաց-հրոց անելով մեղքդ ինձ վրայ զցես: Ամօթ է, ամօթ է...

—Էս լիրբին, էս լիրբին տեսէք, ինչեր է գլխից դուրս տալիս... Ե՞ս եմ 100 մանէթը կերել, հմա... Պա անցած օրին դու Գալուստի հետ էն լինէիր քսիփիսի անում՝ 1)... Ես եմ նրա հետ խօսողը...

1) Փսփսալ:

—Լաւ, պա դու էս զիշեր մեր փողոցն ի վեր հար էիր դնում, ի՞նչ գործ ունէիր զիշերւայ կիսին. հը՞ր, ասա, ի՞նչ ունէիր:

—Սուտ խօսա, փեշակդ պա ի՞նչ է... Դու ես պսակել, դու, որ մեռնես էլ, դու ես պսակել:

—Դու ես պսակել. որ ճղղաս, ճաքես, տրաքես, դու ես պսակել: Ըհը՛. հարիւր մանէթը ինձ տային՝ ես էլ կը պսակէի:

—Ով որ սուտ է ասում, քահանայական կարգը նրա զլխին խռով կենայ:

—Ամէն, ամէն:

—Անամօթ, լիրբ. սուտ էլ երդում է ուտում:

—Գնա՛, դնա սուս տեղդ նստիր և ճարդ տես. կարծում ես հարիւր մանէթը կարողանալու ես ուտել... քթովդ մուխ պէս դուրս է գալու. հրէս գործակալին պիտի յայտնեմ: Գետինը չի մոնում, առաւօտ-առաւօտ եկել է հրապարակ, ինձ հետ կռիւ սարքում: Ո՞ւմ ես ուզում խաբել. ես քեզ լաւ եմ ճանաչում, էնպէս աղւէսն ես, որ նմանը չկայ. գնա՛:

—Թիւհ երեսիդ, աւազակ, ասաց տէր-Սահակը, հեռանալով մի կողմ:

Հրապարակում գտնուող զիւղացիք, որ շրջապատել էին տէր-տէրներին, քրքջում, ծիծաղում էին և միմեանց ասում.

—Ամա քիչ էր մնում, որ իրար միրուքից բռնեն կախ ընկնեն հաա... Թամիզ աքաղաղի կռիւ էր:

—Ամա տղերք, դարձաւ տէր-Գրիգորը հանդիսականներին. ով որ 100 մանէթը ստացել է, լազաթ է տեսել... Վա՛շ, վա՛շ. ինչպէս բաց թողինք աչքներինս... Էդ պսակը 100 մանէթ պակասով չէին անի:

Այդ ամբողջ օրը տէրտէրները հանդիստ չունէին: Նրանք վերջ ի վերջոյ մէկ մէկ գնացին Գալուստի մօտ եղելութեան մասին տեղեկանալու համար: Թէ ով էր պսակ կատարողը, Գալուստը նրանց չ'ասաց:

—Որ էդպէս է, գործակալին յայտնելու եմ, ասաց տէր-Սահակը բարկացած. դա պսակ չէ, ես էդ քանդել կը տամ:

—Զլինի, տէրտէր, փորացաւանք ունես. պատասխանեց Գալուստը արհամարհանքով. քանդել սուր տեսնենք... մի կուէկ չեո

ստանալ, մի կուէկ: Ի՞նչ է. ուղում էիր, որ էլի սպասեմ, հա. հերիք սպասեցի:

Քահանան տեսնելով որ զուր է շարունակել խօսակցութիւնը, կատաղած դուրս եկաւ Քալուստի մօտից և տուն գնալով, մի թուղթ պատրաստեց գործակալին ուղարկելու: Նա իւր յայտարարութեան մէջ գործի մեղքը տէր-Գրիգորի վրան էր բարդում: Այդպիսի մի թուղթ էլ վերջինս գրեց, մեղքը տէր-Սահակի վրայ բարդելով:

Աղջկատան հարսանքահացից յետոյ, տղատանն էր հացկերոյթը: Արդէն կէսօրւան մօտ էր և հիւրերը խումբ-խումբ զալիս էին: Հրաւիրածներից համարեա ամենքը եկան: Չկային միայն Պետրոսը, Մովսէսը և գիւղի աղսախկաններից երկու անձինք:

Սմենքը այդ պսակը վառ բան էին համարում, մանաւանդ որ գաղտադողի էր կատարած, բայց և այնպէս հրաւիրածների մեծամասնութիւնը ներկայ էր հարսանքահացին:

— Ինչպէս անենք չգնանք, ասում էին նրանք միմեանց. կը նեղանայ Քալուստը. մարդը նեղութիւն է քաշել, պատրաստութիւն տեսել: Ջհաննամը թէ պսակը ապօրինի է. մենք մեր պարտքը կը կատարենք. կը գնանք, կը շնորհաւորենք, մի փոր հաց կ'ուտենք, գինի կը զցենք, դուրս կը գանք: Գլուխը քարերոջն է տւել, որ հզգործը արել է. մեզ ինչ. կը գնանք կ'ուտենք, դուրս կը վանք:

Ձեկողներն էլ ունէին իրանց շարժառիթները. նրանց համար ևս անախորժ և հակիրելի էր այն հանգամանքը, որ Քալուստը մի այդպիսի ապօրինի քայլ էր արել:

— Այդ տղան, ասաց Մովսէսը Պետրոսին, որը նրա մօտն էր եկել այդ դէպքի առիթով զրուցելու. չգիտէ թէ ինչ է գործում. բոլորովին չի հաշուում իր քայլերը: Դեռ մի ցանցից չազատւած՝ միւսի մէջն է խճճւում:

— Ի՞նչպէս, հարցրեց Պետրոսը:

— Նրան դեռ ապահարզան չեն տւել ու Նոյզառը դեռ նրա օրինաւոր կիներն է համաշուում. հետեապէս նա պսակւելու իրաւունք չունէր: Հոգևոր կառավարութեան վերաբերմունքը դէպի նա, որ

Ժամանակի ընթացքում պիտի մեղմանար գուցէ, այժմ առաւել ևս կը խստանայ. նրա այդ պսակը ապօրինի կը համարուի և անշուշտ ապահարզան չի ստանալ երբէք: Դեռ մինչև օրս յոյս կար: Բայց այժմ գործը աւելի ևս բարդուում է հողերու կառավարութեան աչքում: Իսկ նա չէ որ բարդ, խճճաճ գործերով զբաղուելու սէր չունի: Դա մէկ. երկրորդ՝ Գրիգորը իր պահանջների մէջ նոյնպէս կը սատականայ, Գալուստին իր ստանեալների դրութեան մէջ տեսնելով: Մի կողմից դա, միւս կողմից նամուսը, պատուի շուշափումը, որ Գալուստը նրա եղբոր աղջկանը վայր դցած, առանց սրա ծախքը տալու, զնացել մի աչլ աղջկաց վրայ պատկել է, աւելի ևս կը վառեն Գրիգորի կրքերը. նա կ'աշխատի անպատճառ կամ մի խոշոր գումար առնել և յետոյ հաշտել և կամ մինչև վերջ շարունակել իւր պահանջները: Հեռապէս, այս դէպքը նորից շրջութացում, նորից բարդացնում է հարցի լուծումը: Անպիտանը, առանց մի բան յայտնելու, առանց մի խորհրդի, զնացել կատարել է այդ քայլը: Եթէ ինձ յայտնի լինէր, ես կ'աշխատէի արգելել նրան, խորհուրդ կը տայի էլի համբերել: Ժամանակի ընթացքում հարցը գուցէ խաղաղութեամբ վերջանար և երկու կողմերը, որոշ պայմաններով, գուցէ հաշտութեան գային:

— Ես էլ սկզբից դրա մասին ոչինչ չգիտէի, ասաց Պետրոսը. բայց հաղիւ թէ մենք կարողանայինք Գալուստին համոզել էլի սպասելու. նա արդէն երկու տարի է որ սպասում է, բայց մինչև օրս պատասխան չիայ. գուցէ մինչև վերջը այդ հարցը լուծեան տան. յետոյ: Գալուստը առանց կնիկ խոմ չի կարող մնալ: Այլ կերպ նա հաղիւ թէ կարողանար վարել: Պէտք է նրա դրութեան մէջ մտնել:

— Ի հարկէ, նա այդ դրութիւնից մի ելք պիտի գտնէ դուրս գալու, բայց այժմեան ելքը խախտու հիմք ունի. դա նրա համար կարող է նորանոր ցաւերի աղբիւր դառնալ: Քանի որ հանգամանքները աննպաստ էին նրա համար, նա պիտի սպասէր և շարունակ աշխատէր:

— Ես էլ հէնց այդ պատճառով չեմ զնացել հարսանքահացի, յարեց Պետրոսը:

Այն ժամին, երբ հիւրերը ժողովում էին Գալուստի տունը հարսանքահաց ուտելու, Նոյզառի հօրեղբայր Գրիգորը նստած էր իւր սենեակում և գտնւում էր հոգեկան կատաղի դրութեան մէջ: Տեսնելով Գալուստի վարմունքը և դրա մէջ գտնելով մի տեսակ արհամարհանք դէպ իրան, համարելով այդ մի տեսակ յաղթութիւն և ապտակ իւր նամուսին, Գրիգորը անընդհատ լցւում էր վրէժ-խնդրութեան դժգոհութեամբ:

Եւ Գրիգորի գլխում մի միտք ծագեց: Նա կանչեց իր մօտ կնոջը և ասաց.

—Մ' կնիկ, Նոյզառին նոր շորեր հագցրու և հարսի գլուխ կապիր: Եղպէս նրան ուղարկիր Գալուստենց դուռը. միայն էն ժամանակ՝ երբ մարդիկ կը սկսեն հարսանքատնից դուրս գալ: Թող ամենքը տեսնեն, որ դա էլ Գալուստի կնիկն է և շնորհակալութեան փոխարէն թքեն էն անամօթի երեսին. թող խաչտառակի: Եթէ Նոյզառը զնալու չլինի, կռնիցը ինքդ բռնիր, քաշիր տար նրանց տուն և ում որ նրանցից կը տեսնես, ասա. առէք, ձեր հարսն է. հիմա էլ դուք պահեցէք. ինչքան մենք պահեցինք, հերիք է:

—Նոյզառի մէրը էստեղ լինէր և նա անէր էդ բանը, լաւ կը լինէր, ասաց Գրիգորի կինը. ինձ համար լաւ չի:

—Հիմա նրան հրտեղից գտնենք, ասաց Գրիգորը չարացած. ինքդ արա:

Կինը լռեց և զնաց ամուսնու պատուէրը կատարելու: Նոյզառի մայրը՝ Սիմին, մի քանի ամիս կը լինէր, որ նոր մարդու էր գնացել հարեան գիւղերից մէկը, աղջկանը ընդմիշտ Գրիգորի խնամքին թողնելով:

Կարճ միջոցից յետոյ, Նոյզառը նորահարսի հագուստով և գլխի զարդով կանգնած էր Գրիգորի առաջ: Նա չէր հասկանում՝ թէ ինչու էր այդ ամենը: Առաջին անգամն էր գլխի զարդ կրում: Գալուստենց տան նա շարունակ աղջկայ շորերում էր, սկզբներում՝ որովհետեւ փոքր էր, իսկ վերջերում՝ որովհետեւ խելքից պակաս էր: Ճակատանոցը, չիքէն և շալէ աղլուխը այժմ Նոյզառին մի տեսակ բաւականութիւն էին պատճառում. նրա երեսին այդ բոլորին փայլում էր կէս ուրախ և ապշախառն ժպիտ:

Գրիգորի կինը նրան իր հետն առաւ և գնաց Գալուստենց տուն: Դա ուղիղ այն ժամն էր, երբ մարդիկ սկսել էին դուրս գալ հարսանքատնից: Գրիգորի կինը Նոյզառի հետ տեղ հասաւ և Գալուստենց տան սանդուղքների զլուխն էր, երբ մի քանի քայլի վրայ հանդիպեց Գալուստի քրոջը՝ Անուշկային:

—Է՛յ, բէհամենչներ <sup>1)</sup>, անզգամներ, ասաց նա Անուշկային. պա սրան հմ պիտի պահի, որ գնացել էք մի նոր հարս էլ տարել: Հողը ձեր սոված գլխին... Հերիք է, ինչքան մենք հաց տւինք պահեցինք. էս ձեր հարսը, էս էլ դուք. տարէք, ինչ ուզում էք՝ արէք...

Այս ասելով, նա առաջ հրեց Նոյզառին, իսկ ինքը արագ-արագ ցած իջաւ սանդուղքներից: Կտրին գտնուող աղջկերքը և տղայք բարձրաձայն ծիծաղեցին, տեսնելով Նոյզառին հարսի շորերով և սկսեցին հօջ-հօջ գոչել: Դուրս եկող հիւրերը քթների տակ քրմ-ծիծաղ էին տալիս, աչքերով չափում էին Նոյզառին ոտքից մինչև գլուխ և կամացուկ միմեանց ասում:

—Փչանաս դու, Գրիգոր, էլ օջին ունէիր հանելու. էս ինչ խայտառակութիւն է:

Անուշկան չկարողացաւ տանել Գրիգորի կնոջ պատճառած վիրաւորանքը և կատաղութեան հասաւ: Նա իւր ձեռքի ամանները վեր դրեց խոհանոցում և կատարւած դէպքի մասին ոչ ոքի չցատնելով, փրփուրը բերնին դուրս եկաւ կտուրը:

—Ախի՛, էստեղ ի՞նչ բան ունես, գոչեց նա մօտենալով Նոյզառին. ախի՛, տափը մտնես դու, էստեղ ի՞նչ զալաթ ես անում... Էդ հում էք մասխարա անում: Էդ հում էք ուզում խայտառակել. ձեր քոքը <sup>2)</sup> Աստուած կտրի, էդ էր մնացել հմա...

Այս ասելով, նա իր ձեռքը սաստկութեամբ Նոյզառի օձիքից դցեց, մղեց նրան դէպի սանդուղքների զլուխը և այնպիսի ոյժով դէն հրեց իրանից, որ խեղճ աղջիկը չկարողացաւ կանգնել: Նա վայր ընկաւ աստիճանների վրայ ու սկսեց զլորւել... Մի քանի վայրկեան, և Նոյզառը տասն աստիճան բարձրութիւնից ուժգին տրոփոցով գետին ընկաւ ու մնաց տեղը փռւած: Թշուառ ու ան-

<sup>1)</sup> Անամոթներ: <sup>2)</sup> Արմատը:

բախտ էակը ուշքից զնաց: Նրա քթից սկսեց առատ արիւն հոսալ: Գուրս եկող հիւրերից մէկը բարկացաւ Անուշկայի վրայ, հայհոյեց նրան, մօտեցաւ թշուառ զոհին, բարձրացրեց նրան գետնից և ջուր ուղեց: Խաղացող երեխաներից մէկը իսկոյն կուլացով ջուր բերաւ և սրսկեց Նոյզառի գլխին: Քիչ յետոյ, աղջիկը ուշքի եկաւ. քթի արիւնը ընդհատուեց և Նոյզառը կարողացաւ ոտքի կանգնել: Նրա ամբողջ դէմքը այդ բոպէին մի խուլ բողբոջի, թեթեւ զայրոյթի և հոգեկան ու Ֆիդիքական սաստիկ տանջանքների արտայայտութիւն էր ընդունել: Որքան խղճալի էր նա այդ բոպէին:

Քիչ հանգիստ առնելուց յետոյ, Նոյզառը օրօրւելով և հանդարտաբայլ զնաց դէպի տուն: Անուշկան, իր զաղանային վարմունքից յետոյ, նորից խոհանոց մտաւ և յայտնեց Վառվառին կատարւած եղելութիւնը: Բարեկամ կանանց մէջ յուզմունք և զայրոյթ տիրեց: Ամենքն էլ սկսան հայհոյել և անիծել Գրիգորին ու նրա կնոջը:

Միայն Վառվառն էր, որ Անուշկային նախատեց, ասելով.

—Անխիղճ, անասուած բան ես բռնել. աղջիկը ի՞նչ մեղաւոր է. նա մի անմեղ, անբան կնոջանի է. ի՞նչ է հասկանում. աղջիկը մեղք չունի. ինչ ունէիր՝ Գրիգորի կնկանը ասէիր: Ամենքն էլ քեզ կը մեղադրեն զրա համար, որովհետեւ անխիղճ բան ես բռնել: Պա էն քարէ սանդուղքներով մարդ գլորւի, ի՞նչ կը զտունաց:

—Լաւ եմ արել, ձեռքիս մէջ սեղողն է եկել. թող ինձ մեղադրեն. ես ամենի պատասխանն էլ կը տամ:

ԴԼ. ԺԱ.

Գրիգորը այդ վարմունքով մատամբ լուծեց իր վրէժը: Բայց դա մի աննշան օգուտ էր նրա համար. նա մտածում էր պատժել տալ Գալուստին ոստիկանութեան միջոցով և միեւնոյն ժամանակ առնել նրանից Նոյզառի երկու տարւայ ծախքը: Բախաւ խաղում էր Գրիգորի երեսին: Այդ ժամանակներում գիւղ եկաւ դաւառապետը: Նա այցելում էր իւր գաւառի բոլոր գիւղերը, բնակիչների տնտեսական դրութեան հետ ծանօթանալու նպատակով և անձամբ հարցնելու, թէ ով ի՞նչ ցաւ, ով ի՞նչ խնդիր կամ դանդառ ունի: Գրիգորն էլ ներկայացաւ դաւառապետին՝ իր ցաւը յայտնելու:

—Աղա, քեզ մատաղ, ասաց նա. մի գանգատ ունեմ, զի ան արա. Սինդոնեց Գալուստը եղբորս աղջկայ օրինաւոր ամուսինն է: Կնկանը բաց է թողել, ես էլ տարել պահում եմ. հրէս երկու տարի է: Դէ խոմ չէր լինիլ փողոցներում թողնել. եղբորս աղջիկն է, արիւնս է...

—Լաւ, հասկացայ, ընդհատեց նրան գաւառապետը. այդ գործի հետ ես ծանօթ եմ և դրա վարքերեալ մի գրութիւն ունիմ հետս բերած. նահանգական դատարանիցն է: Տանուտէր, գզիրին զրկիր Գալուստի յետեից:

Քիչ ժամանակից յետոյ երկու հակառակորդները, ձեռքները կրծքներին դրած, կանգնած էին գաւառապետի առաջ: Կարճ հարց ու փորձից յետոյ գաւառապետը իր գործերի միջից հանեց մի թուղթ և ասաց Գալուստին.

—Նահանգական դատարանը իւր այս վճռով և հրամանագրով պարտաւորեցնում է քեզ վճարել այս մարդուն քո թողած կնոջ ծախքը վերջին երկու տարւայ համար 100 ու. փող: Քո կինը օրինաւոր կերպով քեզանից չի բաժանւած և ուրեմն դու պարտաւոր ես նրա ծախքը կրելու: Թող յամառութիւններդ ու այսօր և եթ կատարիր հրամանս: Այս մարդը մի նոր գանգատ էլ է անում. դու առաջին կնոջդ թողած, առանց հողեւոր կառավարութեան հրամանի, դնացել ծածուկ մի նոր կին ես տարել: Ինչպէս տեսնում եմ, դու մի անխելք, մի շատ փչացած մարդ պիտի լինես: Դու ամեն քաջափութում օրէնքը ոտիդ տակն ես տալիս: Բայց քեզ թոյլ չեն տալ և դու դրա համար կը պատժւես ինչպէս հարկն է: Քո այդ անօրինակութիւնը և անհնազանդութիւնը տեսնելով, բոլոր գիւղացիք կը փչանան, հետեւելով քեզ նման տխմարներին:

—Աղա, ես ի՞նչ անեմ ախր, կահազելով և թուքը կուլ տալով պատասխանեց Գալուստը. կնիկս խելքից պակաս էր: Հողեւոր կառավարութիւնը ի՞նչու ախր ինձ արձակման թուղթ չի տալիս. մեղքս որն է:

—Ես ի՞նչ գիտեմ ինչու չի տալիս. երեւի հիմունքներ ունի չտալու, և դու պիտի ենթարկւես այդ իշխանութեանը: Իշխանութեան չհպատակողներին գիտես որտեղ են աղարկում, — Սիրիր... Դու այսօր Գրիգորի 100 ուրբին կը տաս և կը պատրաստուես հետո

գաւառական քաղաքը գնալու: Քո ապօրինի և կեղտոտ վարմունքի համար դու բանտ պիտի նստես, որովհետեւ դա յանցանք է, երբ օրինաւոր կին ունես և գնում ես մէկն էլ ծածուկ տանում:

—Աղա, քեզ մատաղ, էդ ինչեր ես ասում. պա ես մեղք չեմ ուզում ես տունս գլխիս քանդիմ. եթէ հանգամանքներին լաւ ծանօթ լինես, ախր էդպէս չես խօսիլ:

—Ես լաւ գիտեմ քո գործի ամբողջ պատմութիւնը և տեսնում եմ, որ միակ մեղաւորը դու ես. ինչու ես գնացել ութ տարեկան աղջիկ տարել, որ հիմա ձեռքին գերի մնաս. ինչու. վրան ասլրանք կար, հան...

—Աղա, անխղճմտանքութիւն է ախր, մրմնջաց Գալուստը. ինձ քաշ ես տալիս տանես հեռի...

—Զաչնդ կորիր, լիրբ, զոչեց գաւառապետը, վեր ցատկելով տեղից. դեռ երկար պիտի խօսեմ. դուրս կորիր աշտակցից և արա աչն, ինչ որ քեզ հրամայւած է: Մէլիք, ասաց նա տանուէրին, սրանից կ'առնես 100 ռուբլի և կը բերես ինձ կը յանձնես: Իսկ դու, Գրիգոր, երեկոցեան ղէմ ինձ մօտ արի և ստացիր փողդ:

—Շնորհակալ եմ, աղա, ասաց Գրիգորը խոնարհելով մինչև զետիկ. Աստուած քեզ սաղ <sup>1)</sup> կեանք տալ:

Եւ դուրս եկաւ:

—Էգուց սոռաօտեան, դարձաւ գաւառապետը Գալուստին. կը պատրաստես և մեզ հետ ճանապարհ կ'ընկնես, լսեցի՞ր:

—Աղա, ախր... մրմնջաց կրկին Գալուստը:

Գալուստը տխուր և մտքամոլոր դուրս եկաւ այդտեղից: Երբ վառվառը հեռաքրքրութեամբ ու կարեկցութեամբ նրան դիմեց, Գալուստի բորբոքւած ու տանջւող կրծքից աղեկտուր ձայնով դուրս թռան այս խօսքերը.

—Ես չեմ իմանում, թէ Աստուած մեր գլխին մինչև երբ պիտի խռով կենայ...

Եւ նա արտասուեց: Յետոյ նա պատմեց եղելութիւնը և ամենքը լուռ ու մունջ, գլուխները կախ զցած, ողբի ու մտաւտանջութեան աշխարհը ընկղմեցին:

<sup>1)</sup> Աւողջ:

—Մէլիք, կանչեց զաւառապետը սենեակում փոքր ինչ անցուղարձ անելուց յետոյ. այդ Գալուստի երկրորդ կնոջ հօրը կանչիւր զայս այստեղ. նրա հետ էլ գործ ունեւ:

Տանուտէրը զգիրին Ակոբենց Ակոբի յետեից ուղարկեց: Ակոբի նորեկ եղբայրը, որ օտարութիւնում երկար տարիներ մնացել էր, ինքն առաջ ընկաւ և ասաց.

—Դու, ապեր, մնայ տանը, ես կ'երթամ. կ'ասեմ եղբայրս տանը չէր, ես եկայ. ոչինչ: Դու (սամ<sup>1)</sup>), խեղճ մարդ ես. տեսնես ի՞նչ գործ է. կը գնաս, նաչալնիկը<sup>2)</sup> երկու խօսք կ'ասի քեզ, լեզուդ կը կապւի և բերանիցդ երկու խօսք չի դուրս գալ:

—Շատ լաւ, Յարութիւն, ասաց Ակոբը. ապրես, դու գնա և ինձ փորձանքից ազատիր:

Կարճ միջոցից յետոյ Յարութիւնը, իր կէս-երուսկական կէս-ասիական նոր զղեստը հագած, արդէն կանգնած էր գաւառապետի առաջ:

—Այն աղջիկը, որ աւել ես Գալուստին, քոնն է, հարցրաւ զաւառապետը:

—Հրամանք ես, աղա:

—Աղջկան մարդու են տալիս նրա կեանքը բախտաւորացնելու, թէ սկսեցնելու համար:

—Բախտաւոր դարձնելու համար, աղա:

—Շուն շան որդի, պա որ այդ զիտես, ի՞նչու աղջկանդ աւել ես այն էշին. պա դու չէիր հասկանում, որ նա կնիկ ունի, օրինաւոր արձակում չի ստացել և ուրեմն այդ պսակը ապօրինի է համարւելո՞ւ: Պա դու չէիր հասկանում, որ դրա համար փեսայիդ կը պատժեն, բանտ կը նստացնեն, պսակը ապօրինի կը համարեն և մէջ տեղ աղջկանդ անունը կը խալտառակի: Իսկ դա քո աղջկայ համար ի՞նչ կը լինի...

Յարութիւնը խեցեղանի նման կարմրել էր. նա ոչինչ չէր կարողանում պատասխանել:

—Աղջիկդ էն տղին սիրո՞ւմ էր:

—Հրր...ամանքս, աղա:

<sup>1)</sup> Անփորձ. <sup>2)</sup> Գաւառապետ.

— Իհարկէ, այդպէս կ'ասես. կարծում ես ձեզ չեմ ճանաչում, թէ ինչ պտուղներ էք: Մէլիք, եսասաւուներից մէկին հստեղ կանչիր:

Բարձրահասակ եսասաւուներից մէկը իսկոյն սենեակ մտաւ և ձեռքը խանչալին դրած կանգնեց դաւառապետի առաջ:

— Աղա, ասաց դաւառապետը թուրքերէն (նա հայ էր և գիտէր հայերէն, թուրքերէն և ռուսերէն), էդ մարդուն մի քանի շալլաղ <sup>1)</sup> ուտացրէք և ճանապարհ դրէք հստեղից:

— Գէդէաք <sup>2)</sup>, ասաց եսասաւուը թուրքերէն, կոպիտ հրամայական և սպառնալի եղանակով և քաշեց Յարութիւնի թւից:

Հէնց որ նոքա դուրս եկան տան բակը, եսասաւուը մտրակի հարւածները սկսեցին տեղալ Յարութիւնի գլխին, մէջքին, ուսերին:

— Այ մարդ, էդ ինչ ես անում, գոչում էր Յարութիւնը հերիք է, խայտառակեցի... ու՛Ֆ, ու՛Ֆ, վաչ, վաչ...

Եսասաւուը առանց ականջ դնելու շարունակում էր իր աշխատանքը, մինչև որ Յարութիւնը մի կերպ ազատուեց նրա ճանկերից ու փախաւ:

Դէպքի լուրը տարածւեց ամբողջ գիւղում:

— Այ շատ լաւ է արել, ասում էին լսողները. էդ հալա քիչ է նրան, պիտի տանի բանտ էլ նստացնի, որ ասեմ հնա. խեղճ Մարիամին վերցրաւ գցեց կրակի մէջ, թէ ես էլ եղբօրս աղջկանը լաւութիւն եմ անում:

Գալուստը դաւառապետի հրամանի համաձայն 100 մանէթ պարտք վերցրեց, որովհետև ինքը չունէր և վճարեց Գրիգորին: Հետևեալ օրը, նա հրաժեշտ տալով իւր տանեցիներին և ազգականներին, դաւառապետի մարդկանց հետ ճանապարհ ընկաւ զէպի դաւառական քաղաքը: Տանեցիք արտասուակալած աչքերով ճանապարհ դրեցին նրան: Նորեկ հարսը, որի աչքերը ամբողջ գիշերը լաց լինելուց կարմրել էին, շարունակում էր իւր հեկեկանքը: Թաց թաշկինակը երեսին բռնած՝ նա անդադար լաց էր լինում: Երբ Գալուստը բոլորովին անյայտացաւ նրա աչքից, այն ժամանակ Մարիամը լացի յուսակտուր և աղեխարշ հեծկլոտցներ դուրս թողնե-

<sup>1)</sup> Մտրակ: <sup>2)</sup> Գնանք:

լով իւր մատաղ կրծքից, ներս ընկաւ սենեակը և, երեսը ձեռներէ մէջ առնելով, շարունակեց իր վայը...

—Վայ իմ անբախտ ջանս, վայ, լսում էր երբեմն նրա լացի միջից. այ մայր, դու պարտական մնաս ինձ էն կեանքում. էս ինչ կրակի մէջ գցեցիր ինձ... Վայ իմ քամբախտ ջանս, վայ...

Վառվառը արտասուքը աչքերին աշխատում էր հանգստացնել նորաւի հարսին, սակայն իզուր...

Գալուստին իւր յանցանքի համար դատապարտեցին երեք ամսը աչք բանտարկութեան: Ուղիղ այդ ժամանակի ընթացքում հոգեւոր իշխանութիւնից, համաձայն գործակալի յայտարարութեան, մի հրամանագիր եկաւ, որով Գալուստի երկրորդ պսակը համարւում էր ապօրինի: Հրամայւած էր քահանաներին եկեղեցու այդ ըմբոստ և անառակ որդուն ժամ չթողնել, նրա տունը չօրհնել և երեխաներին եկեղեցում չմկրտել:

Գործակալի կատարած քննութիւնը բաց արաւ դադտնի պսակող քահանայի անունը: Բայց Շէն գիւղի տէրտէրը իրան չկորցրեց. նա մի քանի մանէթ գործակալին տւաւ, որ սա իր յանցանքը մեղմացնի, իրողութիւնը այլ կերպ ներկայացնելով: Գործակալն էլ զրեց, թէ Գալուստը մի քանի զինւած մարդկանցով եկել և բռնի ոյժով Շէն գիւղի քահանային տարել է իր պսակը անել տւել: Մինչև անգամ նրանք սպառնացել են թէ կը սպանեն, եթէ տէրտէրը չկատարէ իրանց պահանջը:

Գործակալի հետ իւր հաշիւները այդպէս կտրելով, այնուհետև Շէն գիւղի տէրտէրը մի բեռ գինի բարձեց իր ջորուն, ինքն էլ վրան նստեց և ուղղակի քշեց դէպի վիճակային կառավարութիւնը:

Նրա գործը հէնց դրանով էլ վերջացաւ:

ԴԼ. ԺԲ.

Այնցել էր չորս տարի: Գալուստը վաղուց արդէն բանալից աղաւուել, գիւղն էր վերադարձել և շարունակում էր իւր ապրուստը: Վերջին երեք տարեաց ընթացքում նա դարձեալ ոչինչ չէր վճարում Գրիգորին: Վերջինս սկզբներում համբերում էր. Գալուստի վրայ պարտքի ծանրանալը նրան ձեռնառու էր. փողի տեղ Գրիգորը

Վարդը կը լինէր Գալուստի մի լաւ հողը ձեռք բերել, որ փողից տասնապատիկ թանգ արժէր:

Այսպէս էր մտածում Գրիգորը սկզբներում և համբերում էր: Վերջը, երբ Գալուստից ստանալիքը 200-ի մօտեցաւ, նա պահանջեց: Գալուստը այս անգամ կտրակի կերպով մերժեց նրան:

— Զեմ տալու. դա անարդարութիւն է. դու ուզում ես տունս ղլխիս քանդեմ. պարտքի տակ գցես ինձ և յետոյ չօլի երեսն անեմ: Պա քո խղճմտանքը ուր է գնացել... Զեմ տալու. ինչ ուզում ես արա...

Գրիգորը տանուտէրի օգնութեանը ղիմեց: Դա էլ ապարդիւն անցաւ, որից յետոյ նա խնդիրքով դիմեց գաւառապետին: Մի քանի անձինք մէջ տեղ ընկան երկու հակառակորդներին հաշտեցնելու. առաջարկում էին միանալ 100 ա., որ Գրիգորը ընդմիշտ ձեռք վերցնի Նոյզառի ծախքի պահանջից, սակայն, Գրիգորի մեծ գումար պահանջելու և երկու հակառակորդների յամառութիւնների շնորհիւ, միջնորդող մարդկանց ջանքն այս անգամ ևս իզուր անցաւ: Իսկ Գրիգորը իւր խնդիրը ճանապարհ գցեց:

Մշտական այդ խռովութիւններից և սրանեղութիւններից զատ, վար մի հանգամանք ևս, որ խապաւ թունաւորել էր Գալուստի կեանքը: Դա այն էր, որ նրան եկեղեցի չէին թողնում, իբրեւ ապօրինի կին պահողի, զաւակներին եկեղեցում չէին մկրտում և զատկին ու ջրօրհնէքին քահանաները չէին օրհնում նրա տունը: Հոգեւոր կառավարութիւնը այդ պատիժն էր տուել Գալուստին, իսկոյն և եթ միջոցներ առնելով եկեղեցու ըմբոստ որդու անառակ արարքի դէմ:

Այդ հանգամանքի շնորհիւ գիւղացիներից շատերը մի տեսակ խորշում էին Գալուստից և խորթ աչքով էին նայում նրա վրայ: Նոյնն էր և կանանց յարաբերութիւնը դէպի Մարիամը: Գալուստը երբէք չէր մոռանում մի դէպք, որ նրան այնքան ցաւ ու կսկիծ էր պատճառել:

Մի տարի ջրօրհնէքին նա փորձեց եկեղեցի գնալ: Հենց որ նա ներս մտաւ եկեղեցու դռնով ու կանգնեց իւր սովորական տեղը, Ժողովականների մէջ մի շշուկ բարձրացաւ:

— Դուրս, դուրս, լսում էր խառնիճաղանձ աղմուկի միջից:

Բայց Գալուստը անշարժ կանգնած էր իր տեղում: Նրան տիրել էր սաստիկ վրդովմունք ու յուզմունք և նա վճռել էր հակառակել ժողովականների կամքին: Երկար ժամանակ եկեղեցի չգնացած լինելով, նա սաստիկ կարօտ էր զգում նրա կամարները տեսնելու և լսելու ժամերգութեան քաղցրահնչիւն մեղեդիները, այն էլ մի այդպիսի տօնին... Գոնէ այդ ամենը գէթ մի քանի բոսթիլ թեթևութիւն կը պատճառէր նրա ծանրացած հոգուն և թունաւորւած կեանքին: Բայց ժողովուրդը անզգայ էր, քարասիրտ էր...

—Դուրս կորիր, արձազանք տւին նորից եկեղեցու կամարները: Գալուստը դեռ շարունակում էր կանգնած մնալ իր տեղում և չէր կարողանում աղօթել: Մի քանի բոսթիլ յետոյ, մի ծերունի արագութեամբ մօտեցաւ նրան և երկու ապտակ հասցնելով երեսին, հրեց դէպի դուրս:

—Շան որդի, գոչեց ծերունին. ասես երեսը շան երես լինի. ասում են դուրս, դուրս՝ էլի կանգնում է:

Գալուստը յետ-յետ գնաց, արհամարհանքով և դառնութեամբ եկեղեցականներին նայեց, շարժեց գլուխը և ասաց.

—Վայ ձեր հոգուն, ու խեղարի պէս շտապով դուրս ընկաւ եկեղեցուց: Սաստիկ բարկութիւնից նա լաց եղաւ: Նա մօտեցաւ եկեղեցու պատին, գլուխը թեքեց չոր քարերին և իւր դառն արտասուքը թափեց այդ լուռ, անզգայ քարերի առաջ...

Գալուստը երբէք չէր մոռանում այդ դէպքը: Ամեն անգամ յիշելու ս, նրա արիւնը գլխին էր խփում. այդ քան վիրասորւած էին նրա նամուսն ու կրօնական զգացմունքները:

—Էս օր չի, որ ես քաշում եմ, մոռածում էր Գալուստը. երեխաներս եկեղեցում չեն մկրտում, տունս չի օրհնւում, ինձ եկեղեցուց դուրս են անում: Երեք տարի է ժամի երես չեմ տեսել, պատարագի, մատաղի, օրհնած ջրի կարօտ եմ մնացել... Դրանից բացի 50 մանէթ էլ տարեկան վրաս պարտք է աւելանում: Թէև ես չեմ տալիս, բայց Դրիգորը գանգաթի միջոցով առնելու է ինձանից էդ փողը: Փողը չլինի՝ հողս է առնելու... Ամեն ինչ, որ էսպէս մնալու լինի, տունս գլխիս կը քանդուի: Ձեմ իմանում, թէ սրա վերջը ինչ կը լինի:

Ելքի անորոշ և նւազ շողքեր արդէն սկսել էին պտտել Գա-

լուստի մուշկ հոգու մէջ, որ մի գէպք վերջ դրեց այդ մտա-  
տանջութիւններին ու տատանումներին:

Ասուածածին էր: Եկեղեցու զանգակները երրորդ անգամ ար-  
դէն աւարտել էին իրենց մեկամաղձոտ զողանջիւնը. պատարագը  
սկսւել էր: Գիւղացիք շտապով վերադառնում էին այգիներից,  
ձեռքներին բռնած փոքրիկ զամբիւղներ: Նրանք խաղող էին տա-  
նում եկեղեցի օրհնելու: Օրհնած խաղողից ճաշակելով, գիւղացիք  
խաղողապասը բաց կ'անէին:

Գալուստն էլ էր խաղող բերել եկեղեցի: Զամբիւղը ձեռքին  
բռնած, նա կանգնած էր եկեղեցու դռանը և տատանում էր ներս  
մտնել, չիշելով այն տխուր և իրան այնքան տանջանք պատճառած  
դէպքը: Գալուստի դէմքը խղճալի և վշտալի արտայայտութիւն էր  
ընդունել: Նա վճռեց ներս չմտնել և զամբիւղը ջանձնելով իւր ազ-  
գականներից մէկին, վշտալի և աղետարար ձայնով ասաց.

—Առ, Սարգիս, էս էլ մերն է. տար, թող օրհնւի, գիտեմ  
երեսաները օրհնած խաղող են ուզելու:

Սարգիսը առաւ զամբիւղը և մտաւ եկեղեցի. նենգոտ ու քա-  
րասիրտ մարդկանցից մէկը նկատեց այդ և յայտնեց քահանային ու  
երեցփոխին: Երեցփոխն էլ Գալուստի զամբիւղը ձեռքն առնելով,  
սկսեց քթի սակ մրթմրթալ: Նա դուրս եկաւ եկեղեցուց, զամբիւղը  
դռան շէմքի մօտ դրեց և իրանից մի քայլ հեռաւորութեան վրայ  
տեսնելով Գալուստին, մոմռաց.

—Աներես...

Եւ կրկին մտաւ եկեղեցի:

Գալուստը մօտ եկաւ, արագութեամբ ձեռքն առաւ զամբիւղը  
և կատաղած հոգով տուն վերադարձաւ:

—Վէրցուր դնա, փնաս չունի, ասաց նրա ազգական կանանցից  
մէկը, որ հանդիպեց նրան այստեղ. ես ձեզ համար օրհնած խաղող  
կ'ուղարկեմ: Թող Ասուած էգպէս անխիղճների տունը կրակ գցի:

Եւ Գալուստը մտածեց թէ այս բոլոր թշուառութիւններին  
ու անպատուութեան վերջ չի լինիլ, քանի որ Նոյզառը կենդանի  
է. նա մտածեց Նոյզառին լմի կերպ անելը...

Գալուստը կամեցաւ դրա մասին խորհրդակցել մէկի հետ և  
ամենայարմար անձն նա իւր քրոջը համարեց: Նա իւր մոտէինը մի

անգամ յայտնեց Անուշկային և խնդրեց, որ սա բերանից ոչինչ չհանէ, զգոյշ լինի:

Անուշկեա քոյր և եղբայր եռանդով գործի կացան:

ԳԼ. ԺԳ.

Անցել էր այդ օրից մօտաւորապէս մի ամիս: Աշունը նոր էր սկսել և զեռ խաղողի ու մրգեղէնի առատ ժամանակն էր: Գլուշացիք ցերեկը մեծ մասամբ անց էին կացնում այգիներում, գլխաւորապէս այգին տեղական գողերից պահպանելու համար: Տղամարդիկ գիշերն էլ էին պահպանում, արջերի արշաւանքներից խաղողի այգիները ազատ կացուցանելու համար: Բացի այդ ամենից, այգին իւր ամբողջ հրապոյրով դէպի իրեն էր քաշում մարդկանց...

Շաբաթ էր: Անուշկան նոյնպէս այգի էր գնացել և այդ օրը նա լացք էր անում: Դեռ առաւօտեան իր որդու միջոցով իմաց էր արել Գալուստին, որ դաջ այգի ձէն բանի մասին խօսելու: Գալուստը քրոջ մօտ պիտի գնար կէսօրից յետոյ, որովհետեւ այդ ժամանակ միայն Անուշկայի ամուսինը գնացած կը լինի ջրակալ անելու:

Անուշկան լացքը վերջացրել և երեխաների գլուխները լանում էր, որ այգին մտաւ Գալուստը: Որոշւած ժամին մօտ էր:

— Հնձանումը նստիր, ասաց քոյրը. էս սհալթին երեխայոց գլուխները լանամ վերջացնեմ, դամ խօսանք: Պատից կախ արած զամբիւղի մէջ հաց ու մի քիչ տհալ<sup>1)</sup> կայ. վերցուր կեր և գինի խմիր:

— Եհ, իշտահ չունեմ, պատասխանեց Գալուստը. շուտ վերջացրու, եկ տեսնեմ ինչ խաբար ունես:

Եւ նստեց հնձանի շէմքի վրայ տխուր, մտքամոլոր: Անուշկան շտապով լաց երեխաների գլուխները, չորացրեց իւր գոգնոցով, սանրեց և ասաց.

— Դէ, բալէքս, հիմա գնացէք բաղի ներքի պատի գլխին խաղացէք և նայէք, որ ուրիշ մարդ մեր խաղողը չքաղի:

<sup>1)</sup> Խոթած միս, որ լուղի հետ խառնելով պահում են կճուճների մէջ և զարնանն ու ամառը ուտում:

Երեխաները տրտունջ չայտնեցին:

— Գնացէք, ախր որ չգնաք, մեր խաղողը ուրիշ մարդ կը քաղի կը տանի և էլ մենք խաղող չենք ունենալ, որ չամիչ դնենք: Պաշուք ձմեռը ի՞նչ կ'ուտէք: Ամենքը չամիչ կ'ունենան, իսկ մենք ոչ: Գնացէք:

Երեխաները կամաց-կամաց համոզւեցին ու հեռացան այդտեղից:

— Նոր խաբար ունիմ, Գալուստ ապեր, ասաց Անուշկան ուրախ. ներս արի:

Նրա՛ք մտան հնձանը և նստեցին ուռեի ճիւղտներէից գործած օթոցների վրայ:

— Ի՞նչ կայ, հարցրեց Գալուստը:

— Քաղւին ու Օսկին ասում են՝ մենք կ'անենք, պատասխանեց Անուշկան, ձայնը վեր բերելով. թող, ասում են, Գալուստ ապերը 25 մանէթ տայ մեզ, մենք զիտենք թէ ինչպէս կ'անենք:

— Ի՞նչպէս, երբ ասացին, ճրտեղ, հարցրեց Գալուստը զարմացած և լի հետաքրքրութեամբ:

— Երեկ մթնով տուն էի վերադառնում. մենակ էի. երեխաները առաջ էին գնացել. ասել էի առաջից գնացէք սամաւարը կրակ գցէք, որ հայրիկը, վաստակ է լինելու, գայ չայ խմենք: Ճանապարհին պատահեցին ինձ էն երկու փուլը՝ Քաղւին և Օսկին: Սկսեցինք դէսից դէնից խօսալ, վերջը Քաղւին թէ՛ պա եղբայրդ ի՞նչ պիտի անի, ասում են Գրիգորը նորից զանգատուել է. պա ձեր ճարը ի՞նչ պիտի լինի: Օսկին վերկացաւ ասաց թէ, ճի՛շ պիտի լինի. քանի որ Նոյզառը կայ, դրանց զուլսը միշտ զաւմաղալի մէջ է լինելու: Հա՛ յէ, հա, աւացի ես. էն հիւշ ու փուլն էլ չի մեռնում, որ մենք էլ աղատենք էս ցաւ ու կրակից: «Պա ի՞նչ, ասաց Օսկին. խեղճ է Գալուստ ապերը. ասում է, տարեկան էնքան փող պիտի տայ, խեղճ տղամարդը պարտքի տակ պիտի ընկնի, տարին տասներկու ամիս պիտի չարչարի, քրտինք թափի. իսկ Գրիգորը նրա աշխատանքը պիտի տանի ուտի»: Յետոյ Քաղւին թէ՛ «էն օրը տեսայ Գալուստ ապորը. գնում էր արտը ջրելու. էնպէս խեղճս եկաւ որ... ասեմ, այ՛ Ստուած, քեզ մատաղ, ի՞նչ է սրա մեղքը, որ երկինքը զլխին մթնացրել ես...»: Պա՛ա, ասացի ես. էդպիսի կրակի մէջ է ընկել խեղճ եղբայրս. քանի որ Նոյզառը

սաղ է, մենք էս օրերն ենք քաշելու: Յետոյ էդ խօսքիս վրայ Օսկին ծիծաղելով ետ դառնաց ասի. «այ Անուշկա բաջի, պա չէք կարող Նոյզառին մի կերպ անելը, որ շուտ ագնաց դուք էլ ազատւէք...»: Ինչպէս անենք, ասացի ես. «ուր է, մի էդպիսի բան կարողանայինք...»: «Ի՜նչ դժւար բան է, ասաց Օսկին հռհռալով. նրան պարծացնելը լինէ. մի անբան, չիմար անասուն է էլի...»: Վճռէ, ասեմ, աղչի, դու էնպէս ես խօսում, որ ասես էս սհաթին եթէ մօտդ լինէր էն աղջիկը, ամեն ինչ կը վերջացնէիր: «Ի՜նչ ատր լինչ դժւար բան է, ասում է, Նոյզառին մի կերպ անելը...»: Դուք կարող էք, հարցրի ես. նրանք առաջ սուս կացան, յետոյ սկսեցին նազ ու թող անել, վերջը թէ՛ Գալուստ ապերը 25 մանէթ տալ մեզ, մենք անենք: Շատ լաւ, ասացի, ես եղբօրս հետ կը խօսամ և ձեզ պատասխան կը տամ: Յետոյ ասեմ՝ մենք էդ բանի վրայ մտածում էինք, բայց մի յարմար մարդ չէինք գտնում, որ անէր. եղբայրս, ասեմ, Նոյզառին «րոտեղ պիտի տեսնէր. դուք, ասեմ, ամենայարմարն էք, լաւ պատահեցիք, ինչ որ ուղէք կը տանք, միայն թէ արէք: Նրանք էլ թէ՛ լաւ, մենք էլ կը մտածենք, թող Գալուստ ապերը մեզ տեսնի:—

—Անուշկա, խօսաց Գալուստը. վայ թէ նրանց բերաններումը ջուր չտաքանաց, մեզ փորձանքի մէջ զցեն... էն շան տղայ Գրիգորը խոմ գիտես որ էդպիսի պատճառներ է փնտռում մեզ հուպ տալու համար:

—Ձէ, բերաններից չեն հանիլ, կը վախենան. որ հանեն, իրանց էլ է ֆլաս: Հիմա դու ինչ ես ասում, համաձայն ես:

—Համաձայն եմ, միայն թէ էդ անիծածներն անեն... Ես նրանց հետ կը տեսնւեմ, փողի մի մասը կը տամ. կ'ասեմ, որ ինձ էլ յայտնեն սպանման ժամանակն ու տեղը: Մէյիդը <sup>1)</sup> պիտի կորցնել...

—Շատ լաւ, դէ դու նրանց տես և աշխատիր շուտ վերջացնել ամեն ինչ. երկաթը տաք տաք կը ծեծեն: Յետոյ, «վ գիտէ, միտքները կը փոխւի: Ինչ կ'ուզեն՝ տուր: Վերջը եթէ սպանու-թիւնը բացւի էլ, քեզ ոչինչ չի լինիլ. նրանք գործի մէջ կ'ընկնեն:

—Եթէ մէյիդը կորցնենք, իսկի ոչինչ չի բացւիլ:

<sup>1)</sup> Դիակը:

Այս ասելով, Գալուստը վեր կացաւ տեղից և մտածմունքների մէջ ընկղմւած, գնաց դէպի տուն:

— Ինչ լաւ բան կը լինի, եթէ Օսկին ու Թագւին յաջողացնեն էս գործը, մտածում էր Գալուստը ճանապարհին: Բայց Վառվառը էս բանը որ իմանայ, զալմաղալ կը բարձրացնի տանը: Գիտեմ կ'ասի. մեղք է, հողիներս կրակի բաժին կը դառնայ, Էնպէս բաներ կը խօսի, որ կը մնանք սուս արած և կը համոզւենք. բայց դէ զաղարկ խօսքերից ինչ օգուտ. Գրիգորի նման անասուած, ազահ ու նեխւած մարդը աչքերիս առաջ տունըս քանդում է, ես ձեռքերս ծալեմ, մտիկ անեմ ու հալա ասեմ մեղք է...

ԳԼ. ԺԴ.

Գիւղից քառորդ վերստ հեռու, այգեստանների մէջ, մի ժայռոտ բլրի վրայ կանգնած էր դիւղի վանքը: Նա շրջապատւած էր մօտ մի սաժէն բարձրութիւն ունեցող պարսպով և իւր սեփական արտերով ու այգիներով: Առաջներում մէկը միւսի յետևից վարդապետներ էին գալիս այդ վանքում մնում վանքապատկան կալածաները կառավարելու համար: Վերջերս, դիւղի հասարակութեան խնդրի համաձայն, այլ ևս վարդապետ չէր նշանակուում այդտեղ, որովհետև եղածների մեծ մասը մի շարք անվայել գործեր ու ընտանեկան սրբապղծութիւններ կատարելուց յետոյ, հալածւել էին դիւղացիներից: Այժմ վանքը յանձնւած էր այդ մասի գործակալի խնամքին, որը, ինչպէս ասում են, կալածներից ստացած եկամուտի գանձը ինքն էր ուտում, իսկ կոթը ուղարկում վիճակային կառավարութեան: Վանքի պարսպի ներսում կար մի ընդարձակ բակ, մի քանի սենեակներ, հացատուն և գոմ: Ոչ ոք չէր բնակւում այնտեղ:

Ահա այդ սրբավայրի պատերի ներսումն էին կամենում կատարել իրանց դաւադրութիւնը Օսկին և Թագւին: Գրիգորի կնիկը միշտ Թագւուն ասում էր. «Թագւի, ծաղկես, որտեղ գնում էք, Նոյն զառին էլ հետներդ տարէք ման գայ, խեղճ է, սաղ օրը տանը վեր ընկած... ընկեր չունի, բան չունի»: Օգուտելով դրանից դեռ մի կիրակի առաջ Թագւին ու Օսկին իրենց հետ Նոյնգառին մանգալու

էին վերցրել. նոյնը կրկնեցին նաև այս անգամ, դէպի վանքի կողմերը: Նրանք իսկապէս եկան, մտան նախ բակը, ապա սենեակները, դէս ու դէն անցան: Քիչ յետոյ նրանք կանգ առան և յուզւած հոգու ալլալլաւած արտայայտութեամբ իրար երեսի նայեցին:

—Վախենում եմ, ախի, ասաց Թագւին կամացուկ. սիրտս դող է ընկել. պա էստեղ կարող ենք էդ բանը անել. վանքը մեր առաջ կանգնած, ամեն ինչ կը տեսնի, ով գիտէ ինչ պատիժ կը տայ մեզ... Մեղք է... ես զողում եմ, Օսկի...

—Ես էլ եմ վախենում, Թագւի, շատ սահմ<sup>1)</sup> է թւում... Ե՛ր բանը որ էստեղ անենք, վանքը անպատճառ մեզ կամ լալիկ<sup>2)</sup> կը դարձնի, կամ երեսներս շուռ կը տայ դէպի մէջքներս և կամ մեզ քար կը կորացնի...

—Դնանք, դնանք էստեղից, ասաց Թագւին, քայլերը դէպի դուրս ուղղելով. գնանք. մի բան չենք կարող էստեղ շինել, միայն ժամանակը իզուր կը կորչի:

Նրանք դուրս եկան վանքից և շարունակեցին թափառել այգիների ոլոր մոլոր ճանապարհներով: Նոյզառը լուռ և անձայն, ոչխարի պէս գլուխը քաշ արած, հետևում էր նրանց:

—Թագւի, ասաց յանկարծ Օսկին, մի լաւ տեղ միտս ընկաւ. ոչ ոք մեզ չի տեսնիլ. հեռու, թաքուն տեղ է, ծառ և տունկը շատ...

—Որտեղ է, ախի:

—Բոցախչենց հուփուտը<sup>3)</sup>. Թաւ ծառուտք է. ով է տեսնելու. հեռու տեղ է, ով է գալու:

—Լաւ, գնանք:

Կանայք արագացրին իրանց քայլերը: Նրանք երբեմն չեա էին նայում և դանդաղաքալ Նոյզառի վրայ գոչում. ախի, շուտ-շուտ արի...:

Բոցախչենց հուփուտը վանքից քառորդ ժամի վրայ էր գըտնւում, գիւղի այգեստանների սահմաններին մօտ, մի ձորակում: Առուն հոսում էր այգուեղով, այնպէս որ, սօսիները շուտով աճել և

<sup>1)</sup> Զարհուրելի. <sup>2)</sup> Համր:

<sup>3)</sup> Սօսիների բազմութիւն:

խիտ բազմութիւն էին կազմել: Նոցա արանքներում աշտեղ-աշտեղ թթենիներ էլ էին տնկած, իսկ գետինը ծածկած էր կանաչ խոտով: Մշտական զով էր թագաւորում այդտեղ, որովհետեւ արեւը երբէք չէր թափանցում կատարներով միմեանց զրկած սօսիների տակը:

Օսկին ու Քազէին մտան այդ ծառաստանը և խորասուզեցին դէպի նրա թաւուտները: Քիչ յետոյ նրանք կամացուկ, առանց մի ձայն հանելու, նստեցին խոտերի վրայ և վեր բերին ուններից ճղմեղարները <sup>1)</sup>, որոնց մէջ իբր թէ բանջարեղէն պիտի տանէին տուն:

— Պառկենք մի քիչ քնենք, լաւ տեղ է, ասաց յանկարծ Օսկին և ընկաւ մէջքի վրայ:

— Հա, լաւ տեղ է, հով է, ձայնակցեց Քազէին. պառկենք. Նոյզառ, դու էլ պառկիր. և Քազէին դէպ գետին քաշեց Նոյզառի թւը:

Նոյզառը նոյնպէս մեկնեց խոտերի վրայ:

Քիչ անցած, Օսկին կատաղած վագրի պէս վեր թռաւ տեղից, չոքեց Նոյզառի կրծքին և սկսեց իւր կոշտ, ուժեղ մատներով խեղդել նրան. Նոյզառը թափահարում էր իւր ոտներն ու կռները և աղերսալի ու խռպոտ ճիչեր էր արձակում: Նրա աչքերը գանգն էին թռել, դէմքը կարմրել էր և սկսել էր կապտին տալ... Բայց շուտով նրա շնչառութեան հետքերն էլ չքացան. Օսկին մի ձեռքով թշուառի կոկորդը ամուր սեղմած, միւսով հանեց զրպանից մի քրքրւած շորի կտոր և ուժգնութեամբ խցկեց Նոյզառի բերանը: Լսեց մի խուլ, աղիողորմ և ճշախառն խոխուոց, որ կարճ միջոցից յետոյ ընդհատեց: Մի քանի վայրկեան ևս, և զոհը համարեա թէ շնչասպառ դարձաւ: Բայց Օսկին չբաւականացաւ զրանով. նա ճղմեղարի ծուպերից մէկը փաթաթեց Նոյզառի վզին, ծուպի մէկ ծայրը ոտքի տակ դրեց, իսկ միւսը, երկու ձեռքով բռնելով, սկսեց բոլոր ուժով քաշել, խեղդամահ անել... Յետոյ նա միանգամից վեր ցատկեց տեղից և զազանաչին վայրենութեամբ սկսեց դիտել իւր զոհին... Նոյզառը անշնչացած էր. միայն երբեմն-երբեմն նա կա-

<sup>1)</sup> Հասարակ կտաւից կամ ջեշիմից կարած մի քառակուսի կտոր, որի անկիւններից ծուպեր (ծամի պէս գործած թուլ) են կարւած:

տարում էր ջղային ցնցումներ... Վսպէս որ թողնեմ, գուցէ նորից կենդանանայ, անցաւ Սսկու մոքով, նա արագութեամբ չանթեց գետնից մի սրածայր քար և դրանով մի այնպիսի հարած տեց անշնչացած դիակի գլխին, որ գանգը ծակեց և մի խոր ու զարհուրելի վերք բացեց: Արիւնը առատօրէն սկսեց հոսալ լայնարեւրան վերքից և կանաչ խոտը ներկեց մուգ կարմիր գոյնով: Այնուհետեւ Սսկին ձեռքով նշան արաւ իր ընկերուհուն: Թագւին մօտ վազեց և նրանք միասին քաշ տալով դիակը, գլորեցին փոսի մէջ: Թփերից և ծառերից ճղներ կտրտեցին և դոցանով ծածկեցին Նոյզառի մարմինը:

Նրանք հեալով դուրս եկան սօսիների թաւուտից և շտապ քայլերով գնացին դէպի գիւղը: Այդ բոլորի մասին պիտի տեղեկացնէին Գալուստին:

Արդէն մութն ընկնելու վրայ էր:

### Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Այդ օրը երեկոյեան, Նոյզառը չվերադարձաւ տուն: Գրիգորի կինը անհանգիստ դրութեան մէջ էր: Նա վազեց Թագու մօտ և սարսափահար գոչեց.

— Սխչի, Թագւի, ախր Նոյզառը մինչև հիմա չկայ. պա ինչ եղաւ...

— Մեզ հետ եկաւ գիւղամէջ, յետոյ մենք նրան թողինք:

— Եթէ թողիք, պա ուր է, այժմիկդ չմեռնի... Ով գիտէ ռրտեղ է մնացել... մի փորձանք չգայ գլուխը... մութն էլ ընկել է:

— Պա ես գիտեմ...

— Դու չգիտես, պա ով գիտէ. այժմ էրա՞ծ, պա աղջիկը կը տանեն հետը և տուն չեն հասցնիլ... Պա չգիտեմ թէ նա ինչ արարած է. ախր մի դառան նման հէջան է, խելքը ոչինչ չի կտրում... Աքդ չքողանայ... Էս օյին է, որ եկաւ գլուխներին... Սաղ գիւղում խայտառակելու ենք... Սխչի, պա էդպէս յիմարութիւն կ'անեն:

Թագու երեակայութեան առաջ դեռ իր ամբողջ թարմութեամբ կանգնած էր սպանութեան պատկերը: Նա դեռ գունատ էր և ոտով ձեռքով դողում էր: Հարեանուհու հարց ու փորձը

նրան աւելի ևս շփոթեցրեց, նրա յուզումը սաստկացաւ. մի տեսակ սարսափ տիրեց նրան, կարծեց թէ հրէս ամեն ինչ բացւեց... ինքը արդէն կորած է... Նա այլալեւեց... Արտասուքի կաթիլներ երևացին աչքերում, և երբ Գրիգորի կինը նորից նրան վրդոված ձայնով հարցրեց—Ո՞ւր է Նոյզառը. հրտեղ էք թողել... ակնչի, պա էդպէս յիմար բան կ'անեն... ակնչի, չլինի մի փորձանք է պատահել, ինձանից ծածկում էք...—Այն ժամանակ Թագւին զողոթնուն և յուզւած ձայնով պատասխանեց.

—Ասելդ ի՞նչ է. ուզում ես շմռ գցես մեզ վրա... Մենք դազան ենք, ի՞նչ է... Ամօթ չի քեզ համար... Պա մենք խիղճ չունենք...

Եւ Թագւին սխեց հեկեկալ...

Այդ խօսքերից, Թագւու զողից և գունատ դէմքից, Գրիգորի կնոջ մոռով վատ բան անցաւ. Նա մատը կծեց, շտապով տուն վերադարձաւ և ամեն ինչ պատմեց ամուսնուն:

—Գալուստի բանն է լինելու, ասաց Գրիգորը ինքն իրան, և իսկոյն գիւղամէջ դուրս եկաւ: Նա այդ բանի մասին յայտնեց տանուտէրին: Գիւղացիների մէջ իրարանցում ընկաւ: Մի հասակաւոր անձն ասում էր.

—Ես տեսայ, որ Օսկին և Թագւին Նոյզառի հետ կէսօրից յետոյ գնում էին դէպի վանքը:

Իսկ երկու երիտասարդներ էլ վկայում էին թէ իրանք ջորիներով գնացել էին վանքի աղբիւրից ջուր բերելու. մոլթն ընկնելու վրայ էր, ճանապարհին հանդիպել էին Օսկուն և Թագւուն, որոնց հետ Նոյզառ չկար: Ընդհանուր կասկածը շատացաւ: Գիւղամէջը մի աղմկալի բազար էր դարձել:

—Մէլիք, ասաց մի ծերունի, պահապաններ դիր այգիների ճանապարհների վրա, որ, բան է, եթէ սպանող է եղել, մէջիդը չկորցնեն: Հիմա մոլթն է, տղերքը ոչինչ չեն կարող գտնել:

—Էն շան տղի բաներն է լինելու, կրկնում էր յաճախ Գրիգորը կատաղութեամբ, ակնարկելով Գալուստի վրայ:

Տանուտէրը այդ զիշեր մի քանի պահապաններ դրաւ ճանապարհների վրա: Հետեւեալ առաւօտ, լոյսը ծագելուն պէս, բաւականին թուով երիտասարդներ այգիներն ընկան Նոյզառին որոնելու:

նպատակով: Շատ դէս ու դէն ընկնելուց յետոյ նրանք վերջապէս գտան թշուառ զոհի դիակը և բերին գիւղ:

Գալուստը պահապանների և գիւղում տիրող իրարանցման շնորհիւ իրան բոլորովին կորցրել էր. նա չէր կարողացել գնալ դիակը կորցնելու:

Եղեռնագործութիւնը բացւելուց յետոյ Գրիգորը գործի կացաւ: Նա կպաւ Թազւի փեշից, ամեն միջոցներ գործ դրաւ և վերջապէս կարողացաւ խոստովանեցնել Թազուէն: Վերջինս նրան ամեն ինչ պատմեց, իսկ Օսկին բոլորն էլ ուրացաւ:

—Այ շան տղայ Գալուստ, ասում էր Գրիգորը, ատամները կրճտացնելով, արիւնիս վրէժը քեզանից էնպէս հանեմ, տունդ գլխիդ էնպէս քանդեմ, որ քէֆդ դայ, քէֆդ...

Գիւղացի մի քանի մարդիկ մէջ տեղ ընկան երկու հակառակորդներին փողի միջոցով հաշտեցնելու, սակայն իզուր. Գրիգորը չհամաձայնեց: Նա լաւ էր հասկանում իւր դրութիւնը:

—Կնանիք բռնուելու են, մտածում էր Գրիգորը. նրանք մեղքը իրանցից հեռացնելու համար անպատճառ ասելու են. «Գալուստը մեզ սովորեցրեց, փող տւաւ, մենք էլ սպանեցինք»: Ուրեմն Գալուստն էլ է բռնւելու: Եւ եթէ ես նրա հետ հաշտեմ, սուղը (դատարան) ինձ էլ գործի մէջ կը գցի և անպատճառ կը պատժի: Ինչիս է հարկաւոր հաշտւելը, քանի որ առանց դրան էլ ես իմ փողերը կը ստանամ:

Ընդհանուրի տրամադրութիւնն էլ այն էր, որ հաշտութիւն չկացանայ:

—Ի՞նչ ծածկենք, ասում էին շատերը, թող կորչեն զնան... Շան տղայ Գալուստ... էն անմեղ աղջկան, էն անմեղ զառան սպանել է տւել և մենք հիմա ծածկենք: Իսկ էն լիրբերին մաշկել է հարկաւոր, մաշկել... Ա՛յ պարսից օրէնք, որտեղ ես հնա... Պիտի դրանց ոտով ձեռքով կորցնել. մնան էս գիւղում ինչի համար. որ վատ օրինակ դառնան. էսօր դրանք են անում, էգուց մի ուրիշը կ'անի: Կրակի մէջ գցելու, այրելու է էդ քածերին...

Ծանուտների յայտարարութիւնից և Գրիգորի խնդիրքից յետոյ անմիջապէս եկաւ քննիչը, ծանոթացաւ Գալուստի ամուսնութեան ամբողջ պատմութեան հետ, բաւականին հմուտ կերպով քննեց

գործը, և մեղաւոր ճանաչեց այդ եղերնագործութեան մէջ ամենից առաջ Գալուստին, իսկ յետոյ երկու կանանցը: Քննիչը երեքին ևս իր հետ վերցնելով, եսասաւուրների ուղեկցութեամբ տարաւ գաւառական բանտը:

Գալուստի տանը շիւան ու կոծ էր ընկել: Նորատի հարսը անէծք էր թափում իր ծնողների և գլխաւորապէս հօրեղբօր վրա, որոնք նրան անբախտացրին, չպրտելով իրան մի այդպիսի մարդու ճանկերը: Վառվառը տան մի անկիւնում նստած, լուռ ու մունջ արտասում էր, ողբալով Սինդի անվերջ հարւածները կրած և վերջը փլատակւած տան աւերակների վրա: «Յս ի՞նչ պիտի անեմ սրանից յետոյ, անցնում էր Վառվառի մտքով այդ րոպէին: Մի քանի օր առաջ գիւղացիներից մէկը խնդրել էր նրա ձեռքը. Վառվառը տատանում էր դրական պատասխան տալու: «Լաւ դառաւ, որ խօսք չուի, մտածում էր նա, խեղճ է հարսը, կը մնամ էս տանը մինչև մահս, ջահիլ է Մարիամը, կը մխիթարեմ, երեխայոցը մօտիկ կ'անեմ և տունը կը պահպանեմ»:

Թագու հինգ տարեկան տղան վազում էր մօր ետեւից և աղաղակում.

— Վայ մայրիկ, վայ մայրիկ...

Իսկ մայրիկը չէր կարողանում որդուն նայել և լուռ ու մունջ գնում էր եսասաւուրների յետեւից: Վերջը երեխան սկսեց թաւալել գետին և աղերսալի ճիչեր արձակել, երբ նրա մայրը բոլորովին անյայտացաւ: Աղղական կանանցից մէկը բռնեց երեխի կռնից և տարաւ իր տունը:

— Եղպէս, թող տանն կորցնեն, ասում էին աղսախալները լի ատելութեամբ և արհամարհանքով. կախ տալ է դրանց հարկաւոր, կախ տալ...

— Մենակ դրանց չի հարկաւոր կախ տալ, ասաց Մովսէսը, որ կանգնած էր խօսող ծերունիների կողքին. նրանց էլ պիտի կախ տալ, որոնք էսքան տարի պապանձւած մնացին, չուղեցին իրանց մեղքը քաւել, էդ խեղճ Գալուստի գործին մի լուծում չուին և վերջը էսքան զոհերի պատճառ դարձան. նրա ամուսնանալուց զէսը ինչեք ասես չի եղել... Նրանց էլ պիտի կախել...

—Լաւ ես ասում, Մովսէս, պատասխանեց ծերունին. նրանց  
կարգը իրանց գլխին խռով կենայ...

Գործը անցաւ նահանգական դատարան, որը քննութիւնից  
յետոյ յանցաւորներին դատաւարտեց տաժանակիր աշխատանքի.  
Գալուստին տասնհինգ տարւայ, իսկ կանանցից իւրաքանչիւրին  
տասը տարւայ:

Մեղրի գիւղ:

1896 թ.

Վ Ե Ր Զ:

## ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐԸ

---

Շ Ա Ն Թ Ի

---

Լեցուն, պայծառ լուսնին տակ,  
Հեռուն կուրծքը զաշտակին,  
Կըքած լեռներ սպիտակ  
Իրար վրայ կը հակին:

Լեռ, ով ըսաւ. ալեհեր  
Քաւթառներ են խորշումած,  
Որոնք հոտ կուչ են եկեր  
Սաւաններով փաթթըւած:

Ու լրջութեամբ ձառադէմ  
Գլուխ գլխի կը խորհին.  
Գուցէ իմաստ մը գտնեն  
Գոյութեանը աշխարհին:

1894թ. փետր. Լայպցիկ:

## ԿԵԱՆՔ, ՏՈՒՐ ԻՆԾԻ

Շ Ա Ն Թ Ի

Կեանք, տուր ինձի աղմուկ, որոտ.  
Հագիս կռիւ կը մոլորայ.  
Կ'ուզէ անաստ ու փրփրոտ  
Ալիքի պէս պաշար տայ:  
Տուր, բնութիւն, դառնամ ալիք,  
Լոյծ վիշապ մը գալարուն,  
Դէմ տամ մաղձով, ցասուկով լիք  
Բիրտ բռնութեան հովերուն:  
Մէկ ոլորւիմ իջնեմ անդունդ  
Յորձանք բանամ իմ լանչէն,  
Ուր և փշրեմ սաստկապտոյտ  
Սուտն ու կեղծիք մեր մէջէն.  
Մէկ ալ հոսիմ թափով ուժգին  
Մարդոց սրտին զարնեմ խուլ,  
Լըւամ լեզը այդ նուրբ ժայռին,  
Ամբարտաւան, բայց խարխուլ:

Կեանք, տուր ինձի վառ ներշնչման  
Ուժն անպարփակ ու անսանձ,  
Տուր զլորւիմ երկնի վրան  
Ելեքորիկ ուժ դարձած.  
Մտքիս ու հոծ թուխ ամպերուն  
Սաստկաղղորդ շփումէն

Թող լոյս ծնի մոլթ շերտերուն  
 Ու կոյր աչքերը տեսնեն.  
 Երբ ան մարի, ես դառնամ շանթ  
 Սև բարձունքէն զայրագին  
 Իյնամ, զարնեմ շէշտ հրաժանթ  
 Տգիտութեան լերկ դանդին.  
 Ու սպրդիմ տենչերուս հետ  
 Խրւիմ իսկոյն հողին տակ,  
 Ալ թող ընդմիշտ կորչիմ անհետ.  
 Բաւ է հեղ մը տեսնեմ կեանք:

1891 թ. հոկտեմբեր, Պոլիս:

## ՍԵՐԵՆԱԴ ՄԸ

---

Շ Ա Ն Թ Ի

---

Դարձայ տեսայ դէմքըդ սիրուն  
Գանգուրներով շրջանակած,  
Փոքրիկ դէմք մը չար ու շարժուն.  
Ու ցընցում մը մէջս սողաց:

Անգամ մըն ալ շեշտ դիտեցի  
Քու սև բոցոտ աչքերդ աղւոր,  
Սիրտըս բան մը ըսաւ ինձի  
Ու հեշտանքէն թըփռւտաց խոր:

Յաջորդ նայւածքս արդէն իմ տաք  
Զգացմունքիս մէկ կոյս երգն էր,  
Որ աչքերուդ փեղկերուն տակ  
Սերենադս կը նւագէր:

1894թ. ապրիլ, Լալայցիկ:

## Ս Ր Ի Ն Գ Ը

Շ Ա Ն Թ Ի

Մեղմ սրինգի ձայն մը փափուկ ու ոլոր  
Լուռ գիշերին կը գեղգեղէ հեշտօրօր,  
Կարծես անյոյս կը հեծկըլտայ վշտացած,

Մերթ մտածկոտ կը նըլաղի սարսուռով,  
Մերթ ալ յանկարծ ամբողջ կիրք է ու կորով,  
Մինչև նորէն թոյլ ու ժապառա իջնէ ցած:

Լալու իղձ մը կը ճանկըռտէ կոկորդէս  
Ունկընդրելով այդ սիրերգը տենչակէզ,  
Որ եղէգի ծակած կրծքէն կը հոսի.

Կարծես ինծի ու իմ սրտէս կը խօսի:

1893թ. օգոստոս, Ռոդոսթօ.

# ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ Է Պ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

(Շարունակութիւն ¹)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅՈՅՍԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ

## III

Արտաշէս Ոսկերչեանը այն տեսակ անձերից է, որոնք բարե-  
ջաջող պայմանների մէջ առաջ են գնում, մի որոշ դիրք ձեռք բե-  
րում և անուն վաստակում, բայց աննպաստ հանգամանքների մէջ  
ընկճւում և համարեա անհետ կորչում են: Ուստի ես կարեւոր եմ  
համարում ծանօթացնել ընթերցողիս իմ հերոսի անցեալին:  
Չէ որ մարդու բնաւորութիւնը և հասկացողութիւնները ուրիշ  
բան չեն, եթէ ոչ բնածին ժառանգական յատկութիւնների և  
կեանքի մէջ ստացած տպաւորութիւնների մի համադրումաբ: Թէև  
քաջ յայտնի է ինձ, թէ որքան դժւար է որոշել արդէն կազմա-  
կերպւած անձնաւորութեան մէջ որն է բնածին և որը ստացական,  
բայց ես մտադիր եմ այստեղ, մի կողմ թողնելով այն, ինչ են-

¹) Տես «Մուրճ» 1897 թ. № 1:

Թաղրական է, շեշտել միմիայն այն, ինչ որ ինձ անվիճելի է թւում:

Ոսկերչեանի հայրը Երեանի նահանգի մի գիւղաքաղաքի բնակիչ էր: Դա մի շատ կենսուրախ, առողջ մարդ էր. անհող և զւարճասէր, բարեկամի համար կրակից անցնող: Նա արբեցող չէր, բաց ընկերների շրջանում, քէֆերի ժամանակ, դատարկացած գինու շիշերը՝ չէր սիրում հաշել: Նա յայտնի էր ամենքին, իբրև լաւ թառ ածող: Քանի անգամ հասակակից երեխաների մէջ փոքրիկ Արտաշէսը մի առանձին պարծանքով յիշել է. «Իմ հօր նման լաւ թառ ածող չկայ: Եւ ընկերներից ոչ մէկը այդ մասին վիճելու ցանկութիւն չէ զգացել, որովհետեւ որդին ամենայն իրաւունքով հպարտանում էր իւր հօր շնորքով: Եւ հայրը ինչպիսի զգացմունքով էր ածում իւր թառը! Ճունդը ամուր զարնում էր լարերին, թառի կոթը ձեռքին դողդողացնում էր, գլուխը խոնարհում, աչքերը փակում, կարծես հոգով սրտով հնչիւնների հետ ձուլւում էր, և յետոյ աչքերը լայն բաց անում և բարեկամի երեսին նայելով ժպտում և շարունակում էր ածել: Նա շատ սիրում էր իւր Արտաշէսին: Երբ վերջինս դեռ երեք չորս տարեկան էր, նա նստեցնում էր որդուն իւր ծնկան վրայ, ածում էր թառը, և երեխան ականջ էր դնում ամենայն ուշադրութեամբ: Նա մատները շարժում էր լարերի վրայ և որդուն պատւիրում էր ածել, և երբ երկու յաջող հնչիւններ էին լսւում, երեխան խնդում էր, կարծելով թէ ինքն է ածում, և ուրախանում էր հայրը և համբուրում էր նորա ճակատը, ասելով. «բալա ջան, եթէ ես ուրիշ բան չթողնեմ, այս թառս էլ է կը թողնեմ քեզ համար ժառանգութիւն»:

Ահաւասիկ ումից և ինչպէս էր ստացել Ոսկերչեանը գեղարւեստի անհուն սէրը: Թառ չլինի, գիտար լինի—միւսնոյն է:

Ուրիշ բնաւորութիւն էր նորա մայրը: Դա մի զգայուն և թուլասիրտ, բեկուն և դիւրավհատ կին էր: Բաւական էր մի փոքրիկ անյաջողութիւն, որ նա իրան կորցնէր: Մարդը հիւանդանար, նա համարեա սգի մէջ էր արդէն. որդին տկարանար, նա ձեռքերը ծնկներին կը խփէր, կը հեծէր:

Հաստատ կարելի է ասել, որ Արտաշէս Ոսկերչեանը իւր վաւժընուն բնաւորութիւնը ստացել էր իւր հօրից, իսկ շուտ հանգչող և ընկճւող յատկութիւնը՝ իւր մօրից:

Մանկական խաղերի և զանազան զւարճութիւնների մէջ նա սիրում էր առաջնակարգ տեղ բռնել: Եթէ հայրը առաջին թառածողն էր գիւղի մէջ, շատ բնական էր որդու ցանկութիւնը լինել առաջինը՝ լողորդների մէջ, առաջինը գնդակահաղի մէջ և առաջինը ըմբշամարտի մէջ: Նորան յատուկ էր մի տեսակ կենդրոնաձիգ զօրութիւն, որով նա խմբում էր իւր շուրջը համատի ընկերներին: Վերջիններս, այս կամ այն խաղի ժամանակ, դէս ու դէն չէին ընկնում իրանց գլխաւորը ընտրելու համար. «Արտաշէսը կը լինի մեր աւագակապետը», «Արտաշէսը մեր գեներալն է», միաձայն վրձնում էին երեխաները: Նա ժիր և վառվռուն մի տղայ էր, այն տղաներից, որոնց մասին ծնողները ասում են. «կատարեալ կրակ է», «տեղումը տիտիկ անել չգիտէ», «իրան մի վնաս չպատճառի, լաւ է»: Նա օրն ի բուն վազկում էր փողոցներում, խաղում մանուկների հետ, լացացնում, ծիծաղեցնում և երեկոները յոգնած գալիս տուն և քնում մեռածի պէս:

Հայրը, որ բաւականին ազատ էր պահում որդուն, նորա բնաւորութեան մէջ մի ճիշտ գիծ էր նկատել: Նա ասում էր, «Եթէ Արտաշէսը լաւ տղայ է, բայց մի քիչ զովք վերցնող է. եթէ նորան զովես, կտրիցը իրան կը գցի տակը»: զովք վերցնելը ուրիշ բան չէ նշանակում, եթէ ոչ փառասիրութիւն:

Գիւղի դպրոցական կեանքից մի բան միայն անջնջելի հետք էր թողել նորա մտքի մէջ, այն է, թատրոնական ներկայացումները, որոնք տեղի էին ունենում ուսումնարանի դահլիճում տարին մի երկու անգամ՝ ուսուցիչների նախաձեռնութեամբ: Այդ ներկայացումները մտաբերելիս Ոսկերչեանի ցիշողութեան մէջ վերականգնում էին փայլուն վահաններ և նիզակներ, փետրաւոր սաղաւարտներ, խմբական երգեր, աղմուկ և շղթաների ձայն: Աստծուն է յայտնի, թէ մեր պատմական դրամաներից որն էր այդպիսի տաւալորութիւն գործել նորա վրայ: Նորան շատ դուր էին եկել մանաւանդ սատանաները «Օսկան Պետրովիչը դժոխքում» պիեսի մէջ: Այնպէս որ մի կերպ կարողացաւ ձեռք բերել սատանայի շոր: Շատ անգամ նա հագնում էր այդ շորը և, ինչ ասել կ'ուզէ, ոտից ց'գլուխ սև սատանայ էր դառնում, այնքան ահռելի կերպարանք էր ստանում: Այդպէս կերպարանափոխւած նա դուրս էր գալիս երե-

խաների առաջը ի մեծ սարսափ փոքրիկ մանուկների և ի մեծ զւարճութիւն հասկացող տղաների: Նա պար էր գալիս, եղջիւրաւոր զլուխը տմբտմբացնում, ահագին երկայն քիթը օրօրում, խաղում պոչի հետ, ծւում էր, ունում էր, ընկերների վրայ յարձակում, և, Աստուած, ինչ աղմուկ, ինչ կենդանի ծիծաղ էր բարձրանում այն ուրախ, աշխոյժ երեխաների շրջանում:

Մանկութեան օրերում Ոսկերչեանին մի անբախտութիւն պատահեց, որը անհետեանք չանցաւ նորա բնաւորութեան նկատմամբ: Տասն և մէկ տարեկան հասակում նա կրկին անգամ ծաղիկ հանեց, երևի, առաջին անգամ ծաղիկը լաւ պատուաստած չլինելու պատճառով, և վտանգաւոր կերպով հիւանդացաւ: Կըր բշտիկները ապականեցին նորա սիրուն երեսը, քիթը, ճակատը: Ծնողների ասելով, Ասածոյ ողորմութեամբ էր, որ աչքերը չփնասեցին: Երբ առողջանալուց յետոյ մի օր նա տեսաւ հայելու մէջ իւր դէմքը, որի վրայ կաշին այնքան կծկւել, այլանդակւել էր, որ դժւարանում էր այդ երեսը իրանը համարել, նա առաջին անգամ զղաց խորին վիշտ, յաւիտեան անբուժելի մի ցաւ: Թէպէտ ծնողները միշտ նորան մխիթարում էին, ասելով թէ մարդու բնութիւնն է գովելի, ոչ թէ դեղեցկութիւնը, և նա ինքն էլ իրան մխիթարում էր այդ մտքով, բայց այնուամենայնիւ այդ փորձանքը իւր անջնջելի հետքը թողեց նորա բնաւորութեան վրայ: Նա մասամբ կորցրեց իւր նախկին աշխուժութիւնը, լրջացաւ, և նորա ձայնի մէջ լսում էր արդէն մի ինչ որ մեղամաղձոտ հնչիւն: Այսպէս անցաւ Ոսկերչեանի մանկութիւնը:

Երբ Ոսկերչեանը տասներեք տարեկան էր, հայրը ուղարկեց նորան Թիֆլիս՝ ուսման: Նորա մօրեղբայրը, որը այդ միջոցին առւտրական գործեր ունէր այդ քաղաքում, Արտաշէսին տեղաւորեց Ջառիկեանների ընտանիքի մէջ. վեցերորդ դասարանի մի գիմնազիստ նորան պիտի պատրաստէր գիմնազիոնի առաջին դասարանի համար: Ամսավճարը ընդամենը քսան և հինգ մանէթ էր, որից 15-ը ուղարկելու էր հայրը, իսկ մնացածը պիտի լրացնէր քեռին իւր պարտքի փոխարէն: Մի տարուց յետ, հետեւեալ սեպտեմբերին բաւականին յաջող քննութիւն տալուց յետոյ, նա համազգեստը հագած արդէն յաճախում էր գիմնազիոն:

Շնորհիւ իւր կցւող և շուտ ընկերացող բնաւորութեանը, Ոսկերչեանը այնքան էլ օտար չէր զգում իրան կեանքի բոլորովին փոխւած պայմանների մէջ: Մի երկու ամսից յետոյ նա ընտելացաւ իւր ընկերներին, ուսուցիչներին և ուսումնարանի կարգ ու կանոնին:

Զարմանալի բան. գիւղի ծխական դպրոցում նա ծոյլ էր վերին աստիճանի: Դասատուները նորա մէջ մի առանձին ընդունակութուն չտեսան: Նա անհանգիստ էր, չար էր և դասատան պեղծ էր համարւում: Համբերութիւնից հանում էր նամանաւանդ թաւաբանութեան ուսուցչին, որը մի այնպիսի կարծիք էր կազմել և յաճախ յայտնել մանկավարժական ժողովում, թէ «այդ չար պատուհասը մտածելու բոլորովին անընդունակ է»: Բայց եթէ նա ետինն էր ուսման մէջ, առաջինն էր խաղերի մէջ: Այժմ երբ նորա միտքը փոքր ինչ բացւել է, և նա կարծես սկսել է հասկանալ ուսման նշանակութիւնը, երբ առաւել մեծ պարծանք է համարւում ուսման մէջ առաջինը լինել, քան թէ զանազան չարութիւնների մէջ, նա նոյն տաքութեամբ, որով առաջ անձնատուր էր լինում խաղերին, այժմ իրան նւիրել է ուսման: Սենեկի մէջ առանձնացած՝ նա կարդում էր, գրում էր, անգիր էր անում, նստում էր մինչև կէս գիշեր, այնպէս որ «մայրիկը» շատ անգամ ստիպւած էր լինում դալ և հանգցնել ճրագը, յիշեցնելով, որ բաւական է, ինչքան պարապեց, հիմա քնելու ժամանակ է: Դորա փոխարէն, նա առաւօտները շատ կանուխ վեր էր կենում և էլի կպչում իւր դասերից: Առանձին սիրով նա անգիր էր անում ոտանաւորները: Ահազին ժամանակ էր կորցնում թաւաբանութեան վրայ, որպէս զի միաւոր կամ երկու չստանալ, և շարունակում էր ատել այդ առարկան և առարկայի դասատուին: Այն օրը, երբ թաւաբանութեան դաս էր լինում, նորա օրը սկսնում էր, իսկ երբ դասը անցնում էր, սիրտը հանգստանում էր: Ներքորդ և չորրորդ դասարաններում նա շատ սիրում էր լատիներէնը և յունարէնը, անգիր անում ամբողջ գլուխներ Յուլիոս Կեսարի «De bello Gallico» յիշատակարանից, յետոյ Քսենոփոնի «Նափանշից»: Այդ բոլորի մէջ երևում էր նաև սնտուկութիւն—դուր գալ ուսուցիչներին և պարծենալ ընկերների առաջ:

Շնորհիւ իւր ընդունակութեան և ջանասիրութեան, նա մասամբ կարողացաւ հասնել իւր նպատակին, այսինքն, ընկնել առաջին աշակերտների շարքը: Ամենից առաջինը լինել, սակայն, նորան չյաջողեց: Մի երկամսեակում միայն թւանշանները բաժանելիս դաստիարակը նորան անւանեց առաջին աշակերտ, դովեց վարքը, և երբ թերթիկը յանձնեց Ոսկերչեանին, վերջինիս քնքերը փայլեցին ուրախութիւնից, և նա մի քանի օր իրան «եօթներորդ երկընքումն» էր զգում: Բացի թւաբանութիւնից և աշխարհագրութիւնից, որոնցից չորսեր էին, բոլոր առարկաներից հնգեր ունէր: Երրորդ դասարանից չորրորդը փոխադրելիս նա արժանացաւ առաջին աստիճանի դարգեւի—դա Լերմոնտովի փառակազմ հատորն էր: Չորրորդից հինգերորդը անցաւ միայն գովասանական ոսկետառ թերթով: Յիշեալ բանը այսպէս շարունակէր, հաւանական է, որ նա շատ լաւ աւարտէր միջնակարգ դպրոցը: Բայց մօտաւորապէս հինգերորդ դասարանում դաշթակղութեան քարեր են ընկնում հրապուրելու պատանիների առաջ, ոմանք սաշթաքում և ընկնում են, շատերը հազիւհազ կարողանում են հասունութեան վկայական ստանալ, քչերը միայն չեն դաշթակղում և, ընդհակառակը, կրկնապատկում են իրանց եռանդը և աշխատասիրութիւնը: Ոսկերչեանը չստացաւ հասունութեան վկայական, որովհետեւ ժամանակից շատ վաղ հասունացաւ: Եւ ահա այդ ինչպէս եղաւ:

Չորրորդ դասարանում նա մտերմացաւ մի քանի ընկերների հետ, որոնց մասին այն կարծիքն էր տիրում դասատանը, թէ «շատ զարգացած են»: Նոքա յաճախ հաւաքւում էին մէկի տանը, և էլ ինչ փիլիսոփայական հարցեր ասես էին շօշափում: Նոքա աւելի մօտեցան իրար մանաւանդ հինգերորդում:

—Միթէ արժէր այնքան ժամանակ կորցնել զոսերի վրայ, որ մենք էինք կորցնում, ասում էր մէկը: Ինչ յիմար էինք: Եւ ոչ ոք մեզ չէր հասկացնում, թէ այն ամենը, ինչ սովորում ենք, շուտով պիտի մոռանանք, զարգացումն է, որ մեզ պէտք է դալիս: Հօ երեքներով կարելի է փոխադրել? Ի Ծագա! Մնացած ժամանակը նւիրել ընթերցանութեան!

—Իհարկէ, պէտք է զարգանալ, կրկնում էր երկրորդը:

Եւ ինչ մեծ-մեծ մարդկանց անուններ էին յիշում—Դարւին, Ռըն-

ան, Հումբոլդտ, Կոնտ, Կանտ!... Ինչպիսի խորիմաստ վկայութիւններ էին բերում այդ գիտնականների գրքերից!

Ոսկերչեանը իրան ոչնչացած էր զգում նոցա առաջ: Բնկերները ինչեր են կարդացել, իսկ ինքը... Եւ նա տխրում էր և վրձնում այդ փրկստփայլութեան համը առնել:

—Ափսոս այնքան ժամանակ, որ մենք կորցրել ենք մեռած լեզուների վրայ! Դուրս փոխարէնը եթէ մենք բնական գիտութիւններ սովորած լինէինք, այն ժամանակ ուրիշ բան է!...

—Իմ եղբայրը երկու տարի չկայ աւարտել է, հիմա ասում է, որ յունարէն հոլովելը նոյն իսկ մոռացել է!...

—Նու, տեսնում էք, արժէ ուրեմն?...

Խօսք էր բացւում գիտութեան և գեղարւեստի մասին: Խընկարկւում էր գիտութիւնը, իսկ շատ ստոր դասում գեղարւեստը: Այդ տաք զլուխներից մէկը սլարճենալով ասում էր.

—Մի տարի է, ես այլ ևս չեմ կարդում ոչ վէպեր, ոչ բանաստեղծութիւններ: Ինչ են տալիս մեզ այդ տեսակ զբաւմունքը? Ոչինչ, համարեա ոչինչ! Աւելի լաւ չէ զարգանալ, ծանօթանալ փրկստփայլութեան, ուսումնասիրել բնական գիտութիւնները?

—Այ, օրինակ, Պուշկինը: Այնքան կարդացել, վերլուծել, անգիր ենք արել, որ ինչ? Նա մեզ ինչ տւեց?

—Կարդացել էք Պիսարեի քննադատութիւնը Պուշկինի մասին? Ոչ? Ափսոս! Ապա մի կարդացէք, տեսէք, ինչպէս խիստ քննադատում, գզգզում, ոչնչացնում է նորան! Նա ուղղակի նորան անւանում է „нашъ миленькій Пушкинъ!“

Այդ պատանիներից մէկը այնքան հեռու էր գնում, որ ժխտում էր նոյն իսկ թատրոնի նշանակութիւնը:

—Ձոն Ստիւարտ Միլլի մի երեսը, ասում էր նա, աւելի զարգացուցիչ և աւելի թանկ արժէ ինձ համար, քան թէ թատրոնը իւր բոլոր ընկերակցութեամբ: Նա միայն ջղեր է գրգռում, զգացմունքների վրայ ազդում, իսկ մտքի հետ ոչ մի գործ չունի!...

Յաւալի էր տեսնել, թէ ինչպէս այս ազնիւ, մաքուր պատանիները շրջանը, որը խմբւում էր զարգանալու գովելի ցանկութեամբ, շնորհիւ անկանոն ընթերցանութեան և ղեկավարի բացա-

կայութեան, իւր ոտը դնում էր միակողմանի և ուրեմն ծուռ ճանապարհի վրայ!

Այդ շրջանը, ճիշտ է, մասամբ լաւ ազդեցութիւն արաւ Ոսկերչեանի վրայ: Նորա շնորհիւ էր, որ վերջինը սկսեց աւելի պահանջ զգալ զարգանալու, և սիրեց ընթերցանութիւնը: Բայց լաւ ճանաչելով դիւրագրաւ պատանու բնավորութիւնը, վաղօրօք կարելի էր դուշակել, որ նա, իւր բոլոր էութեամբ անձնատուր լինելով զրքերի ընթերցանութեանը, մոռացութեան պիտի տար իւր աշակերտական պարտաւորութիւնները, մի հանգամանք, որի հետեանքը պիտի լինէր ետադիմութիւն առարկաների ուսման մէջ: Այդպէս էլ եղաւ, մանաւանդ որ, բացի այդ, նորա գլխի մէջ նստեցրել էին այն միտքը, թէ բաւական է երեքներով փոխադրել և դպրոցը աւարտել: Այնուհետեւ նա սկսեց թոյլ վերաբերել դասերին, և նորա ծուլանալը պարզ նկատեցին շատ ուսուցիչներ, այնպէս որ այդ մասին մինչև անդամ խօսք եղաւ և ցաւ յայտնեց մանկավարժական ժողովի նիստում: Առաջին նստարանից նա ետ-ետ դնաց և վեցերորդ դասատանը նա նստում էր ամենավերջին կարգում: Դասերի ժամանակ աչքը զրբից չէր հեռացնում, այնպէս որ ուսուցիչները քանի անգամ բռնել են նորան և զիրքը ձեռքիցը խլել: Լատիններէնի դասատուն մանաւանդ շատ էր ափսոսում նորա ծուլանալու վրայ:

—Эхъ, Воскерччянъ, вы совсѣмъ измѣнились! ասում էր նա և գլուխը դժգոհութեամբ շարժում:

Զնայած տեսչի և ուսուցիչների նկատողութիւններին և խրատներին, նա խելքի չեկաւ և երբէք չկարողացաւ համոզուել, որ հարկաւոր է հաւասարակշռութիւն պահպանել ընթերցանութեան և առարկաների ուսման մէջ, և ոչ մի կերպ չպէտք է մէկը զոհել միւսին:

Նա կարդում էր, դասերի ժամանակ, դասամիջոցներին, կարդում էր տանը: Աշխատասէր աշակերտներին, որոնք նոյն իսկ դասամիջոցներին նորից և նորից կրկնում են տանը սերտած դասերը, նա կնքում էր „зубрякъ“ անունով:

Երբ նա տեսնում էր, որ ընկերը դասամիջոցին անց ու զարձ է անում դասարանի մէջ և ինչ որ մի բան մի քանի անգամ կրկն-

ուժանգիր էր անում, նա գլուխը բարձրացնում էր գրքից և ներողամիտ ժպիտով արտասանում էր.

—Вотъ зубрякъ! և էլի գլուխը կոխում էր գրքի մէջ:

Վերև յիշած շրջանը, սակայն, մի նշանաւոր կէտի մէջ, անկարող եղաւ ազդել Ոսկերչեանի վրայ: Նորա սէրը դէպի գեղարւեստը ոչ միայն չհանգաւ, այլ գնալով, աւելի և աւելի զարգանում էր նորա մէջ և կլանում ուշ ու միտքը, նորա բոլոր հոլթիւնը: Ընթերցանութեան գրքերի ընտրութեան մէջ նա առաջնորդւում էր ոչ թէ իւր ընկերների ցուցմունքներով, այլ իւր սեփական հակամտերով: Սկզբումը, իրաւ է, նա իւր շրջանի օրինակին հետևելով, ձեռք բերեց մի քանի փիլիսոփայական և լուրջ գիտնական շարադրութիւններ, օրինակ, Սպենսերի «Հասարակագիտութիւնը», Դարւինի «Տեսականների ծագումը», Ռընանի «Ինչ է ազգութիւնը» և այլն: Բայց այդ տեսակ գրքերը, որոնց բովանդակութիւնը նա կիսատ պռատ էր հասկանում, որովհետև նորա հասակին և հասկացողութիւններին դեռ ևս անմատչելի էին նոքա, նա շուտով ծալեց մի կողմ դրեց, առանց որ և է ափսոսանք զգալու, և յետոյ վրայ պրծաւ Շէքսպիրի, Շիլլերի, Գէթէի, Բայրնի վրայ: Մանաւանդ առաջինը զարձաւ նորա իղէալը: Նա համարեա ասուածացնում էր Շէքսպիրին: Պուշկինի և Լերմոնտովի բանաստեղծութիւններից շատերը և մի քանի պոէմաները անգիր գիտէր: Անգիր արտասանում էր մենախօսութիւններ Գրիբոեդովի «Խեղքից պատուհասից», Պուշկինի «Բորիս Գոգոնովից» ամբողջ տեսարաններ և այլն: Նորա սիրելի քննադատներն էին Բելինսկից և Գերլինսկու: Գործընկերներից օգտւում էր: Պիսարևին ատում էր ի բոլոր սրտէ, այնպէս որ, երբ նա իւր ընկերների շրջանում զատապարտում էր այդ քննադատին, որ նա չարգանք չէ տածում դէպի գեղարւեստը, վերջինների մաղերը համարեա բիզ-բիզ էին կանգնում, նոքա կատաղում էին, տաքանում, ձեռքները խփում սեղանին և յաճախ կրկնում. «ես համոզւած եմ, որ...»:

Նա հաճութեամբ կարդում էր մեծ գրողների կենսագրութիւնները, միևնոյն ժամանակ միշտ համանման գծեր էր գտնում իւր և այն հանճարի բնաւորութեան մէջ, որի կեանքի պատմութիւնը կարդում էր: «Բայրնը շատ անհանգիստ բնաւորութիւն ու-

նէր», կարգում էր նա: «Ես էլ իսկ և իսկ այդպէս եմ», մտածում էր նա: «Շիլլէրը հրապուրեող և իդէալական անձնաւորութիւն էր», կարգում էր նա: «Ինչքան նման է եղել իմ բնաւորութեանը», մտածում էր նա: Իւր մէջ նա որոնում էր մեծութեան նշաններ, և այդ նշանները նա գտնում էր մեծ մարդկանց կենսագրութիւններին մէջ: Ինչ բան է տաղանդը? Նա պիտի զառնայ հանճար, և մեծ հանճար! Եւ այսպէս ահա մեծ լինելու փափաղը զարձաւ Ոսկերչեանի հոգու հիւանդ կողմը, աւելի լաւ, մի մեծ մոլութիւն, մի տեսակ mania grandiosa:

Գեղարւեստի բոլոր ճիւղերից նա ամենից շատ սիրում էր Թատրոնը և ամենից բարձ դասում: Նա այն կարծիքի էր, որ ներկայացումներով կարելի է հրաշքներ պործել վարք ու բարքի բարեփոխման վերաբերմամբ: Այդ կարծիքը նորա մէջ արմատացրել էին նախ Էկկարդը, որ ասում է Թէ գրամատիկական բանաստեղծութիւնը և բեմը գեղարւեստների պատկն է, որովհետեւ Թատրոնը ամփոփում է իւր մէջ գեղարւեստի բոլոր ճիւղերը—պօզէզիան, երաժշտութիւնը, ճարտարապետութիւնը, նկարչութիւնը և արձանագործութիւնը, և յետոյ Շիլլէրը, որը իւր Թատրոնի մասին գրած դատողութեան մէջ մեծ կրթիչ նշանակութիւն է տալիս այդ հիմնարկութեանը:

Թատրոնի այն տեսակ սիրահարներին էր Ոսկերչեանը, որ եթէ մէկը վատ խօսէր Թատրոնի մասին, միևնոյն է Թէ խորին վիրաւորանք հասցնէր նորա անձնաւորութեանը: Նրբ վրպանում փող էր լինում, նա ներկայացում բաց չէր թողնում:

Իւր բեմական ընդունակութիւնների մասին նա ոչ մի կասկած չ'ունէր: Մանաւանդ սաստիկ շոյական էին նորա համար գրականութեան ուսուցչի (միակը, որին սիրում էր և որի տւած դասերը մինչև վերջ սիրով պատրաստում) այն խօսքերը, որ նա ասաց Ոսկերչեանին, երբ վերջինը հինգերորդ դասարանում զգացմունքով և խելացի շեշտադրութեամբ արտասանեց Շիլլէրի բալլադը («Իբիկոսի կռուները»):

— Воскрячянъ читаетъ стихи, какъ настоящій артистъ!

Այնուհետև ընկերները նորա անունը գրին— «настоящій артистъ».

Ազամեանի «Համէլէտի» ներկայացմանը, որի մասին ընթերցողը կարդաց վէպի առաջին գլխում, Ոսկերչեանը միայն անունով էր եօթներորդ դասարանի զիննազիստ: Աշակերտական ոչինչ չէր մնացել նորա վրայ: Ուսումնարանում երկու օրը մի անգամ էին նորա երեսը տեսնում: Համազգեստի տեղ դուրսը հագնում էր պիջակ: Ծխում էր: Նա լուրջ մտածում էր ուսումը թողնելու մասին: Շուտ ասպարէզ դուրս գալ, փաշլէլ, անուն հանել—այսպիսի ցանկութիւնները եռում էին նորա մէջ, և նա մի ամենաչնչին համբերութիւն չունէր այլ ևս լողարիթմային խնդիրների և սինուս ու տանգենսների վրայ գլուխ կոտրելու: Նորա սինուսն էլ, տանգենսն էլ, լողարիթմն էլ օդը ցնդեցին, և տեղը մնաց միայն զործունէութեան և փառքի անհուն տենչանքը: Սորան աւելացան մի քանի այլ հանգամանքներ, որոնք ազատեցին նորան տատանումներից: Նորա հայրը, որի միսը և արիւնը ծծել էր մի վաշխառու, աղքատացել էր, և վերջին ամիսները այլ ևս ոչ մի կուպէկ չէր կարողանում ուղարկել իւր որդու ուսման համար: Այնպէս որ սա ստիպւած էր դասերով ապրել: Նորա դասն էլ համարեա քաղաքի ծայրումն էր, ուր ամեն օր գնալ գալով մի քանի ժամ կորցնում էր: Բացի այդ, նա համոզւած էր, որ պիտի մնայ դասատանը: Ուրեմն աւելի լաւ չի լինիլ, մտածում էր նա, եթէ ես ինքս պատուով թողնեմ և դուրս գամ?

Այտաշէս Ոսկերչեանի անցեալի մասին այսքանը բաւական է: Այժմ շարունակենք մեր ընդհատած պատմութիւնը:

#### IV

Ճաշից յետոյ Ոսկերչեանը տխուր անց ու դարձ էր անում իւր սենեկի մէջ:

Յանկարծ դուռը բացւում է, և ներս է մտնում Գարեգին Զառիկեանը: Նա հագած էր դեղնագոյն նուրբ չեսունչա. ուսին ձւաց էր սև վերարկուն. ձախ ձեռքումը հովանոցն էր բռնած, իսկ աջ ձեռքի ցուցամատի և մեծ մատի արանքում՝ վառ պապիրոսը շիրազի մոնդշտուկի մէջ:

Դա մի իսկական տղամարդ էր՝ իւր վայելուչ հասակով, դիմադծերի գեղեցիկ համաչափութեամբ և արտայայտիչ աչքերով:

—Դէհ, Արտաշէս, պատրաստւիր դնանք,—ասաց նա՝ դրան մօտ կանգնելով:

—Ուր? հարցրեց Ոսկերչեանը, արձանանալով իւր բարեկամի հանդէպ և ճպճպացնելով կիսախուփ աչքերը:

—Ինչպէս թէ ուր? Դու մոռացել ես, որ մենք Բուսաբանական այգին պիտի գնանք թէջի?

—Ախ, իրաւ, իրաւ, ես այդ ամենեւին մոռացել էի,—պատասխանեց Ոսկերչեանը մի այնպիսի անտարբերութեամբ, որ Գարեգինը զարմացաւ: Ե՛հ, լմա, դեռ նստիր մի քիչ հանգստացիր, այգին չի փախչում:

Այդ ասելով, նա առօք փառօք տարածւեց իւր անկողնակալի վրայ:

Այդ գործողութիւնը խիստ տարօրինակ երևաց Զառիկեանին, և նա մտածեց, մի գուցէ իւր բարեկամին մի որ և է անախորժ դէպք է պատահել: Մի վայրկեան խորազննին հայեացքով նա դիտեց Արտաշէսին և ապա մոռաւ քաջաց դէպի սեղանի կողմը: Նստելով աթոռի վրայ, նա դիմեց Ոսկերչեանին և հարցրեց հետաքրքրութեամբ.

—Արտաշէս, ինչ է պատահել?

Ոսկերչեանը պատմեց իւր տանտիրոջ հետ ունեցած կռիւ մասին: Հնչեց Զառիկեանի առողջ ծիծաղը:

—Եւ դու այդ դատարի բանի համար ես տխրել? Նկատեց նա, թափ տալով մոխիրը պապիրոսի վրայից: Տանտէրը հրամայել է բարեկամիս մի ուրիշ բնակարան վարձել—սարսափելի դժբախտութիւն!...

—Երևակայիր, Գարեգին, որ դա ինձ համար մի դժբախտութիւն է:

—Ինչպէս թէ դժբախտութիւն? Բացատրիր, տեսնեմ: Ես քեզ չեմ հասկանում, Արտաշէս: Բնակարան փոխելը դժբախտութիւն է?

Ոսկերչեանը ժպտաց և ձեռքով խորհրդաւոր շարժում արաւ դէպի Վարթումեանների տան կողմը:

Նոյն ուղղութեամբ Գարեգինը դարձրեց իւր երեսը և, ձևանալով, իբր թէ նորան չհասկացաւ, ասաց.

—Ինչ կայ այնտեղ?

—Ինչ կայ այնտեղ? Այնտեղ կայ մի կենդանի մագնիս, որը միշտ քաշում է դէպի իրան իմ ուշ ու միտքը, իմ բոլոր հու-  
թիւնը! Եւ հիմա ես պէտք է հեռանամ նորանից!

Ոսկերչեանը այդ խօսքերը արտասանեց այնպիսի ողբերգական  
եղանակով, որ Զառիկեանի ժպիտը սառեց շրթունքի վրայ: Նա մի  
հատ բառ չգտաւ. պատասխանելու իւր բարեկամին ոչ լուրջ կերպով,  
ոչ կատակով: Օտարոտի էր և այն զգացումը, որ խաղաց նորա  
սրտի մէջ:

Երկուսն էլ լուռ էին: Ոսկերչեանը նայում էր առաստաղին:

Զառիկեանը մտամոլոր՝ ճկոյտի մտքուր եղունգն էր կրծում:  
«Ահա թէ որն է իսկական անբախտութիւնը, մտածում էր Գարե-  
գինը: Անմոտութիւն համարենք թէ այլ բան, բայց Արտա-  
շէսը սիրում է նորան: Բայց ինքը? Ինքը անտարբեր է? Եթէ  
անտարբեր է, ապա ինչու երէկեանից դէս օրիորդի պատկերը չէ  
հեռանում նորա մտքից? Ինչու երազի մէջ տեսաւ նորան? Ինչու  
առաւօտեան, երբ արթնացաւ և յիշեց, որ ծանօթացել է օր. Վար-  
թումեանի հետ, նա այնքան ուրախացաւ և կարծեց, թէ մի գանձ  
է գտել... Ահա ուրեմն ինչ էին նշանակում այն գովասանական  
խօսքերը, որ Արտաշէսը շուայլում էր «գեղեցիկ հարեանուհու»  
հասցէին: Ուրեմն այն կատակ չէր: Ուրեմն այն մի պատանեկան  
վաղանցիկ հրապոյց չէր»:

—Վեր կաց գնանք, Արտաշէս, մենք ուշանում ենք: Մերոնք  
արդէն այնտեղ են,—խօսեց Զառիկեանը, սթափելով մտածմունքից  
և ոտի կանգնելով:

—Թէև տրամադիր չեմ, Գարեգին, բայց... լաւ, գնանք:

Ոսկերչեանը պատրաստեց, և երկու բարեկամները անմիջապէս  
ճանապարհ ընկան դէպի Բուսաբանական այգին:

Օրը պղտոր էր: Արեգակը մերթ թաքնւում էր գորշագոյն  
ամպի կտորի ետև, մերթ դուրս էր գալիս նորա տակից և կրկին  
փայլփլում երկնքում, և ամպի ու արեգակի այդ չարածճի խաղե-  
րից կամ պայծառանում էր օրը կամ մթնանում, ինչպէս լճա-  
րոնի մէջ, երբ գազի անկանոն վառելուց լուսաւորւում և խա-  
ւարում է դաշլիճը:

Ոսկերչեանը պատասպարւած էր Զառիկեանի բաց հովանոցի

տակ, և երկուսն էլ դիտարկող մտադրադ գնում էին թուրքի թաղով: Նոքա լուռ էին: Երբեմն միայն հատ ու կտոր հարց ու պատասխանով սահմանափակվում էր նոցա խօսակցութիւնը: Բայց քիչ չետոյ, նոցա զրոյցը կենտրոնացաւ, ըստ երևութին, մի կարևոր առարկայի վրայ, որովհետև Զառիկեանի դէմքը պարզ հետաքրքրութիւն էր արտայայտում: Երբեմն նա կանգ էր առնում, զարմացած հայեացքը դաժնում բարեկամի աչքերի մէջ, մի բացականչութիւն անում, և էլի շարունակում էին առաջ գնալ:

Վերջապէս նոքա տեղ հասան: Ոսկերչեանը իւր գաւազանով բաղխեց այդու վանդակապատ ահագին դուռը, որ շուտով բաց արին, և նոքա ներս մտան:

Յանկարծ մի ախորժելի զովութիւն վեց նոցա երեսին: Մաքուր օդը լցւած էր անուշահոտ բուրմունքով: Նոցա առջև բարձրանում էր դէպի վեր հիւրընկալ ծառուղին, որի աջակողմեան ծառերը իրանց սաղարթախիտ ու կանաչ կատարներով մի այնպիսի թանձր սուեր էին ձգել ճարասլարհի վրայ, որ այդ սուերը նման էր աւելի մթութեան, բայց զուրեկան մթութեան:

Յափշտակիչ բնութեան վրայ հիացած, բարեկամները կանգ առան, երկար շունչով կենարար օդ ծծեցին, և մի առժամանակ ընդհատեց նոցա վէճը:

Զառիկեանը վերցրեց զլիարկը, ճակատի քրտինքը սրբեց և մատներով զլիսի երկայն մազերը սանրելով,

—Սքանչելի է! բացականչեց:

—Ափսոս չէ Բուսաբանական այգին! Ինչ բան է Մուշտաչիդը սորա հետ համեմատած?

Երբ նոքա հասան ծաղկանոցի դրանը, Զառիկեանը հանգիստ առաւ ծառի տակ նստարանի վրայ:

—Ի՛նչ ես նստում, Գարեգին,—խօսեց Ոսկերչեանը,—բարձրանալք վերև և այնտեղ ձերոնց մօտ կը նստենք կը հանդստանանք:

—Ես յոգնած եմ: Եւ բացի այդ, ես ցանկանում եմ քեզ հետ առանձին խօսել քո ապագայի մասին: Դու հօ ինձ քո բարեկամն ես համարում, և մտերիմ բարեկամը? Ուստի ես իրաւունք ունիմ պահանջելու, որ դու մի կողմ՝ դնես կատակը և լուրջ խօսես ինձ

հետ, քանի որ այն, ինչ որ դու վճռել ես քո վիճակի վերաբերմամբ, ծանր ու բարակ մտածելու բան է:

Այդպէս ուրեմն դու վճռել ես թողնել ուսումը?

—Այո:

—Բոլորովին?

—Բո-լո-րո-վին!

—Եւ այդ կատակ չէ?

—Ինչ կատակի բան կայ այստեղ?

—Բայց մի տարի է մնում, Արտաշէս, մէկ հատ տարի, և դու կ'աւարտես:

—Մի տարի առաջ, մի տարի յետ—միևնոյնը չէ?

—Իհարկէ ո՛! Եթէ ուսումը չ'աւարտես, դու կը մնաս թերուս:

—Թերուս? հեղեց Ոսկերչեանը: Ուրեմն ով աւարտման վկայական չունի, նա թերուս է?

—Այո, թերուս է:

—Օհօ, ես այդ չգիտէի,—կրկին հեղեց Ոսկերչեանը: Մինչ օրս ինձ թւում էր, որ թերուսը այն մարդն է, որ անզարգացած է: Ես կարծում էի, թէ նոյն իսկ համալսարանաւարտը, եթէ անզարգացած է, այնուամենայնիւ թերուս է!

—Դու ինձ լաւ չ'ասկացար, Արտաշէս: Որքան կ'ուզես, դու քեզ զարգացած կարծիր, բայց այն հասարակութեան մէջ, որի հետ պիտի շփուես, և առհասարակ ամեն տեղ, ուր գործ պիտի ունենաս, քեզ այդպէս պիտի համարեն—թերուս:

—Թող համարեն:

—Բայց յետոյ կը զղջաս: Եթէ աւարտման վկայականը քեզ ուրիշ օգուտ չտայ, գոնէ քո օրւայ հացը կը տայ:

—Օրւայ հացը? Ետին մշակը հայթհայթում է իւր օրւայ հացը—եւ միայն քաղցած պիտի մեռնեմ?

—Բայց համալսարանը, բարձրագոյն կրթութիւնը...

—Է՛հ, այդ բոլորը շատ լաւ է, շատ գեղեցիկ է: Բայց եթէ էլ ուսման ցանկութիւն չկայ, միջոց չկայ?

—Ես քեզ ճանաչում եմ, Արտաշէս: Դու դիտես սաստիկ հրապուրել նոր մտքերով, նոր գաղափարներով: Եւ այդ քո բնութիւնը կարող է քեզ վնասել, եթէ վաղօրօք չ'աշխատես չափաւո-

րել այդ յատկութիւնը: Ես դարձեալ պնդում եմ. յետոյ դու պիտի զղջաս, որ ուսումդ կիսատ թողիր:

—Ո՛չ, այդ անկարելի է: Իմ կրթութեան հիմքը արդէն զըր-  
ւած է: Եթէ մնացել է մի թերի բան, ես ինքս ինքնաշխատու-  
թեամբ կը լրացնեմ պակասը: Զեական ուսման ես մեծ կարեւորու-  
թիւն չեմ տալիս, Գարեգին: Բաւական է, եթէ մարդ զրաւ ինք-  
նակրթութեան և առհասարակ յառաջդիմութեան ճանապարհը.  
այնուհետեւ հեշտ է. ընթերցանութիւնը կը լինի մեր իմաստուն  
առաջնորդը:

Ասա, խնդրեմ, Շէքսպիրը բարձրագոյն կրթութիւն էր ստա-  
ցել? Ռուսսօն մեծ ուսում ունէր? Դիկկենսը նոյն իսկ միջնակարգ  
կրթութիւն ստացել էր? Ադամեանը սինուս ու տանգենս է սովորել?

—Օ, դու շատ հեռու ես գնում, Արտաշէս: Ամեն մի բանա-  
ստեղծ Շէքսպիր չի դառնալ և ամեն մի դերասան Ադամեան չի  
լինիլ: Մեր խօսքը հանճարների մասին չէ, այլ մեզ պէս թոյլ և  
հասարակ մահկանացուների մասին:

Ոսկերչեանը ոչինչ չպատասխանեց: Նորան տհաճութիւն պատ-  
ճառեցին Զառիկեանի վերջին խօսքերը: Նա վիրաւորած էր:  
Որտեղից գիտէ Գարեգինը, որ Արտաշէս Ոսկերչեանը մի թոյլ և  
հասարակ մահկանացու է: Իւր դժգոհութիւնը նա արտայայտեց  
միայն լուրթեամբ: Այդ հանգամանքը մտածել տւեց Զառիկեանին,  
և սա կամեցաւ իմանալ իւր բարեկամի հոգու տրամադրութեան  
փոխելու պատճառը: Բայց Ոսկերչեանը նորա հարցման հետեւեալ  
խորհրդաւոր պատասխանը տւեց.

—Այստեղ բաներ շատ կան, Գարեգին, և դու միայն ժամա-  
նակով այդ կ'իմանաս:

«Այստեղ» ասելով, նա ձեռքը դէնց կրծքի ձախ կողմի վրայ:

Զառիկեանը սակայն դորանով չբաւականացաւ: Նա ուզեց  
աւելին իմանալ կամ գոնէ պարզել այդ պիւթիական խօսքերի  
իմաստը: Ոսկերչեանը բացատրեց իր միտքը, ասելով.

—Ես սիրում եմ թատրոնը և զրականութիւնը, ընդհանրա-  
պէս զեղարւեստը: Ես իմ մէջ զգում եմ մեծ ոյժ և մեծ եռանդ  
զեղարւեստի ասպարիզում գործելու, և այսուհետեւ ես իմ անձը  
պիտի նւիրեմ այդ սուրբ գործին:

Զառիկեանը ոչինչ չխօսեց և սկսեց խաղալ իւր զոդորիկ մօրուքի հետ և հետաքրքրի աչքերով զննել մազերի ծայրերը, թէ և այնտեղ ոչ մի զննելու բան չկար։ Նորա մտածմունքի առարկան Ոսկերչեանի վիճակն էր։ Նա որքան լաւ կարծիք էր կազմել Արտաշէսի մասին, և միշտ համարել է նորան խելօք և ընդունակ։ Նա բանաստեղծական աւիւն էր նշմարում նորա ոտանաւորների մէջ։ Նա հիանում էր նորա կանոնաւոր և ազդու դեկլամացիայի վրայ, երբ նա արտասանում էր հատուածներ Շէքսպիրի տրագեդիաներից։ Եւ նա չէր թաղցնում իւր հիացումը, այլ բացէիբաց Ոսկերչեանի երեսին գոգում էր նորա տաղանդը, իհարկէ, առանց շողորթութեան, և նորա ապագայի նկատմամբ ինչպիսի յոյսեր էր յայտնում։ Բայց ահա Արտաշէսը իւր ցնորական քայլով ստիպում է Զառիկեանին զղջալ իւր անզգոյշ, անհեռատես խրախուսանքի համար, որովհետեւ զովաբանութիւնը, ինչպէս երևում է այժմ, թե և տեւել հրապուրւող երիտասարդին, զարգացրել է նորա մէջ ինքնալստահութիւնը և աստիացրել փառքի ծարաւը։ Այդ, ասենք, դեռ ոչինչ։ Վատահ լինել իւր սեփական ոյժերի վրայ և փառքի ձգտել—այդ դեռ հարատ չէ. դա նոյն իսկ առաւելութիւն է այն դէպքում, երբ զուգակից է իսկական տաղանդի և համբերութեան հետ։ Բայց ցաւը հէնց այն է, որ Ոսկերչեանը իւր ուսման վերաբերմամբ տոկունութեան նշոյլ անգամ չէ կամենում ցոյց տալ։ Եթէ հիմա այդպէս է նա, ինչ կը լինի յետոյ, երբ ուր կը դնէ փշոտ ասպաբիղի վրայ։...

Զառիկեանը կրկին փորձեց համոզել իւր բարեկամին, որ նա թողնի իւր անմիտ դիտաւորութիւնը։ Բայց իզո՞ւր. Ոսկերչեանը այնքան տմուր էր երևում իւր որոշման մէջ, որ կարծես ոչ մի ոյժ չէր կարող նորա վճիռը բեկանել։

Կարճատեւ լռութիւնից յետոյ նոքա սկսեցին բարձրանալ վերև։ Ոսկերչեանը առաջ էր ընկել և ինչ որ մի երգի եղանակ էր սուլում հազիւ լսելի ձայնով, իսկ Գարեգինը զննում էր նորա ետեւից կորագլուխ և բեխը մտախոհ ոլորելով։

Մինչդեռ երկու բարեկամները ներքեւ տաքացած վիճում էին, վե՛ւ, աւազանի զլխին, ընկուղենու սուերի տակ սեղանի շուրջը բոլորել էին Զառիկեանի մայրը, որ. Աշխէնը, նորա փոքրիկ եղ-

բայրը և Սևուռեանը: Օր. Աշխէնը նստած էր ինքնատեղի մօտ, որը տաբուրեթի վրայ դրած՝ եռում խլթխլթում էր: Նա լւանում և մաքրում էր բաժակները: Սևուռեանը կարգում էր «ժամանակի» վերջին համարը և մի յօդւածի առիթով իւր զայրոյթն էր յայտնում հեղինակի դէմ: Նա կծու ծաղրով զատափետում էր յօդւածի իւրաքանչիւր տողը և իւրաքանչիւր բառը: Օր. Աշխէնը ուշադրութեամբ լսում էր և, ըստ երևութին, համամիտ էր Սևուռեանի կարծիքների հետ:

Սևուռեանը «ժամանակ» լրագրի ամենաոխերիմ թշնամիներիցն էր: Առանց բարկութեան, առանց դէմքի ծամածռութեան նա չէր կարող խօսել այդ օրգանի մասին: Նորա խմբագիր-հրատարակիչը, բոլոր աշխատակիցները, համակրող ընթերցողները—իւրաքանչիւրը առանձին և ամենքը միասին շարունակ նորա ծաղրի առարկան էին լինում: Ընտանիքում խօսք բացւէր նորա մասին թէ հասարակական հաստատութեան մէջ, փողոցում թէ ընկերական շրջանում—միշտ կարելի էր լսել Սևուռեանի ֆիլիսոփիկաները այդ թերթի ղեկաւարների և ուղղութեան դէմ: Նոյնը անում էր նա հրապարակով: «Ճառագայթի» վերջին տարիների համարների մէջ ընթերցողները յաճախ կարդում էին նորա նամակները և յօդւածները, որոնք կամ անստորագիր էին լինում կամ, ստորագրութեան տեղ, ունենում էին որեւէ ծածկանուն կամ երեք աստղ. պատահում էր սակայն և իսկական ստորագրութիւն: Եւ ինչ անարգ անուններ ու ածականներ ասես նա չէր յատկացնում իւր հակառակորդներին՝ եզուխտներ, կեղծաւոր փարիսեցիներ, բծախնդիր, շահամոլ, ստրկահոգի, ստորաքարշ, սրբութիւն չճանաչող, անգոյն և այլն և այլն:

Օր. Աշխէնը Սևուռեանի մէջ ոյժ էր տեսնում և երկրպագում էր այդ ոյժի առաջ: Նորա աչքում այդ երիտասարդը և ազնիւ էր, և անկեղծ, և զարգացած, և ընդունակ, և հաստատ համոզմունքի տէր: Նա ևս անձամբ «ժամանակ» լրագրի համակրողներից չէր: Բայց երբ նորա ուղղութեան մասին խօսում էր Սևուռեանը, այն ժամանակ օրիորդը խորին առնչութեամբ էր զինւում այդ թերթի դէմ:

Ոսկերչեանը և Չառիկեանը վերջապէս եկան:

—Աշխէն, թէ՛, —ասաց Գարեգինը, իւր գլխարկը և հովանոցը մի կողմ դնելով:— Իսկ ուր է Ազատեանը? Կիմեց նա Սեռուհեանին. չէ որ երէկ նա ևս խոստացաւ այստեղ լինել:

—Նա գուցէ չգայ,—պատասխանեց Սևուძեանը: Խմբադիրը նորան յանձնարարականով ուղարկեց մի պարոնի մօտ, աջնպէս որ դժւար թէ չաջողւի գալ:

Օր. Աշխենը հարցրեց Ոսկերչեանի առողջութիւնը, եղբօրից  
ցանկացաւ իմանալ ուշանալու պատճառը և ինքը իւր կողմից կար-  
ծիք յայտնեց, թէ, երևի, չարմար ժամանակ չեն ընտրել Բուսա-  
բանական այգի գնալու, որովհետեւ երկինքը ամպամած է, երբեմն  
կայծակ է խփում, և կարող է անձրև գալ:

Գարեգինը նկատեց, որ այդ դատարկ բան է, անճրեւից պատըսպարւելու տեղ կայ, և այդ տեղը պատրաստել է ինքը բնութիւնը, պատառելով ժաշո՛րի կուրծքը և մի դանչի՛ծի չափ ապաստանարան կերտելով նորա մէջ։

Զառիկեանը յոյս ունէր, որ օր. Վարթումեանն էլ այնտեղ կը լինէր։ Գոնէ այդպէս հաւատացրել էր նորան. քոյրը, հիմնւելով իւր ընկերուհու երէկւայ խոստման վրայ։ Բայց նորա յոյսը ի դերն ելաւ, և նա ցաւ զգաց։ Օր. Մարիամը չէր երևում ճեմող հասարակութեան մէջ, թէև Գարեգինը անդադար դէս ու դէն էր շըրջում իւր աչքերը և նորան որոնում։

Բայց շուտով ընդհանուր խօսակցութիւն սկսեց, և Զառի-  
կեանի միտքը իւր սիրոյ առարկայից տեղափոխւեց ուրիշ առար-  
կայի վրայ:

—Այսօրուայ «Ժամանակը» կարդացել ես, Գարեգին? Հարցրեց Սևույնեանը, ընդունելով թէյի բաժակը օր. Աշխէնի ձեռքից:

—Իրաւ, ախր նա չէ՞կարդացել,—նկատեց օրիորդը և սկսեց  
փնտրել լրագրի մէջ այն<sup>60</sup> տողածը, որը վերաբերում էր Զառիկեանին։  
Հիմա հերթը մեզ է հասել, Գարեգին։

—Ինչ կալ, բան կալ<sup>ք</sup>իմ մասին? Հարցրեց Ջառիկեանը:

— Ոտնձգու թիւն և անխիղճ զրպարտութիւններ! զոչեց օր. Աշխէնը և, մասնացոյց անելով ուզած տեղի վրայ, թերթը առաջարկեց իւր եղբօր կարդալու:

—Է՛, ուրիշ ինչ կարող է լինել, ասան, խնդրեմ, այս դաշնակիր

աղբակոյտի մէջ? բացականչեց Սեռմեանը, զգւանք արտայայտելով զէմքի վրայ:

— Կարգա՛, տես, ինչպէս են հայհոյել մեզ:

Գարեգինը աչքիէ տակովը անցկացրեց յօղածը և ապա, դէն շարտելով թերթը, նողկանքով արտասանեց.

— Կատարեալ ցեխ! Տեղովը սուտ և զրպարտութիւն! Ես գիտեմ, ով է սորա հեղինակը:

— Ի հարկ է պարզ է, — ասաց օր. Աշխէնը, — էլ ով պէտք է լինի? Մեր սեահողին!

Զառիկեանը աւագ ուսուցիչ էր քաղաքի հայոց եկեղեցական-ծխական դպրոցներից մէկի մէջ, ուր վարժուհու պաշտօն ունէր և նորա քոյրը: Ուսուցչական խումբը կարելի կը լինէր համարել շատ համերաշխ, եթէ միայն նորա մէջ չլինէր մի պաշտօնակից, որը, շնորհիւ իւր բանսարկու, դաւասէր բնաւորութեան, զիստոնանա էր առաջացնում մանկավարժական կազմի մէջ: Գորան էին անւանում «սեահողի»: Եւ օր. Աշխէնի կասկածը անտեղի չէր, որովհետեւ չարամիտ յօղածաղիւրը հէնց նոյն աչք պարոնն էր, որ կար: Տարին վերջանալու վրայ էր, և նա, մեծ փափագ ունենալով Զառիկեանի տեղը զրաւել, այսինքն վռնտել նորան խմբի հետ և աւագ ուսուցիչ դառնալ նոյն դպրոցում, լրագրական թերթի միջոցով ծպտի արշաւանք էր սկսել իւր թշնամիների դէմ: Նա իւր բոլոր յոյսը դրել էր հոգտրարձուններից մէկի վրայ, որի համակրութեան արժանացել էր, շնորհիւ իւր շողոքորթ լեզուի և քծնի բնաւորութեան:

Սակայն ով ճանաչում էր Զառիկեանին և դիտէր, թէ որպիսի բարեխղճութեամբ ու եռանդով էր վարում նա իւր պաշտօնը, ով ծանօթ էր նորա խմբի գործունէութեան և առհասարակ ուսումնարանի ներքին և արտաքին բարեկարգութեան, նա, անտարակոյս, արդար զայրոյթ պիտի զգար, կարդալով այն բոլոր նենգամիտ զրբպարտութիւնները, որոնցով յօղածը լեցուն էր: Բանից դուրս էր զալիս, որ Զառիկեանը առաւօտները ուշ է գնում դպրոց, աշակերտներին դասերից արձակում է ժամանակից առաջ, դասարաններում դրատախտակների մօտ երկու երեք փուռտանոց փալասներ են թափթփաւած, բակը կեղտոտ է, դասատուները տղէտ են, իրանց

աւանդելի առարկաները չգիտեն, ծեծը դարձրել են մանկավարժական սխտեմ...

Այստեղ հարկաւոր է նկատել հետեւեալը: Այն ժամանակեայ լրագիրների մէջ յաճախ պատահում էր, որ միեւնոյն դպրոցի պաշտօնեաները, միմեանց հետ թշնամանալով, իրար դէմ էին դուրս գալիս և մամուլի մէջ հրապարակով իրար հայհոյում, իրար մրտաւում, իրար վրայ ստեր ու մեղադրանք բարձում, և ընթերցողը մնում էր շւարած, շատ անգամ դժւարանում կամ բոլորովին չէր կարողանում որոշել, թէ ով է մեղաւոր, ով արդար, որն է սուտ և որը՝ ճշմարիտ: Ամենքը խօսում էին յանուն ազնւութեան, յանուն ընդհանուր շահերի, և այն էլ ինչպիսի ոճով!

Ահա որպիսի անարժան բանակռիւների շնորհիւ է, որ մեր ձեռքերը վարժեցին անւանարկութեան համար գրիչ շարժելու: Սեղանի շուրջը նստողները տաքացած խօսում էին յօդաձի առիթով: Օր. Աշխէնը սպառնում էր անանուն հեղինակին, որ մի բողոք պիտի պատրաստէ նորա դէմ իւր բոլոր պաշտօնակիցների ստորագրութեամբ:

—Բարեբախտաբար, հոգաբարձուներից այն մէկը, որի վրայ է դրել իւր յոյսը այդ թշւառականը, ինձ շատ մօտ է, իմ բարեկամն է,—խօսում էր Սեւմեանը, գդալով խառնելով թէյը: Ես կը խօսեմ նորա հետ: Այդ լիրբը իզուր է աշխատում ձեր ոտի տակը փորել և ձեզ տապալել: Նորան այդ չի յաջողել: Ընդհակառակը, նա ինքը չպէտք է մնայ ձեր խմբի մէջ: Միւս տարւայ համար դուք առաջարկեցէք հոգաբարձութեան ուղտիմատում, և նա ձեզ կը յարգէ: Կամ նա, կամ դուք:

—Ի հարկէ,—միաբերան գոչեցին Գարեգինը և օր. Աշխէնը:

—Անպատճառ հարկաւոր է մի հերքում գրել և անխնայ հարւածել այդ գաղտագողի սղոսկումները,—աւելացրեց Սեւմեանը: Եթէ Գարեգինը զլանայ այդ անել իւր ծուլութեան շնորհիւ, այն ժամանակ դուք կարող էք գրել, օր. Աշխէն:

Քիչ յետոյ խօսակցութեան առարկան փոխւեց: Սեւմեանը հաղորդեց մի նորութիւն, այն է, որ նա արդէն թույլտուութիւն է ստացել կառավարութիւնից Վատենադարան բանալու: Զառիկեանը

իւր ուրախութիւնը յայտնեց այդ առիթով և, սեղմելով նորա ձեռքը, շնորհաւորեց նորան օգտակար ձեռնարկութեան համար:

—Գրադարանը,—շարունակեց նա իւր խօսքը,—ինչ ասել կուզէ, շատ լաւ միջոց է ընթերցասիրութիւն տարածելու ժողովրդի մէջ: Բայց որպէս զի նա կարող լինի իւր նպատակին ծառայել, անհրաժեշտ է, որ գները շատ էժան լինին:

—Անկասկած! բացականչեց Սեւմեանը: Այլպէս գրադարանը իւր նպատակից կը հեռանայ: Այն ժամանակ էլ ինչ տարբերութիւն կը լինի մի առևտրական ձեռնարկութեան և մի մատենադարանի մէջ?

—Դորա պահանջը վաղուց է զգացուած է այստեղ,—նկատեց օր. Աշխէնը: Այնպէս որ շատ ուրախալի լուր հաղորդեցիք մեզ, պարոն Սեւմեան: Շնորհաւորում եմ:

Ոսկերչեանը առաջին բաժակ թէյը ըմպելուց յետոյ, գնացել էր զբօսնելու: Յանկարծ արագ քայլերով մօտեցաւ նա սեղանին և ժպտալով ասաց.

—Գիտէք, Վարթումեանները այստեղ են:

—Այստեղ են? դուրս թուաւ Գարեգինի բերանից, և, զարմանալի բան, վախեցած մարդու պէս, նա զգաց, որ սիրտը սկսեց թրթռալ:

Քարայրի կողմից թփերի մօտ երևացին իսկոյն օր. Մարիամը և մօրաքոյրը: Ընկերուհու անունը լսելուն պէս՝ օր. Աշխէնը շտապով վեր ցատկեց և վազեց նորա ընդ առաջ: Երբ նոքա մօտեցան, Գարեգինը բաժակը կիսատ դրեց սեղանի վրայ և այլաչափ վեր կացաւ տեղիցը: Ոսկերչեանը աթոռի թիկունքից բռնած՝ սրտատրոփ սպասում էր այն վայրկենին, երբ օրիորդի թաթիկը կը սեղմէ իւր ձեռքի մէջ:

Օր. Աշխէնը ծանօթացրեց հիւրերին իւր մօր հետ և առաջարկեց նստել: Օր. Վարթումեանը, երևի, ուրախութեամբ կը յօժարէր սեղանակից լինել այդ շրջանին: Բայց նորա մօրաքոյրը Թիֆլիսի բարբառով յայտնեց, թէ իրանք երկար ժամանակ նստած են եղել, այժմ կամենում են ման գալ: Օր. Աշխէնը խնդրեց գոնէ մի-մի բաժակ թէյ ըմպել և կանչեց ծառային, որպէս զի պատւիրէ նորոգել ինքնատեղը: Բայց հիւրերից թէ մէկը և թէ միւսը հրաժարեցին: Օր. Վարթումեանի մօրաքոյրը, որը արտաքուստ հպարտ

կնոջ տպաւորութիւն էր գործում, գլխի ծանր, բայց խիտ քաղաքավարի շարժումով իւր շնորհակալութիւնը յայտնեց:

Իսկ օր. Վարթումեանը ասաց.

—Շնորհակալ եմ, Աշխէն, խնդրում եմ նեղութիւն չքաշես, մենք արդէն խմել ենք:

—Դուք արդէն խմել էք? հարցրեց օր. Աշխէնը զարմացած: Այստեղ թէ ձեր տանը?

—Ոչ, այստեղ:

—Ուրեմն դուք այստեղ էիք? Ապա ինչպէս է մենք ձեզ չենք նկատել?

—Մենք գրոտի մէջ էինք նստած:

—Դուք այրի մէջ էիք նստած?

Օր. Վարթումեանի երեսը յանկարծակի շառագունեց, և նա աչքերը խոնարհեց գետին, որպէս զի այդ աչքերը չմատնէին նորա վայրկենական ներքին յոյզը, եթէ դէմքի վրայ արդէն նա չէր արտայայտուել:

Որքան զիւթիչ էր նա այդ րոպէին!

Ոսկերչեանը հոգեզմայլ նայում էր նորա կիսախուփ աչքերի երկայն. թարթիչներին, և չէր կշտանում նայելուց!

Իսկ Զառիկեանը, նոյնքան յափշտակւած, մտածում էր. «եթէ օրիորդը կարմրում է իւր մայրենի լեզուն լաւ չիմանալու համար, դա լաւ նշան է»:

Քիչ յետոյ երկու ընկերուհիները ձեռք ձեռքի տւած՝ զրոյց անելով և ուրախ ծիծաղելով սկսեցին անցուդարձ անել ծառուղու երկայնութեամբ:

Նոքա աւարտել են իգական զիմնադիօնը մի տարի առաջ: Դասարանում նոքա միշտ իրար մօտ էին նստում և միշտ սիրով էին միմեանց հետ: Բաւական մեծ տարբերութիւն կար նոցա արտաքինի և բնաւորութեան մէջ:

Օր. Աշխէնը հասակով փոքր ինչ աւելի բարձր էր օր. Վարթումեանից, բայց նորանից աւելի նիհար: Նրեսը թուխ, աչքերը՝ սև ածուխ, քիթը սուր, արծւի կտուցի նման, վերևի շրթունքի անկիւններում հազիւ նշմարելի աղւամազ, գլխի կտրած մազերը կոկ սանրւած և դէպի ետ տարած այնպէս, որ լայն, փառահեղ ճակատը նայողի աչքին կը զարնէր իսկոյն:

Օր. Վարժումեանի երեսը, ընդհակառակը, չափազանց սպիտակ էր. խոշոր աչքերը ձիգ ընկած և կապոցո, բիբերը մի քիչ վերև թռած, կազմւածքը աւելի սիրուն և համաչափ, իրանը աւելի կանացի և նուրբ:

Օր. Զառիկեանի հայեացքը՝ համարձակ, շարժւածքը՝ տղամարդու շարժումների պէս՝ ազատ, ինքը աւելի դիւրաշարժ և կենդանի, կոկետութեան մի նշոյլ անգամ, այն ինչ օր. Մարիամը գիտէր խօսելու կամ լսելու ժամանակ գլուխը դէպի մի ուսը թեքել և քաղցր ժպտալով իւր հանդարտ բիբերը խօսակցի աչքերին քսեռել:

Օր. Աշխէնը հետեւում էր գրականութեանը, լրագրութեանը, սիրում էր վիճել, հետաքրքրւում էր հասարակական խնդիրներով, անգամ էր «Բարեգործական» և «Հրատարակչական» ընկերութիւնների, մի խօսքով, տոգորւած էր իդէալներով, գեղեցիկ միտումներով: Օր. Վարժումեանը, հասարակական իդէալների նկատմամբ, մեծացել էր համեմատաբար աւելի ձախորդ հանգամանքների մէջ: Ամենալաւ բանը, որ նա սովորել էր իւր միջավայրից, ընտանեկան առաքինութիւնն էր: Ընտանիքից դուրս, նա շատ աղօթ հասկացողութիւն ունէր այն բոլորի մասին, ինչ որ կատարւում էր մեր հասարակական և գրական կեանքում: Բայց չպէտք է ուրանալ մի բան. նա հաճոյք էր զգում զաղափարի մարդկանց շրջանում լինել և ձգտում էր ցոյց տալիս աւելի մօտ յարաբերութիւն ստեղծել այդպիսի հասարակութեան հետ: Դա արդէն յառաջդիմութեան սկզբի քայլն է:

Նոյն իսկ այդ օր Բուսաբանական այգում նոցա միմեանց հանդիպելը մի պատահական զուգադիպութիւն չէր, այլ վաղօրօք մտածւած նախավճիռ: Նրէկ թափոնում օր. Աշխէնը իւր ընկերուհուն յայտնել էր, որ հետեւեալ օրը պիտի գնան Բուսաբանական այգին թէյ խմելու: Օր. Վարժումեանը ասել էր թէ գուցէ ինքն էլ իւր մի քանի ազգականների հետ այնտեղ լինի վաղը, որովհետեւ, ինչ գարունը բացւել է, դեռ ոչ մի անգամ այնտեղ եղած չէ և որ այդ նորա վաղուցւայ ցանկութիւնն էր, բայց չէր յաջողւում:

Իւր տեղումը իմ ընթերցողը կ'իմանայ, թէ ինչու այդ ըն-

կերուհիները դեռ նոր են ձգտում իրար հետ ընտանեկան մօտ յարաբերութիւն սկսել:

Օրիորդները, ինչպէս ասացի, ճեմելով զրոյց էին անում: Նոքա մտաբերում էին զանազան դէպքեր դպրոցական կեանքից, յիշում էին իրանց ուսուցիչներին, ընկերուհիներին: Օր. Աշխէնը գիտէր համով պատմել: Երբ նա մի ծիծաղաշարժ պատմութիւն էր անում, օր. Վարթումեանի քրքիշը բռնում էր, աչքերը ջրակալում էին, և նա ամուր հուպ էր տալիս ընկերուհու թեւը, կարծես ցանկանում էր ասել. «հերիք է, խնայիր ինձ»: Օր. Զառիկեանը աւելի ևս ոգևորւում էր, ժպիտը հեռացնում էր երեսից, օր. Մարիամի ծիծաղը էլ աւելի բռնկում էր, և նա կրծում էր շրթունքը և թաշկինակը սեղմում բերնին:

Օր. Վարթումեանի մօրաքոյրը, որ առաջ արիստոկրատական բարձրութիւնից էր նայում տիկին Զառիկեանի վրայ, այժմ կարծես մտերմական զգացմունքով էր համակւած դէպի նա: Նորա հպարտութիւնը խորտակել էր վերջինիս խոնարհութեան, բաց միւսնոյն ժամանակ և անձնապատուութեան առաջ: Նոքա դանդաղ քայլելով խօսում էին, հարց ու փորձ անում միմեանց, թէ քանի որդի ունին, որտեղ են բնակւում, որտեղացի են, ամարանոց պիտի գնան թէ ոչ, որ ամարանոցն են գնում սովորաբար:

Ոսկերչեանը կանգնած էր ընկուզենու բնի մօտ, աչքերը յառած աւազանին, որի մէջ քշքշալով թափւում էր ջուրը, հոսելով վերևի մաքուր առակից: Երբեմն նա երեսը դարձնում էր դէպի այն կողմը, ուր շրջում էին օր. Աշխէնը և օր. Վարթումեանը, գլխաբաց, ուրախ, ժպտերես: Մի անգամ նորա հայեացքը հանդիպեց օր. Մարիամի հայեացքին, և նա մտածեց. «ինչու նա ետ նայեց? նա ում էր փնտռում իւր աչքերով?»

Գարեգինը և Սեդուեանը, մի քիչ զրօսնելուց յետոյ, կրկին նստեցին սեղանի մօտ: Սեդուեանը մի ինչոր պատմութիւն էր անում: Զառիկեանը դարտակում էր թէյի չորրորդ բաժակը և իրան ձեւացնում էր, իբր թէ լսում է ընկերոջը: Իւր անուշադրութիւնը չմատնելու համար, ստէպ նա բարձրացնում էր գլուխը, խօսակցի երեսին նայում և «այո» ու «հա» ասելով հաւանութեան նշաններ ցոյց տալիս: Բայց նորա միտքը կողմնակի առարկայով էր զբաղ-

ւած: Յարմար առիթներէից օգտուելով, նա իւր գողունի հայեացքը նետում էր դէպի այն կողմը, որտեղ ձեմում էին օրիորդ և Աշխէնը, որտեղից նոցա ձայնն էր գալիս:

Ամենքը կարծում էին, թէ այլ ևս անձրև չի գալ, որովհետև այն ամպը, որը նոցա անհանգստացնում էր, արդէն քաշւել էր, և երկինքը պարզել: Բայց շուտով հիւսիսային կողմից սարի գլխին երևաց փոթորկալից թուխպը, որը ծանր շարժւելով կամաց կամաց մեծացաւ ու երկնքի երեսը պատեց: Թրը արևի մայր մոնելուց առանց այն էլ սկսել էր մթնանալ, իսկ սևաթուր ամպիցը աւելի ևս մռայլեց: Մանուշակագոյն կաջձակին յաջորդեց որոտումը, և ապա, մի քանի վայրկեան անցած, ծառերի մէջ լսեց խշշոց, և տերևները դողդողացին անձրևի կաթիլների ծանր հարւածներից:

Հասարակութեան մէջ իրարանցում ընկաւ: Իւրաքանչիւր ոք վրայ պրծաւ իւր գլխարկը, կամ վերարկուն, կա՛ր հովանոցը վերցնելու: Պատսպարւելու համար բոլորեքեան վազեցին դէպի քարայրը, որը շուտով լցեց մարդկանցով:

Այնտեղ Ոսկերչեանը կանգնած էր օր. Վարթումեանի կողքին:

— Ես շատ սիրում եմ փոթորիկը, — ասաց նա, երեսը դարձրած դէպի յորդ անձրևը: Հիանալի է!

— Իսկ ես, — պատասխանեց օրիորդը, — սաստիկ վախենում եմ կաջձակից:

Ոսկերչեանի անբախտութիւնից, փոթորիկը շատ շուտ անցաւ, անձրևը դադարեց, և թրջւելու այլ ևս ոչ մի երկիւղ չկար: Զառիկեանը շտապեց իւր հաշիւը վերջացնել բուֆէտի տիրոջ հետ: Երբ նա վերադարձաւ, օր. Վարթումեանը և նորա ազգականները, Զառիկեանների հետ միասին ճանապարհ ընկան դէպի իրանց տները:

Ամենքը ուրախ արամադրութեան մէջ էին: Բայց Ոսկերչեանը աւելի ևս ուրախ կը լինէր, եթէ անձրևը երկար տևէր, և ինքը նորա հետ լինէր, նորա հետ զրոյց անէր ամբողջ ժամերով — և էլի չյագեներա...

(Շարունակելի)

## ԿՈՍՄԱ ՊՐՈՒՏԿՈՎ-ից

ՅԱԿՈՐ ՅԱԿՈՐԵԱՆԻ

Եթէ դու տեսնես բոկոտն մէկին,  
Ճակատը մռայլ նման Կազբէկին,  
Յիրցան մազերով, որ խելակորոյս  
Անվերջ սարսուռով ջղաձգական  
Մռնչար անյոյս,—  
Գիտցիր ես եմ աչն:

Եթէ դու տեսնես դժբաղդի մէկին,  
Որին նզովէ անբոխի որդին,  
Որի ճակատից—կրքից կուրացած—  
Պոկել դափնիներն նորա վաստակած  
Նա ջանար միայն—  
Գիտցիր ես եմ աչն:

...Նա, որ ոչոքին ծունկ չէ խոնարհում  
Եւ ոչ իւր ճկուն մէջքը զալարում...  
Բաց բաւական է...  
Ժպիտն է սահում իմ շրթունքներից—  
Մինչ սրտիս խորքում  
Օձըն է թունալից...

# Ն Ո Ր Ե Կ

Վ Է Պ

## ԴԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Գ. ԲԱՅԿԵՆՅԻ

(Շարունակութիւն 1)

Գլուխ ԺԶ.

Թշուառոց զաւառակի միրաւի այս անգամւայ ընտրութեանը եկաւ զաւառապետը, որ արդէն լաւ ծանօթ լինելով ժողովրդի տրամադրութիւններին ընտրութեան վերաբերմամբ, հաւատացած էր, որ Փիր-Մուրադին այս անգամ վայր կը գցի, ինքը փառաւոր դեր կը կատարի ամբոխի առաջ և կը բարձրացնի Ալէքսանդրի պատիւը, որին մոռալիւ էր առաջ տանել, նախ՝ անխարդախ բնաւորութեան համար, երկրորդ՝ նա, իրաւաբան լինելով, ծանօթ էր օրէնքներին, և երրորդ՝ ունէր լաւ գրիչ, ուրեմն և, տեղն ընկած՝ ժամանակ, կարող էր գրչով մեծ զարկ տալ զաւառապետի հակառակորդներին: Միրաւի այս անգամւայ քուէարկութիւնը նոյնքան հանդիսաւոր էր, որքան առհասարակ լինում է: Ներկայ էր զաւառապետը, մի քանի տանուտէրներով, տասնապետներով և տասնեակ ձիաւորներով ու կողակներով:

1) Տես «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8, 9, 10—11, 12 և 1897 թ. № 1.

Ալէքսանդրը, որպէս պրիստաւ, միշտ Վլադիմիր Վլադիմիրովիչի մօտ էր լինում կանգնած: Ժողովուրդը բաժանւած երկու մասի, ժողովւած Փիր-Մուրադ Սուլթանի և Մէլիք Շէգոյի շուրջը, լցրել էր Խնութի այն լայն հրապարակը, որտեղ գաւառապետը դրել էր իր սեղանը և քւէտուփերը: Ժողովրդի մեծամասնութիւնը Մէլիքի կողմն էր և ընդհանուր կարծիք էր, որ նա յաղթութիւնը կը տանի: Վլադիմիր Վլադիմիրովիչը շատ ուրախ էր, որ վերջապէս մի անգամ տեսնում է Ֆաթիխան ուշադիներին ժողովրդի առաջ պարտւած:

Նա ժողովրդի առաջ հրաւիրեց իր մօտ Մէլիք-Նէգոյին, որին ձեռք տւեց և որպիսութիւնը հարցրեց:

Ալէքսանդրը հրճանքով նայում էր Մէլիքի մօտ կանգնած բազմութեանը և մեղադրում հռետեսներին, որոնց կարծիքով մեր երկրում ոչ մի բան անել չի կարելի: Նորից ուժ էր ստանում նրա այն կարծիքը, որ ժողովուրդը մի հում ու չփափած տարր է, որին կարելի է հեշտութեամբ ուղղել դէպի բարին: Մինչև անգամ Սուլթանի կողմնակից հասարակութեան մէջ մի տեսակ լաւ տրամադրութիւն կար դէպի Մէլիք Շէգոյների հսկայ շառաւիղը, որ քանի տարիներ լուռ ֆնալուց յետոյ, նորից առաջ էր գալիս ժողովրդին բարիք անելու համար: Փիր-Մուրադ Սուլթանը լիովին անճարացել էր և ուզում էր վերջին ճիգը թափել: Նա մօտենում էր այս և այն քւէտարկողին, աղաչում խնդրում էր նրանց, համոզում, խօստումներ անում և չիշեցնում այն լաւութիւնը, որ նրանց արել էր: Նրա կողմնակիցները Քալբալային, Ախունդը և Մաշադին ամենուրեք ազդիտացիա էին անում, թէպէտ, թւում էր թէ, աւերես:

Ամբոսի մէջ, մի խուլ անկիւնում, խորասուզւած մտածմունք ների մէջ, կանգնած էր Սամադ բէկը: Իրեն դիմողներին նա խեղճացած յայտնում էր, որ զլուխը կորցրել է, որ չգիտէ, թէ ինչ անի, մինչդեռ նրա սրտի մէջ կռիւ կար, մտքի մէջ միայն մի միտք՝ չօգնել Սուլթանին: Քանի քանի տարիներ նա Սուլթանի մօտ երկրորդն էր եղել, աստիճանաւորների, ժողովրդի մէջ նրա փոքր եղբայրը և նրա հպատակը ճանաչել, նրան վաղուց ուտում էր այն չար նախանձը, որ թոյլ չի տալիս տեսնել իրենից բարձր ոչ ոքի: Ամբողջ գաւառակում միայն Փիր-Մուրադն էր ամեն տեղ ըն-

դունւած որպէս իշխանաւոր, Ծաթի խան ուշադիրների մեծ: Իսկ եթէ նա չլինէր, կամ զոնէ մի երկու անգամ պարտէր, այն ժամանակ այդ պատուի միակ ժառանգը, ինքը Սամադ. բէկը կը մնար: Նա իր ամբողջ կեանքում դեռ ոչ մի անգամ չէր տեսել, որ Սուլթանի ոտը քարին առնէր: Առաջին դէպքն էր ահա, որ պատահում էր, և նրա համար հարց էր թէ ինչ է լինելու իր դերը: Նա մի քան անվիճելի էր ընդունում. այն՝ որ յամենայն դէպս, իրենց գաւառակի առաջին մարդը թուրքերից պէտք է լինի, որովհետեւ ժողովրդի մեծամասնութիւնը թուրքեր են, և Ծաթի խան ուշադիրներից՝ որովհետեւ մի այլ այդպիսի տուն չկար: Ուրեմն, Մէլիք Նէգօյի յաղթութիւնը յամենայն դէպս պէտք էր ընդունել ժամանակաւոր, իսկ ներկայումս, Փիր-Մուրադի պարտութիւնը կարող էր ընդմիշտ վայր գցել նրան ժողովրդի աչքում և առաջ տանել իրեն՝ Սամադին: Այս պատճառով նա վճռել էր արտաքինով երևալ կորած և շշմած, անընդունակ Սուլթանին օգնելու, իսկ իր քուէն ծածուկ տալ Մէլիքին: Բայց Սուլթանի դէմ անկարող լինելով բացարձակ մաքառել, ինքն էլ քուէտուփ դրեց, համաձայն Սուլթանի ցանկութեան, որ մտածում էր թէ եթէ ինքը չընտրուի, զոնէ ընտրւողը Ծաթի խան ուշադիրներից լինի:

Ագիտացիայի ամենատաք ժամանակն էր, երբ գաւառապետը հրամայեց քուէարկողներին բաժանել ամբոխից և յայտնեց նրանց, որ երեք մարդ տուփ են դրել. դրանք են. Մէլիքը, Սամադ բէկը և Փիր-Մուրադ Սուլթանը: Մինչդեռ վարչութիւնը զբաղւած էր տուփերի կարգաւորելով, տաքացած և լիովին եռանդ դառած Սուլթանը դարձաւ դէպի թուրք ժողովուրդը հետևեալ ճառով.

— Ով հաւատացեալների, հայրերից և պապերից մենք լսել ենք, որ Ղափլան Սուլթանի տոհմը միշտ ձեզ վրայ աղսախկալութիւն է արել: Իմ հայրս ձեր հայրերի մեծն է եղել, իմ պապս ձեր պապերի, իսկ ես, քառասուն տարի է, որ ձեզ վրայ լաւ թէ վատ աղսախկալութիւն եմ անում: Այժմ՝ իմ ծերութեան ժամանակ, երբ մի երկու հաց կամենում են ինձ վայր գցել և իմ հայրենական թշնամին կամենում է իմ վզին նստել, դուք ու ձեր Ասուածը, իմ կեանքը, պատիւը ձեր թասիբից է կախւած. և ես յոյս ունիմ, որ ոչ մէկն էլ ինձ հացին չի ծախի. ինձ համար Ալի-վալի

Վանչողները ողջ լինեն: Վերջին խօսքերը արտասանելուց յետոյ, Սուլթանը—«Եա Ալի՛, գոռաց, ձեռքով մի մեծ արագ շարժում արաւ օդի մէջ և գնաց դէպի իր քւէտուփը:

Դեռ այս ճառից առաջ թուրք տարրը ոգևորւած էր և կրօնական զգացմունքն ու եռանդը սկսել էին իրենց ազդեցութիւնը անել: Այս ճառը նրան աւելի գրգռեց, հոգևորականները սկսեցին բարձրաձայն գոռալ—«Ալլահ Աքպար». ժողովուրդը երեսին սալաւաթ քաշեց և «Եա Ալի՛» գոռալով գնաց քուէարկելու:

Մէլիքին ձայն տւին ողջ Խնութի հայերը, բացի Աւետիսից. Սուլթանին բոլոր թուրքերը, բացի Սամադ բէկից և Քալալայի Արդուլ Հուսէյնից: Սուլթանը միրաւի քուէ ստացաւ, Սամադ բէկն՝ առաջին թեկնածութեան, Մէլիքը՝ երկրորդ: Վլադիմիր Վլադիմիրովիչի, Ալէքսանդրի և Մէլիքի պարտութիւնը անսպասելի էր: Նոքա գլխները կոր պատերազմի դաշտից տուն եկան:

Գլ. ԺԷ.

Յաղթութիւնը Փիր-Մուրադ Սուլթանին չափեցրեց: Նա մի անգամ էլ ակնյայտ նկատեց, որ ինքը բաւականին շատ թշնամիներ ունի, որոնցից ամենաահաւորը իր եղբայրն է: Նա գուշակում էր, որ ներկայ հանգամանքներում, երբ պրիստաւը նրան հակառակ է, Սամադը միրաւ դառնալու համար կարող էր հեշտութեամբ միանալ Մէլիքի հետ, իրան վայր զցելու նպատակով: Մէլիքին կամ Սամադին նա սպանել տալ անկարող էր: Միակ ելքը մնում էր ամեն ջանք զործ գնել և նորեկին այն զաւառակից հեռացնել: Դրանից յետոյ, նա ուժեղ թշնամի չէր ունենայ և իր հակառակորդներին կը խեղդէր:

Բայց ինչպէս հեռացնել նորեկին, որին օգնում է Շէկ Մէլիքը, սկսել է սիրել ժողովուրդը, սիրում է զաւառապետը. այս մտածողութեան մէջ էր Փիր-Մուրադ Սուլթանը, երբ մտաբերեց Սլօ դաշաղին, որ բաղդի բերմամբ ինքն եկաւ նրա մօտ:

—Այո, այո, Սլօ աղա, լսել եմ այն անպատուութեան մասին, որ քեզ հասցրել է նորեկ պրիստաւը:

—Ինչ անեմ, Սուլթան... եկել եմ քեզ մօտ, մի խելք սովորեցուր. վաղուց եկած կը լինէի, բայց դուք զբաղւած էիք ընտրութիւններով, ամառն էլ երանաձորումն էի:

—Իզօւր չես եկել: Միթէ չգիտես, որ ես բարեկամի թափօթին միշտ կանգնած եմ: Իմացիր եղբայրս, որ եթէ այս աշխարհում Փիր-Մուրադ Սուլթանին պատուում են, այդ բանի համար է. ես բոլորովին նշանակութիւն չեմ տալիս այն զէպքին, որ քո աղջկան փախցրել են: Այս քուրդը չլինի՝ միւսը լինի. բայց իմ կարծիքով անտանելին այն է, որ տարել են մի հայ ամուսնի երիտասարդի տուն և ամենուրէք հրատարակած է, որ պրիստաւը Սլօ ղաչաղի գեղանի աղջկան տարել է իր համար: Ահա ինչ, որպէս թասիբով մարդ, ես անկարող եմ տանել:

—Սուլթան, ահա արդէն երկու ամիս է, որ ես վերադարձել եմ և քուն ու դադարումս կտրւել է. ոչ հարստութիւնս, ոչ տունս, ոչ մի բան ինձ չի հետաքրքրում. կերածիս համը չեմ իմանում. հագածս շորը չգիտեմ ինչ է: Ոչ մի քելզան <sup>1)</sup> ինձ չի կարողանում ուրախացնել. զիշեր ցերեկ ինձ տանջում է իմ խաչտառակութիւնը: Ես կարծում էի, թէ Բէչէ պառաւին սպանելով, ես կը հանգստանամ, բայց այդ էլ չի օգնում. կիսս իմ ահից փախել է իր ազգականների մօտ: Այժմ աշխարհումս ոչինչ բան չունեմ: Տանս մէջ կարծես սատանաներն ինձ հալածում են. զրսում դաշտերն ու սարերը կարծես ինձ թշնամացել են. սիրտս ափսոսանքով է աղջկանս, որ պատրաստ եմ ներել նրան. բայց մտածում եմ խալին ինչ կասեն, աղջիկը ջահանգամը—մարդի մեռնելուց յետոյ անունը կը մնայ, իսկ եզան՝ կաշին:

—Ես քեզ մի բան ասեմ—Սլօ ջան, չոլերն ընկնելուց ոչինչ բան դուրս չի գալ. այժմ ձմեռը գալիս է. դու հարստութեան տէր ես, պէտք է քո տաւարի, ոչխարի, ձիանց մասին մտածես, եթէ ոչ մինչև գարուն բոլորը կը կոտորւին և դու կ'աղքատանաս: Իսկ երբ դու աղքատացար, էլ մարդ քեզ վրայ ուշք չի դարձնի՝ լաւ է մեռնես. մեր ժամանակն այսպէս է:

—Շատ իրաւացի ես դատում, Սուլթան ջան, այժմ հասկանում եմ որ դու իմ բարեկամն ես. բայց ինչ արած, որ տանս դադար չեմ գտնում:

<sup>1)</sup> Քելզան ես գործ եմ անում ժողովրդական քէշլան խոսքի տեղ, որպէս կոչւում են Հալաստանում չալտնի ցեղի ձիանքը:

—Ե՛, լաւ... բայց Բէչէ սպանելուց ի՞նչ դուրս կը գայ. զիսիդ սպանես, ինչ դուրս կը գայ. քեզ համար մինչեւ անգամ ամօթ էլ է այդպէս անձեռ անոտներին սպանելը. Վազ խփիր, որ կաթսայ լցնես, ճնճողուկ մնճողուկից ի՞նչ օգուտս:

—Իմ ցաւն էլ նրանումն է, որ ինձ հաւասար մի հակառակորդ չունեմ. իմ թշնամիները բոլորն էլ հովիւ, գառնարած, նախըրարած և անւարտիկ աղքատներ են:

—Մի՞թէ պրիստաւը, որ քո աղջիկը տարել, կոխել է իր տունը, քո թշնամին չէ:

—Ի՞նչ ասեմ, նա և իր հայրն ու մայրը քանի անգամ ինձ յուր են ուղարկել և առաջարկել, որ հաշուեմ: Պրիստաւը մի չինովնիկ մարդ է, նա ինչ հաշիւ ունի, որ ինձ հետ թշնամութիւն անի:

—Խեղճ մարդ, եթէ նա քեզ բարեկամ էր, ինչո՞ւ երբ իր ծառան քո նման մարդու աղջիկ բերում էր իր տունը, ձեռքից չէր խլում—քեզ յանձնում, կամ ի՞նչու համաձայն իր պաշտօնի պահանջման, չէր բռնում առեւտրողին բանտարկում. և վերջապէս, եթէ նրա համաձայնութիւնը չլինէր, ի՞նչպէս կարող էր նրա ծառան համարձակել արիւնարբու Սլօ-ղաչաղի աղջիկը փախցնել, նրա տունը բերել: Օ, եղբայր, դու չես հասկանում, դրանք հայեր են, դարմանի տակը ջուր կապողներ են:

—Ապա ի՞նչ շահ ունէր պրիստաւն ինձ հետ այդպէս վարելու. չէ՞ որ բոլորն ասում են՝ թէ նա լաւ մարդ է:

—Ուղիղն ասած, ահա թէ ինչ շահ. նա ամուրի մարդ է, իսկ քո աղջիկը սիրուն կին. ուզեցել է աղջկադ անունը ուրիշներինը լինի, իսկ ինքը հետն ապրի:

—Ի՞նչ ես ասում:

—Ուղիղն եմ ասում: Ինչու դու, թան խմող մարդ տեղովդ, այդպիսի բաներ հասկանում ես, իսկ նա ուսում առած, երկիր ման եկած, ինքը չինովնիկ, գիշեր ցերեկ չայ ու կերակուրի վրայ, այսպիսի բաներ չի հասկանում:

—Բա ի՞նչ անեմ:

—Այդ քո դատելու գործն է. միայն իմ կարծիքով, քո թըշնամիները Թշուռոցի Ուլանէս աղէն ու իր որդին են:

Սուլթանի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ, Սլօ-դաշաղբ առանց ձիուց իջնելու, մի քանի օր դաշտերում և սարերում գեղերում էր ու մտածում Սուլթանի ասածների վրայ:

Քանի անցնում էր, նա աւելի և աւելի էր համոզւում, որ Սուլթանի ասածները ճշմարիտ են. վերջապէս վճռեց, իրեն վայել մի քաջութիւնով, Ովանէս աղի ընտանիքից իր վրէժն առնել և ապա փեսի ու աղջկայ հետ հաշուել:

ԳԼ. ԺԸ.

Թէպէտ ընթացող յուզիչ դէպքերը, որոնք խլում էին Ալէքսանդրի ամբողջ ժամանակը, որ նա դիտմամբ ուզում էր պարապացնել գործի վրայ, շատ աննպաստ էին նրա առողջութեան համար, սակայն երիտասարդ տարիներն իրանցն անում էին: Զիւլ վրայ և ոտով շարժողութիւնները, կեանքը գիւղում և բաց օդի մէջ, պարզ կերակուրները, միրգը և ջուրը բարերար ազդւում էին նրա առողջութեան վրայ: Նրա քայլերն աւելի հանդարտ էին և ուժեղ, աչտերն աւելի գերուկ էին և կարմիր, աչքերում աւելի փայլ ու կեանք կար, իսկ կռններում՝ ոյժ: Զնայելով իր բոլոր ջանքերին, որ միայն գործի վրայ մտածի, Ալէքսանդրը չէր կարողանում հեռացնել իր մտքից Գուլէին, որին նա ամեն օր պատահում էր: Նա քանի անգամ էր վճռել, որ Գուլէին չպատահի, բայց Գուլէն ինքն էր մօտենում նրան և իր ծառայութիւնն առաջարկում ջուր տալու, թէյ բերելու, շորերը մաքրելու և այլն:

Հարսանիքի ուրախութիւնից յետոյ, Գուլէի մէջ էլ փոփոխութիւն առաջ եկաւ, մանաւանդ՝ երբ մի քանի օրից յետոյ Ալօն գնաց օտարութիւն: Նա յաճախ միայնակ հեռանում էր աչգին և նստում մեծ խնձորենու տակ ու լաց լինում: Նրան այժմ չէր զարմացնում հայ կեանքը պտղատու աչգիների մէջ, ապրուստը մաքուր սենեակներում, հեռու կուրից և աթարից: Նրան իսկի դուր չէր գալիս՝ որ հայ կանայք ամբողջ օրը հացատներում էին աշխատում. ընդհակառակն, նրա համար ինչքան անուշ էին ոլորանը ձեռին սար գնալը, ազատ դաշտերում բարձր խօսելը, երգելը և ուլ ու զառի ետեից վազելը: Ախ, նա ինչքան կուզէր միանգամ էլ տեսնել իրենց ձիերի երամակը, խոյերը և իր հօր զէնքերը, պատից կախած:

Իսկ հայ կանայք, ինչի նման են. գլուխները պնդացրած, մէջքները կեռ, կարճահասակ և անլեզու: Հայի կինը, երբ հիւր է զալիս իր ամուսնու հետ, թագնու՞մ է կանանց մէջ. մինչդեռ քրդինն ինչպէս ազատ է լինում և ամուսինը նրա ընկերակցութեամբ հրքան աւելի յարգանք է ստանում. նա մտաբերում էր քրդուհիների բարձր հասակը, հպարտ ու ծուռ քոֆին, կարմիր ու նեղ շորերը, կպած նրանց վայելուչ իրանին: Այս մտածողութիւնների ժամանակ յաճախ մօտենում էր նրան խղճուկ Զէյնօն, զգու՞մ, համեղ կերակուրներ բերում, սակայն ինչ արժէք ունէին Ալօ-ղաչաղի աղջկայ համար աշդուխի աղտոտ և չնթառոտած պառաւի սէրն ու յարգանքը. Գուլէն զգանք էր զգում նրան նայելիս և հեռու փախչում նրա բերած կերակրից: Գուլէի տառապանքն օրէ օր նշմարելի էր դառնում և Փաղիկ խանութին ու Զէյնօն պէտք է, առանց հանաքի, մտածէին նորահարսի կսկիծը փարատելու մասին:

—Քեզ մատաղ, խանում, ասում էր Զէյնօն. ես շատ եմ տեսել, որ նորահարսները իրենց հօր տունը չիշելիս լաց են լինում, բայց այս դէպքը նրանցից չէ... Մի ճար արա...

Երկու պառաւները վճռեցին, որ Գուլէին ինչքան կարելի է ազատ թողնեն, բայց այնպէս, որ նա բազից դուրս գալ չկարողանայ, որ Ալօ զաչաղը նրան չփախցնի:

—Գնա, Ալէքսան աղի սենեակները ման արի, թող սիրտդ բացւի. սրբի, մաքրի, կարգի բեր: Նա քո աղէն է և եղբայրդ. նրան ծառայի՛ երբ հարկաւոր կը տեսնես, և ոչ ոք ոչինչ վատ բան չի կարող կարծել, յաճախ ասում էր Զէյնօն Գուլէին:

Գուլէն Ալօի հետ ապրեց միայն երկու շաբաթ և այդ ժամանակամիջոցում, նա մինչև անգամ չկարողացաւ հասկանալ՝ թէ ինչ է ամուսնական կենակցութիւնը: Նա, ինչպէս և շատ օրիորդներ, որոնք զեռահաս են պսակուում, ոչ մի նոր բան չզգաց, ոչ մի բնական բնութագրութեան զգացմունքը չջերմացրեց նրա ամբողջ մարմինն ու էութիւնը և ամուսնու հետ համբուրելիս ու գրկելիս, կարծես պարտականութիւն էր կատարում. նա շատ անգամ զգում էր Ալօի աղտոտ մարմնից: Առաջին անգամ նա մի առանձին ջերմութիւն զգաց աղամարդի մարմնից, իր հարսանիքի երեկոյեան, երբ սոսուսի կպած պարում էր Ալէքսանդրի հետ: Այն գիշերը, պարից

յետոյ, նա իրեն այնպէս ուրախ և բախտաւոր էր զգում, որպէս ոչ մի ժամանակ չէր զգացել: Նա ուրախ-ուրախ մտաւ իր անկողինը և ընկաւ խոր, պատանեկան քնի մէջ:

Առաւօտեան զարթնելուց յետոյ, նա մտաբերեց, որ մի ինչ որ երազ էր տեսել, որտեղ եղել էր, Բէչէն, իրանց գոմը, Ալէքսանդրը, որի հետ կ'ասես նա գրկախառնւել էր և իրեն ինչ որ վատ տրամադրութեան մէջ էր զգում: Նա մտաբերեց իր երեկոյեան պարը Ալէքսանդրի հետ, այն հանգամանքը, որ այդ պարը բոլորը տեսնում էին և կ'արժեա զգաց, թէ մի ինչ որ վատ բան է արել և, երբ Ալէքսանդրը մօտեցաւ նրան, քաղաք զնալու համար մնաք բարով անելու, նա ամօթից գլուխը կորացրեց, աչքերը համարեա խբեց, այնպէս որ, ձեռքը պարզելու ժամանակ, նրա դէմքը չէր երևում:

Ալէքսանդրի քաղաքից վերադառնալուց մի տաս օր հազիւ էր անցել, երբ տան մէջ արդէն որոշւած էր նորահարսի պարտականութիւնները դէպի երիտասարդ պարոնը: Գուլէն առաւօտեան պէտք է թէյ տար նորան, սենեակում պատրաստի ջուր պահէր լւացելու և խմելու համար, նրա սենեակը մաքրէր, ճաշին պէտք է նրա համար սեղան զցէր՝ երբ նա առանձին էր ճաշում, իսկ իրիկունը պէտք է նրա տեղաշորերը փռէր: Ձնայելով Ալէքսանդրի բոլոր թախանձանքին, ամբողջ տունը անհրաժեշտ էր համարում, որ այս բոլորը նորահարսն անի, որը տան աղջկայ հաշւում էր:

Ինքը՝ Գուլէն մեծ ուրախութեամբ էր այս բոլորը կատարում և իրեն միայն այն ժամանակ էր հանգիստ զգում, երբ աշխատում էր իր պարոնի համար. իսկ երբ նրա աշխատանքին ներկայ էր լինում և պարոնը, Գուլէն ինքն իրեն մոռանում էր. պարոնի ամեն մի խօսքի վրայ ուրախ ուրախ քրքշում էր, իրանը, գլուխը թեքում և արագ-արագ շարժւում: Իսկ Ալէքսանդրը, հակառակ իր ցանկութեան, միշտ նստում էր սենեակում Գուլէի գալու ժամանակ և նրան խօսեցնում: Յաճախ նոքա մոռանում էին պարոնի և աղախնի յարաբերութիւնները և Ալէքսանդրը կանգնած խօսում էր Գուլէի հետ այն ժամանակ, երբ նա նստած էր լինում: Ալէքսանդրը Գուլէին նստած զիրքում տեսնելիս խեղքը կորցնում էր:

Այդ բոպէներում Գուլէն ուղիղ որ տիկին էր. իրանն ուղղա-

հայաց, զլուսը բարձր և թեք, դէմքը ծիծաղկոտ: Նրա աչքերի մէջ երևում էր, որքան կրակ, նոյնքան և անսրտութիւն. իսկ շարժւածքը ազատ էր ու հանդիստ. բայց երբ նրա զոյգ սալնքները, որ գեղեցիկ նշմարւում էին լանջի վրայ, զոյգ գերուկ և երկար ազդրները, որոնք որոշակի նկատւում էին կարմիր անդրաւարտիկ-նեւրի տակ և սպիտակ ու գեղեցիկ ատամներն ընկնում էին Ալէքսանդրի աչքին, նա սկսում էր հիանալ նոցա համաչափ գեղեցկութեամբ և հասկանալ թէ ինչից է, որ այդպիսի գեղեցկութիւնը, ուղիղ որ, չի գրգռում տուփանք: Նա յափշտակութեան մէջ մի քանի անգամ հազիւ էր իրեն զսպում և քիչ էր մնում ընկնի Գուլէի ոտները, նրա ծնկները համբուրի, ձեռքերն իր աչքերին, երեսին շփի: Մօտ քսան օր Գուլէի և Ալէքսանդրի յարաբերութիւնները կարծես իրենց համար էլ անհասկանալի էին: Երբ Գուլէն սենեակն էր մտնում, Ալէքսանդրը զիրքը ձեռքից վայր էր զցում և իսկոյն մի բան գտնում ու խօսում. նոքա հանաքներ էին անում և յաճախ իրար ձեռքից զօռով բան խլում: Այդ բոլորներում, երբ նոցա մատներն առնում էին իրար, երկսի մարմնի մէջ էլ մի աննկարագրելի սառսուռ էր անցնում, սկսած մատերի ծայրից մինչև զաղտը և ոտերի ծայրերը: Գուլէն էլ, կասես դիտմամբ, ընտրում էր այնպիսի ժամանակ և մոտում Ալէքսանդրի սենեակը, երբ մի այլ գործ չուներ և երբ Զէյնօն ու Մաղիկ խանումը կամ տանը չէին լինում: Կամ շատ զբաղւած էին լինում, ուրեմն և նրան չէին կարող կանչել: Նա սենեակն էր մտնում թէ չէ, իսկոյն առանց պատճառի բարձր ծիծաղում էր ու մի ինչ որ բան ուրախ զւարթ պատմում: Նա սկսել էր մոռանալ իր ընտանիքը, անցեալը, այլ ևս բոլորովին միայնակ չէր նստում և լաց լինում:

Իսկ Ալօին լիովին մոահան էր արել: Նա յաճախ ծիծաղում էր Զէյնօյի մօտ, դէպի որը նա սկսել էր սէր տածել. Մաղիկ խանումին նա շատ անգամ այնպէս էր սխմում իր կուրծքին, որ իսկի իր մօրն այնպէս չէր գրկի:

Ալէքսանդրն էլ, շնայելով իր բոլոր ջանքերին, չէր կարողանում գործի նւիրել:

Թէ զիւղացու հետ խօսելիս, թէ պաշտօնական թղթերը նայելիս, թէ գրքեր կարդալիս, նա անկարող էր լարել իր

ուշադրութիւնը. նրա ուղեղը մեծ մասով նւիրւած էր Գուլէին: Նա մոռացել էր համալսարանը, իր տանջող մոլեքերը. այլ ևս չէր խորասուզուում երկրի առաջադիմութեան խնդիրներին մէջ: Շաբաթներն անցնում էին և նրա գլուխը չէր գալիս մեր երկրի ազգերի իրար դէմ մաքառելու հարցը. նրա մասին եղած փաստերը նա այլ ևս չէր նկատում և ընկած էր մի ինչ որ բախտաւոր անընթացին դրութեան մէջ, լի գեղարւեստական երազներով, որոնց մէջ տիրում էր սէր, ուրախութիւն և բախտ եղեմական դրախտաւայրում:

Միրաւութեան հարցում պարտութիւն կրելուց մի քանի օր յետոյ, երբ Մաղիկ խանումն ու Զէյնօն գնացել էին դրացու տուն մաթ եփելու և տունն ամբողջ օրով ջանձնել էին Գուլէին, վերջինս մտաւ Ալէքսանդրի սենեակը և սկսեց մաքրել նրա սեղանը, որի մօտ նստած պարապում էր:

— Գուլէ, ժամանակ չէ, սպասիր, դարձաւ դէպի նա Ալէքսանդրը:

— Լաւ ժամանակն է. դու մի կարգա. տէրտէր ես դառնալուինչ է, մազերդ ու միրուքդ երկարացրել ես, կ'ասես, զրբաց տիրացու լինիս:

— Ասում եմ, հեռացիր, Գուլէյի ձեռքը բռնելով, սկսեց խանգարել նրան Ալէքսանդրը:

Գուլէն սկսեց հակառակել նրան ասելով՝ թէ չես ուզում՝ դուինքդ հեռացիր: Ալէքսանդրը վեր կացաւ, որ նրան քօի տայ հեռացնի, նա ձեռքերը դէմ տւեց Գուլէի ձեռքերին և սենեակում երկուսն էլ ծիծաղելով սկսեցին իրար գոշտել ձեռքերի թաթերն իրարու կպցրած:

Նոքա երկուսն էլ մի ինչ որ ջերմութիւն էին զգում իրար թաթերից: Յանկարծ նրանց երկսի ձեռքերն էլ սոթտալով իրարից պրծան և նոքա մարմնի ուժով իրար կտան և, երկուսի համար էլ անհասկանալի կերպով, Ալէքսանդրի շրթունքները կտան Գուլէի շրթունքներին. նոքա բոսկաբար հեռացան իրարից ամեն մէկը սենեակի մի անկիւնը, բայց խփոյն և հիթ մօտեցան իրար, զրկախառնեցին ու պինդ սեղմեցին միմեանց իրար կուրծքի ու մի քանի անգամ համբուրեցին:

Դրանից յետոյ ինքնամոռացութեան մէջ ընկած Ալէքսանդրը

կարծես ուշքի եկաւ և ձեռքը գցեց իր մազերին ու գլխին. իսկ Գուլէին ավշած, սենեակից դուրս գնաց, ոլորանը վերցրեց և նըստեց բազի թթենու տակ, ուր սկսեց թէլ մանել ու լաց լինել: Բակի դռները փակէին և այս բոլորին վկայ էին միայն սենեակի պատերն ու պատկերները, այգու ծառերը և աշնան անգոյն արեւը, որ պաղած երկաթի նման, հաղիւ փայլում էր երկնակամարի վրայ:

ԳԼ. ԺԹ.

Գուլէին համբուրելը շատ մեծ ազդեցութիւն ունեցաւ Ալէքսանդրի վրայ. նրան գիշերը տանջում էր իր արած չարագործութիւնը:

— Ի՞նչ դեր եմ կատարել, հարցնում էր նա յաճախ ինքն իրեն: Մի աղքատ ընտանիք, որին երեսուն տարի պատսպարում է իմ հայրենի տունը, ունի մի չփչացած երեխայ, որ սիրահարում է ինձ և ես այնքան անբարոյական եմ, որ ոչ միայն այդ բանի առաջը չեմ առնում, այլ և ինքս եմ սիրահարում և խեղճ արարածին հասցնում մինչև ամուսնուն դաւաճանելը. ես օգտւում եմ այն հաւատքով, որ ունեն ղէպի ինձ մեր ընտանիքի ծերացած ծառաները և իմ գիրքս ՚ի չարն եմ գործ դնում: Փոխանակ նորաստեղծ ամուսիններին իմ ուսեալ խելքով աւելի լաւ ճանապարհի վրայ դնելու, որ աւելի լաւ կապին ամուսնական կապով, ես, որպէս դրախտի օձ, թունաւորում եմ նոցա կեցութիւնը: Ո՞ւր են այն գաղափարները, որոնց ես որպէս սրբութիւն եմ ընդունել, և ինչպէս հեշտ ու շուտ զոհեցի նրանց. խղճալի արարած: Ի՞նչպէս ես կորցրի իմ դատողութիւնը, կամքիս ոյժը և դաւաճանեցի մարդկութեան ամենաբարձր սկզբունքներին:

Նա այս մտածութեան մէջ յաճախ իրեն համեմատում էր իր ծնողների հետ և տեսնում, թէ ինչքան ինքը նրանց հետ համեմատած նւաստ է: Նա յաճախ մտաբերում էր հարսանիքի երեկոյեան իր հօր ասած խօսքերը. «Աղքատ 30 տարի է մեր տանն են և հայի պատիւը ղիտեն. դու էլ պէտք է այս հարսին քեզ քոյր անես, вотъ нашъ армянскій законъ» — ահա մեր հայկական օրէնքը:

Բախտաւոր օրւայ երկրորդ օրն էր, մտածմունքներից զրուսը տաքացած և ցաւ բռնած, Ալէքսանդրը ճակատը շփելով դուրս

եկաւ սենեակից և գնաց դէպի այգո՛ւ խորքը: Աշուն էր. համարեա ձմեռւան սկիզբը. ծառերը մերկացել էին և նոցա չորացած սաղարթը, թափած գետնի վրայ, ոտերի տակ փշրւում էր:

Ամեն տեղ տիրում էր մեռելութիւն. միայն հիւսիսային քամին բւոցով փչում էր և ծառերի չորացած տերևներն ու ճիւղերը ուժեղ իրար զարկում. ոչ մի կենդանի չէր շարժւում այգում. ճռիկներն ու բլրճներն անգամ մտել էին իրենց ծակերը և թազնւել մօտալուտ ձմեռւան ցրտերից: Արեգակը հազիւ էր երեւում ամպերի տակից և բոլորովին չէր տաքացնում մարդու մարմինը, որ ջերմութեան կարիք էր զգում: Ալէքսանդրը այգում բաց արեց իր գլուխը և երեսը թեքեց դէպի սառ քամին, որ զովացնում էր նրա ճակատը և ջղերը հանգստացնում: Նա կամաց-կամաց ազատւում էր իրեն ճնշող մոքերից և գրաււում բնութեամբ:

—Խոչ է աճում, հարցնում էր ինքն իրեն և պատասխանում. ձմեռ, երբ ամբողջ բնութիւնը սկսում է մեռնել:

Ողջ բնութիւնն իր պարտքը կատարեց, ծլեց, կանաչեց, ծաղկեց, պտուղ տւեց և այժմ մեռնում է: Նշանակում է ամեն մի բոյս, կենդանի, սիրահարւեց, սիրեց, պսակւեց, որդիներ ծնեց և մեռաւ: Միթէ ես էլ իրաւունք չունեմ նոյնը անելու և մինչև անգամ պարտական չեմ: Ո՞վ է արգելք դրել, որ ես Գուլէին սիրեմ և փոխադարձաբար ընդունեմ նորա սէրը: Ո՞վ է արգելել և Գուլէին այդ բանն անել: Զանազան ամուրի և անբարոյական բարոյագէտներ:

Ո՞վ իրաւունք ունի բնութիւնը ստրկացնելու և փականքների մէջ դնելու. միթէ անբարոյականութիւն չէ, երբ մարդկանցից մէկը հրամայում է միւսին չսիրել, չհամբուրել և հասարակութիւնը հակառակորդին ըմբոստի և անբարոյականի անուն է տալիս: Ի՞նչու ես ու Գուլէն, յանուն ինչ որ սուտ ու պատիր մոքերի, պէտք է զրկենք մեր բաղդաւոր թողչներից, մեր կեանքի գարունից և պտուղ չբերենք մարդկութեան համար. չէ որ վաղը մենք մեռնելու ենք և երկրորդ անգամ աշխարհ չենք զալու. ներկայ մի թոպէով չօգտւել, նշանակում է ընդմիշտ կորցնել նրան:

Այս և սոցա նման մոքեր, նորից և աւելի մեծ ուժով սկսեցին ճնշել Ալէքսանդրին. նա ստիպւած թողեց այդին և գնաց

դէպի հացատուն, որտեղ Մաղիկն ու Ձէյնօն ինչ որ բան էին անում, իսկ Գուլէն նստած բուրթ էր գլուսում:

—Աղա ջան, ինչու այսօր այդքան տխուր ես, հարցրեց նրան Ձէյնօն:

—Ձգիտեմ, կարծես գլուխս ցաւում է:

—Մրսած կը լինես: Գուլէ ջան, իրիկունը աղի վրէն երկու վերմակ գցի ու ինքդ լաւ ծածկի:

—Ձէ, հարկաւոր չէ, ես առհասարակ չեմ սիրում, երբ կանայք ինձ ծառայում են:

—Աղա, այդ ուսի սովորութիւն է. ասում են, նրանց տղամարդիկը կանանաց ծառայում են, բայց մեր հայի-քրդի վարքն է, որ կինը պէտք է տղամարդի առաջ հրամանակատար լինի: Գուլէն քո նւաստ ծառան է, միշտ պարտաւոր է քեզ ծառայել:

Ձկարողանալով այստեղ ևս հանգիստ գտնել, Ալէքսանդրը գնաց իր սենեակը. նստած աթոռի վրայ, արմունկները կրթնած սեղանին, իսկ գլուխը հենած ձեռքերին, նա ընկաւ խորը մտածութեան մէջ: Ի՞նչ զրութեան մէջ էր նա այժմ. ամեն բան նրա աչքի առաջ կորցրել էր իր նշանակութիւնը. մի առարկայ միայն թաղաւորում էր նրա սրտի և գլխի մէջ, դա Գուլէնն էր:

—Ախ, ինչքան ես բախտաւոր կը լինէի Գուլէի հետ, մտածում էր նա. ես ամբողջ օրը միայն նրա դէմքին, աչքերին կը նայէի, նրա գեղեցկութեամբ կը թարմանայի. ես նրան կը սովորեցնէի կարդալ, երգել, դաշնամուրի վրայ նւագել, կը զարգացնէի նրան, կը տայի կրթութիւն և բնութեան ծաղիկը կը դառնար մարդկային հասարակութեան զարդ. մենք կունենայինք առողջ որդիներ, կը կրթէինք նրանց, որքան բախտաւորութիւն! Իսկ այժմ այս բոլորը կորած է, կորած է և իմ բախտս. ես, չծաղկած և պտուղ չտւած, թառամում եմ:

Այս մտածութիւնների ժամանակ, նա խորը ախ քաշեց, սկսեց սենեակում անց ու դարձ անել. նա երեւակայեց, որ ինքը բնութեան ամենախղճալի արարածն է, մէջքը ծռեց, գլուխը կորացրեց և յետոյ նորից նստելով աթոռի վրայ, այտը ձեռքի վրայ դրած, անբախտի դիրք ընդունեց:

Երբ Ալէքսանդրը նստած էր այս զրութեան մէջ՝ կամացուկ

ներս մտաւ Գուլէն: Նա տխուր էր և մտայնող, որպէս երբէք իր կեանքում չէր եղել: Այս մի քանի օրը նրա վրայ այնքան ազդել էին, որ կարծես լիովին փոխել էր և միշտ ծիծաղող, երգող ու պարող երեսան դառել էր մտքերի մէջ խորասուզած ջահել կին: Նա առանց խօսելու մօտեցաւ Ալէքսանդրին, գրկեց նրա գլուխը և սկսեց համբուրել նրա շէկ մազերը, սպիտակ ու լայն ճակատը և կապուտակ աւերը:

Ալէքսանդրը վեր կացաւ, գրկեց նրան, համբուրեց, սեղմեց իր կուրծքին և յետոյ նոքա երկուսով իրար գրկա՜ն, կանգնած մնացին ու յորդ արտասուքը թափւում էր նոցա աչքերից: Նոքա երկար լաց էին լինում և այս լացը թեթեւացնում էր նոցա վշտերն ու հովացնում սրտերը:

—Ալէքսանդր ջան, սկսեց Գուլէն. ես իմ ամուսնուն կը թողնեմ և քեզ կ'առնեմ. ես իմ մարդի հաւասարը չեմ. իմ հայրը քո հօր հաւասար մարդ է. ես սովոր եմ տիկինութեան. ծառայութիւն չեմ արել. ես իբրեւ մի երեխայ, Բէչէի ազդեցութեան տակ, խաբւեցի՝ փախաց, բայց այժմ տեսնում եմ իմ սխալը, այն վիհը, որի մէջ գլորւել եմ և այն միակ աջը, որ Աստուած պարզել է ինձ փրկելու համար: Նա այժմ եմ միայն հասկանում սէրը և տեսնում, որ քեզ սիրում եմ. ինչպէս երևում է, իմ փախչելը Աստծու կարգադրութիւն էր, որ քեզ պատահէի: Նս, կ'ուզես, հայ կը դառնամ, ձեր շորերը կը հագնեմ, քեզ կը ծառայեմ և այնպէս կ'նութիւն կանեմ, որ դու ես ուզում: Գուլ ինձ սովորեցրու ձեր վարքն ու կարգերը և ես շուտով ամեն բան կ'իմանամ, կը կատարեմ: Նրբ հարկ լինի, ես իմ կեանքը քեզ համար կը զոհեմ, ուր դնաս հետդ կը դամ:

—Լաւ, Գուլէ, այդ որ ասում ես, մի՞թէ հայրդ կը համաձայնի:

—Այո, կը համաձայնի. իմ հայրը մի հերոս մարդ է և սիրում է մեծութիւն. դու պաշտօնատար ես. նս շատ ուրախ կը լինի, որ քեզ նման փեսայ ունենայ. նա կը հպարտանայ դրանով. նա քանի անգամ է ինձ ասել, որ կ'ուզէր հայ լինել:

—Գուլէ ջան, իմացիր, որ քեզնից բաժանւիլը ինձ համար մահ է. բայց քեզ հետ կապւելն էլ հեշտ չէ. ես վախենում եմ մեր կապովը երկուսս էլ անբախտանանք:

—Մեր կապելը շատ հեշտ է. կ'ուզես այս բուլին դուրս գամ և բոլորին յայտնեմ, որ էլ Ալօին կնուլթիւն չեմ անի և քո կինն եմ Եթէ ինձ կտրատեն էլ, չեմ վախի. լաւ է քեզ մի օր կնուլթիւն անեմ, թէկուզ դրա համար ինձ կտրատեն:

—Սպասիր Գուլէ, սպասիր մի քանի օր, տեսնենք Ասուած ինչ է յաջողում: Այս ասելով Ալէքսանդրը գրկեց Գուլէին, պինդ սեղմեց իր կրծքին, համբուրեց նրա աչքերը, այտերը, ճակատը, բազուկները և կամաց հասցրեց մինչև դռան սեմը: Գուլէն գուրս գնաց սենեակից:

Օրերն անցնում էին, բայց Ալէքսանդրը հանգստութիւն չէր գտնում: Նա միշտ զբաղւած էր Գուլէով և նրա հետ ամուսնանալու հարցով: Նա յաճախ մտաբերում էր իր նախկին վճիռներն ու կարծիքները կեանքի մասին. թէ ինքը պէտք է ժողովրդական գործող դառնայ, թէ ժողովրդի մէջ գործողը պէտք է նրա համակրանքը գրաւի՝ այլ կերպ ոչ մի աջողութիւն չի լինի:

Մինչդեռ, Գուլէի հետ. ապրիլը կամ նրա հետ պսակելը նրան վայր կը դցէր ժողովրդի աչքում, ամենայն մարդ կը մեղադրէր նրան, որ իր հայի պատիւը չիմացաւ և իր ծառայի կինը խլեց: Քրդերը կը դատապարտէին նրան, որ իրենց քրդուհուն հայացրեց, իսկ հայերը կը մեղադրէին, որ թողեց կրթւած հայ օրիորդները և պսակեց մի անկիրթ քրդուհու վրայ. բոլորը միասին կը քարկոծէին նրան այն պատճառով, որ խեղճ Ալօին անբախտացրեց, կարծես ինքն այլ կերպ բախտաւոր լինել անկարող էր: Այս մտքերի շարքին իսկոյն հետեւում էր մտքերի մի այլ շարք. նա սկսում էր այդ մտքերը համարել նշան խաւարամտութեան և թերահաւատութեան դէպի մարդկային բնաւորութիւնը: Յաճախ նա հարցնում էր իրեն. ինչո՞ւ պէտք է Գուլէի հետ չպսակելը նրան ժողովրդականութիւն տայ, իսկ պսակելը՝ ոչ,-- ինչո՞ւ պէտք է իր ոչժը փնտռել յետագէմ և ոչ չառաջագէմ դադափարի մէջ. թէ անհատի, ազատութիւնը ամեն յառաջագիմութեան անկիւնաքարն է և այդ տեսակէտից, նա Գուլէին տանելու իրաւունք ունի. նա դատում էր, որ իր կենսակցութեամբ կամ պսակով Գուլէի հետ կը բաղդաւորւի ինքը և աւելի ոչժ կը ստանայ գործելու. որ քրդերը սկզբում անբաւականութեան ցոյցեր կ'անեն, բայց յետոյ

կը յայտնեն իրանց ուրախութիւնը և Գուլէի ազգական ընտանիքները շնորհիւ այս կապի, աւելի կը մօտենան հայերին, ինքն այս պսակով կարող է աւելի ժողովրդականութիւն ձեռք բերել, օրինակով ցոյց տալով, որ ինքն ազգութիւնների մէջ խտրութիւն չի դնում և ամենայն տեղ միայն լաւն է վնասում:

Յաճախ նա ըկնում էր երազների մէջ և երեակայում, որ հայերն արդէն սկսել են պսակել թուրքերի և քրդերի հետ, որոնք խառնուրդով քաղաքակրթւում են, ընկնում են հայոց գրականութեան և մտքի ազդեցութեան տակ ու տալիս են մի սերունդ, որը խօսում է հայ լեզուով, սիրում է իր բնակավայրը և կրում է հայ անուն: Նրա գլուխը գալիս էր մտքերի մի նոր շարք՝ որ այս խառնուրդը չի լինում, ազգերը շարունակում են իրար վրայ բարեկամաբար չնայել և սպասում են ժամանակի ընթացքին. որ հայերը կարծում են՝ թէ թուրքերի և քրդերի՝ այդ աւազակաբարոյ ցեղերի խառնուրդը կը մնասի իրենց ազգային յառաջադիմութեան. որ այս վերջիններն ասում են՝ մենք մեր հաւատը չենք թողնի, իսկ հայը գոհակաբար պնդում է, թէ հայ մահմետականութիւն գոյութիւն ունենալ անկարող է: Ալէքսանդրը այս մտքերին այնքան էր անձնատուր լինում, որ շատ խորհելուց նրա ճակատն սկսում էր ցաւել, գլուխը պտտել և ինքը թմրած ընկնում էր բազկաթոռի վրայ, որտեղից նրան բարձրացնում էր Գուլէյի ջերմ համբոյրը:

Գլ. Ի.

Այժմ դաշաղը լիովին թողել էր իր տուն ու հարստութիւնը և, որպէս թափառաշրջիկ, իր երկու ընկեր աւազակներով, անցնում էր մի սարից միւսը, մի ձորից միւսը, այս ու այն կիրճի մէջ թաղնւում և այս ու այն աղբիւրի ջուրը խմում: Նա դրացիների ամօթից անկարող էր մոռնել իր տունը, ծանօթներից փախչում էր և յաճախ ամաչում. գլուխը քարշ էր դնում մինչև անգամ ժայռերի առաջ:

Նա յաճախ Աստուծուն աղաչում էր, որ իր հոգին առնի. պսակում և աչքերը խփում էր, երեակայելով թէ մեռնում է և աշխատում էր անզգայութեան մէջ ընկնել:

Մի անգամ, երբ նա քարափի վրայ պառկած և կէս քունի

մէջ էր, վճռեց իրան քնած ձեւացնել և սողալով քարափից վայր ընկնել, բայց նրա ընկերները տեսնելով այդ բանը, արգելեցին, թէ և հաւանական է, որ չիմացան նրա դիտաւորութիւնը:

Մի անգամ էլ, սարերում, երբ հանդիպեցին մի մեծ քարանձաւի, նա, յուսալով որ իր ձին բաշթափ կը լինի, քշեց դէպի վեր, անանցնելի քարաժայռերով, բայց սև մատակը, կաքաւի նման թռչկոտալով, բարձրացաւ քարերի վրայով և Սլօ զաչաղին ազատեց: Այսպէս սար ու ձոր Սլօ զաչաղին տեղ չէին տալիս և նա շրջում էր աշխարհի վրայ, որպէս ընկած հրեշտակ: Ի՞նչ անէր նա, սուր զնար. յաճախ մտածում էր, որ մի բանով վերջ տայ այդ դրութեան, բայց չէր իմանում ինչպէս:

Մի օր, վերջապէս, նա հրամայեց իր ընկերներին մտնել Խնութ գիւղը և յարձակւել թշնամու տան վրայ:

Նա հրամայեց իր երկու ընկերներին, որ ում պատահեն սպանեն, թէկուզ դա իր միակ զաւակը լինի:

Ձեռուայ երկար գիշերներից մէկն էր և Ուանէս աղի ընտանիքը քնել էր խոր քնով: Տիկին Մաղիկը զռան մի թղկոց լսեց և Ուանէս աղին զարթեցրեց, որ նայի թէ ինչ կայ:

— Ինչ պէտք է լինի, բարկացաւ ծերունին. ով կը գայ մեր տան վրայ. շատ կարելի է հիւր է գալիս. ծառային վեր հանիր, թող նայի:

— Ել ի՞նչ զարթեցնեմ խեղճին, ես ինքս կը նայեմ, ասաց տիկին Մաղիկը և կիսահագնաւ զուրս եկաւ իրենց ննջարանից:

Նա դուռ ոտը նոր էր սեմից փոխել, երբ հրացանի զնդակը նրան տեղնուտեղը թողեց: Ուանէս աղէն ձեռը դրեց հրացանին և զուրս ցատկեց, մտաւ իրենց հաստ թթենու ետեւը և նկատեց, որ թշնամիները բակից դուրս, թագ էին կացել պատի տակ:

Նա մի հրացան արձակեց. երկու կողմից փոխադարձաբար հրացանաձգութիւն սկսեց:

Սլօ զաչաղն արդէն նեղ դրութեան մէջ էր. շուտով ամբողջ գիւղը կարող էր շրջապատել նրան, ուստի հրացանը վայր դրեց և սուրը քաշած վազեց դէպի Ուանէս աղէն, գոռալով, թէ հրացանը կնոջ գործիք է և հրաւիրելով, որ թրով նրա հետ կուլի:

Բայց նա ղեռ նոր էր պատի տակից դուրս եկել, երբ Ուա-  
նէս աղի գնդակը նրան տեղնուտեղը վայր գցեց:

Սլօի ընկերները տեսնելով իրենց մեծի ընկնելը, կռնակները  
յետ դարձրին ու փախան:

Շշկլաժ գիւղացիները, Ալէքսանդրը, Գուլէն, Զէյնօն մինչև  
մօտեցան, Սլօյի և Մաղիկի դիակները արդէն անշնչացել էին:

(Շարունակելի)

## ԱՐԾԻԻ ԲՈՅՆ

Բ. ԲԵՕՐՆՍՈՆԻ.—Թարգմ. Օր. Հ. Նաքաթեանի

Էնդրեգարդեն էր կոչուում մի փոքրիկ գիւղ, որ գտնուում էր միւս գիւղերից հեռու և շրջապատւած էր բարձր լեռներով: Այդ գիւղը շինւած էր մի հարթ և պողաբեր դաշտի վրայ: Լեռներից հոսող գետը նրան բաժանում էր երկու մասի և թափւում էր մի ուրիշ մեծ գետի մէջ, որ հոսում էր գիւղի մօտերը և երկար տարածութեան վրայ երևում էր այնտեղից:

Ջրի հոսանքն 'ի վեր բարձրանում էր նաւակով մի մարդ, որն առաջին անգամն էր մտնում այդ հովիտը. նրա անունը Էնդրէ էր և այժմ այդտեղ ապրում էր նրա սերունդը: Մի քանիսը ասում էին, թէ նա փախել է այդ հովիտը՝ մի սպանութիւն գործելուց յետոյ և դրանից էր, որ նրա սերունդը մնացլ դէմքեր ունէր: Ուրիշները պնդում էին՝ իբր թէ մուսլուութեան պատճառն այն բարձր ժայռերն էին, որոնք արգելում էին արեգակի ճառագայթների թափանցելուն, ճաշից յետոյ ժամի 5-ից սկսած:

Գիւղի վրայ կախւած կար մի արծւի բոյն: Նա կպած էր լեռներում ցցւած մի բարձր ժայռի զազաթին: Ամենքը տեսնում էին, թէ ինչպէս էգ արծիւն իջնում էր իր բոյնը, բայց ոչոք չէր կարողանում մօտենալ նրան: Արծիւը սլանում էր գիւղի վրայով, շտապով ցած էր իջնում, չափշտակում էր կամ այծ, կամ գառ. մի անգամ էլ բռնեց մի փոքրիկ մանուկ և վերև տարաւ: Դորա համար էլ ոչոք գիւղումն իրեն ազատ չէր զգում, քանի արծիւն իջնում էր իր բնի մէջ, որ գտնւում էր ժայռի զազաթին: Ժողովրդի մէջ աւանդութիւն կար, որ իբր թէ շատ առաջ այստեղ

բնակւում էին երկու եղբայրներ, որոնք բարձրացել էին այդ ժայռի գագաթը և քանդել բոցնը. իսկ հիմա ոչ ոք չէր կարողանում բարձրանալ:

Բաւական էր, որ երկու հոգի հանդիպէին միմիանց, իսկոյն սկսում էին խօսել արծւի մասին, նայելով վերև: Բնակիչները բոլորն էլ գիտէին թէ երբ են արծիւները վերադառնում, որտեղ էին իջնում և որտեղ էին վնաս պատճառում և ով էր վերջին վերև բարձրանալ փորձողը:

Երիտասարդները մանկութիւնից 'ի վեր վարժւում էին լեռների և ծառերի վրայ մագլցելու, ամրապնդում էին իրանց ոտներն ու ձեռները, որպէս զի երբ և իցէ, այն երկու եղբայրների նման, հասնեն ժայռի գագաթին և ոչնչացնեն բոցնը:

Այն ժամանակ, որի մասին է խօսքը, Էնդրէզարդի ամենալաւ երիտասարդը կոչւում էր Լէյֆ և Էնդրէյի ցեղից չէր: Նրա մագերը գոռոզ էին և աչքերը փոքրիկ. ուրախ մարդ էր և շատ կնասէր: Ղեռ մանկութիւնից նա սկսեց հաւատացնել, որ անպատճառ երբևիցէ արծւի բոցնը կը քանդի, բայց ծեր մարդիկ առարկում էին, թէ այդպիսի բաների մասին չի կարելի բարձրաձայն խօսել:

Այդ աւելի էր գրգռում նրան: Եւ ահա մի անգամ, երբ նրա ուժերը կատարելապէս տեղն եկան, նա պատրաստուեց կատարել իր մտադրութիւնը: Ամառուայ սկզբի պարզ առաւօտներից մէկն էր. արծաճագերը նոր էին ձւից դուրս եկել: Նայելու համար ժայռի ստորոտում հաւաքւել էր մեծ բազմութիւն: Մերերը Լէյֆին խորհուրդ էին տալիս թողնել իր մտադրութիւնը, իսկ երիտասարդներն ընդհակառակն քաջալերում էին նրան: Նա ուշադրութիւն չդարձրեց ոչոքի վերայ և մտադրութեան վրայ հաստատ մնաց: Սպասելով, մինչև որ արծիւը բունից դուրս կը գնայ, նա մի մեծ թռիչք գործեց մի քանի ոտնաչափ դէպի բարձր և բռնեց ծառի ճիւղից: Այդ ծառը բուսել էր ժայռի ձեղքում և հենց ժայռի այդ ձեղքով էլ նա սկսեց բարձրանալ դէպի վեր: Երբ փորսող էր տալիս, խիճերը պոկւում էին նրա ոտքի տակից, հողի կտորները փլում էին և թափւում ներքև. բացի նրանց ձայնից էլ ոչինչ չէր լսւում: Յրբեմն էլ լսւում էր դետի հանդարտ կտրկաչիւնը, բայց նա չէր իջնում սարից դէպի հովիտը: Փայռը քանի զնում աւելի սեպա-

Նուժ էր: Նա ստիպւած էր երկար ժամանակ կախւած մնալ մի ձեռքով, ոտքով փնտռելով ամուր յենարան, որին նա աչքով չէր կարող տեսնել: Շատերը, մանաւանդ կանայք, ասում էին, որ նա այդ բանը երբէք չէր անիլ, եթէ ծնողները կենդանի լինէին: Վերջապէս նա յենարան դտաւ և սկսեց նորէն վերև բարձրանալ մերթ ձեռքերով, մերթ ոտներով խարխափելով: Նրա ոտքը սահեց, քիչ մնաց ընկնէր, սակայն դարձեալ կարողացաւ պահել իրեն: Ներքև կանգնողները խում էին նրա ծանր, ընդհատ շնչառութիւնը: Այդ բոլորէն, ուրիշներից հեռու քարի վրայ նստած մի օրիորդ ոտքի ելաւ: Ասում էին թէ նա դեռ մանկութիւնից ի վեր խօսք էր տւել Լէյֆին, չնայելով որ վերջինս Էնդրէի ցեղին չէր պատկանում: Զեռքերը շռաջ պարզելով նա բացականչեց «Լէյֆ, Լէյֆ, Բնչու ես այդ անում: Բոլոր ժողովուրդը նայեց նրան: Հայրն էլ, որ կանգնած էր կողքին, խստիւ նայում էր նրան, բայց օրիորդը այդ չէր նկատում: «Իջիր ցած, իջիր, Լէյֆ, բացականչեց նա. ես քեզ սիրում եմ, իսկ այնտեղ վերևում ոչ մի օգուտ ու չես ստանալ: Նկատելի էր, որ Լէյֆը մի բոլոր տարակուսած կանգ առաւ, բայց այդ տեւեց միայն մի, թէ երկու բոլոր, յետոյ նա դարձեալ սկսեց վերև բարձրանալ: Նա ամուր ոտքեր ու ձեռներ ունէր, այնպէս որ մի քանի ժամանակ յաջող էր բարձրանում, բայց շուտով սկսեց յոգնել. այդ երևում էր հանգստանալու համար յաճախակի կանգ առնելուց: Մի փոքրիկ քար պոկւեց և ներքև գլորւեց, կարծես գուժկան լինէր: Ստորոտում բոլոր կանգնողները մինչև քարի ցած հասնելը հետևում էին նրան: Մի քանիսները չկարողացան համբերել և հեռացան: Իսկ օրիորդը շարունակում էր կանգնած մնալ բարձր քարի վրայ, նա գալարում էր ձեռքերը և նայում դէպի բարձր: Լէյֆը սկսեց շօշափել ձեռքերով իր առաջը, ձեռքը բաց ընկաւ: Օրիորդը այդ պարզ տեսաւ: Նա բռնեց միւս ձեռքով, բայց այն էլ բաց ընկաւ: «Լէյֆ!» աղաղակեց աղջիկը այնպէս ուժգին, որ նրա ձայնի արձագանքը լսեց հեռու սարերի մէջ. միւսներն էլ նոյնպէս բացականչեցին: «Ընկաւ, ընկաւ» կրկնում էին մարդիկ և կանայք, պարզելով ձեռքերը դէպի նա: Նւ իրաւ, նա ընկնում էր քարշ տալով իր հետ հող, քար, աւաղ և գլորւում էր աւելի ու աւելի արագ: Ժողովուրդը զարձրեց երեսը: Շուտով լսեց

նրանց ետեից մի խշրտոց և թրըխկոց, և մի ինչ որ ծանր բանի, կարծես թաց հողի մի կոյտի, ընկնելու ձայն:

Վերջապէս երբ գիւղացիք ետ նայեցին, տեսան գետնին տարածւած, ձեռքերը պարզած, ջարդւած, մի խօսքով անձանաչելի դարձած երիտասարդին: Օրիորդը պառկած էր քարի վրայ ուշաթափ: Հայրը նրան տուն տարաւ:

Երիտասարդները, որոնք ամենից շատ էին նրան դիմում այժմ չէին համարձակւում մօտենալ օգնելու համար: Շատերը մինչև անգամ չէին կարողանում նրան նայել: Ասպարէզը մնաց ծերերին: Նոցանից մեծն ասաց, բարձրացնելով նրան. «Վա անխելքութիւն էր: Բայց, աւելացրեց նա նայելով վերև—լաւ է, երբ կայ մի այնքան բարձր բան, որին կարող են հասնել ոչ ամենքը:

## ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԻՒՆ

ԲԺ. ԹԱԴԷՈՍ ԶԱԲԱՐՆԱՆՑԻ

(Շարունակութիւն ¹)

Զ.

Ամուսնական առողջապահութեան պայմաններից մէկը կարելի է ասել ամենագլխաւորը համարւում է ամուսնացողների առողջութեան վիճակը: Մենք վերևում արդէն յիշեցինք, որ ոչ մի բան այնպէս չէ խախտում ընտանեկան և ամուսնական երջանկութիւնը, ինչպէս ամուսինների հիւանդոտութիւնը: Ի՞նչ սէր և ի՞նչ բախտաւորութիւն կարող է սպասել այն ամուսինը, որին ամուսնութեան վայելչութիւնների փոխանակ վիճակում է կատարել հիւանդապահի դառն պաշտօնը: Այդ վիճակը աւելի ևս ծանրանում և դառնանում է, երբ ամուսնի հիւանդութեան պատճառով քայքայւում է նաև ընտանիքի նիւթական, տնտեսական դրութիւնը: Բայց և հարուստ ընտանիքներում, նիւթական ամենափայլուն պայմանների մէջ ևս, ոչ մի բան չէ կարող փոխարինել առողջութեան տւած երջանկութիւնը: Մենք չենք խօսում պատահական հիւանդութիւնների մասին, որոնց ենթակայ է ամեն մի անհատ, այլ հիւանդութեան, կազմաճքի ախտաւորութեան մասին, որոնց առաջ անգոր են թէ հարստութիւնը, թէ փառքը և թէ նոյն իսկ գիտութիւնը:

¹) Տես «Մուրճ» 1896 թ. № 12 և 1897 թ. № 1.

Ամուսինների հիւանդութիւնը երկու վնասակար կողմ ունի: Առաջինը այն է, որ հիւանդութիւնը կարող է փոխադրւել ու վարակել նաեւ առողջ ամուսինն: Քանի-քանի առողջ և կայտառ օրիորդներ, որոնք օժտւած են երջանիկ լինելու բոլոր յատկութիւններով, անմեղ կերպով զոհ են դառնում իրենց ամուսինների հիւանդութիւններին: Եւ միթէ զարմանալի չէ որ, այն ժամանակ, երբ հասարակութիւնը և օրէնքը դատաւարտում ու պատժում են նրանց, որոնք համարձակւում են ձեռք բարձրացնել ու վիրաւորել մի ուրիշին, միևնոյն ժամանակ այդ միևնոյն հասարակութիւնը և օրէնքը ազատ կերպով թոյլատրում են ամուսինն վարակել իւր ամենամերձակոր հակներին—իւր կողակցին և իւր զաւակներին:

Հասարակութեան համար աւելի նշանաւոր է այն վտանգը, որը ամուսինների հիւանդութեան պատճառով սպառնում է նրանց բոլոր ապագայ սերնդին: Այդ կողմից առանձին ուշադրութեան արժանի են այն հիւանդութիւնները, որոնք, ինչպէս արդէն գիտութիւնը ապացուցել է, ընդունակ են ժառանգաբար փոխանցւելու սերնդին: Այդ կարգի հիւանդութիւններից մենք փոքր ինչ կանդ կ'առնենք միայն նրանց վրայ, որոնք աւելի տարածւած են, այդ հիւանդութիւններն են ծլերքը, (տուբերկուլէօզ, ԿԱՏՈՒՄԱ), սիֆիլիսը, գինեմոլութիւնը (ալկոհոլիզմ) և հոգեկան ու ջղային հիւանդութիւնները:

Ծլերքը <sup>1)</sup> ամենատարածւած հիւանդութիւններից մէկն է. աշխարհի երեսին չկայ համարեա մի երկիր, որտեղ այդ հիւանդութիւնը մոռաք զործած չլինի: Վիճակագրութիւնը ցոյց է տալիս,

<sup>1)</sup> Թորախտ բառի փոխանակ մենք գործ ենք ածում ճլերք բառը, նախ նորա համար որ այդ բառը աւելի գործածական է ժողովրդի մէջ, և երկրորդ այն պատճառով, որ այդ հիւանդութիւնը միայն թոքերի հիւանդութիւն չէ, ինչպէս որ կարելի է կարծել թոքախտ բառից, այլ ամբողջ մարմնի: Այդ հիւանդութեանը ենթարկւում են մարմնի բոլոր մասերը—ուղեղը, մկանունքները, ոսկորները, և այդ վերջինները մինչև անգամ աւելի լաճախ՝ քան թէ թոքերը: Թոքախտը ճլերքի միայն մասնաւորութիւնն է: Ծան. հեղինակի:

Մենք ունինք բարակացաւ բառը, որ թէ ժողովրդական է և թէ գրականութեան մէջ ընդունւած: Ծան. Խմբ.

որ երկրագնդի վրայ բոլոր մեռնողների  $\frac{1}{7}$  մասը մեռնում է ճլեր-  
քից. բացի սրանից, դիտութիւնը և առօրեայ փորձը ապացուցա-  
նում են, որ ճլերքը վերին աստիճանի հակամէտ է ճառագաբար  
փոխանցելու սերնդին ոչ միայն ծնողների, այլ և մերձաւոր արիւ-  
նակից ազգականների կողմից—հօրեղբօր, մօրեղբօր, հօրաքրոջ, մօ-  
րաքրոջ և ուրիշ արիւնակիցների կողմից, Վիլիամսի հաւաքած վի-  
ճակագրութիւնից երևում է, որ 484 ճլերքաւորներից 10 հոգի այդ  
հիւանդութիւնը ժառանգել էին իրենց պապից, 43 հոգի հօր կող-  
մից, 67 հոգի մօրից, 10 հոգի հօրից և մօրից միաժամանակ, 72  
հոգի հօր կամ մօր մերձաւոր ազգականներից, 224 հոգի իրենց  
հարազատ եղբայրներից և քոյրերից, իսկ 10 հոգի հօրեղբօր և  
մօրեղբօր որդիներից: Ապացուցւած է, որ այդ հիւանդութեան են-  
թարկւածների 35—40% պատկանում է ժառանգական ճլերքա-  
ւորներին: Իսկապէս զաւակներին փոխանցւում է ոչ թէ ինքը հի-  
ւանդութիւնը, այլ հիւանդութեան տրամադրութիւնը: Յայտնի է,  
որ ճլերքը առաջանում է մի տեսակ բակտերիաներից, որոնց գո-  
յութիւնը առաջին անգամ դոտալ պրոֆ. Կոխը, որի անունով և  
այդ բակտերիաները անանւում են Կոխի բակտերիաներ: Հիւանդ  
ծնողներից ժառանգաբար փոխանցւում են ոչ թէ այդ բակտերիա-  
ները, այլ կազմաձքի այն փոփոխութիւնները, որոնց շնորհիւ յի-  
շեալ բակտերիաները կարողանում են զարգանալ և բազմանալ սե-  
րընդի կազմաձքի մէջ: Այդ բակտերիաները չեն կարող զարգանալ  
ամեն մի մարմնի մէջ. նրանց զարգացման համար, ինչպէս որ ամեն  
մի սերմի զարգացման համար, հարկաւոր է որոշ հող և որոշ սպ-  
մաններ. ահա այդ հողը և այդ սպմաններն են, որ հիւանդ ծնող-  
ների կողմից ժառանգաբար փոխանցւում են նրանց զաւակներին:  
Ճլերքաւորների զաւակները շատ անգամ ծնւում են ըստ երևոյ-  
թին բոլորովին առողջ, բայց հասնելով մի որոշ հասակի, մանա-  
ւանդ արբույքի հասակին, մէկ անգամից սկսում են երևան գալ  
ժառանգական հիւանդութեան նշանները: Ո՛չ մի վիշտ և ո՛չ մի թըշ-  
ւառութիւն չէ կարող համեմատուել այն ծնողների վշտի հետ, որոնց  
հասունացած զաւակները նրանց աչքի առաջ մէկմէկու ետեւից զոհ  
են զնում ժառանգական այդ սարսափելի հիւանդութեան: Իսկ այդ-  
պիսի դէպքերը կրկնւում են համարեա ամենայն օր:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ հիւանդութեան ազդեցութիւնը սերնդի վրայ աւելի ևս խիստ է լինում, երբ որ երկու ծնողներն ևս ենթակայ են միեւնոյն հիւանդութեան: Այդ դէպքում, ինչպէս փորձը ցոյց է տալիս, զաւակների հիւանդութեան խստութիւնը մինչև անդամ աւելի մեծ է, քան թէ ծնողների հիւանդութեան գումարը: Հէնց այդ պատճառով էլ արիւնակից ամուսնութիւններից առաջացած զաւակները ամենից աւելի զոհ են գնում ճկերքին:

Սիֆիլիսը, որը դժբաղդաբար օրէցօր աւելի և աւելի լայն ծաւալ է ստանում ժողովրդի բոլոր խաւերի մէջ, նոյնպէս նշանաւոր տեղ է բռնում ամուսնական առողջապահութեան խնդրում: Այդ հիւանդութիւնը, բացի նրանից որ հեշտութեամբ անցնում է մէկ ամուսնից միւսին, միեւնոյն ժամանակ սարսափելի ֆնասակար ազդեցութիւն է գործում սերնդի առողջութեան վրայ: Սիֆիլիսի ազդեցութիւնը ամենից առաջ արտայայտւում է նրանով, որ նորան ենթարկւած կանայք վերին աստիճանի ենթակայ են լինում զաւակավիժութեան. վիժումը սովորաբար տեղի է ունենում չղութեան երրորդ կամ չորրորդ ամիսներում, և եթէ երբեմն չղութիւնը հասնում է կատարեալ լրութեան, շատ անգամ ծնւում են մեռած երեխաներ և կամ մեռնում են ծննդեան նոյն իսկ առաջին օրերը: Ոչ մի բան այնպէս սարսափելի տպաւորութիւն չէ գործում մարդու վրայ, ինչպէս սիֆիլիսով վարակւած այդ փոքրիկ էակները, որոնք մեռնում են նախքան լոյս աշխարհ գալը և աշխարհ են գալիս ծածկւած ու շաղախւած իրենց ծնողների մեղքի նշաններով:

Նրբեմն պատահում է, որ սիֆիլիսով հիւանդ ամուսիններից ծնւում են առողջ զաւակներ. բայց մեծ մասամբ նրանք լինում են թույլ, վաղ-թէ ուշ ենթարկւում են ծնողների հիւանդութեան ֆնասակար հետևանքներին և, բացի սորանից, ուրիշ երեխաներից աւելի են ենթակայ լինում ճկերքի, անդլիական փտոի և ուրիշ հիւանդութիւնների: Այդ պատճառով մեռնողների թիւը սիֆիլիսոտ ծնողների զաւակների մէջ հասնում է չափազանց մեծ քանակութեան:

Բարեբաղդաբար բժշկական գիտութիւնը այժմ արդէն դտել է միջոցներ, որոնց շնորհիւ կարողանում է ոչ միայն թեթեւացնել, այլ

երբեմն նաև բոլորովին ոչնչացնել սիֆիլիսի ազդեցութիւնը թէ ծնողների և թէ նրանց զաւակների առողջութեան վրայ: Այդ պատճառով աւելի ևս դատապարտելի են այն մարդիկ, որոնք ենթակայ լինելով այդ հիւանդութեան, համարձակում են ամուսնանալ առանց դիմելու բժշկի խորհրդին և օգուտ քաղելու այն միջոցներից, որ զիտութիւնը մշակել է մարդկային ցեղի բարօրութեան համար:

Գինեմոլուիւնը (ալքոհոլիզմ) նոյնպէս ահագին նշանակութիւն ունի թէ ամուսինների և թէ սերնդի առողջութեան վերաբերութեամբ: Այդ նշանակութիւնը աւելի ևս մեծանում է, եթէ աչքի առաջ ունենանք, որ գինեմոլութիւնը բոլոր մոլութիւններից ամենից աւելի տարածւածն է: Գինեմոլութիւն ասելով չպէտք է հասկանալ այն պատահական և երբեմնակի հարբեցողութիւնը, որին ենթակայ է համարեա ամեն մի մարդ, այլ այն ախտը, այն իսկական մոլութիւնը, որին ենթարկւած անհատը զգում է անզիմադրելի ձգտումն դէպի ոգելից ըմպելիները: Գիտութիւնը արդէն հաստատել է, որ գինեմոլների այդ սարսափելի ձգտումը հետեւանք է ոչ թէ դաստիարակութեան և շրջանի վատ ազդեցութեան, այլ մեծ մասամբ կազմում է մի առանձին հիւանդութիւն, որը անւանւում է գիտութեան մէջ գինեմոլուիւն (ալքոհոլիզմ): Շատ չնգամ օրիորդները վստահանում են ամուսնանալ հարբեցողների հետ, կարծելով, որ սիրով և խնամքով կարող են ուղղել իրենց ամուսինների մոլութիւնը. բաց այդ յոյսը մեծ մասամբ զուր է դուրս դալիս — սարսափելի մոլութիւնը վաղ թէ ուշ նորից զարթնում է և զարթնում է այնպիսի ուժով, որի առաջ տեղի են տալիս բոլոր բարոյական և ֆիզիկական միջոցները:

Բացի այն բարոյական փնասից, որը մոցնում է գինեմոլութիւնը ընտանեկան երջանկութեան մէջ, և բացի այն վտանգաւոր հետեւանքներից, որոնք ենթակայ է գինեմոլի կեանքը, այդ ախտը սարսափելի ազդեցութիւն ունի նաև սերնդի առողջութեան վրայ: Ոչ մի հիւանդութիւն այնքան չէ նպաստում սերնդի սերհատութեան, որչափ գինեմոլութիւնը, որը, Մագնուսի, Հուսսի, Մօրէլի և ուրիշ զիտնականների ասելով, մի կատարեալ խարազան է հանդիսանում մարդկային ցեղի համար: Յայտնի է, որ ամբողջ ցեղեր և

աէրութիւններ բոլորովին սերհատուել, ոչնչացել են գինեմոլութեան շնորհիւ: Այսօր ամբողջ Եւրոսրան և աշխարհի բոլոր քաղաքակիրթ ազգերը գինեմոլութեան հարցը պետական նշանաւոր խնդիր են դարձրել և ամեն օր նորանոր միջոցներ և օրէնքներ են մշակում այդ ախտի դէմ կռուելու համար:

Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ գինեմոլութիւնը վերին աստիճանի ընդունակ է ժառանգաբար փոխանցւելու սերնդին: Գինեմոլների 50—80 տոկոսը այդ ախտը ժառանգաբար ստանում է իրենց ծնողներից կամ նախնիքներից. բացի սրանից, գինեմոլների զաւակները չափազանց ենթակաջ են ջղային և հոգեկան այլևայլ հիւանդութիւնների—ապուշութեան, խտրիրկայի, ընկնաւորութեան (падучая болезнь), կաթաժի (параличъ) և այլն և այլն: Սերնդի վրայ աւելի խիստ է ազդում մայրերի, քան թէ հայրերի գինեմոլութիւնը. և գուցէ այդ է պատճառը, որ ազգերը միտ աւելի աններողամիտ են դէպի հարբեցող կանայք. կանանց հարբեցողութիւնը աւելի բնական զգանք է առաջացնում, քան թէ տղամարդիկներինը: Հռոմէական օրէնքով ամուսինը մինչև անգամ իրաւունք ունէր սպանելու հարբեցող կնոջ:

Գինեմոլութիւնը պատկանում է անբուժելի հիւանդութիւնների կարգին. այդ պատճառով այդ ախտին ենթակաջ եղող անձնաւորութիւնները թէ եկեղեցու և թէ պետութեան օրէնքներով պէտք է զրկւին ամուսնանալու իրաւունքից: Եւ եթէ պատահում է, որ գիտակցաբար կամ անգիտակցաբար տեղի են ունենում այդ տեսակ ամուսնութիւններ, առողջապահութեան տեսակէտից այդ ամուսնութիւնները պէտք է համարել լուծանելի և ապօրինի:

Ինչ որ վերաբերում է հոգեկան եւ ջղային հիւանդութիւններին, նրանց ազդեցութիւնը սերնդի առողջութեան վրայ այնքան ակներև է, որ նոյն իսկ հասարակ ժողովուրդը խուսափում և դատապարտում է այդ տեսակ ամուսնութիւնները. յայտնի է թէ ինչպէս խիստ է վերաբերւում ժողովուրդը ամուսնական ընտրողութեան ժամանակ դէպի փեսացուի և մանաւանդ դէպի հարսնացուի հոգեկան և ջղային արատները: Այդ վերջին կէտը, այսինքն՝ դէպի հարսնացուի արատները ունեցած խստութիւնը, բացառուում է նորանով, որ հոգեկան ու ջղային հիւանդութիւնները

մօր կողմից աւելի յաճախ են փոխանցուած սերնդին, քան թէ հօր կողմից: Եւ այդ շատ հասկանալի է, եթէ աչքի առաջ ունենանք, որ հայրը մասնակցում է միայն զաւակի բեղմնաւորութեան, մինչդեռ մայրը բացի այդ մասնակցութիւնից շարունակում է երկար ժամանակ իւր ազդեցութիւնը թէ յղութեան և թէ ստընտուութեան շրջաններում:

Հոգեկան և ջղային հիւանդութիւնները, բացի նրանից որ խախտում են ընտանեկան կեանքի խաղաղութիւնը և բախտաւորութիւնը, միևնոյն ժամանակ, ինչպէս յիշեցինք, սարսափելի փնտաւար ազդեցութիւն են գործում սերնդի առողջութեան վրայ: Այդ ազդեցութիւնը աւելի ևս սաստկանում է, երբ այդ հիւանդութիւնները փոխանցուած են զաւակներին միաժամանակ թէ հօր և թէ մօր կողմից, ինչպէս որ այդ տեղի է ունենում արիւնակից ամուսնութիւնների դէպքում:

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ հոգեկան ու ջղային հիւանդութիւնները փոխանցելով սերնդին, ենթարկւում են զանազան փոփոխութիւնների: Այդպէս օրինակ, իտտերեկայով հիւանդ ծնողների զաւակները, փոխանակ իտտերեկայի, ենթարկւում են մեղամաղձութեան, ընկաւորութեան, խելացնորութեան: Խելացնոր ծնողներից կարող են ծնւել հոգեպէս առողջ, բայց ջղային խանգարմունքների ենթակա զաւակներ: Նոյն իսկ միևնոյն հոգեկան և ջղային հիւանդութիւնն ունեցող զաւակներից ամեն մէկը կարող է ունենալ զանազան տեսակի հիւանդութիւն. մէկ որդին կարող է լինել իստերիկ, միւսը մեղամաղձոտ, երրորդը խելացնոր, չորրորդը անդամալուծ և այլն և այլն. Մի խօսքով, բաւական է սբ. ծնողներից մէկն ու մէկը կամ երկուսը միասին ենթակա լինեն որևիցէ հոգեկան կամ ջղային խանգարմունքի—և ահա նրանց սերնդի մէջ երևան են զալիւ այդ հիւանդութիւնների բոլոր տեսակները. բացի սրանից, հոգեկան և ջղային հիւանդութիւնների ժառանգականութիւնը շատ անգամ կտտարւում է ոչ թէ անմիջապէս ծնողների, այլ և հօր և մօր մերձաւոր արիւնակիցների կողմից: Այդ պատճառով մէկի ժառանգական յատկութիւնները իմանալու համար հարկաւոր է ուշադրութիւն դարձնել ոչ միայն նորա ծնողների, այլ և նորա մերձաւոր ազգականների առողջութեան վրայ:

Մի քանի զիտնականների վիճակագրական հետազոտութիւնից երևում է, որ հոգեկան ու ջղաշին հիւանդների 90<sup>0</sup>/<sub>0</sub>-ը իրանց հիւանդութիւնը ստացել են ժառանգականութեան միջոցով. <sup>1)</sup> Այդ թիւը արդէն ինքնըստինքեան բաւական է ցոյց տալու համար, թէ ինչ սարսափելի պատասխանատուութիւն են վերցնում իրենց խղճի վրայ այն անձինք, որոնք ենթակայ լինելով այդ տեսակ հիւանդութիւնների՝ իրաւունք են համարում ամուսնանալու և սերունդ առաջացնելու: Այդ տեսակ անձնաւորութիւնները իրենք իրենց ձեռքով թշւառութեան և չարչարանքների դուռ են բաց անում իրենց զաւակներին առաջ. մի դուռ, որ առաջնորդում է նրանց դէպի գերեզման և դէպի անխուսափելի կորուստ:

Բացի այն հիւանդութիւններից, որոնց մասին համառօտ կերպով չիշատակեցինք, կան և ուրիշ բազմաթիւ հիւանդութիւններ, որոնք եթէ բոլորովին էլ արգելք չեն ամուսնութեան համար, այնուամենայնիւ ցանկալի է խուսափել նրանցից: Այդ այն հիւանդութիւններն են, որոնք թէև ժառանգական չեն, բայց ազդում են ամուսինների առողջութեան և բախտաւորութեան վրայ: Ամուսնական կենսացութիւնը այդ հիւանդութիւնների շնորհիւ, փոխանակ բախտաւորութեան, դառնում է չարչարանքի և փոխադարձ ընդհարումների անսպառ աղբիւր: Մենք կանգ չենք առնում այդ հիւանդութիւնների վրայ, որովհետև այդ շատ հեռու կ'տանէր մեզ մեր յօդաւորի ծաւալից: Հոգեկան և ջղաշին՝ ինչպէս և միւս ժառանգական հիւանդութիւնների վերաբերութեամբ թէ պետական օրէնսդրութիւնը և թէ եկեղեցական կանոնադրութիւնը չափազանց ներդաւիտ (եթէ չասենք չափազանց անհոգ) են հանդիսացել: Մեր եկեղեցական օրէնքով միայն մի հիւանդութիւն՝ այն է դիւահարութիւնը (խեղացնորութիւն) ոչմիայն արգելադրւում պատճառ է համարւում ամուսնութեան համար, այլև այդ տեսակ հիւանդների արդէն կատարած ամուսնութիւնը թոյլատրւում է լուծանել՝ իրաւունք

<sup>1)</sup> Այդ հիւանդութիւնների, ինչպէս և առհասարակ ժառանգականութեան մասին ընթերցողները կարող են աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ մեր «Ժառանգականութիւն» վերնագրով յօդաւորից, որը տպւած է Մուրճ 1895, № 5:

տալով առողջ ամուսնին նոր ամուսնութիւն կատարելու: Ահա թէ ինչ է ասում այդ մասին Մխիթար Գօշը իւր ՌԵՄԲ յօդածում. «Եթէ պատահի առն և կամ կնոջ դիւահարիլ, քննել արժան է. եթէ յառաջ քան զպսակն էր և ծածկեցաւ խարէութեամբ ծնողացն կնոջն՝ ի տունս իւրեանց առցին մինչև բժշկեսցի և ապա դարձցի յայրն իւր եթէ կամեսցի այրն. ապա թէ ոչ կամեսցի, իշխան լիցի արձակել զնա: Ապա թէ ի տան առն պատահի դիւահարիլ՝ այրն հոգասցէ մինչև բժշկեսցի. ապա թէ յետ եօթն ամի ոչ բժշկեսցի, իշխան լիցի այրն արձակել զնա և առցէ այլ կին... Նոյն դատաստան լեցի եթէ առն պատահի ակտն»:

Այդ յօդածը, ինչքան էլ որ պակասաւոր լինի, նշանաւոր է նորանով, որ ցոյց է տալիս, թէ եկեղեցին սկզբունքով ոչ միայն ընդունում է առողջապահական պայմանների նշանակութիւնը ամուսնական օրինաւորութեան մասին, այլև իրաւացի է գտնում այդ պայմանների հակառակ կատարւած ամուսնութիւնները լուծանելի համարել: Այդ պատճառով ամեն մի բարենորոգութիւն, որը հիմնւած կը լինի գիտութեան մշակած օրէնքների և փորձերի վրայ, կարող է և պէտք է մուտք գործէ եկեղեցական օրէնսդրութեան մէջ:

Այն ամենից, ինչոր ասացինք ամուսնական առողջապահութեան մասին, երևում է, որ թէ եկեղեցական կանոնադրութիւնը, թէ պետական օրէնսդրութիւնը և թէ ժողովրդական աւանդութիւնը շատ թերի և անկատար են գիտութեան տեսակէտից: Ինչպէս յայտնի է ընթերցողներին, պետական օրէնսդրութիւնը այդ բանը արդէն նկատել է և արդէն ձեռնամուխ է եղել նշանաւոր բարեփոխութիւնների, որոնք հիմնւած պէտք է լինին գլխաւորապէս առողջապահութեան և գիտութեան ցուցմունքների վրայ: Հարկաւոր է, որ եկեղեցին ևս յետ չմնայ ժամանակի և կեանքի պահանջից և իւր բարձր հեղինակութեամբ գալ սրբագործելու այն հիմունքները, որոնց նպատակն է պաշտպանել ապագայ սերունդը Ֆիզիկական և հոգեկան տանջանքներից, նպաստել մարդկային ցեղի կատարելագործութեան և բարելաւութեան:

Է.

Մեզ մնում է մի քանի խօսք ասել ամուսնական առողջապահութեան մի ուրիշ նշանաւոր պայմանի մասին, որը ահագին նշանակութիւն ունի թէ ամուսինների և թէ նրանց զաւակների առողջութեան համար: Այդ պայմանն է սէրը: Ամենքին յայտնի ճշմարտութիւն է, որ առանց սիրոյ չկայ և չէ կարող լինել ամուսնական երջանկութիւն: Բայց սէր ասելով չպէտք է հասկանալ միայն սեռական սիրոյ զգացմունքը: Ճշմարիտ է, սեռական զգացմունքը կազմում է սիրոյ գլխաւոր տարրը, նորա հիմքը, նորա ուղ և ծուծը, բայց միևնոյն ժամանակ սէրը չէ կարող կատարեալ լինել, եթէ այդ սեռական տարրը միացած չէ փոխադարձ յարգանքի, մոքի, զգացմունքների, գաղափարների և բնաւորութիւնների ներդաշնակութեան և համերաշխութեան հետ: Ահա այդ տեսակ սէրն է, որը կարող է հիմք լինել ամուսնական երջանկութեան և բախտաւորութեան համար: Ինչքան աւելի սուր է մարդկանց մտաւոր զարգացումը, ինչքան աւելի նեղ է նրանց աշխարհայեցողութիւնը, նրանց հոգեկան պահանջների սահմանը, այնքան աւելի պարզ և հասարակ է նրանց սէրը: Այդ է պատճառը, որ հասարակ զիւղացին աւելի յաճախ երջանիկ է լինում ամուսնութեան մէջ. զիւղացի տղամարդու և զիւղացի կնոջ աշխարհայեցողութիւնը և գաղափարները շատ քիչ են տարբերում կամ, աւելի ուղիղն ասած, ամենեին չեն տարբերում իրարից. նորա համար էլ ամուսնական դժկամակութիւնները առիթ չունին այնտեղ զարգանալու. ընդհակառակը ինչքան աւելի քաղաքակրթւած է մի դասակարգ, ինչքան աւելի լայն և ընդարձակ են նորա մտաւոր և հոգեկան կեանքի սահմանները, այնքան բարդ և խստապահանջ է նաև նորա սէրը: Եւ այդ է գլխաւոր պատճառներից մէկը, որ քաղաքակրթւած դասակարգի մէջ ամուսնական երջանկութիւնը աւելի դժւար է ձեռք բերուում:

Այդպէս ուրեմն, ամուսնական երջանկութեան գլխաւոր տարրը կազմում է սէրը, այն սէրը, որը բղիտում է ամուսնացողների ֆիզիկական և հոգեկան յատկութիւնների ներդաշնակութիւնից, որը չէ գնում և որը չէ վաճառում, որը չէ պայմանաւորում նիւ-

Թական և փառասիրական շահերով: Մատաղահաս և աղքատ օրիորդը շատ անգամ երևակայում է, որ կարող է սիրել և արդէն իսկ սիրում է 60 տարեկան հարուստ ծերունուն, բայց իսկապէս նա սիրում է միայն իւր փառասիրական և նեղ եսական ձգտումները, որոնց յոյս ունի իրագործել հարուստ ամուսնի միջոցով: Նա ամուսնանում է ծերունու հետ և դառնում է կամ անբախտ կամ անառակ: Նոյնը պատահում է նաև տղամարդկանց հետ, որոնք ամուսնութեան խնդրում ղեկավարւում են միմիայն դրամական և ուրիշ նիւթական շահերով:

Մի կողմ թողնելով այդ տեսակ ամուսնութիւնների բարոյական նշանակութիւնը, զուտ առողջապահական տեսակէտից ևս սէրը կազմում է ամուսնութեան գլխաւոր պայմաններից մէկը:

Սիրոյ բացակայութիւնը քայքայում է ամուսինների առողջութիւնը: Կատարելով իրենց ամուսնական պարտականութիւնը առանց այն զգացմունքի, որը բնական ոյժով մղում է ամուսիններին իրարու զիրկը, այդ տեսակ ամուսինները հարստահարում են իրենց կազմաճքը, զրգոում են ջղերը և, փոխանակ բուսականութեան, ստանում են միմիայն զգանք և ոյժերի ընդհանուր թուլութիւն: Ամենօրեայ փորձը ցոյց է տալիս, որ բռնի ամուսնացածները շատ շուտով թառամում են և մեծ մասամբ զոհ են դառնում վաղահաս մահաւան:

Այդ տեսակ ամուսնութիւններից ծնած զաւակները աչքի են ընկնում իրենց թույլ և հիւանդոտ կազմաճքով, մտաւոր կարողութիւնների, կամքի և եռանդի անհաստատութեամբ: Ընդհակառակը սիրոյ վրայ հիմնած ամուսնութիւններից առաջանում են աւելի առողջ, աւելի կայտառ և աւելի երկարակեաց զաւակներ: Սորան լաւ ապացոյց կարող են համարել ասորիների զաւակները կամ, ինչպէս ժողովուրդը անւանում է, պիճերը: Նրանք մեծ մասամբ լինում են աւելի ղիմացկուն, աւելի առողջ և օժտւած աւելի մեծ մտաւոր ընդունակութիւններով. զուր չէ ժողովուրդը խելօքութեան և պիճութեան դադափարները նոյնացնում և խելօք մարդուն պիճ անւանում: Պիճերը իրենց այդ առաւելութիւններով պարտական են այն հանգամանքին, որ նրանց ծնունդը մեծ մասամբ հետեւանք է ջերմ և անխառն սիրոյ: Թէ ինչ մեծ նշանակութիւն ունի սիրոյ

ջերմութիւնը սերնդի առողջութեան վրայ, այդ յայտնի էր նաև հին հռոմէացիներին, որոնց մէջ առակի կարգ էր անցել այն համոզմունքը թէ «quo fervidius Venus—eo robustior proles» (ինչքան աւելի տաք է սէրը, այնքան աւելի ուժեղ է մանուկը): Յայտնի է նաև, թէ ինչ ահագին դեր են կատարել ընդհանուր մարդկային պատմութեան մէջ ապօրինի զաւակներից մի քանիսը... Մի խօսքով, սէրը կազմում է ամուսնական առողջապահութեան զլխաւոր տարրերից մէկը. նա անհրաժեշտ է ոչ միայն ընտանեկան կեանքի, այլ և ամուսինների և նրանց սերնդի բարօրութեան համար: Նշանաւոր Ռլնանը իւր ուսանողների խօսած ճառերից մէկում ասում է—«Մի պղծէք սէրը, որը բոլոր զգացմունքներից ամենավեհն է այս աշխարհի վրայ. նորանից է կախած մարդկութեան գոյութիւնը... Ես համոզւած եմ, որ կը գայ ժամանակ, երբ կը փոխւին ամուսնութեան կրօնական և օրէնսդրական հիմունքները, բայց կայ մի ճշմարտութիւն, որը չաւիտեան կը մնայ: Այդ ճշմարտութիւնը այն արդիւնքն է, որը բղխում է երկու սեռերի փոխադարձ միաւորութիւններից: Ամեն մարդու սրբազան պարտականութիւնն է առանց թեթեամտութեան, խորին լրջութեամբ վերաբերել զէպի այդ միաւորութիւնը, որ ամենանշանաւոր տարրն է մարդկութեան ապագայի համար: Ռլնանի յիշած այդ լուրջ վերաբերութիւնը կարող է իրագործւել միայն այն ժամանակ, երբ ամուսնական ընտրութիւնները տեղի կ'ունենան այն պահանջների հիման վրայ, որը մշակել է և շարունակում է մշակել դիտութիւնը՝ իրեն առաջնորդ ունենալով բնութեան անխախտ և անսասան օրէնքները: Եւ այդ ժամանակ է, որ ամուսնութիւնը կը դառնայ աստուածադիր խորհուրդ, որի պատւիրանքն է «ամենցէք և բազմացարձէք և լցէք զերկիր»:

# ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ

Գ Ր Ի Գ Ո Ր Վ Ա Ր Դ Ա Ն Ե Ա Ն Ի

(Շարունակութիւն և վերջ <sup>1</sup>)

Յաշտնի է, որ Ռուսիան սկսած 1888 թ-ից յաջողեցրեց լաւացնել իր անմխիթար բիւջէն: Այն պակասորդը (դիֆիցիտ), որ յառաջ էր գալիս բիւջէի հաշեկշռի անհաւասարութիւնից, դադարեց երևալ: Այժմն Ռուսիան աւելի շատ մոտոք ունի քան ծախք: Պետական մոտոքը 1888 թ-ից անդադար աւելանալով՝ հասնում էր 1894 թ. 1.153.800.000 ռուբլու, մինչդեռ ծախսը եղել էր 991.200.000 ռուբլի <sup>2</sup>): Ուրեմն աւելորդ մոտոք ունեցաւ պետութիւնը 162,6 միլիոն ռուբլի: Ինչով մեկնել պետական մոտոքերի աճումը: Սորա համար բացատրութիւնը հակիրճ և պարզ է: Վերջին 20 տարիներում ռուսաց պետութիւնը յետ դնեց և սեփականացրեց մասնաւոր երկաթժողիներ մօտ 12.500 վերստ տարածութեամբ: Այդ երկաթժողիները պետութեան խոշոր մոտոք մատակարարեցին: Աւելացնէք սորա վրայ մի կողմից անուղղակի խոշոր հարկերի ներմուծումն ժողովրդական արդիւնքների վրայ և, միւս կողմից, ոսկով վճարւելիք բարձր մաքսերը: Այս ֆինանսական մի-

<sup>1</sup>) Տե՛ս «Մուրճ» 1897 թ. № 1:

<sup>2</sup>) Кошкорева. Главнейшіе результаты государственного хозяйства за послѣднее десятилѣтіе 1885—94 г. СПб 1895 г.

ջոցներով բիւջէին բաւարարութիւն տալով, Ռուսիան ջանաց մօտենալ այն դիրքին, որ պիտի երաշխաւորէր սեփական վարկի ընդունակութեան համար, այսինքն թղթադրամը ոսկուն հաւասարեցնելու համար: Ձեռնած այս զբաւականին, այսօր ռուս թղթադրամի արժէքը դարձեալ ընկած է: Վերջին թուրք-ռուսական պատերազմից առաջ մէկ ռուբլի թղթադրամը արժէր 86.8 ոսկէ կոպէկ, այսօր նա արժէ 66 $\frac{2}{3}$  ոսկէ կոպէկ: Եթէ ռուսաց թղթադրամը իր անւանական (օրինական) ոսկեզնիւն չէ մօտենում, դա մեկնում է այն հասարակ պատճառով, որ երկրիս մէջ շրջանառութեան պահանջից վեր աւելորդ թղթադրամ կայ: Ռուսիայում թղթադրամի քանակութիւնը 1.120.000.000 ռուբլի է, որից ոչ բոլորը գործերի մէջն է, որովհետեւ եղած գործերը այդքան թղթադրամ չեն պահանջում: Իսկ աւելորդ թղթադրամը երկրիս մէջ գտնուող ոսկեդրամի արժէքին հաւասարեցնել անկարելի է, որովհետեւ ոսկեդրամը քիչ է և թանգ, բայց թղթադրամը շատ է: Այս նպատակին հասնելու համար հարկաւոր է աւելորդ թղթադրամը շրջանառութիւնից հանել և այրել: Մի պետութիւն կարող էր հեշտութեամբ այդ գործին զիմել, եթէ նա յատկացնի զորան անհրաժեշտ գումարներ իր բիւջէից: Բանը նրանում է, որ Ռուսիայից ոսկի մեծ քանակութեամբ արտասահման է գնում, նախ՝ պետական փոխառութեան պարտքը վճարելու և յետոյ՝ ներմուծւող ապրանքները վճարելու համար: Կցենք սրանց այն գումարները, որ եւրոպացիք աշխատում են Ռուսիայում և այնուհետեւ մեծ մասամբ իրանց երկիրներն են փոխադրում: Նոյնպէս այն գումարները, որ ռուսահայատականները մըսխում են արտասահմանում: Հասկանալի է, որ այս բոլորը իրաւ շատ ոսկեդրամ է զուրս տանում Ռուսիայից ամեն տարի: Ռուսիան արտադրում է իր ոսկու հանքերից տարեկան 30 միլիօն ռուբլու ոսկի, որ չէ բաւում երկրից դուրս գնացող ոսկու տեղը բռնելու համար:

Նկարագրած անտեսական պայմանների զօրութեամբ, ինչպէս ասացինք, ռուս թղթադրամ ռուբլին 66 $\frac{2}{3}$  կոպէկ ոսկէ արժէքից աւելի չէ բարձրանում և ննթակայ է յաճախակի երերման և փոփոխման ի վնաս երկրիս տնտեսութեանը. թղթադրամի «կուրսը» շարունակ տատանւում է: Գլխաւորապէս դրամական արժէքի ան-

հաստատու և փոփոխական զրուծիւնն է, որ առիթ է տւել ռուս միլիտարութեանը զրամական մի վերանորոգում նախագծելու: Ահա թէ ինչումն է կայանում այդ նախագիծը, որի մասին ռուս մամուլը արդէն շատ շահեկան քննութիւններ է արած: Ըստ այնմ՝ ոսկեդրամը պէտք է կազմի երկրիս մէջ հիմնական դրամ և ունենայ վճարող ոյժ անսահման քանակութեամբ: Այժմեայ հինգ ռուբլիանոց պոլիմպերիալ ոսկեդրամի փոխարէն մոտազրուծիւն կայ դուրս հանել, կամ կտրել նոր տիպարի 10 ռուբլիանոց ոսկեդրամ, որ պիտի այժմեանից  $\frac{1}{3}$  աւելի քիչ զուտ ոսկի պարունակի. այսինքն նոր 10 ռուբլիանոց ոսկեդրամը իր մէջ ունեցած ոսկու  $\frac{1}{3}$  ականով այժմեանից աւելի աժան պիտի լինի և իր անւանական կամ օրինական արժողութեամբ թղթադրամին հաւասարւի և սրա հետ մանէթ մանէթով փոխանակւի: Ներկայիս 10 ռուբլիանոց ոսկեդրամը պարունակում է 261.38 մաս մաքուր ոսկի, իսկ նոր 10 ռուբլիանոց ոսկեդրամը կը պարունակէ միայն 174.24 մաս մաքուր ոսկի, որ ասել է թէ նոր կտրած դրամի ամեն մի ռուբլին հաւասար կը լինի  $6\frac{2}{3}$  ոսկէ կոպէկ արժէքի, որ ունի այժմեայ թղթադրամ ռուբլին: Թղթադրամի քանակութիւնը Ռուսիայում, որպէս մի անգամ վերը ասւեց, այժմն է 1.121.000.000 ռուբլի: Այս դումարի անւանական փոխանակութիւնը (размѣнъ) նոր սխտեմով պէտք է ապահովւի 500 միլլիօն ռուբլի ոսկով, որ պետութեան զանձարանում զիջւած է և ուրեմն կը հաւասարւի ըստ նախագծի 750 միլ. ռուբլու նոր հատանւելիք գրամին: Ինչ վերաբերում է արծաթէ դրամին, սա պիտի ծառայի մանր պետքերին իբրեւ հատւածական դրամ, որ իր արժէքով արդէն թղթադրամին հաւասարեցրած է:

Եթէ նախագիծը իրագործւի, այնուհետեւ ռուբլին այլ ևս չի բարձրանայ աւելի քան 66  $\frac{2}{3}$  ոսկէ կոպէկ: Ներկայումս մէկ ռուբլու օրինական արժէքը (ոչ շրջանառականը, այլ անւանականը) 4 Ֆրանկ ոսկու է հաւասար և կարելի է յուսալ, որ մի օր տընտեսական պայմանները կը փոխեն և կը նպաստեն, որ թուղթ ռուբլին մօտենայ իր անւանական արժէքին, ինչպէս որ վերջին ռուբլիթքական պատերազմից առաջ նա հաւասար էր մօտ 86 կոպէկի ոսկով: Ի հարկ է, հերքելու կարիք չկայ, որ մեր կապիտալիստական

արդիւնաբերութեան շրջանում հաստատուն արժէք ունեցող դրամը մեծ առաւելութիւններ ունի: Այս նկատմամբ ամենից առաջ նշանաւոր է այն հանգամանքը, որ հաստատուն դրամի շնորհով ժողովրդական արդիւնքները չեն ենթարկւում զնի խիստ փոփոխութեան: Պետութիւնները հաստատուն դրամով փոխ առած պարտք վճարում են հեշտութեամբ և առանց փնասի: Արտահանող առևտուրը աւելի կանոնաւոր է և տեղիք չի տալիս կապիտալիզմի անսահման շահադիտութիւններին: Վերջապէս ոսկեդրամ ունեցող երկիրները աւելի հեշտութեամբ են կրում մի աւերիչ պատերազմի հետեանքները: Բայց երբոր դրամական արժէքը հաստատուն չէ, երբ որ սա սպասածին հակառակ շատ է իջնում, պետութիւնները այդ դէպքերում ծայրայեղ նեղ տեղն են ընկնում իրանց պարտքերը վճարելու համար: Որպէս զի սնանկութեան մէջ չընկնեն, նոքա պէտք է զանազան արհեստական միջոցների դիմեն: Դրամական արժէքի անկման ժամանակ միշտ այն է պատահում, որ պետութիւնները ստիպւած են դրամը թանգ ձեռք բերել այդ պարտքը հատուցանելու համար. նոքա՝ թղթադրամ ունեցող երկիրները, շատ թղթադրամով առնում են քիչ ոսկեդրամ իրանց անյետաձգելի պարտքերը վճարելու համար: Այսպիսի ֆինանսական գործեր կարգի բերելու համար պահանջւում են մեծամեծ ծախսեր, որ պետութիւնները չեն կարող անել աղքատիկ բիւջէի հիման վրայ: Մնում է նրանց դարձեալ դիմել հարկերի, որ անկասկած ժողովրդական արդիւնքները թանգացնում է, բայց օգնութեան ամենամեծ գործոն է երևում, թէև նրանով ստացւած օգուտը իր վերջնական հետեւանքով անհամեմատ ստոր է ժողովրդական զոհաբերութիւնից: Թղթադրամին հակառակող այս անվիճելի հիմունքները նախադասելի են դարձնում դրամի հաստատուն արժէքը, որ թէ սկզբունքով և թէ դործնական տեսակէտից համապատասխան է նոյն իսկ ժողովրդական շահերին:

Գալով ապա Ռուսիային, մենք ականաց հանդիպում ենք այնպիսի տնտեսական պայմանների, որոնք բնաւ չեն արդարացնում այն նախադիժը, որի դօրութեամբ մի ռուբլու դրամական արժէքը հաստատուում է (ֆիկսացիա)  $66\frac{2}{3}$  ոսկէ կոպէկ: Ռուբլու արժէքը այս աստիճան իջեցնելով՝ (դեուլացիա) ժողովրդական հարստութեան

արժողութիւնը կը գնահատուի այնուհետեւ միայն այդ հաստատուած չափով առանց այլ ևս աւելի բարձրանալու: Նա անվերադառնալի կերպով ընկած կը համարուի: Եւ այս հանգամանքը արդէն չէր նպաստիլ երկրիս տնտեսական վարկի ընդարձակմանը, որ կը յառաջանար ապագայում ժողովրդական աշխատանքի ուժգին արդիւնաւորութիւնից: Դրամական արժէքի իջեցնելու (դեուլւացիայի) անպէտքութիւնն և վնասակարութիւնը աւելի ևս անվիճելի կ'երևան՝ երբոր Ռուսիայի համար յանկարծ ծագեն նախատեսուած արտաքին քաղաքական բարդութիւններ: Սոցանից կը ծագի թղթադրամ կտրելու կարիք, որ խոյն և եթ վայր կը գցի հաստատուած ռուբլու արժէքը: Այս հեռանքից զերծ մնալ Ռուսիային անհնարին կը լինի, որովհետեւ Ռուսիան համեմատաբար դեռ ևս տնտեսապէս այնքան հարուստ չէ, որ կարողանայ իր միջոցներով չիշած դէպքում դրամական արժէքի անկման առաջը շուտով աւելի: Ռուսիայում այսօր յամենայն դէպս ձգտում կայ տնտեսական ուժգին գործունէութեամբ բարձրացնել ընկած ռուբլու արժէքը  $66\frac{2}{3}$  ոսկեզնից աւելի: Իսկ ենթադրած պայմաններում շատ և շատ ջանքեր պիտի անեն, տնտեսական բոլոր ոյժերը լարեն, որ հնար լինի ռուբլու արժէքը  $66\frac{2}{3}$  ոսկու կոպէկի հասցնել, քանի որ թուղթ դրամը ընկած կը լինի: Արդարեւ սա մի շատ ծանր երևոյթ կը լինէր, որի անհուն վնասները կը տուժէին բոլոր դասակարգերը: Ռուսիայի բարօրութիւնը ցանկացող լուրջ մամուլը այլապէս չէ մտածում և հակառակ է, ամենայն իրաւամբ, նախագծւած դրամական ռեֆորմին: Նորա անաչառ դիտողութիւնները նախադժւած ռեֆորմի բացարձակ աննպատակաշարմարութեան և անօգտակարութեան նկատմամբ յենում են դրամական փորձերի վրայ, որ արեւ են եւրոպական երկիրները իրանց ընկած թղթադրամի արժէքը վերականգնելու համար: Նոցա փորձերը հակառակ են այժմ նախագծւած դրամական ռեֆորմին: Իսկ որպէս զի Ռուսիայում թղթադրամի անւանական ոսկեզնիքը ժամանակի ընթացքում վերականգնելի, պէտք չէ շտապել ոսկին իբրեւ պարտաւորիչ վճարող միջոց ճանաչելու, այլ պէտք է մտցնել շրջանառութեան մէջ մի քանի հարիւրաւոր միլիոն ոսկեդրամ ռուբլի, մէկ պոլուիմպերեալ 7 ու. 50 կոպէկ թղթադրամ հաշւելով, ինչպէս եւրոպական

շուկաներում գնահատուած է: Միևնոյն ժամանակ անհրաժեշտ է աստիճանաբար և անընդհատ հանել շրջանառութիւնից աւելորդ թըղթադրամը և ցնջել սորան, երբ նոքա կը ներկայացեն պետական բանկին իր ներկայ արժէքով (կուրս) ոսկեդրամի հետ փոխանակելու համար: Թղթադրամի վերացման գործը շտապեցնելու համար վճռողական նշանակութիւն ունի մի ընդարձակ ծրագիր տնտեսական և ֆինանսական ձեռնարկութիւնների, որ չպիտի լոկ կապիտալիզմի շահերը պաշտպանի, այլ նոյնպէս և գլխաւորապէս սպառող ժողովըրդի պէտքերին բաւականացնի: Տնտեսական ձեռնարկութիւնների իրագործումը անշուշտ ընդունակ կը լինէր Ռուսիայի ուրիշ երկիրների հետ ունեցած առևտրական հաշեկշիւը բարւոքելու: Նպաստաւոր առևտրական հաշեկշիւը կարող կը լինի պահպանել երկրիս մէջ ոսկին, որ կը բռնի թղթադրամի տեղը: 1888 թ. մինչ 1895 թ. Ռուսիայի հաշեկշիւը կարծել է տալիս, որ նա օգտուէտ ցանկացած պտուղներ տւած է: Այս 8 տարւայ ընթացքում Ռուսիան իր արտաւաճմանեան առևտրից ստացած է ուրիշ երկիրներից 240 միլիոն ռուբլի ոսկի և տւած է նոցա 118 միլիոն ռուբլի ոսկի: Ուրեմն աւելորդ ստացւած է 122 միլիոն ոսկէ ռուբլի, որ գոյացել է ներմուծւող արդիւնքների վրայ զրւած հովանաւորող մաքսերի շնորհով: Առհասարակ լաւ հաշեկշիւը այն է, որ ներմուծւող և արտահանւող առևտրի մէջ հաւասարակշռութիւնը պահպանւած լինի. ասել է թէ ներմուծումն և արտահանումն իրար շատ չը գերազանցեն: Եւրոպան չէ կարող խոյս տալ ռուս երկրագործական և այլ արդիւնքներից. նոյնպէս Ռուսիան, ինչքան էլ իրան մաքսերով հովանաւորի, դարձեալ սպասում է եւրոպական արդիւնքների և այժմեանից աւելի կը սպառէր, եթէ հաշեկշիւին այն նպաստաւոր կերպարանքը տուէր, որ ցանկալի է ժողովրդի տեսակէտից: Այս կարծիքը արդարանում է, երբոր մենք թւերին ենք դիմում. օրինակ 1893 թ. ներմուծւած էր Ռուսիա՝ պատրաստի արդիւնքներ 92<sup>1</sup>/<sub>2</sub> միլ. ռուբլու, բայց 1894 թ. արդէն ներմուծւած էր 137 միլ. ռուբլու արդիւնքներ: Ներմուծման աւելանալուն մեծապէս նպաստել էր 1894-ին մտցրած մաքսերի թեթեւութիւնը՝ ի նպաստ սպառող ժողովրդի, որը շատ պէտք ունի արտաւաճմանեան արդիւնքների: Իսկ է, Ռուսիան կա-

րող է իր մշակութեան կարօտ բնական հարստութիւններով Եւրոպային գերազանցել, բայց նա չէ կարող համաշխարհային շուկայում տիրապետող դեր կատարել: Հիւսիսային Ռուսիան և սորա ասիական կալւածները գտնւում են արդիւնաբերութեան համար աննպաստ կլիմայական և աշխարհագրական պայմաններում, մինչդեռ այս վերաբերմամբ Ամերիկան հարաւային Ասիայում, Աֆրիկայում և Աւստրալիայում գտնւող եւրոպական կալւածները գերազանց զիջք ունին: Ռուսիայի ասիական կալւածները ունին 20 միլ. ազգաբնակչութիւն, որ չէ աճում վատթար կլիմայի պատճառով, և այդ կալւածները ունին  $16\frac{1}{2}$  միլ. կիլոմետր տարածութիւն, որի  $\frac{2}{3}$ -ը կազմում են ոչինչ չարտադրող տափաստաններ և  $\frac{1}{3}$ -ը մշակւող հողեր: Անգլիան ունի դեռ միայն Աւստրալիայում պտղաբեր կալւածներ  $8\frac{1}{4}$  միլ. կիլոմետր. 30 միլ. բնակիչներով:

Միայն ոսկեգրամ ունենալով չի կարելի պարծենալ մի երկրի տնտեսական և հասարակական բարօրութեամբ: Եզիպտոսը և Հնդկաստանը ոսկեգրամ ունին, բայց այս երկիրների անպայման բարօրութեան մասին խօսել անգամ աւելնորդ է: Ժողովրդի արտադրող աշխատանքով և սորան պաշտպանող և նպաստող պայմաններով պէտք է հասնել երկրի ցանկացած բարօրութեանը: Իսկ եթէ ոսկեգրամ ունենալը բարօրութեան գործոններից մինն է համարւում, այն ժամանակ պէտք է գործել այնպիսի միջոցներով, որոնք թէ կը բարեփոխէին առևտրական հաշակշիռը և թէ կ'ուժեղացնէին ժողովրդի սպառող և վճարող ընդունակութիւնները, որ նոյնքան կարօտ է հասարակական պաշտպանութեան և խնամակալութեան, ինչպէս վայելել և վայելում է ժամանակակից կապիտալիզմը: Ռուսիայում այսօր արծաթէ դրամը հաւասար է թղթադրամին, և յոյս կայ, որ արծաթի պաշարը տարէցտարի կ'աւելանայ: Արծաթի մեծ պաշարը բաւ է, որ նոյն իսկ քաղաքական դժբաղդութեան դէպքերի առաջը յայտնի չափով առնւի: Արծաթը տնտեսապէս յետաժնաց երկիրներում մի շարժական աստիճան է դէպի ոսկեգրամն անցնելու, եթէ, ժողովրդական տնտեսութեան իսկական պահանջների համեմատ, տնտեսական միջոցների մի լայն ծրագիր իրագործւի: Թւում է, որ Ռուսիան գործունէութեան այսպիսի ասպարիզում մեծ պաշտօն ունի կատարելու, եթէ ուզենայ խոցա տալ խոշոր սխալներից, որոնց վնասակար հետեւանքները աննախատեսելի են:

## ԼԵԶԻԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

### I

Մեր աշխարհաբար լեզւին հետամուտ ընթերցողները անկասկած նկատած կը լինեն, որ մեզնում լեզւական ձևերից շատերը վերջնական հաստատութիւն չեն գտած. մէկը մի խօսք այսպէս է գրում, միւսն այնպէս, մի երրորդն էլ ուրիշ կերպ. կան նոյն իսկ չորրորդ ու հինգերորդ ձևի գրողներ. և այդ ամենը կողք կողքի, առանց իրար խանգարելու: Բայց ես էլի կարծում եմ, որ ով գրի չէ առել մեր լեզւի մէջ գործածական տարբեր ձևերը, — հազիւ թէ դէթ մօտաւորապէս գուշակում լինի նոցա թիւը: Տարիներ առաջ ես միտք չղացայ նշանակել նոցա, որոշ ժամանակ չյատկացնելով այդ գործին. բայց մի անգամ գործը սկսած՝ սովորութիւն դառաւ ինձ համար՝ միևնոյն խօսքի տարբեր ձևին հանդիպելիս — նշանակել. և ահա այսօր տետրակումս այդ տարբեր ձևերը հասել են — ով կը կարծէր — հասել են, ասում եմ, № 200-ի: Ակամայ մարդ պատկառանք է զգում դէպի այդ խոշոր թիւը, թէկուզ ցուցակի մէջ տեղ են գտել նաև ոչ յարգանք պահանջող լեզւական ձևեր. բայց որ շատերը գրում են, նոյն իսկ մեր լաւագոյն հեղինակները իրենց թոյլ են տալիս, — էլ ում դէմ կը բողոքէք. գործդ թող լինի — նշանակես. յետոյ քանը քան ցոյց կը տա:

Ասացի ցուցակը հասել է № 200-ի. ես դեռ լաւ չեմ ստուգել, զուցէ միևնոյն նկատողութիւնը մի քանի տեղ կրկնւել է. այդ կ'երևայ անշուշտ: Բայց կարևոր եմ համարում ասել, որ նշանակւած խօսքերը չեն 200, այլ ձևերը. օրինակ լրագիրներ և լրագրեր, ձեռագիրներ — ձեռագրեր և այլն — այդ ես հաշուում եմ տարբեր ձևերի մի դէպք. այնպէս որ այդ մի նումէրի տակ կարող են տաս-

նեակ ուրիշ բառեր լինել: Ես որ ասում եմ 200 նումէր, դուք ուրեմն հասկացէք հազարաւոր բառեր: Ինչ զարմանք, որ մեր լեզուն դեռ չի կարող հաստատութեան տիրողոս վայելել. հազարաւոր (տառացի հասկացէք—հազարաւոր) բառեր տարբեր ձևերով կը գտնէք մեր ներկայ ժամանակի հայոց (և դեռ միայն արևելեան-Վովկասեան հայոց) գրքերում և յօդաձևերում. ուսանողը գլուխը ո՞ր քարին տայ իմանալու համար թէ որն է ուղիղը, որն է լաւը. այդ մթութեան մէջ նա ոչ միայն չի կարողանում իւրացնել գործածութիւն ունեցող ձևերը, այլ, շփոթւած, դոցա վրայ նա աւելցնում է գոյութիւն չունեցող, ուրեմն ակնյայտնի սխալ ու անգրագէտ ձևերը—որով խառնակութիւնը դառնում է կատարեալ:

Այդ խառնակութեան դէմն առնելու ժամանակը կարծում եմ որ հասած պիտի համարէի: Յաջողութեան համար կատարեալ հաւատ չի կարելի ունենալ. բայց արդէն իսկ այդ տարբեր ձևերի ցուցակն հրատարակելը շատերին մտածել կը տայ, և գուցէ հայելու մէջ ալլանդակութիւններ տեսնելը կ'օգնի կանոնաւորման գործին: Ամեն հիմնական գործում նախ մարդ սկսում է եղած-չեղածը յայտնի կացուցանելուց, «ինչնէնտար» կազմելուց. այս գործումն էլ կարևոր է մեր տարբեր ու խառնակ ձևերի ինչնէնտարը կազմել ու ներկայացնել ընթերցողների առաջ: Այդ ես խոստանում եմ անել կարճ ժամանակում: Եւ ապա, խօսքը կարող է պատկանել նաև ուրիշներին, նոյն այս էջերում և նոյն այս «լեզական գրոյցներ» վերնագրի տակ, եթէ նոքա հիմնական նկատողութիւններ կը ներկայացնեն լեզական տարբեր ձևերի վերաբերմամբ: Այս անգամ ես կը զբաղւեմ նոցանից մէկովը, որ ենթադրում եմ իբր նմուշ:

Մի շարք բայեր կան, որոնց անցեալ եղանակը երկու ձևով է արտայայտուում թէ խօսակցութեան և թէ գրութեան մէջ. և այդ կը նկատէք նոյն իսկ լաւագոյն գրողների մօտ. ահա այդ տեսակ բայերի մի շարք.

|       |      |        |       |       |
|-------|------|--------|-------|-------|
| բերել | բերի | բերեցի | բերեց | բերաւ |
| դնել  | դրի  | դրեցի  | դրեց  | դրաւ  |
| տալ   | տւի  | տւեցի  | տւեց  | տւաւ  |

|            |           |             |            |            |
|------------|-----------|-------------|------------|------------|
| Թողնել     | Թողի      | Թողեցի      | Թողեց      | Թողաւ      |
| բաց անել   | բաց արի   | բաց արեցի   | բաց արեց   | բաց արաւ   |
| դարձնել    | դարձրի    | դարձրեցի    | դարձրեց    | դարձրաւ    |
| կորցնել    | կորցրի    | կորցրեցի    | կորցրեց    | կորցրաւ    |
| յատկացնել  | յատկացրի  | յատկացրեցի  | յատկացրեց  | յատկացրաւ  |
| սաստկացնել | սաստկացրի | սաստկացրեցի | սաստկացրեց | սաստկացրաւ |
| և այլն:    |           |             |            |            |

Խնդիրը սա է. կարո՞ղ է այս ղէպքերում ուղիղ ու սխալի մասին խօսք լինել. այլ խօսքերով՝ կարելի՞ է որ և է կանոնի հետեւել և իմանալ թէ որն է հարազատը և որը անհարազատը. եթէ կանոն գտնւի—ուրեմն ամենքը համաձայն կը լինեն անհարազատ ձեւը ընդմիջտ զուրս վնասել:

Պատասխանը դրական է. նախ պէտք է տեսնել՝ բա՞յի արմատի ու վերջաւորութեան մէջ որեւէ (ն, ան, չ, ացն, եցն) մասնիկ կայ, թէ ոչ. եթէ միջանկեալ մասնիկ չկայ—անցեալը—ցի է. եթէ միջանկեալ մասնիկ կայ—բայի անցեալը չի կարող ցի-ով վերջանալ, այլ անպատճառ կամ այ կը լինի կամ պարզ ի:

Ահա օրինակներ պարզ բայերի.

|        |                 |
|--------|-----------------|
| սիր-ել | սիր-ե-ցի        |
| կապ-ել | կապ-ե-ցի        |
| գր-ել  | գր-ե-ցի         |
| ձե-ել  | ձե-ե-ցի և այլն: |

Երբէք այսպիսի բայերի անցեալը ուրիշ կերպ չի կազմուած եւ, որքան գիտեմ, այդ ընդհանուր կանոնի դէմ բացառութիւն չկայ: Եւ հէնց այդ պատճառով ամենքը այդ և նման բայերի անցեալը դրում են միատեսակ:

Բայց բանը փոխուում է այն բայերի համար, որոնք միջանկեալ մասնիկներ (ն, ան, չ, ցն ա-ցն, ե-ցն) ունին. որովհետեւ միջանկեալ մասնիկները հրամայական եղանակում կորչում են, կամ փոխւում (ն և չ մասնիկները կորչում են, իսկ ան մասնիկը զառնում է աց, ցն դառնում է ցր, ուստի ստորեւ ես առաջ կը բերեմ նաեւ հրամայական եղանակը.

|        |     |       |       |
|--------|-----|-------|-------|
| աւնել  | առ  | առայ  | առաւ  |
| տեսնել | տես | տեսայ | տեսաւ |

| տանել                  | տար          | տարայ     | տարաւ        |
|------------------------|--------------|-----------|--------------|
| վերկենալ               | վեր կաց      | վեր կացայ | վեր կացաւ    |
| հանգստ-ան-ալ           | հանգստ-աց-իր |           | հանգստ-աց-այ |
| ձանձր-ան-ալ            | ձանձր-աց-իր  |           | ձանձր-աց-այ  |
| բարկ-ան-ալ             | բարկ-աց-իր   |           | բարկ-աց-այ   |
| բարձր-ան-ալ            | բարձր-աց-իր  |           | բարձր-աց-այ  |
| հաս-ն-ել               | հաս-իր       |           | հաս-այ       |
| մտ-ն-ել                | մտ-իր        |           | մտ-այ        |
| անց-ն-ել               | անց-իր       |           | անց-այ       |
| ընկ-ն-ել               | ընկ-իր       |           | ընկ-այ       |
| թռ-չ-ել                | թռ-իր        |           | թռ-այ        |
| կոր-չ-ել               | կոր-իր       |           | կոր-այ       |
| փախ-չ-ել <sup>1)</sup> | փախ-իր       |           | փախ-այ       |

Ես վերը առաջ բերի այնպիսի օրինակներ, որոնք տարբեր ձևեր չունին անցեալ եղանակում: Դա հարկաւոր էր ինձ կանոնը ճանաչելու համար. այժմ կարելի է անցնել այն բայերին, որոնք անցեալ եղանակում երկու ձևով են գործածւում:

Հետեւելով վերը ճանաչւած կանոնին, այն բայերը, որոնք միջանկեալ մասնիկ ունին, չեն կարող անցեալում ցի ընդունել. և եթէ կայ անցեալի երկրորդ ձևը, ուրեմն վերջինն է ուղիղ. և նոցա բոլորի հրամայականը սովորական կանոնով չէ կազմւում:

Անել. հր. արա. անցեալը՝ արի և ոչ արեցի.

Բաց անել. նոցնպէս.

Գնել. <sup>2)</sup> հր. դիր. անցեալը՝ դրի և ոչ դրեցի.

<sup>1)</sup> Այս խօսքերում՝ կանգնել, բռնել, կանչել՝ և է տառերը մասնիկներ չեն, ալ պատկանում են արմատին. և ալդ պատճառով նոցա հրամայականն է կանգն-իր (և ոչ կանչ-իր), բռն-իր, կանչ-իր: Դոցա հակառակ՝ հասնել (արմատն է՝ հաս), մտնել (արմատն է՝ մտ), թռչել (արմատն է՝ թռ) և ալ բառերում և է տառերը միջանկեալ մասնիկներ են և հրամայականում ալդ մասնիկները կորչում են. և ալդ պատճառով հրամայականից կարելի է իմանալ թէ նոքա մասնիկներ են թէ ոչ:

<sup>2)</sup> Անել, դնել բայերի մէջ և տառերը մասնիկներ են և ոչ արմատ-

Թողնել. հր. թող. անցեալը՝ թողի և ոչ թողեցի.

Թռցնել. հր. թռցրու. անցեալը՝ թռցրի և ոչ թռցրեցի.

Կորցնել. հր. կորցրու. անցեալը՝ կորցրի և ոչ կորցրեցի.

Սաստկացնել. հր. սաստկացրու. անցեալը՝ սաստկացրի.

Յատկացնել—նոյնպէս.

Վաւերացնել—նոյնպէս.

Վերցնել—նոյնպէս.

Զարմացնել—նոյնպէս.

Դարձնել—նոյնպէս.

Վերադարձնել—նոյնպէս.

Ծագեցնել—նոյնպէս.

Հարցնել. հրամ. հարցրու. անցեալը՝ հարցրի և ոչ հարցրեցի:

Եւ այլն:

Բերել բայը այդ շարքի մէջ մի բացառութիւն է կազմում նրանով, որ, գէթ ըստ երևութիւն, միջանկեալ մասնիկ չունի. բայց արդէն բաւական է որ նորա հրամայականը (բեր) անկանոն է, ուրեմն—

Բերել. հրամ. բեր. անցեալը բերի և ոչ բերեցի:

Տալ բայի հրամայականը (տուր) նոյնպէս անկանոն է, ուրեմն

Տալ. հրամ. տուր. անցեալը՝ տւի և ոչ տւեցի:

Ինչ է բղխում այս զիտողութիւններից. այն, որ—

1) Այն բայերը, որոնք կազմւած են առանց միջանկեալ մասնիկների (սիր-ել, գր-ել), հրամայականում անխտիր ունին իր վերջաւորութիւն և նոցա անցեալը—ցի է.

(օրինակ՝ գր-ե-ցի, ձե-ե-ցի, ապր-ե-ցի, գանձ-ե-ցի, սիր-ե-ցի, և այլն):

2) Բոլոր այն բայերը, որոնք կամ հրամայականն է անկանոն և կամ որոնք միջանկեալ մասնիկներով են կազմւած (հաս-ն-ել, հաս-ցն-ել, հարց-ն-ել, գոհ-ան-ալ, գոհ-ա-ցն-ել, փախ-չ-ել)—դոքա անցեալում կամ այ և կամ ի (բայց ոչ ցի) վերջաւորութիւնն են ընդունում:

Ներին պատկանող. այդ երևում է նրանից, որ նոցա տեղ չ տառն է բըռ-նում ալլ գէպքերում (աչարք, դիչք).

Այդ շարքում չիւած բաղերի մէջ մասնիկներն են ն, ցն, ա-ցն, է-ցն:

(օրինակ՝ բերի, տւի, կորցրի, հասայ, մտայ, անցայ):

Զոկել թէ որն է այլ ընդունում և որը պարզ ի—դա շատ հեշտ է,—պարզ խողովածեամբ. զուցէ դորա համար էլ, թէև անյայտ, բայց որոշ կանոն կայ. բայց այդ կանոնը եթէ գտնուի էլ՝ գործնական նշանակութիւն չի կարող ունենալ. դէ խօ ամեն ոք գիտէ որ չի կարելի ասել՝ ես հասի, ես կերի, ես կարողացի, ես փախի, ես կորի, ես գտի, այլ անպատճառ՝ ես հասայ, ես գտայ, ես կարողացայ և այլն: Այն բայերը, որոնք անցեալում այլ են ընդունում, որոշ են ամեն հայ մարդու ականջի համար: Այդ բայերը կարողացել են անցեալ եղանակում իրենց վերջաւորութիւնը խստութեամբ պահել:

Այլ է անցեալում ի վերջաւորութիւն ընդունող բայերը, որոնց համար շփոթութիւն է եղել. նոցա ի վերջաւորութիւնը, ժողովրդի և լեզւի ոգուց հեռու գտնւած մարդկանց և գրողների շնորհիւ, ցի է դառել, այնպէս որ նոքա դուրս են գալիս հրապարակ թէ ի և թէ ցի վերջաւորութիւններով:

օրինակ՝ տւի և տւեցի, կորցրի և կորցրեցի, բերի և բերեցի):

Պարզ է որ դա միայն թիւրիմացութեան արդիւնք է:

Յաջողեց մեզ այդ թիւրիմացութիւնը պարզել. եթէ այո—ապա յոյս ունինք որ այդ սխալը այսուհետև իսպառ կը վերացւի հրապարակից:

## Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

ՓԱՓԱՋԵԱՆ, Վ. — «Տուրիստի չիշողութիւններ». 1896 թ. Թիֆլիս-  
86 էջ, գինը 20 կոպէկ:

Փափագեանը վաղուց ծանօթ է մեր ընթերցող հասարակութեան: Նրա գրածներն ամեն տեղ կարդում են սիրով և հետաքրքրութեամբ: Այդ ֆակտն իսկ մի ապացոյց է, որ հասարակութիւնը նրա գրածներում իր սրտին մօտ չատ բան է գտնում. աչնպէս որ, նախ քան գրական քննադատութիւնը նրան կը գնահատէր և կ'առաջարկէր ընթերցող հասարակութեան, վերջինս առանց զրան էլ գնահատել է նրան: Այդ չի նշանակում սակաւն, որ հասարակութեան գնահատութիւնը ըստ արժանոյն է և ուղիղ. աչդ գործում վերջին խօսքը դարձեալ գրական քննադատութեան է պատկանում, որ մինչև ալժամ նրա մասին մանր նկատողութիւններով և գրախօսական ջողածներով է բաւականացել: Հեռու լինելով աչդ պակասը լրացնելու մտքից, մենք կ'ուզէինք, «Տուրիստի չիշողութիւններ» մասին խօսելիս, մի քանի խօսքով բնորոշել Փափագեանի գրական բնաւորութիւնը:

Փափագեանի գրածների ամենամեծ մասի նիւթը կեանքում աչքի զարնուող կոնտրաստները՝ հակադրութիւններն են. նա միշտ սիրով նկարագրում է աչդ կոնտրաստները որտեղ էլ լինեն, և կարծէք շարունակ փնտռում է նրանց: Մէկը հարուստ է, միւսը՝ աղքատ, մէկը ուժեղ է, միւսը՝ թույլ, մէկը տգէտ է, միւսը՝ խելօք, մէկը աղնիւ է, իսկ չըջապատն անաղնիւ, մէկը անկախ է՝ միւսը կախած և աչն, — ահա նրա գրածների բովանդակութիւնը կազմող տարրերը: Կարդալուց քննելով, մանաւանդ վերջին տարիների գրածները, ակամաջ առաջ է գալիս «ինչո՞ւ» հարցը և զրանով թմրած մտքերը շարժում է, զբաղեցնում: Հակադիր տարրերը նա կամ ուղղակի չարարելութեան մէջ է դնում, և աչդ դէպքում ստացւում են աչս կամ աչն կերպ հարստահարողներ և հարստահարւածներ, ինչպէս նրա «Թութալը»-ում, «Վալօ»-ում, «Պատկերներ»-ից շատերում և աչն. կամ ուղղակի հակադրում է, ինչպէս «Փար-

ջարդողներ»-ում:

Անկախ գրածնների նիւթից, փափաղեանի գրական գործունէութիւնը կարելի է երկու շրջանի բաժանել. առաջինը նա անցել է. ալդ շրջանումն են լուս տեսել նրա «Պատկերները թիւրքահալոց կեանքից», «Թոփալը» և ալլն: Ալդ գրածններում միշտ մի կողմը կանգնած են կոպիտ իշխողներ, միւս կողմը՝ հլու կամ անզօր հպատակներ և վերցրած լինելով համարեա բացառապէս Տաճկահալոց կեանքից, աչքի են ընկնում չարաբերութիւնների կոպտութեամբ և գոյների թանձրութեամբ, ինչպէս և է իրականում: Հեղինակը ալդ շրջանում ջանք է գործ դնում չարաբերութիւնները խիստ որոշ, ուէլէֆ դուրս բերել, քիչ ուշադրութիւն գարձնելով գործող անձնաւորութիւնների գեղարեւստական վերարտադրութեան վրայ:

Երկրորդ շրջանում աւելի է նկատուելի ուշադրութիւն նաև դէպի գործող անձերը, թէև առաջնակարգ տեղը դարձեալ բռնում են գործողների չարաբերութիւնները. ալս շրջանում գոյներն էլ մեղմանում են, ներկերը նոսրանում, որովհետև ալ ևս ալնպիսի կոպիտ հարստահարութեան կամ փոխադարձ չարաբերութեան նկարագրութիւններ չեն նրա տւածները: Ասածներից պարզ երևում է, որ փափաղեանին աւելի շատ դբաղեցնում են իր գործող անձերի աւելի արտաքին չարաբերութիւնները, քան ներքին կեանքը. վերջինս նրա գրածններում շատ քիչ տեղ է բռնում. նա չի վերլուծում իր մտքի զաւակների հոգեկան աչ-

խարհը, չուզումները, կրքի ելնէջները: Ալս կողմից փափաղեանն ու Շանթը հակառակ ծալրերի մարդիկ են: Մի ուրիշ զանազանութիւն, որ կալ ալդ երկու գրողների մէջ, ալդ փափաղեանի տենդենցիոզ գրող լինելն է: Ալդ չատկութիւնն է նրա գրաւծների չաջողութեան պատճառը, զրանով է նա սիրելի ընթերցողներին և զրանով է նա դեր խաղացել ու խաղում հասարակութեան գիտակցութիւնը բարձրացնելու գործում: Ալդ տենդենցիան նրա գործունէութեան առաջին շրջանում զուտ Բաֆֆիական է, իսկ ալմմ՝ երկրորդ շրջանում, իր գրաւծների միւս կողմերի հետ, նա ալդ կողմից էլ ինքնուրոյն բնաւորութիւն է ստացել և զանազանում է մեր միւս գրողներից: Փափաղեանը ունի, ճիշտ է քիչ թւով, և ալնպիսի գրաւծներ, որոնք մեր բնորոշութեան չեն չարում. բալց մենք ուղեցինք միալն որոշել նրա ընդհանուր բնաւորութիւնը, չեւու մնալով նրա ամբողջ գրական գործունէութիւնը քննադատելու գիտաւորութիւնից:

Անցնենք «Տուրիստի լիշողութիւններին»: Ալդ գրքուկում տեղ գտած բոլոր գրաւծները նախապէս տպւած են Մուրճում, ալնպէս որ ծանօթ են նրա մշտական ընթերցողներին: Մեծութեամբ առաջին տեղն է բռնում «Աննա» անունով պատմըւածքը, որ «ուսանողի լիշատակարան» է: «Աննա» փափաղեանի ալն գրաւծներից չէ, որոնցից նա շատ է գրել. նա զուրկ է տենդենցիալից և ուրեմն դուրս է նրա սովորական ժանրից: Եթէ երբ և իցէ

Փափաղեանը մտնի գործունէութեան երրորդ շրջան՝ տիպերի և վէպերի շրջան, ալս պատմածքն ալն ժամանակ անշուշտ գէպի նոր շրջանն անցնող գրեածներից մէկը կը լինի։ Պատմածքի գլխաւոր անձնաւորութիւնը Աննան է՝ մի ուս ջղոտ ուսանողուհի։ Այլի առաջ ունենալով ալն հանգամանքը, որ փափաղեանը շատ քիչ կ'ին գործող անձնաւորութիւններ ունի և առհասարակ իր անձնաւորութիւնների մասին քիչ է հոգում, կարող ենք ասել, որ «Աննալում» նա ցոյց է տալիս չնորհ գեղարւեստօրէն անձնաւորութիւններ վերարտադրելու։ Մի ուրիշ դիժ, որ չի հանդիպում նրա միւս գրեածներում, ալն ալն հիւանդաբանական տեսարաններն են, որ կան «Աննալում»։ Թէ որքան նա ընդունակ է ալն տեսակ տեսարաններ նկարագրելու, մենք չենք կարող ասել։ Նախ՝ որ բաւականաչափ վիաս տեր չունենք և երկրորդ՝ որ զըրեածքի ալն մասերը խիստ սղմած են։ Նշածից կարելի է ալն եզրակացութեան գալ, որ Փափաղեանը ալն շրջանում չաջող դիտողութիւններ ունի։ Բալց ասել մեր հեղինակի մասին՝ թէ նա չաջող դիտողութիւններ է արել, դա շատ քիչ է։ Ում չէ չալնի Փափաղեանի սուր դիտելու ընդունակութիւնը, մանաւանդ ինչ վերաբերում է կեանքի արտաքինին։ Ալն կէտի մասին ուրեմն, մենք որոշ բան չենք կարող ասել։

Աննալի նման աղջիկներ ուս կեանքը շատ է տւել։ Դրանք ուսման ծարաւ աղջիկներ են, որոնք անկարող լինելով հալրենի երկրում

չագուրդ տալ իրանց պահանջին, արտասահման են գնում ուսում ստանալու համար։ Դրանցից շատերը վերին աստիճանի անփորձ են լինում և բոլեական ոգևորութեան աղղեցութեան տակ են վճում զընալը և շատ քչերը լինում են «տասը չափող, մէկ կտորող»։ Աննան վերջիններից չէ։ Նա մի ոգևորած արարած է, որի համար ամենից առաջ թանկ է ուսում առնելը։ Իսկ թէ որտեղ պիտի ապրի, ուր պիտի ուսում առնի, որքան փող պիտի ծախսի, ալն նրան շատ էլ չի զբաղեցնում։ Թէն մի քիչ հալրենիքում տեղեկացել է ապրուստի խնդրի մասին։ Վիէննալի մտ, ուրեմն արտասահմանում միալն, նա սկսում է մի կովկասցի հալ ուսանողի հարց ու փորձ անել ալն պալմանների մասին։ Ալս ուսանողն էլ պատմածքի երկրորդ գլխաւոր անձնաւորութիւնն է և պատմածքի բովանդակութիւնն էլ հէնց Աննալի և սրա մէջ ծագած սէրն ու նրա հետեանքներն են։ Աննան, դեռ հալրենիքում եղած ժամանակ սիրահարում է մի թոքախտաւոր տղալի, կամ աւելի շուտ՝ թոքախտաւոր տղան է սիրահարում Աննալին և, ինչպէս երևում է, ինքնամոռացման հասնելու չափ սիրում է նրան։ Պատմածքը կարգալիս, դուք պատկերացնում էք ալն հիւանդ երիտասարդին, ալնքան չաջող կերպով է գծել նրան հեղինակը, թէն նա չի երևում, ալն միալն խոսում են նրա մասին։ Հին և շատերի վերաբերմամբ ճշմարիտ ասացածքի համաձայն, թէ «հեռացանք-մոռացանք», Աննան, հեռանալով կոլես-

զից, կամաց-կամաց սկսում է նրան մոռանալ, մոռացման պրոցեսը բնականաբար ազդում է և Աննայի՝ Կոլեալին գրած նամակների վրա: Պատմաժողովում լաւ չի պարզւած ալդ-կէտը, մենք ենթադրում ենք, որ Աննան գրաււող աղջիկ է և, գրաււելով Կոլեալով, նա լուրջ կերպով չպիտի սիրած լինի նրան և ուրեմն շատ բնական է հեռանալուց չետոյ մոռանալը: Կոլեալին մոռանալու մի պատճառն էլ պիտի համարել Աննայի հալ ուսանողին հանդիպելը, Պարիզում նրա հարկան լինելը և ղէպի նա սկզբում ընկերական, ապա և սերտ, խիստ մտերմական վերաբերմունք ունենալը: Հեղինակը չի պարզում և մի ալ կէտ. ինչո՞ւ Աննան պիտեց ուսանողին. արդեօք ուսանողը մի առանձին բան էր, օտարոտի էր, անսովոր մարդ էր Աննայի համար, թէ՛ ժամանակի ընթացքում իրար մօտ ապրելը սովորութիւն, ապա և պահանջ դարձաւ... Այս կէտը նշանակութիւն ունի ընթերցողի համար՝ որ կարողանալ լաւ ըմբռնել Աննայի բնաւորութիւնը և ալդ, անշուշտ, պատմաժ. գլխաւոր պահասութիւնն է: Ալդ կարելի է բացատրել նրանով, որ Փափաղեանը ալդ տեսակ գրաւածներում դեռ սկսնակ է:

Աննան մաքուր, ձիւնի պէս մաքուր և աղաւնու պէս անմեղ աղջիկ է, սիրառատ սրտի և անկեղծ ու գրաււող բնաւորութեան տէր: Խնդհ աղջիկը, դեռ ևս չուզումներ չկրած, դեռ ևս շատ անփորձ, ենթարկւում է մի ծանր դրամայի Մի կողմից նա սիրում է հալ ուսանո-

ղին շատ ջերմ սիրով, միւս կողմից, իր քնքոյ սրտի պատճառով, չի ուզում հարւած հասցնել իր Կոլեալին, որը եթէ լսի թէ Աննան ուրիշին է սիրում՝ «կը մեռնի, անպատճառ կը մեռնի»: Կաշտեւ նրան թէ ալ ևս չի սիրում՝ «նրան կը սպանի», չալտ-նելու ղէպքում էլ, կեղծել անկարող է: Նա իր նոր սէրը կարծես չանցանք է համարում, շարունակ աշխատում իրան խաբել թէ չի սիրում հալ ուսանողին. և ալդպէս, թակարդն ընկած թռչունի նման ալս ու աչն կողմն է ընկնում: Ալդ տարտամ դրութեան վերջ է տալիս նրա որոշումը՝ հեռանալ ուսանողի մօտից և ամեն կերպ աշխատել կրակի վրա փալտ չաւելացնել: Մի քանի լաջող գծեր պատմաժողովում ցոյց են տալիս թէ որքան ծանր գնով էր գնում Աննան իւր նոր դրութիւնը: Թէ չանուն ինչի է բաժանում Աննան ուսանողից, լաւ չի շեշտւած. Կոլեալին նորից և ջերմ սիրել դժւար էր, թէ և նա կարող էր անորոշ կերպով չուսալ ալդ. ուսանողից հեռանալով, նա դառնացնելու էր թէ իր և թէ նրա օրերը. աչն-պէս որ, որոշ պատճառաբանութիւն չունի Աննայի վարմունքը: Եթէ կան կէտեր, որոնք կարող են բացաղրել ալդ վարմունքը, անորոշ են և ենթադրական: Ինչ ասել կ'ուզի, որ աչս հանգամանքը չպարզւած է թող-նում Աննայի բնաւորութեան մի որոշ կողմը:

Ծանր դրամային չէր կարողանում գլխաւոր Աննան, նրա ջղերի վրա շատ զօրեղ կերպով էին աղ-ղում ալդ չուզումները, ինքն էլ

բնականից ջղոտ լինելով, ենթարկուում է ջղալին ցնցումների և հիւանդոտ դրութեան: Այդ դրութեան նկարագրութիւնն է, որ մենք վերը փափաղեանի գրեածներում չտեսնած համարեցինք: Ասկայն ալդ դրութիւնը վերջ ի վերջոյ ալսպէս թէ ալսպէս պիտի վերջանար. ուրիշի տան ապրելը ալդ ոչպէս չատ էլ լուսալի սպեղանի չէր կարող համարուի: Պատմածքը վերջանում է նրանով, որ Աննան որոշում է ուրիշ շատ ուսանողների և ուսանողուհիների հետ զնալ Ռուսաստան, ալստեղ կոտորածներ անող խոլերալի զէմ կռուիների շարքը մտնելու: Այս որոշումը Աննալի սիրող, քնքոյշ և անձնէր բնաւորութիւնը լրացնում է և աւելի ամփոփում մեր կարծիքը նրա մասին: Եթէ գրեածքն ալսպիտի անսպասելի կերպով չվերջանար, զուցէ Աննան չզիմանար և դառնար ուսանողի մօտ. ասում ենք զուցէ, որովհետեւ ալդ նոյնպէս որոշ չի կարելի ասել: Ինչ վերաբերում է ուսանողին, նա մեզ որոշ կերպով զծագրած անձնաւորութիւն չերեաց:

Մի երկու խօսք գրեածքի ձևի մասին. նա «ուսանողի վիշատակաւան» է, բալց ալսպէս է կազմած, որ զուրս է դալիս նամակներ, զանազան ժամանակ գրած:

«Քար ջարդողները» մի սիրուն պատկեր է, ուր հակադրած են արեւում կիզող երկու պարսիկ մշակներ և քիչ թէ շատ ապահով պարոններ՝ պատմողն ու իր բարեկամը: Պատմողն արեւից աղաւտելու համար վարագոյրները դնդասելով ամրացնել է աշխատում, իսկ պատշգամբի տակը

խճուղու վրայ «առաւօտեանից ի վեր 7 ժամ անընդհատ կատարեալ արեւի մէջ՝ քար են փշրում երկու խղճալի արարածներ», որոնց աշխատանքի մի մասը պատմողը չէր լանձն առնի կատարել, եթէ նրան «10 ուրբի իսկ տալին»: Եւ երբ մշակները ցածր իրանց ցամաք հացն են կերել վերջացրել և պատրաստում են գործ սկսել, «բարեկամի» ծառան պատմողին ճաշի է հրաւիրում, «խորովածը պատրաստ է»... Պատկերը իր մերկ իրականութեամբ խոր տպաւորութիւն է անում, թէն մէջ տեղը ոչ մի խոշոր հարց չի լուծած, ալս միայն որոշ տեսակէտից նշմարած կոնտրաստներ են ցոյց տաւ:

Նոյն իրականութեան հաւատարիմ լինելու լատկութեամբ աչքի է ընկնում և միւս «Չիտի» պատկերը: Ահա մի փոքրիկ կտոր, որից կ'երեւալ թէ որքան փափաղեանը նուրբ է գիտում և իրականութիւնը հաւատարմութեամբ վերարտադրում:

«—Բեղ ինչ է արել նա. (Էջնաթենց կարագետը):

«—Ինձ շատ բան չէ արել... Կօչիկներդ—զիտեն—հալից ընկել են, կրունկները փոխել տուր... Ուզեց շան պէս դատածս, մի քիչ ունեցածս ձեռքիցս իւրել—չկարողացաւ, չուր, վարպետ եղալ. մօտիցն էլ չուտ զուրս եկալ» և ալին: Ա՛յ, հէնց ալդ միջանկեալ խօսքերը «Կօչիկներդ—զիտեն—հալից ընկել են, կրունկները փոխել տուր...» Ո՛րքան իրական է, և որքան նուրբ է գիտած! Հասարակ մարդկանցից ով չի աղպէս խօսում: Այս պատկերն էլ Փափաղեանի միւս շատ պատկերների ձևն ունի. կարծ,

ամենամահաբաժնի գծերով, որոնք հմտութեամբ են խմբած:

«Թեթե հաճութենքը» ճաճկա-  
Հաչատուանի թշուառութիւններից մէկի պատկերն է: Վրձինը շարժում է նկարիչը և ձեր առաջ դնում բա-  
ւականաչափ որոշ երեցող թուրք փաշային, իր անտարբեր և անսիրտ վերաբերմունքով դէպի հրէշաւոր ինդիատակ Թէլօի զոհերը, եպիսկոպոսին, իր անզօրութեամբ և գիւղացուն, իր կաշկանդած և անօգնական գրութեամբ:

«Մեծ փականքը» և «Չգաճա-  
չափը» մեծ խնդիրներ են շօշափում: զրանց մասին մենք ալստնդ չենք խօսի: Մարդկանց առաքինութեան

և զղացմունքների գնահատութեան չափը և մարդկային ձգտումների ան-  
վերջութիւնը աչնալիս մեծ խնդիր-  
ներ են, որ մի գրախօսականի բան չեն: Խօսել նրանց մասին, նշանա-  
կում է շարժել մի բաղմօղակ շղթ-  
թալի ծալք, բարձրացնել մի շարք խնդիրներ... Մենք չենք կասկա-  
ծում, որ աչդ երկու փոքրիկ էսքիզ-  
ներում լարուցած հարցերը մտածե-  
լու ընդունակ ղրութիւններին կը զբա-  
ղեցնեն:

Մի երկու նկատողութիւն էլ:  
Գրքովը սխալնորով է տպագրած և  
ցանկ չունի, որ անհրաժեշտ է ամեն  
մի աչդ տեսակ գրքի համար:

Ն. Աղբալեանց:

ԻՆԳՐԱՆՍՄ, Ի. Ն., պրոֆ.—Ազինայի նամակները — «Թագաւորի  
տանէ Դաւթի»։ Թարգմ. անգլիերէն բնագրի ռուսերէն թարգմա-  
նութիւնից. Յովսէփ քահ. տէր-Պետրոսեանցի 376 էջ. 1897 թ.  
Թիֆլիս. գինն է 1 ռուբլի:

Մինչև ակօսի մենք չունենք ժո-  
ղովուրդի համար Աւետարանի աչ-  
խարհաբար և ածան հրատարակու-  
թիւն, որի կարիքը զգալի է և որի  
մասին շատ են խօսել մեզ մօտ Աւդ  
պակասը կարող էր մասամբ լրացնել  
մեր գրախօսակիք գիրքը, եթէ չու-  
նենար մի քանի խոշոր անգարմա-  
րութիւններ: Այս գիրքը, որ սկզբում  
մաս-մաս տպւում էր «Տարագում» և  
աչժմ հրատարակել է առանձին,  
նամակներէ ձևով պատմում է Աւե-  
տարանի բովանդակութիւնը՝ Յով-  
հանէն Մկրտչի երևալուց սկսած

մինչև Քրիստոսի համբարձումը: Հե-  
ղինակը, նիւթն աւելի մատչելի դար-  
ձնելու համար, նրան տւել է նա-  
մակներով գրւած վէպի ձև: Մանա-  
սէի աղջիկը՝ Աղինան գալիս է Երու-  
սաղէմ իր հօր ցանկութեան համա-  
ձայն, որն ուզում էր իր աղջկան  
հիմնաւոր կրօնական կրթութիւն  
տալ: Աղջիկը շարունակ նամակներ  
է գրում հօրը աչն բոլոր անցքերի  
մասին, որ պատահում են Հրէաս-  
տանում և զխաւորապէս Երուսաղէ-  
մում: Ազինայի գալը պատահում է աչն  
Ժամանակ, երբ անապատում լաւտ-

Նուստ է Յովհաննէս Մկրտիչը և սկսում է ապաշխարութիւն քարոզել: Նամակներին մէջ նկարագրւած է ահն բուռն հետաքրքրութիւնը և խլրտումը, որ առաջ է բերում Յովհաննէսի երեսալը և Քրիստոսի չափաւելը: Հրէից քահանաները և ընդհանրապէս հոգևոր դասը սկսում են հռանդով հետախուզել մարգարէութիւնները, կարդալ և մտածել ահն կտորների վրա, որոնք գուշակում են Քրիստոսի գալուստը: Աւետարանում գործող մարդկանց մեծ մասը բարեկամական և ազգակցական կապով կապւած է բարբի Ամոսի հետ, որի մօտ ապրում է Աղինան, ահնպէս որ, վերջինիս ստացած և հօրն ուղարկած տեղեկութիւններն անմիջական են և մեծ մասամբ Քրիստոսի առաջին աշակերտներից ու մօտ ծանօթներից հաւաքած:

Հեղինակը երեսակաւութեամբ ամբողջացնում է Աւետարանի կցկտուր պատմութիւնը, ստեղծելով մտացածին անձնաւորութիւններ և չափերի անձնաւորութիւնների վերադրելով մտացածին գործեր, աւսպէս՝ Ղազարոսը գրքեր է արտագրում և զրանով պահում իր քոչերին, լսող մի օր, ուժից վեր աշխատանքից, մեռնում: Նալին քաղաքի ալրի որդին օտարութիւնից գառնում, ջերմով հիւանդանում ու մեռնում է, և ալին: Բոլոր գործող անձանց չափերի զիմագծեր և բնաւորութիւն է տւած, նալիով թէ ում ինչպէս է երակալել հեղինակը: Վէպի ձեռն հեղինակի համար ամենաաւարմար ձեռն է թւացել, իր նպատակն իրագործելու համար, ուստի և ծառայացրել է իր

անմիջական նպատակին: Էլ ինչ խօսք, որ մէջ բերւած անձնաւորութիւնները ահնպէս չեն ներկայացրած, ինչպէս կարող էր պատահած լինել: Տոքա չեն համապատասխանում ոչ ժամանակի պայմաններին և ոչ ոգուն: Նրանք աւելի 19 դարում մարդիկ են, չըջապատւած առաջին դարու կահաւորութեամբ: Պատմական վէպերի չարքում կա յոհն շըրջանից մի պատմածք՝ Ֆլորէրի Վերդիադա՝ ուր գործող անձ է նաև Յովհաննէս Մկրտիչը, բաւական է մի համեմատութիւն զնել խղրահամի Յովհաննէսի և Ֆլորէրի Յովհաննէսի մէջ, որ զգաք առաջին կեղծութիւնը և երկրորդի հաւանական իրական լինելը: Աղ չանգամանքն ի հարկէ «Աղենալի ն ամակներին» հեղինակի համար մի պակասութիւն չէ, քանի որ նրա նպատակը վէպ գրելը չէ, ալ՝ Աւետարանի մէջ պատմածները ժողովրդականացնելը:

Աղ գիրքը, որ գուցէ շատ մատչելի է Անգլիալի հասարակ դասին, նոյն աստիճան չի կարող մատչելի լինել մեր ժողովրդին: Աղ թու չի տալիս ահն պայմանների խոշոր հակադրութիւնը, որի մէջ ապրում են Անգլիալի հասարակ դասը և հալ ժողովուրդը: Ժողովրդականացրած գրքեր ու գրքուկներ թարգմանելիս միշտ սկսք է ալքի առաջ ունենալ մեր կեանքը, ահն պայմանները, որոնց մէջ ապրում ենք: քանի որ, ահն ինչ հանրամատչելի է, ասենք՝ Գերմանիալում, մեզ մօտ մատչելի կարող է լինել ոչ մեծամասնութեան: Ինչպէս երևում է, թարգմանիչն ալքի առաջ չի ունեցել ալս հանգամանքը: Զօ-

Նեղով գիրքը իր հօր փշատակին, նա ասում է, որ իր թարգմանութիւնը «տալիս է հալ ժողովրդին, որ զի տակցաբար ըմբռնի Աւետարանը»։ Ժողովրդին, ինչպէս որ պիտի հասկանալ ալի խօսքը, բոլորովին մատչելի չի կարող լինել ալի գիրքը։ Նախ՝ ինքնըստինքեան և երկրորդ՝ թարգմանչի լեզուի ծանր ու դժարին լինելու պատճառով։ Ժողովուրդը, որ դեռ նոր էր սկսել կարդալ սովորելը, աւելի մատչելի ձևով և աւելի լաւ լեզուով գրած գրքերի կարիք ունի։ Այսպիսով, չախարհաբար Աւետարանի կարիքը կարիք էլ մնում է։ Շատ լաւ կը լինէր, եթէ մէկը, որ իրան ձեռնհաս է ճանաչում ալի գործի համար, պարզ և հասկանալի լեզուով ի մի հաւաքէր Քրիստոսի քարոզները ու առակաները և մի փոքրիկ գիրք կազմելով աժան գնով հրատարակէր կամ հրատարակութեան տարւոյնը ղգալի է մի կարիք և նրանք, որոնք պիտի լրացնեն ալի կարիքը, չեն ուզում կատարել իրանց պարտականութիւնը, ալն ժամանակ ուրիշ ձեռնհաս մարդիկ պիտի գտնուին և ալ ձևով միևնույն գործը ղլուի բերեն։

Ինչպէս տեսանք, թարգմանիչը չի հասնում իր լաւաջադրած նպատակին։ Բայց ալ չի նշանակում՝

որ նրա արած գործը ապարդիւն է։ Կալ հասարակութեան մի որոշ մաս, որին մատչելի է թէ թարգմանութեան լեզուն և թէ նիւթը, ալի մասը գիրքն ուրախութեամբ կը կարդալ, քանի որ նա սիրով և առանց ձանձրութիւն է կարդացում։ Այս ղէպքում, եթէ կալ մի անլարմարութիւն, ալի գրքի մէջ բերած ցիտաղների դրաբար լինելն է, որ անախորժ տպաւորութիւն է անում։ Կարգում էք գիրքը և մէկ էլ... առաջներդ մի գրաբար ցիտաղ կանգնեց։ Թարգմանիչը պէտք է ալքի առաջ ունենար ալն հանդամանքը, որ ընթերցող հասարակութեան մի պատկառելի մասը յոյն իսկ ալի ցետաղները հասկանալու չալի գրաբար չգիտէ։ Ասկալն կարծէք թարգմանիչը տեղ տեղ հասկանում է իր արածի անլարմարութիւնը, ուստի ցետաղները թարգմանում է։ ցաւել պէտք է միալն, որ ալի պատահել է չատ քիչ տեղ։

Յուլս ունենք, որ ալս գիրքը կը տարածւի, չնալած իր վերը փշած անլարմարութեան, մանաւանդ որ, գրքի վաճառումից դուլցած փողի (բացի դրա վաճառանոցներում ծախւածները) 20 % -ը լատկացրած է գաղթականներին։

Ն. Աղալեւոնց։

ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ, Ա. և ՌԱՇՄԱՃԵԱՆ Տ.— Կենդանիների բնագիտ. ու հասկացողութիւնը: Հրատարակութիւն տիկ. Ե. Արամեանցի. Ալէք. սանդրապոլ 1897 թ., 56 էջ, զինն է 8 կոպէկ:

Ինչպէս տեղեկանում ենք ալս գրքուկի լաւաջաբանից ու չափա-  
բարութիւնից, պ.պ. Զիլինկարեան  
ու Ռաշմաճեան արդէն կազմել են  
մի շարք ժողովրդական բնագիտա-  
կան գրքեր և շարունակելու են  
ալս համակրելի գործը: Տիկ. Արամ-  
եանն էլ Ննալում մեկեանս է հան-  
դիսացել իւր գոյգ հայրենակից ու-  
սանդղներին: Յանկալի և միանգա-  
մալն լուսալի է, որ ալս դեղեցիկ  
գործը աջողութեամբ պսակւի, քա-  
նի որ նրան ձեռնարկում են գործը  
սիրող թէ մասնագիտութեան և թէ  
մեթոդին տեղեակ անհատներ: Բնա-  
գիտական գրքեր հրատարակելու  
ձգտումը միայն վերջերս մեզանում  
երևան եկաւ: Վերոյիշեալ աշխատա-  
սիրողները, ինչպէս չափում են,  
գլխաւորապէս հետեւել են գերմանա-  
ցի չափնի ժողովրդական բնագիտա-  
կան գրքուկների հեղինակ՝ Ա. Բերն-  
շտայնի գրութիւններին. «որոնցից  
տեղ տեղ ազատ թարգմանել, տեղ  
տեղ փոփոխել ու կարելոյն չափ մեր  
կեանքին չարմարեցրել և վերջապէս  
տեղ-տեղ էլ ալս կամ ալն հեղինա-  
կից օգտուելով լրացրել են»: Ա. դըր-  
այիկի բովանդակութիւնն է. Խնչ է  
բնագիտ. Կարգիկ էլ բնագիտ. ունեն,  
Կերակրի ընտրութիւն: Կենդանիների  
բուն չինելու վարպետութիւնը: Ըն-  
կերական բնագիտ. Կենդանիների գաղ-  
թելու բաղդը: Արագիլի գաղթելու

բնագիտ. Կենդանիների վարմունքը  
թշնամիների գէմ: Կենդանիների խո-  
րամանկութիւնը: Կենդանիները թնչ-  
պէս են կրթում ձագերին: Կենդանի-  
ները արդեօք հասկանում են միմե-  
անց:

Ալս նիւթերն անշուշտ հետաքըր-  
քրական են և զարգացողից: Նրանք  
քիչ թէ շատ մտածող մարդուն գե-  
ղեցիկ առիթներ են ներկայացնում  
կենդանական աշխարհի կենսական  
երեւոյթներին դիտակցաբար վերա-  
բերելու, նրանց մէջ իւր սեփական  
ներքին աշխարհի սաղմերը տեսնե-  
լու: Եւ ոչ միայն ալի՜ ալ և համո-  
ղելու, որ թէ և մեր հողեկան կեանքն  
ընդհանրապէս աւելի բարձր է կեն-  
դանականից, բայց և ալնպէս, նրանք  
ալնպիսի հրաշալի կարողութիւններ  
ունին, որոնց մասին մենք զարաւար-  
անդամ չենք կարող կազմել և որ ալի  
մեզ անհասկանալի երեւոյթները ա-  
ւելի մուծ «Բնագիտ. բառով ենք մի-  
ալն բացատրել: Օրինակ թնչպէս  
բացատրել ալի մուծ «նախազգա-  
ցումով» առանց կողմնացուցի ու  
աստղաբաշխական գիտութեան՝ մուծ  
գիշերնիքին հաղարաւոր վերստեր  
արագութեամբ կտրել, անցնել: Ներ-  
կալ գրքուկի կենսաբանական երև-  
ոյթներն ընդհանրապէս ժամանակա-  
կից մասնագիտական տեսութեանց  
համապատասխան են, սակաւն մնա-  
ցել են մի քանի մուծ կէտեր:

Վտանգի ժամանակ ձկների փախ-  
չելն ու աւազի կամ քարերի մէջ պահ-  
ւելալը բնազդով բացատրելը կար-  
ծում ենք թէ ուղիղ չէ. ձկների և  
ալդ առարկաների մէկ գոյնի լինելը  
չէ նրանց աչնտեղ պատասպարել ճշգ-  
տելու պատճառը:

Նթէ համոզիչ փաստեր կան վա-  
րենիների և մեր հոտառութեան  
տարբերութեան մասին, խօսք չո-  
նենք ասելու. սակայն ուղղակի ևն-  
թաղրական ենք համարում աչն կար-  
ծիքը, թէ մենք, կիսաքաղաքակիրթ  
ժողովրդներս, աւելի զարգացած հո-  
տառութիւն ունենք՝ քան Նւրոպա-  
ղիք: Օրինակ, մեր ժողովրդեան մե-  
ծամասնութեան զբաղմունքի հետ  
պառկել—եղնելը մի չարկի տակ, գո-  
նէ ալդ չէ ապացուցանում:

Գրքուկը ծալր ի ծալր կաղմւած  
է որոշ մեթոդով՝ նախ հետաքրքրում  
է որոշ երևութով, ապա՝ օրինակնե-  
րով պարզում է նրան ու վերջապէս  
ընդհանուր եզրակացութիւն հանում:  
Այս աչն ընթացքն է, որին հետևում  
են և պէտքէ հետևեն ոչ միայն ժո-  
ղովրդական զբաղանութեան աշխա-  
տանքները, ալ և ընդհանրապէս բո-  
լոր ընտիր հեղինակները:

Վեզակոն:

Ժամանակների համաժայնութիւն, «ճան-  
ճերն ու միջատները առանց դժա-  
րութեան նրան տեսնելով՝ պիտի  
փախչէին. նա չէր կարող (պէտք է՝  
«կարողանալ») աչնքան ճանճեր բըռ-  
նել, որքան նա կարող է (սիտի՝ «կա-  
րողանալ») բռնել սպիտակ ծաղկի  
մէջ» — Նթէ վերադառնալիս մի ու-  
րիշ արագիւլի զանէ իր բնի մէջ. կռիւ  
է բացում (եթէ գտնէ... կը բացի. և

ոչ՝ բացում է):

Շաղկապներ՝ «Ոչ թէ միայն սար-  
դերն են աչնպէս անում, ալ (և) շատ  
կենդանիներ (էջ 7). նոյնը 39 և 55  
էջերում:

Պատշաճ կիրարութիւններ չեն կա-  
րող համարել հետևեալները. «Շրջա-  
պատ (պէտքէ՝ ...ող) հանգամանք.  
(10, 12, 56). «Վիպաս (թուլ) բնառ-  
րութիւն» (15): — «դէն չպրտել սխալ  
ուղղութիւնը» (պէտք էր՝ հեռու կե-  
նալ, թողնել... (15) «պակաս հետա-  
քրքիր չէ (...«ական») ճնճողկների  
կենսքը» (էջ 17, 29, 44): — «Արա-  
գիլները մի հատիկ չեն» («մենակ  
կամ միայն արագիլները չեն» (էջ 38):  
— «Իրանցից բաց են թողնում հոտ  
(«հոտ հոտել») կարելի էր ասել, (40):  
— «Ինքն իրանց թողնեն հեռանան»  
(էջ 23, պէտքէր՝ «իրանք»...):

Թերի մնացած տեղեր «կան կեն-  
դանիներ, որոնք թշնամուց ազատ-  
ւելու համար իրանցից բաց են թող-  
նում... զգւելի հոտ. օրինակ՝ թախ-  
թարիթի (պէտքէր հալերէնն էլ դը-  
նել) մըջիւն և աչն. (պակաս են  
որոշիչ փոքրը (40): Նոյն էջ 9. «Աւ-  
ղեցինք ցոյց տալ, որ տեղին չարմար  
գոյն ունենալ (պէտք է՝ ունենալը)  
և հենց իւր գոյնին համեմատ տե-  
ղում բնակուել (բնակւելը) տարածւած  
բնական երևութ է: — ... առաջնոր-  
դում էր աչնպէս զգուշ ու հանդարտ,  
որ (պակաս է «թէն») ինձ արդէն  
բոլորովին մօտեցել էին, բայց ես ոչ  
մի ձալն ու ծպտուն չէի լսում (էջ  
51): «Նթէ» շաղկապը պակաս է էջ  
54 ի հետևեալ զարձաժի սկզբում.  
«Մէկը չի կարող ալս կամ աչն բանը  
անել, շտապում, դնում հասկացնում

է իւր ընկերներին և օգնութեան է կանչում: Այն ուրիշ ղեկավար, որ կարելի է զանց ստանել:

Դիտմամբ միշտ աւելի մանրամասն գրախօսեցինք այս գրքուկը, որովհետեւ նա մի ամբողջ սէրիալի սկզբնաւորութիւն է ներկայացնում: Մեր ցանկութիւնն էր այս համակրելի գործի ձեռնարկողները ուշադրութիւնը մի քանի կէտերի վրայ գրաւել: Արցանակալինք նաեւ խորհուրդ

տալ պ.պ. Զիլինկարեանին ու Ռաշմաճեանին աչնքան էլ չչտապել առաջին գրքուկներն իրար ետեից հրատարակելու: Աւելի նպատակաշարժար կը լինէր, կարծում ենք, առաջին վործը քննադատութեան բովից անցկացնելուց քիտոյ երկրորդին ձեռնարկել: Ուրեմն ցանկանում ենք մի քիչ համբերութիւն և շատ աջողութիւն:

Յ. Տ. Մ.

ՌՈՒԲԱԿԻՆ, Ն.—Ձրոյցներ բնութեան մեծ և անեղ երևոյթների մասին, 10 պատկերով, թարգմ. Մ. Տէր Անտրէասեանի. Հրատարակութիւն Թիֆլ. Հայոց Հր. Ընկ. Թիֆլիս, 1896, էջ 78, գինն է 15 կոպ.:

Ռուս ժողովրդական գրականութեան ասպարէզում ամենախոնարհուն գործիչներից մէկն է Ռուբակին, որ գիտէ իւր սիրելի ժողովրդի համար ընթերցանութեան նպատակաւոր բովանդակութեամբ ու ձևով նիւթեր մատակարարել:

Ներկայ գրքուկի բովանդակութիւնը կազմում են հետեւեալ հատուածները, որոնց վերնագիրները մի քիչ սղելով անա նշանակենք:

Խնչպիսի տեսիլքներ (միրաժներ) են լինում: Նրկնքի ցուրտը: Խնչպէս են մարդիկ երկինքը բարձրանում օդապարիկով: Թէ ինչու է միշտ ցուրտ լինում երկինքում: Քամիների առաջանալն ու նրանց տեսակները: Հրաբուխների մասին: Պոմպէ քաղաքի կործանումը: Խնչպէս են երբեմն տարեր ըսնում:

Խնչ կա երկրիս խորքերում: Նրկրաչարժ և հրաբուխների պատճառները: Խնչ շրջան է կատարում ջուրը: Որոտ, կաթմալ, ելեքտրական փալկամ լույս: Հրեղէն անձրև, լուսը մարդկանց վրա: Հիւսիսափալ: Նդրակացութիւն՝ օգի, ջրի ու հողի շրջանառութիւնը աշխարհիս ամենամեծ երևոյթն է:

Այս բոլոր հատուածների նիւթերը լաւ են ընտրած, հետաքրքրական ու պարզ են:

Պ. Տէր Անդրէասեանի թարգմանութիւնը լաւ է: Լեզուակաւ մի երկու անշան թերութիւնները զանց առնելով՝ աւելորդ չեմ համարում՝ աչատել էլ չիչել աչն բառերը, որ կարող էին ժողովրդին անհասկանալի կամ մութը մնալ: Մեր կարծիքն է, ի նկատի ունեցած ընթերցողների

բառերի աղքատիկ պաշարը հարստացնելու համար՝ անհասկանալիները, երբ հարկն ստիպէ, նոյն իսկ օտար բառերով էլ բացատրել: Ահա ալիք կարգի բառերը. եղեամ, ուղղութիւն, մշտնջենական, շրջանառութիւն, անխուսափելի, փոթորիկ,

տրամագիծ, ցալտեր, հոսանք, գոյանալ, փարոս, գոլորշի, լանջ, ժպիթքել, կոկո, հեղուկ, ստորերկրեայ, որոտ, հարւած, վիճել, թնդանօթ, արտացոլել, անդրադարձնել:

Յ. Տ. Մ.

ԿՈՒԶՆԵՅՈՎԱ, Ա.—Ձարմանալի որդ: Ռուս. թարգ. օր. Ն. Ղուլիջանեանց. Թիֆլիս 1896 թ. էջ 29, գինն է 10 կոսէկ:

Շերամի կերպարանափոխութեան (մէտամորֆոզների) վերաբերեալ նիւթն ինքն ընստինքեան շատ հետաքրքրական է և նրան աւելի էլ ուշագրաւ է դարձրել հեղինակը թեթեւ և հաճելի ձևերով: Պատկերներն էլ նպատակադարմար ու լաւ են: Միանգամայն ուշադրութեան արժանի գրքուկ է:

Օր. Ղուլիջանեանցի թարգմանութիւնն էլ, կարծում ենք, թէ բաւականին աջողած պէտք է համարել. դարձւածները զիւրասահ են ու պարզ:

Մի երկու բան. «Աչքի անցկացնել» (էջ. 7) հայերէն չի աւելւ. просмотръն պէտք է թարգմանել աչքէ անցնել. եթէ ոչ՝ միտքը կը փոխւի:

«Նրանց հետ արտասովոր բան պատահի» (էջ. 21). «հետ» խօսքը աւելորդ է:—Հետաքրքիր բան կը տեսնես (էջ. 15), պէտք էր՝ «հետաքրքրական»:—«Հինգ գոյգ, որոնք աւելի հաստ էին» (կարելի էր, և աւելի վաշելու է համարւում, որ դնել, քանի որ չարաբերեալը ներկայ է (էջ. 16):

Բացատրութեան կարօտ բառեր՝ զըննել, կատակ, վերնասրահ, կինամոնագոյն, արտասովոր, գործարան, ժապաւէն, թաւիշ, սոսինձ, ճախարակ, ոստան, շագանակ, զամբիւղ, եռանդ: Թէև հասարակ բառեր են սրանք, սակայն տարաբաղդաբար մեր փոքրահասակ ընթերցողներին հասկանալի չեն:

Յ. Տ. Մ.

ԱՆԴԵՐՍԷՆ, — Վալրի կարապետ, 1895 թ. Թիֆլ., 40 էջ, գինը 8 կ :  
ՌՈԳՈՎԱ, Օ. — Աշխէնն ու Մարգարիտը: Թարգմ. ռուս. 1896 թ.

Թիֆլիս, 46 էջ. գինը 10 կոպէկ:

ԱՆՆԵՆՍԿԱՅ, Ա. Ն. — Գոհարիկն ու Ասողիկը: Թարգմ. ռուս. 1897 թ.

Թիֆլիս. 60 էջ. գինը 10 կոպէկ:

«Նւէր մանուկներին» խորագրով 95 թ. ից սկսել են երեխաների ընթերցանութեան համար գրքուկներ լույս տեսնել, որոնց թիւն ալժամ վեցի է հասել: Այդ ձեռնարկութիւնը, որ դեռ նոր է սկսած, մի շատ համակարելի ձեռնարկութիւն է և խոստանում է ապագայում խիստ օգտակար դառնալ: Ինչ որ կալ առ ալժամ հրապարակի վրայ, մեզ լույս է ներշնչում և հաւատում ենք, որ ժամանակով գրքուկների ալդ շարքը կը կազմի մի լաւ և հարուստ երեխակաւ գրադարան: Առաջ գնալու և դարգանալու համար նոր սկսած գործը ամեն չարմարութիւն ունի: Գրքուկների լաւ ընտրութիւն, թարգմանութեան լաւ լեզու, որ, դրականապէս կարելի է չուսալ, (քանի որ անցածն ալդ է ցոյց տալիս) որքան գնալ աւելի ու աւելի կը մշակւի, խնամքով, չարմար տառերով և մաքուր տպագրութիւն, լաւ թուղթ և արժան գին: Վերջին հանգամանքն աւելի կշիռ ունի մեր աչքում աչն պատճառով, որ թէև լուսաւորութիւնը ամենքի համար է և տարածւելու ընդունակ բան է, բայց ենթարկւելով կեանքի ալ կարգի պալ մանաների ազդեցութեան, մի տեսակ արտօնութիւն է դարձել և ամենքին մասնակցի է: Ուր չի

կարելի տեղծել ձրի լուսաւորութիւն, պէտք է աշխատել տեղծել աժան լուսաւորութիւն. և ալդ ամենից առաջ աժան գրքերով: Կան ընտանիքներ, ուր ընթերցանութեան պահանջ կալ, մինչև անգամ խիստ պահանջ, բայց ուր գիրք չի մտնում:

Մինչև ալսոր հրատարակած են՝

1) Վալրի կարապետ (ուպառած):  
2) Առաջին վիշտը, 3) Անտառապահը, 4) Աշխէնն ու Մարգարիտը, 5) Աղքատի բաղդը և 6) Գոհարիկն ու Ասողիկը: Այս գրքուկներից երկուսի մասին («Առաջին վիշտը» և «Աղքատի բաղդը») գրախօսութիւն եղել է Մուրճում (1896, № № 2 և 9). մենք խօսելու ենք միւս երեք գրքուկների մասին:

«Վալրի կարապետը» «հէքիաթների անմահ տեղծողի» Անդերսէնի լաւ գործերից մէկն է: Մենք համոզւած ենք, որ ամեն մի երեխալ հիանալով և չափշտակութեամբ կը կարդալ ալդ սիրուն հէքիաթը, որը ոչ միալն երեխաների երեակալութիւնը կը վառի, ալ և պատանիներից կարող է լարել. փոքրիկների հոգին նա կը թուցնի գէպի վեր և սիրտը կը լցնի քաղցր տպաւորութիւններով: Ալդ հէքիաթը եղբոր և քրոջ փոխադարձ սիրոյ ջատագովում:

թիւն է: Բազմաթիւ և ծանր նեղու-  
թիւններ է կրում քուրճը, որ կարո-  
ղանալ իր եղբայրներին ազատել իր  
չար մօր կախարդանքից: Վերջինս,  
զարձրել էր նրանց աչնպիսի անխօս  
կարապետներ, որոնք միայն արևի  
մանեղուն պէս են մարդիկ դառնում  
և տարին մի անգամ միայն կարող  
են իրանց հալրենիքը տեսնել: Չար  
խորթ մայրը չի բաւականանում իր  
տղալ որդիներին կախարդելով, նա  
իր աղջկալ՝ Էլիզաւի նետ էլ նոյն  
կերպ է վարում՝ տղեղացնելով և  
տանից դուրս անելով: Բայց Աստ-  
ւած անմեղի նետ է. նա ոչ միայն  
լետ է ստանում իր հրաշալի գեղեցի-  
կութիւնը, այլ և գտնում է իր կա-  
րապետ-եղբայրներին և նրանց նետ,  
թարմ ոտներից հրաւած զամբիւղի  
մէջ նստած, որ տանում են կարապե-  
տներն իրանց կտուցներով, թռչում է  
այն երկիրը, ուր ապրում են իր եղ-  
բայրները: Եւ ինչ կախարդիչ և վե-  
րացնող տեսարաններ են նկարում  
Էլիզաւի առաջ ճանապարհորդելիս!  
Ո՛ր երևիւթիւն չեն դիւթիւ ալդ տե-  
սարանները! Ծակծկելով իր քնքույ  
ոտներն ու ձեռները, նա եղին-  
ջից շապիկներ է գործում իր եղբայր-  
ներին համար և ամբողջ աշխատանքի  
ընթացքում ոչ մի խօսք չի խօսում,  
որովհետեւ ալդ միակ միջոցով նա  
կարող է փրկել նրանց. նա գործում  
է մինչև անգամ այն ժամանակ, երբ  
նրան, որպէս կախարդի, տանում են  
խարոյկի վրա՝ ալրելու: Հէքիաթն,  
ըստ սովորութեան, հարսանիքով է  
վերջանում. Էլիզաւին առնում է այն  
երկրի թագաւորը:

Թարգմանութիւնը, որպէս առա-

ջին փորձ, թերութիւններ ունի:  
Մանկական գրքուկներ հրատարա-  
կողները պէտք է աշխատեն, որքան  
կարելի է, դժւար հասկանալի խօս-  
քեր քիչ գործածել և գործածելիս  
էլ՝ աչնպիսի տեղեր, ուր երևաւ  
նշտ կարող է հասկանալ կամ գլխի  
ընկնել նախադասութեան ընդհա-  
նուր մտքից: Խիստ հսկողութիւն  
ալդպիսի դէպքում թէն դժւար, բայց  
չստ օգտակար և նպատակաւորմար  
կը լինէր: Առաջին գրքուկը տպա-  
գրելուց չետու, համոզած լինելով,  
որ նրա գնողները մեծ մասը, կամ  
սոճազն կէսը երկրորդ գիրքն ևս  
կ'առնի, կարելի է առաջին գրքուկի  
մէջ գործածած դժւար հասկանալի  
խօսքերը արդէն փոքր ինչ աղատ  
գործածել. ըստ որում, առաջին  
գրքուկը կարգացած երևիւթիւն պալդ  
կամ բաւականաչափ պարզ հասկա-  
նում է ալդ խօսքերի նշանակու-  
թիւնը և սովոր է նրանց: Նոր գրք-  
քուկի մէջ նոր խօսքեր կարելի է  
դնել, դարձեալ չարմար տեղեր՝ նա-  
խադասութիւնների մէջ, որոնք նոյն  
մտաւոր պրոցեսով հաւանորէն կը  
իւրացւին: Մենք մեր առաջարկած  
միջոցը անպաւան չենք համարում,  
զույգէ կը գտնւի մէկը, որ աւելի  
լաւն ու գործնականը կ'առաջարկի.  
մենք ուզում ենք միայն ուշադրու-  
թիւն դրաւել դէպի ալդ հանգա-  
մանքը: Հարկաւոր է ուշադրութիւն  
դարձնել նաև նախադասութիւնների  
վրա, որ լաւ կազմած լինեն և կարճ.  
ինչ որ կարելի է աւելի պարզ ու  
մոտչելի ասել, պէտք է ալդպէս էլ  
ասի: Կրկնում ենք, թէ և ալդ անկը  
դժւար է, շատ և ուշադիր աշխա-

տանք է պահանջում, բայց կարելի է, անհրաժեշտ և օգտակար. չպիտի մոռանալ, որ մենք գործ ունենք աչն երեխաների հետ, որոնք մեր տեղը պիտի բռնեն և որոնց վրայ պէտք է, որքան կարելի է, լաւ խնամք տանել: Շատ անգամ թարգմանիչները մեր լեզվի պարզութիւնն ու դիւրամատչելիութիւնը զոհում են ոչ թէ բնագրի մտքին (ալդ էլի մի կերպ կարելի էր տանել), այլ արտապատութիւններին: Մանկական գրքերում մանաւանդ՝ ալդ դատապարտելի է. ոչ ոք չի պահանջում, որ մանկական գիրքը ամեն բանով ստրկական նմանութիւն լինի բնագրին (ալդ չի կարելի պահանջել նոյն իսկ որ և թարգմանութիւնից առհասարակ). միտքը օտարինը՝ և անփոփոխ, իսկ արտապատութիւնները մերը պիտի լինեն և ըստ չարմարութեան գործ ածեն: Օրինակ, «Ալալի կարապներում» կարդում ենք. «Աստուած ստեղծել է վալրենի խնձորենիները, որ սովածները չագեցնեն նոցա պտուղներով իրանց քաղցը» (էջ 11), ալդ դժուարին տողերի տեղ կարելի էր դնել. Աստուած ստեղծել է վալրի խնձորները, որ քաղցածներն ուտեն կշտանան: Նոյն միտքն է, բայց աւելի մատչելի ձևով արտապատած: Մի ալլ տեղ՝ «Ծովի ափում կատարեալ ամառութիւն էր տիրում» (էջ 14): Կարելի էր ասել՝ ոչ մի մարդ չկար՝ կամ մի ալդպիսի բան: Եւ ալլն. Ահա մի երկու վատ կազմած նախադասութիւններ. «Արեգակի ճառագայթները խաղում էին ճիւղերի վրայ, կարծես ոսկեալ ցանց լինէր փռած»: (էջ 10) Կամ թէ՛

«Էլիզան նախելով եղբոր վրայ, գոհունակութեամբ ժպտաց, ճանաչելով նրան. սա ինքն էր թռչողը, նրան իւր թևերով արևից պաշտպանողը»: Դժար հասկանալի խօսքեր չատկան. անդրադառնալ, մենաւոր, փոկ (որ երեխան կ'իմանայ, որ ձուկն է), կառուցած, մուտք գործել և ալլն: Աւելացնենք նաև որ էջ 23-ում դրւած Փատի-Մորգան երեւութի բացատրութիւնը, աչնպիսի բացատրութիւն է, որ ոչինչ չէ բացատրում երեխային. լաւ կը լինէր ալդ կտորը մի կերպ չարմարացնել: Մի կողմ թողնելով՝ որ երեխան չի հասկանալ, ինքն ըստ ինքեան էլ Փիլիքալի ОПТИКА մասը չի կարելի «լուսաբանութիւն» խօսքով թարգմանել. ալդ խօսքը մեր լեզուում ալ նշանակութիւն ունի:

Մենք երկար կանգ առանք «Ալալի կարապներին» մասին խօսելիս, նախ որ առաջին գրքովն է «Եւէր մանուկներին» անուն կրող շարքի, և ամենավերջինի հետ համեմատելիս ցոյց է տալ' ս աչն խրախուսանքի արժանի չառաջադիմութիւնը, որ եղել է, և երկրորդ՝ քանի որ սպառած է և գուցէ երկրորդ անգամ տպագրւի, ուստի, լաւ կը լինէր. որ ուշադրութիւն դարձնէր աչն պակասութիւնների վրայ, որոնց մենք մատնացողք արինք:

Հետեւալ երկու գրքովները հէքիաթներ չեն, ալ մանկական փոքրիկ պատմութիւններ իրական բովանդակութեամբ: Ինչպէս երեւում է, գրքովներն հրատարակութեան գործը չեսագալում հաւանօրէն ալդ ուղղութիւնով էլ առաջ կը գնայ: Այս-

պիստով մենք կ'ոչնենանք մի քանի տարիների ընթացքում 10—13 տարեկան երեխաների ընթերցանութեան համար ըստամենաչնի լաւ և առատ նիւթ:

«Աշխէնն ու Մարգարիտը» գրքով կի հիմնական նպատակն է ընթերցողներին մէջ համակրանք դարձնել ղէպի աղնիւ, աղքատ և աշխատաւոր ընտանիքների երեխաները. «հարուստները թող չխորչեն աղքատներին», կարծէք ասում է գրքով կի հեղինակը: Աշխէնը խաղալիքներ չինող աղքատ կնոջ աղջիկ է, որ օգնում է իր մօրը և ստիպւած է ամբողջ օրը տանը նստած աշխատել, միջոց չունենալով դուրս գալ, խաղալ, զբօսել. ալդ բանին նա արժանանում է ուշ-ուշ, ալն էլ իրանց բակում, ուր նրան ծագրում են շարունակ: Մի խօսքով, խեղճ աղջիկը դեռ մանուկ օրերից ստիպւած է, մօր հետ քաղցից չմեռնելու համար, զրկանքների և նեղութեան սովորել: Նա պատահմամբ ծանօթանում է նոյն բակում ապրող մի հարուստի աղջկա՝ Մարգարիտի հետ, որ մի բարի աղջիկ է և լաւ ընտանիքի զաւակ: Զատկի մօտերը, մօր հետ խաղալիքների վաճառելու ժամանակ, Աշխէնը մրտում է և հիւանդանում: Անակարագրելի է մօր դրութիւնը. իր միտուծարը, իր աչքի լուսն ու միակ օգնականը հիւանդ է քուժէջով! Փող չկալ, կերակուր չկալ, բժիշկ չկալ. աղքատի համար ամեն մի բժիշկ ժամանակ չունի: Օգնութեան է հասնում Մարիամը. վազում է իրանց բժշկի մօտ, որ մի քարի մարդ է՝ դուրս գալիս, և բե-

րում Աշխէնին տուն. անհրաժեշտ դեղորայքն էլ ճարւում է: Բանից երևում է, որ Մարիամի մաչքն էլ աչքան բարի կին է, որ ոչ միայն թուլ է տալիս իր աղջկան Աշխէնին խնամել, ալ և հիւանդի համար կերակուր և անհրաժեշտ սնունդ է ուղարկում: Մարդու հոգին հանգստանում է ալդ անմեղութեան աշխարհում! Պատուածքի վերջակէտը Աշխէնի առողջանալն է:

Էլ ինչ խօսք, որ գրւածքը բաւականին թանձր լաւատեսական չղարչ է կրում: Շատերն ասում են, որ երեխաների առաջ պէտք է դնել իրական կեանքն իր մերկութեամբ. աւելի սխալ միտք չի կարելի երեւակալել: Երեխաները միշտ հակառակ են ղէպի բարին, նրանք հաւատում են բարութեան, սիրում են բարին: Ալդ հաւատը զօրեղանում, լալնանում և խորանում է մինչև կեանքի չէմքը կոխելը. ալդ տեղ են առաջին անգամ ընդհարում մարդու հոգու ներքին ներդաշնակ դեղեցիկութիւնը և խկական կեանքի զիւն ու կեղտը: Հարկաւոր չէ ալդ հաւատը հինց մանուկ օրերից սպանել. ընդհակառակն՝ ամրացնել է հարկաւոր: Միւս կողմից անհրաժեշտ է, որ կեանքը խիստ լաւ չցուցարի. պէտք է որոշ ներդաշնակութիւն պահպանել լաւի և վատի մէջ:

Այս գրքովում էլ կան մի երկու դժւարամարս խօսքեր՝ վալլարէ լուսամուտ, տաղաւար. և երկու վտք ինչ վատ կազմաճ նախադասութիւն. «Ոա էլ (բժիշկը) ասաց որ միայն երեկոյեան կարող է ալցելել, որովհետև հիւանդանոցում օրասպառու-

թեան հերթը նրանն է»։ Պիտի լի-  
նէր. իրանն է։ Այդ ժամանակ Մար-  
գարիտը հանեց մի վաճառի՝ մոխրա-  
գույն մշահաւ մէջը»։ Իտի լինէր,  
մէջը մոխրագույն մշահաւ։ Արիւք  
չկար չիչեւտ, որ Աշխէնի հալը ի-  
տաւացի էր, ալի խօսքը կարելի էր  
ուղղակի դէն ձգել։

«Գոհարիկն ու Ասողիկը» սերիա-  
լի վերջին հրատարակութիւնն է, որ  
նոր է լուս տեսել։ Այս գրքովը չի  
կարելի 12 տարեկանից փոքր երե-  
խայի ձեռքը տալ. արտապատու-  
թիւններ կան, որ փոքր երեխան չի  
կարող հասկանալ. նիւթն էլ փոքր  
ինչ պատրաստութիւն է պահանջում,  
չակադրած են երկու աղջիկ. մէկը,  
ալսպէս ասած, անմիջական արա-  
րած է, բնութեան զաւակ. միւրը՝  
ընտանեկան հոգատար կրթութեան  
արդիւնք. սակայն ոչ աջալիսի կըր-  
թութեան, որ մարդ է պատրաս-  
տում «ինչ մարդուն պիտի», ալ որը  
կատարում է «ըստ կանոնաց» և  
երկխալին ոչ թէ զատարարում է,  
ալ վարմեցնում է որոշ ձեռք իրան  
պահելու, որի համար ոչ աջալիսի  
թանկ է լինելը, որքան երեխան. ալ  
կրթութիւնը երեխայի ներքինը՝ հո-  
գին չի արդատաւորում, ազնւաց-  
նում, ալ արտաքինը։ Այդպիսի հե-  
տեանքներ է տալիս առհասարակ  
կամ «ըստ բացալի» կրթութիւնը,  
կամ դատարարակութեան մասին  
գլխիվար հասկացողութիւն ունե-  
նալը։ Ասողիկը չարգում է մեծե-  
րին, լսում է նրանց ամեն մի խօսքը,  
սեղիք չի տալիս ոչ մի դժգոհու-  
թեան, խիստ կարգապահ է և դէպի  
ուրիշների վիճակը խիստ... անտար-

բեր։ «Ծանր ծով» է, սառն, խոր  
զգացմունքների անընդունակ։ Գիւղն  
ալում է, մարդիկ զուրմ են մնա-  
ցել, սուգն ու չիւանը տիրել է գիւ-  
ղադիրներին, ունեցած կերակուրն ու  
պաշարը փչացել է. խի Ասողիկը  
դժգոհ է, որ ալի օրը զրօսանքի ե-  
կան ալումը գիւղը։ «Նիւթ ուրիշ ան-  
գամ գալինք, ասում է նա Գոհա-  
րիկին. ուրախ ժամանակ կ'անցկաց-  
նէինք, խի ալսօր բաւականութեան  
փոխարէն միայն անախորձ դէպքերի  
հանդիպելինք»։ Այդպէս չէ Գոհա-  
րիկը. նա անկարգ է, չար է, բա-  
րեկիրթ ձեւեր չունի. բալց նրան սի-  
րում են ծառաները, աղախիները,  
գիւղացիք։ Հրդէն ժամանակ Գո-  
հարիկը օգնում է գիւղացիներին  
մինչդեռ Ասողիկը «հաստ շալը վրան  
ձգած» կանգնած է պատմողի՝ իր  
ազգականուհու մօտ, որը պահում է  
գիւղացիներին երեխաներին։ Գոհա-  
րիկը չի քնում՝ մինչև որ իր ազ-  
գականից չի ստանում գիւղացիներ-  
ին օգնելու համար նշանակած գու-  
մարը. իր երկու ռուբլի մի քանի  
կոպէկն էլ վրան է դնում և միւս  
օրը շատ վաղ, անձրևի և ցիւլի մէջ,  
մի գիւղացի երեխայի հետ, սալով  
չտապում է ալում գիւղը բնակիչ-  
ներին օգնութիւնը բաժանելու հա-  
մար. նա իր հետ տանում է նաև  
բրինձ, կտաւ... Գոհարիկն ամեն տեղ  
պատրաստ է պաշտպանել խեղճին,  
թշուաին, աղքատին. չեղինակը  
այս երկու հակադիր աղջիկներից  
կարծէք մի տեսակ սինտէզ է արել,  
պատմող կնոջ անձնաւորութեան  
մէջ, որը ոչ լրիւ աջն է և ոչ լրիւ  
ձախը ալ երկուսի միացումն է։ Մենք

ոչինչ չունենք, որպէս նմանելու արժանի օրինակ դրած ալդ անձնաւորութեան դէմ. լաւ կ'ին է, բարի կ'ին է: Բալց եթէ մէկը մեզ առաջարկելու լինէր կոմպրոմիս անել ալդ երկու աղջիկներէ բնաւորութեան մէջ, մենք Գոհարիկի բնաւորութեան գծերից շատ քչերը դուրս կը ձգէինք, նրանց տեղ Աստղիկի բնաւորութիւնից մի քանի բան առնելու համար. բալց հիմնականը, էականը ոչ մի կերպ չէինք զիջիլ, որովհետեւ խիստ կարգապահութիւնն ու կանօնաւորութիւնը բուն զգացմունքների և սրտի լաւագոյն ու թանկագին չափութիւնների հետ մի տոպրակում չեն պարտակւի. դրանք շատ քիչ են իրար ձգում:

Փոքրիկ ընթերցողների համար հեղինակը բացատրում է ալդ երկու աղջիկների զանազանութիւնը: «Ջարմանալի բան, ասում է նա պատմող կնոջ բերանով. ալդ աղջիկներից մէկին մենք միշտ գտնում էինք, ամբողջ ամառը ոչ մի անգամ հարկ չէ եղել նրան ցանդիմանել, բալց և աջնպէս մենք սառն էինք վերաբերում դէպի նրան (նա). նա մեզ օտար էր թւում (,) և մենք ոչ մի ան-

գամ ցանկութիւն չզգացինք դարձեալ շուտով տեսնել նրա հետ: Միւսը՝ ընդհակառակը, շատ անգամ գրգռում էր մեզ և ստիպում խիստ նկատողութիւն անել իրան, բալց և աջնպէս մենք զգում էինք, որ նա մօտիկ է մեր սրտին, թանկ է մեզ համար և նրա բացակայութիւնը ոչ մի բանով չէ կարելի փոխարինել: Ինչո՞վ բացատրել աչաւ Արդիօք նրանով, որ մէկի հաճույական արտաքինը ծածկում էր նրա՝ դէպի շրջապատողներն ունեցած անտարբերութիւնը, իսկ միւսը՝ չնակելով իւր ունեցած բոլոր մանկական թերութիւններին, անկեղծ էր, ուղղամիտ և ուրիշի ցաւերին սրտանց կարեկցում էր»: Երկու աղջիկներին դրանից աւելի լաւ բնորոշել չէր կարելի:

Անկասկած է, որ իր երեխաների մասին մտածող ամեն մի մալրկամ հալր կ'աշխատի ձեռք բերել վեց զրքոյկն էլ, մանաւանդ որ ալդ նրան շատ աժան կը նստի:

Համակրելի գործին ցանկանում ենք կատարեալ չափողութիւն!

Ն. Աղբալեան:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռեֆորմները: — Դրուժիւնը գաւառներում: — Օգնութիւններ Հայ փոխտաէաններ: — Բանտարկեալները եւ ընդհանուր ներումը:

### Ռեֆորմները

Անցեալ անգամ յայտնել էինք, որ մեծ պետութիւնների դեսպանները Կ. Պոլսում մշակել էին ռեֆորմների մի նոր ծրագիր, որ պիտի ուղարկէր իրենց կառավարութիւններին ի հաստատութիւն: Ծրագիրը մինչև հաստատութիւն ստանալը պիտի գաղտնի պահէր Բ. Դռնից: Այդ ծրագրի առաքումը պետութիւններին կատարեց փետրուարի 11-ին: Նորա բովանդակութիւնը ճշտապէս յայտնի չէ, և որովհետև երևի շուտով այդ կ'իմացուի, ուստի աւելորդ ենք համարում ծրագրի մասին եղած ոչ-պաշտօնական լուրերը վերարտադրել այստեղ: Մարտի միջերբին սպասւում էր որ ծրագիրը Բ. Դռան կը ներկայացուի:

Գլադստոնը այնքան քիչ յոյսեր է դնում եւրոպական կոնցերտի վրայ, որ մի նոր գրութեան մէջ, ուղղւած դուքս Ուէստմինստրին, խորհուրդ է տալիս որ Անգլիան դուրս գայ այդ կոնցերտից և գործէ առանձին: Անգլիական թերթերը, սակայն, հաւանութիւն չեն տալիս Գլադստոնի այդ խորհրդին:

Թիւրքական ռեֆորմները, Kölnische Zeitung'ի Պոլսի թղթացի վկայութեամբ, մինչև այժմ ոչ մի ազդեցութիւն չեն գործել ժողովրդի դրութեան վրայ: Նահանգապետների քրիստոնէայ օգնականները որ և է ազդեցութիւն չունին կառավարութեան կարգադրութիւնների վրայ և կատարում են միայն նահանգապետների քարտուղարի դեր: Ժամնաւարմիայի մէջ ընդունւած հայերին տւել են հին Վին-

չեսարի հրացաններ անպէտք փամփուշտներով, մինչդեռ թիւրք ժանդարմները զինաւորւած են մարտինի սիստեմի նոր հրացաններով... Մառաշու թեան մէջ ընդունւած քրիստոնեաները մեծ մասամբ վատթար են թիւրքերից, և հայերը վերաբերուում են դէպի նոցա մեծ անվստահութեամբ և թշնամաբար:

Նոր տոմարով փետրւարի սկզբին Պարիզում Ֆրանսիական Ազգեմիացի անդամ Ալբեր Վանդալ, նախադահուլթեամբ կոմս դը Մէօնի, աջակցութեամբ հայր Շարմըտանի և ներկայութեամբ մօտ 500 հոգու, որոնց մէջ մի շարք կարեւոր անձեր, բանախօսութիւն արաւ, ուր թիւրքիայում մոցնելու ռեֆորմների զանազան սիստեմները քննելուց յետոյ, այն միտքը յայտնեց, թէ պէտք է տեղական ռեֆորմներ մոցնել նախ Հայաստանում, ապա Մակեդոնիայում, մնացեալը ինքն իրան կը գաջ: Թող Եւրոպան կատարէ իւր պարտքը և վտանգի առաջը առնւած կը լինի:

Հայոց Պատրիարքարանը (պատրիարք Ռմանեանի զխաւոր խորհրդատուն է Արթին փաշա Տատեան) զիմաժ էր Բ. Դրան 12 կէտերից բաղկացած մի գրութեամբ, որի պատասխանը տպւեց Լոնդոնի Թայմս լրագրում. պատասխանը այնպէս է, որ միևնոյնն է թէ Բ. Դուռը բանի տեղ չի դնում պատրիարքարանի պահանջները, որոնք են. 1) Մի կամ երկու տարով զինւորական տուրքից ազատ թողնել հայերին: Դուռը պատասխանել է թէ նա հանգստեան իշխանութիւններին այդ սասին կը գրէի, տեղական ժողովները (մէջլիսը իդարէ) կը քննեն և եթէ պէտք տեսնուի՝ կը հաղորդէի տեղական կառավարութեան և նա էլ դորա համեմատ կը վարէի: 2) Տասանորդներով պետական շտեմարանները լեցւած արմըտիքից փոխ տալ հայ ժողովրդին: Պատասխան—կը գրէի և, եթէ կայ, սերմացուի համար փոխ կը տրէի: 3) Երկրագործական դրամատունները աժան տոկոսով փախաւուութիւն անեն: Պատասխան. արդէն անում են. կը գրէի որ երաշխաւորութիւններ առնելով՝ աւելի ընդարձակօրէն անեն: 4) Կրթական տուրքից հայոց բաժինը զրկել առաջնորդարաններին: Պատասխան. հայոց դպրոցները թիւրքերէն լեզւի ուսուցիչներ պիտի զրկեն և ամսականը կառավարութիւնը պիտի վճարէ: 5) Հայերը ընդունեն կառավարական վարժարանների մէջ: Պատասխան. երբ յարմար ժամանակը գաջ—իմաց

կը տրւի: 6) Յոգոստոս 14/26-ի դէպքերից յետոյ արձակւած հաջ պաշտօնեաները նորից ընդունեն զանազան (շողենաւային և այլ) ընկերութիւնների մէջ: Պատասխան. կառավարութիւնը այդ վարչութիւնների մէջ չի խառնուում. եթէ նոքա նորից ընդունելու գեն—առարկութիւն չկայ: 7) Հայերից խլւած հողերը նորից վերադարձեն իրենց տէրերին: Պատասխան. արդէն ժամանակին թափու եղած՝ այդ խնդիրները կարգադրւած են: 8) Տառապեալ հայերին օգնելու համար հանգանակութիւն անել և այդ նպատակով յանձնաժողով կազմել: Պատասխան. արդէն վսեմաշուք Հազգը փաշայի նախագահութեամբ մի յանձնաժողով կայ, և եթէ պատրիարքարանը կ'ուզէ՝ կարող է երկու մարդ զրկել այդ յանձնաժողովին. այդ յանձնախմբին կառավարութիւնը 2.000 ոսկի պիտի յանձնի հայերի մէջ բաժանելու համար: 9) Հայ պաշտօնեաներ նշանակւեն և ոստիկան-զինւորների մէջ հայեր առնեն: Պատասխան. արդէն նշանակւած են, ինչո՞ւ պատրիարքարանը նոր խնդիրներ է ուզում յարուցանել. իսկ ոստիկան-զինւորների համար թող ուզողը արձանագրւի: 10) Թիւրք թերթերին հրաման տրւի հայերի մասին այլ ևս թշնամական լեզուով չգրել: Պատասխան. լրագիրները ճիշդ իրողութիւններն են արձանագրել, դէպքերի համաձայն լեզու են գործածած. բայց և այնպէս զրաքննութիւնը պիտի նայի: 11) Եկեղեցական առանձնաշնորհումները յարգւեն, և յանցաւոր եկեղեցականները պատրիարքարանի միջոցով պատժեն. նաև լրտեսական դրութեանը վերջ դրի: Պատասխան. օրէնքը պիտի գործադրւի, և օրէնքի համաձայն պիտի պատժեն ամեն կարգի յանցաւորները. ոստիկանութիւնը ազատ է ուզածի պէս գործելու: 12) Իսլամական կրօնը ընդունող հայերը ազատութիւն ունենան վերստին քրիստոնէութեան դառնալու: Պատասխան. Թիւրքիայի մէջ կրօնական ազատութիւնը կատարեալ է. ամեն մարդ ուզած կ'օնը կարող է դառննել, ուրեմն ի՞նչ հարկ նոր հրամանի:

Կ. Պոլսի հայոց պատրիարքը զիմէ և բոլոր առաջն ղրկներին շրջաբերականով որ Կ. Պոլսից զաւառները քշւած հայերի մասին ամենաճիշդ անդեկութիւններ տրւեն, որպէս զի պատրիարքարանի կազմած տարազընլոց յանձնաժողովը կարողանայ սոռուգե

նոցա իրաւունքները Կ. Պոլսում թողած գոյքերի վրայ և նոցա մուրհակով կամ անմուրհակ սահանջները:

Դրուժինը գաւառներում

Պալու քաղաքը և շրջակայ 43 գիւղերը (Փոքր Սախա), դոքտոր Գէտսի տւած տեղեկութիւններով, շատ անմխիթար վիճակի մէջ են, քիւրդերի և աղաների ճնշումի պատճառով. հայերը այդտեղ կենդանի են մնացել միայն եւրոպական նպաստող ֆոնդերի շնորհիւ. մի գիւղում, որ բաղկացած էր 200 տնից, 170 հիւանդ կար, մի այլ գիւղում 280 տնից՝ 250 հիւանդ. կոտորածի ժամանակ մեռել են 400 հոգի. մարդիկ հիւանդ են, բայց մեռնում են գլխաւորապէս քաղցից. մեր բարեկամները, ասում է դոքտ. Գէտս, աշխատում են օգնել հացով, հագուստեղէնով, անկողնով: Բրօունը հաղորդում է թէ ռզիւզացիք ապրում են խմբւած, կենդանիների պէս. անկողին չունին, շատերը հիւանդ պառկած են ու մեռնում են խոնաւ գետնի վրայ. բաղդաւոր են զգում երբ յարդ են գտնում, որ վրան պառկեն. յարդ և ծածկոց ունեցողները նախանձ են շարժում. հեռաւոր գիւղերից կանաչք գալիս են մեզնից օգնութիւն խնդրելու, մի քանի պիաստր ստանալու և որքան շնորհակալութիւններ են անում դորա համար:

Որքանի թիւը շատ մեծ պէտք է լինի Փոքր-Սախայում: Նոցա համար ամերիկացիք և անգլիացիք որբանոցներ են հիմնում: Ուրֆայում, օրիորդ Չեմբերսի գրելով, իրենք ունին որբանոց 107 մանուկներով (50 տղայ, 57 աղջիկ), բերւած Սեւերեկից և Աղա-եամանից. բերելու էին նաև Բիրեջիկից. նոր շինութիւն է կառուցւած: Միսիոնարական դպրոցները լի են. 15 դպրոց ունին՝ 21 ուսուցիչներով և 1.500 աշակերտողներով. դպրոցները վերաբացւել են տիկին Ռենդէլ Հարրիսի շնորհիւ. որբանոցը կոչւում է Հարրիսի տուն: Մալաթիայում, տեղական պաստորի գրելով, 2000—2500 որբ մանուկներ և աչրի կանաչք կան. այդտեղ 25 որբեր խնամւում են նոյն տիկին Հարրիսի միջոցներով, որը իւր վրայ է առել 70 որբեր հինգ տարի խնամելու, մասամբ Ալնում, մասամբ Մալաթիայում: Եւրոպացիները բողոքական միսիոնարները բացել են երկու որբանոց ամենաչքաւոր և անտէր որբերի համար. յոյս ունին բանալ

երրորդ որբանոցը, և մի չորրորդն էլ Մեզերէ՛հում: տեղեկու-  
թիւններ են հաւաքում գիւղերում եղած հայ կարօտ որբերի թւի  
մասին: Այդ տեղեկութիւնը տալիս է Ճերունի քարոզիչ Բարնըմ:  
Արաքկերում, այդտեղի պատուրի գրեւովը, կան մօտ 1700 որբեր,  
683 այրի կանայք, որոնցից 368-ը չքաւոր. բոլոր կարօտեալ-  
ների թիւն է 3000:

Եսարընըղի վիճակի 73 գիւղերում, ըստ վկայութեան պրոֆ.  
Հարրիսի, կողոպտւած են 6.023 տուն, որոնցից այրւած 1861 տուն:

Վանի անգլիական հիւպատոսը Պարսկաստանի Խոյ նահանգն  
է ուղարկել միսիոնար Ալէն՛ին եզներ և գոմէշներ գնելու, որոնք  
պիտի տրւեն Վասպուրականի հայ գիւղացիներին:

Անգլիական փոխ-հիւպատոսը Վանում՝ Ուիլիամ, որը թըր-  
քասէր դիրք էր բռնած, ետ է կոչւել, և տեղը նշանակել է ին-  
ժենէրների կապիտան Էլիոտ:

Բոլոր հայ կարօտեալների թիւը, Manchester Guardian  
անգլիական լրագրի մի յօդւածում, յայտնւած է 400.000 հոգի.  
այդ թիւը հիմնւած է զուքս Արգայլի և Գլադստոնի ընդուած  
թւերի վրայ. և տիկին Ռենդել Հարրիս, որ հերոսաբար անցաւ  
Փոքր-Ասիայի զանազան կողմերը, այցելելով Այնթապ, Ուրֆա, Դիար-  
բեքիր, Խարբեդդ, Ակն և ուրիշ տեղեր, հաշւում է, որ միմիայն հացի  
համար ամեն մէկին օրական մի պեննի է հարկաւոր. որով վեց ամսւայ  
համար կը հարկաւորւի 303.333 ֆունտ ստերլինգ (3 միլ. ուոլբլի),  
որի համար և յիշեալ թերթը յորդորում է, որ անյապաղ հաւաքւի  
և ուղարկւի: Միւս կողմից Դէյլի Նիւսը հաղորդեց, որ (մինչև  
փետրւարի սկզբները) անգլիական նպաստող ֆոնդը հաւաքել է  
մեր փողով մօտ 650.000 ուոլբլի:

Դիարբեքիրում, անգլիական դեսպան սըր Ֆիլիպ Կերրի՛ի հե-  
ռագրի համեմատ, որ նա ուղարկել է լորդ Սալիսբիւրի՛ին, իւր  
ստացած տեղեկութիւնների համաձայն, 30.000 հայ մեծ կարօտու-  
թեան մէջ են և եթէ չկերակուեն՝ պէտք է քաղցից մեռնեն.  
Դիարբեքիրի փոխ-հիւպատոսը Կերի՛ին հեռագրել է, որ Դիարբեքիրի  
շրջանի համար հարկաւոր է 6000 ֆունտ ստերլինգ (60.000 ու.),  
Սղերդի համար 3000 ֆունտ, Մարտինի համար 2.200 ֆունտ,  
ընդամենը 11.200 ֆունտ (մօտ 110.000 ուոլբլի):

Դիարքեքիրը կոտորածից յետոյ քարուքանդ է եղած. վերը յիշւած Ռենդել Հարրիս, (անգլիացի), որը իւր կնոջ հետ կոտորածներից յետոյ ճամբորդեց Փոքր-Ասիա, հետեւեալ թւերն է տալիս իւր հրատարակած գրքում. Դիարքեքիրից հիւսիս, դէպի Արաբկեր, ամալացել են 150 գիւղ. Պալուլի վիճակի 43 գիւղերում կոյոսպուած են 2059 տուն, որոնցից 755 տուն այրւած են, 44 եկեղեցի աւերւած, 16 հոգեւորական սպանւած:

Վասպուրականում գրութիւնը քննում է թշուառ ու ողբալի: Թայմի՛ի ստեղծ՝ հայերի թափուր թողած պողատու հողերը գրաւել են քիւրդերը: Դրութիւնը վատթարացաւ տիֆի համաճարակով. Կ. Պոլսի թերթերի ասածով՝ Վանում տիֆից օրական մեռնում էին 30 հոգի, բժիշկ և դեղեր չլինելու պատճառով. ծովեզրեայ Աւանց գիւղը մի ամսում տւաւ 300 զոհ, Անգղ գիւղը 70, Ճանիկ գիւղը 35, Երերին գիւղը 30 հոգի և այլն: Յունւարի միջերեքից հայերի մէջ տիֆը սկսեց նւազել և հերթը հասաւ թիւրքերին, որոնցից օրական 50—60 հոգի զոհ էր գնում:

Ազգային գործերը Վանում ամենաանմխիթարական են: Դեռ ևս՝ երբ Վանում կուսակալ էր արիւնդուշտ Բահրի փաշան, դէս Վանի երեսփոխանական ժողովին արգելեց գումարել. նա միայն մի անգամ թոյլտուութիւն ստացաւ գումարելու յատուկ նպատակով որ պատրիարքական փոխանորդ Սահակ վարդապետի տեղ, որը Իզմիրլեանի վստահութիւնն էր վայելում, առաջնորդ ընտրել կառավարութեանը հաճելի Պօղոս եպիսկոպոսը. իսկ չյաջողեց, իսկ Պօղոսը կոտորածի ժամանակ սպանւեց: Կոտորածի ժամանակ Վանում Սէատեղին փաշան էր, որ աշխատեց հեռացնել Սահակ վարդապետին, և յաջողեց. և Սահակ տիրպաւ եղաւ առաջնորդական գործերը յանձնել Արսէն վարդապետին, որը Աղթամարի Խաչատուր կաթողիկոսի մահից յետոյ և նրան իսկ ցանկութեամբ՝ Աղթամարի կաթողիկոսական տեղապահն էր Այդալիսով Արսէն վարդապետը երկու կարեւոր պաշտօնների տէր դարձաւ: Նորա հեղինակութիւնը իբր Վանի առաջնորդի՝ միանգամայն չքացած է: Այս զարհուրելի աղէտների ժամանակ առաջնորդական փոխանորդ Արսէն վարդապետին ոչ գիմող կայ և ոչ էլ նա է մտածում գործ կատարելու: Հայոց դպրոցներից, Վանի թեմում

միայն երկուսն են բաց: Իսկ Աղթամարի հանգուցեալ Խաչատուր Կաթողիկոսի կտակած 1.200 ոսկին, որով պէտք է Աղթամարի մէջ թեմական դպրանոց բացւէր և որը Իզմիրլեանի պատուէրով Վանի առաջնորդարանի սնդուկումն էր պահուում, այժմ Արսէն վարդապետի ձեռքումն է:

Ալնի կոտորածից յետոյ որք մնացած կանայք, մօտ 400 հոգի, Երզնկայի վրայով ուղեցին դէպի Կարին ու Տրապիզոն երթալ, բայց կառավարութիւնը թոյլ չտաւ Երզնկա մօտնէ և նոցա վերադարձրեց, ուստի եկել էին:

Վանում եւ զաւառում տնցեալ տարւայ յունիսի 15-ին և 25-ին եղած կոտորածների թիւը հաշււած է 25.000 հոգի, ըստ մի նամակի որ գրւած է Վանից և տպւած հայր Շարմլտանի L'Oeuvre d'Orient հրատարակութեան 1897 թ. յունւար-փետրւարի տետրի մէջ. Վան քաղաքի 34 քրիստոնեայ թաղերից 31-ը կատարելապէս քանդւած և աւերակ են դարձրած, մօտ 5000 հոգի սպանւել են կամ այրւել հրդեհների մէջ. Վանի դաշտում եղած հայ գիւղերից նորա ասելով, այլ ևս ոչինչ չի մնում:

Խարընքը, ինչպէս գրել է անգլիական Ֆոնդի քարտուղարը կանոնիկոս Ռաուենսլիին, վիճակը ամենավատթարն է. այդ վիլայէթում կործանւած են 138 գիւղեր և քաղաքներ, այրւած են 5.064 տուն, սպանւած են 12.708 անձ, բացի անյայտ մնացածներից:

Մուշի կողմերը թրքացումը շարունակուում է շէյխերի ձեռքով և սպառնալիքներով. միայն Կինճ գաւառում 18 հայ գիւղեր իսլամութեան մէջ են պահուում:

Մուշում թրքացած կանանցից ու աղջիկներից ոմանք կամեցել են նորից հայոց եկեղեցու գիրկը դառնալ, բայց կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք առաւ և առայժմ նոցա մտադրութիւնը չիրագործւեց:

Սակայն, ինչպէս երևում է, մահմեդականացած հայերի կրկին հայոց եկեղեցու գիրկը վերադառնալը հնարաւոր է նաև ներկայ պարագաներում. դոնէ Նիքսարից (Թոգատի վիճակ) Կ. Պոլսի «Փունջ» լրագրին ուղղած մի թղթակցութեան մէջ հաղորդւում է թէ, Նիքսար գիւղաքաղաքի մօտ գտնուող Գափու-աղլը անուն հա-

ջաքնակ գիւղը, որ 95 տնից է բաղկացած և որ 7—8 ամիս առաջ երկիւղից կրօնափոխ էր եղած, վերադարձել է մայրենի եկեղեցու գիրկը ղնորհիւ Վահագան Սուլթանին: Վիճակի առաջն. տեղապահ Տ. Յովհ. վարդապետ Հուրիկեան, երկու ամիս առաջ նոյն գիւղն այցելելով՝ պորտորեր և քաջալերեր է Ս. Եկեղեցւոյ ծոցը վերադառնալու, վորջապէս զամենին ալ դարձուցեր, եկեղեցին նախկին կերպարանքին վերածելով՝ խորան կապել տւել և գիւղաքաղաքին քահանաներէն մին՝ Տ. Սէթ հայր՝ հոն թողուցեր է ի հոգեոր մխիթարութիւն ժողովրդեան:

Միակ մխիթարական բանը որ կայ այժմ, այն է, որ զոնէ դաւառներից շատերում այս ձմեռ հացը աժան է. այսպէս, օրինակ, Մուշում ցորենի 2 փութը (մէկ քիլ) 10 զրուշ է (մօտ 80 կոպէկ), կորեկի 2 փութը մեր փուլով 40 կոպ., կըլիլը կոչւածը 2 փութը 20 կոպէկ:

Կարինում (Երզնրում) հայոց կրօնական և քաղաքական ժողովները կազմալուծւած են. առաջնորդական փոխանորդը. 6—7 ամիսներից ի վեր, ստոր կոտրած լինելուն համար առաջնորդարան չի դալիս. նոր առաջնորդ ընտրելու համար դեռ ևս չեն մտածում (նախկինը Ղևոնդ Շիշմանեան եպիսկոպոսն էր, որ Երուսաղէմ է քշւած):

Դրութիւնը մնում է սպառնական. երեկոները և գիշերները տնէտուն գնալը գրեթէ անհնարին է դառած:

Որքերի ցուցակ կազմելու համար Կ. Պոլսի պատրիարքարանը, համաձայն սուլթանի իրադէի, դիմած էր առաջնորդներին: Արաբկիրից այդ ցուցակը արդէն ղրկւեց Պատրիարքարան:

Մալաթիայում, վկայութեամբ նոր լոյս տեսած մի տեղեկագրի, որ յիշւած է ներքև «Պանութիւններ Հայաստանում» գլխի մէջ (Hon to Save և այլն), սպանւել են 1500 հոգի, այսինքն քաղաքի ազգաբնակչութիւնից գրեթէ բոլոր աշխատաւոր ձեռները, ընտանիք սնուցանողները. 7500 հոգի զրկւած են բոլոր կայքից, օրական հացի կարօտ են. նոցանից 2.500—3.000-ը որբեր են. կանայք այժմ ապրում են ստորերկրեայ ցած խրճիթներում կամ խոնաւ նկուղներում. ստիպւած են մօլրալ նոյն իսկ շուկաները գալով, ուր նոքա, որոնք այդ մօլրաջիկ կանանց ամու-

սխններին սպանել են, կողոպտել, դռքա այժմ շարտում են այդ-  
թշուառ կանանցը մի բուռն սև փող կամ հացի փշրանքներ և  
քրքջում են նայելով թէ ինչպէս այդ կանայք վրայ են վազում  
դրամին և հացին... ինչպէս քաղցած շներ... Կոտորածից դէս մար-  
դիկ ապրում են յարդի կամ փալասների կոյտերի վրայ, ամբողջ  
ընտանիքներով միասին վայր թափած, որպէս զի տաք լինեն. վեր-  
ջին օրերս շատերը մեռել են սովից, ցրտից, զրկանքից:

Արաքլիքի՞ր՝ ում կարօտեալների թիւը այնքան մեծ է, օժան-  
դակութիւնը այնքան չնչին, որ բարեգործները յուսահատութեան  
մէջ են ընկնում:

Մերդին. նոյնը:

Հաքուսի գիւղում 40 որբեր թափառում են անապաստան,  
ապրելով որպէս տնազուրկ շներ. ուտում են ամեն բան, ինչ գըտ-  
նում են փողոցում և քնում են որտեղ կը պատահի:

Նոյնն է և այլ գիւղերում:

Ուրհա: Օրիորդ Կորիննա Շատուկի՛ը գրում է. «Ինձ մօտ այժմ  
ապաստանած են 50 որբ երեխաներ. նոցա ազգականներից 15 հոգի  
կենդանի այրւած են եկեղեցու մէջ—ծնողները, եղբայրները, քոյ-  
րերը, տատը, երկու երեխերք իրենց ամբողջ ընտանիքով: Երեք  
քոյրերի մասին արձանագրւած է հետեւեալը. հայրը սպանւած է,  
մայրը մեռաւ խեղադարութիւնից, մնաց մի հօրեղբայր 5 որբացած  
երեխաներով: Մի մանուկի մասին արձանագրւած է—մայրը, հայրը,  
պապը և տատը սպանել են: Նոյն օրիորդ Շատուկի՛ը գրում է,  
դեռ ձմեռը չսկսած. «Մեր ցուցակի մէջ արձանագրւած են 3,325  
որբեր, որոնց մենք օգնում էինք դեղերով, հազուստով և այլն.  
իսկ այրի մնացած կանանց թիւն է 1,495:

Հերոն աւերւած են 1500—1600 տների պարիսպներ. կեն-  
դանի մնացածները խռնւած ապրում են ախոռներում. հազածները  
ցնցոտիներ են:

Բանտարկեալները եւ ներումը

Ներման (աֆի շահանէ) իրադէով Վանում՝ դեկտեմբերին ար-  
ձակեցին 15 հայ, 4 թիւրք բանտարկեալներ. արձակեց նաև  
օրիորդ Զարուհի Տէրոյիան, որ ձերբակալւած էր յունիսի 2-ին,

արձակեց մի շաբաթ աւելի առաջ: Յայտնի ազիտատորները դեռ չէին արձակւած:

Առաջնորդարանը զիմեց կուսակալին թաղրիրով, որով խնդրում էր միջնորդել, որ ներումն շնորհւի ի բացակայէ մահւան կամ բերդարգելութեան դատապարտւածներին, մանաւանդ որ վերջին ղէպքերի ժամանակ արտակարգ դատարանով ի բացակայէ դատապարտւածները ազատւած են:

Տրիպոլիսից հաղորդեցին, որ ներման պատճառով արձակեցին դեռ միայն 5 հոգի:

Եսասգիւղի հայոց եպիսկոպոսը, որ մահւան պատժի էր դատապարտւած, արձակեց Փրանսիական դեսպանի միջնորդութեամբ:

1890 թ. ղէպքի մէջ մեղադրողներից Զուհանգիւլեան, որ բանտարկւած էր Աքքիայում, Տօնապետեան և ուրիշ մի քանիներ ազատւած են:

Մարաշում բանտարկւած բոլոր հայերը արձակեցին, նոցա մէջ և Աւետիկ Նահապետեան քահանան: Նզնիկ եպ. և Շահպաղլեան Յակոբ վարդապետ, որը Բաղէշում մահւան էր դատապարտւած, դեռ բանտում են և մտադրութիւն կայ Երուսաղէմ քշելու:

Բ. Դուււր, ներումն տալով կալանաւորւածներին, սկսել էր նոցա, որոնք փոքր-ասիացի են, գաւառները քշել. դեսպանները դիտողութիւն արին այդ մասին, առարկելով, որ դա հակառակ է ներման թղթի ոգուն:

Բանտերից ազատւածները, Նովոստի լրագրի Պոլսի թղթակցի ասելով, միմիայն 150 հայեր են, տղամարդիկ թէ կանայք: Հայոց պատրիարքարանում ստացւած հեռագիրները ցոյց էին տալիս, որ ներման շնորհումը շատ դանդաղ կերպով է դործադրւում:

Թիւրք մահմեդական բանտարկեալների թիւը, Ֆրէնսիս Ստիււենսոնի տեղեկութիւններով (յունւարին) 4000-ից պակաս չէ:

Կ. Պոլսի կենտրոնական բանտից 22 հայ մահապարտներ, ներման թղթի համաձայն, օսմանեան շոգենաւով ուղարկւեցան Աֆրիկեան Տրիպոլիս, ուր պիտի մնան ցնոր տնօրէնութիւն:

Երզնկայում, որպէս հաղորդում է Մշակ լրագիրը, բանտի հրապարակի վրայ գլխաւոր եցան երկու հայ, որոնք մեղադրւած էին Հաճի-Գա-

լուստ Սրխանեանին օգնած լինելու համար կառավարութեան դէմ աւագակախումք կազմելու նպատակով: Բանտարկեածներէից մի քանիսն էլ մահացու վէրքեր ստացան նոյն դահիճներէից:

Երզնկայի բանտում պարսկահպատակ վաճառական հայեր էլ կան, որոնք ցայժմ մնում են, չնայած որ մի տարի առաջ կառավարութիւնը նոցա քննած ու անմեղ էր ճանաչած:

Երզնկային մօտակայ գիւղերում օր չի անցնում որ մի քանի հայեր չկոտորեն և դոյքն ու անասունները չթալանեն: Մեծ Արմտան գիւղում տեղական քիւրդերի ձեռքով երկու վաճառական հայեր սպանեցին: Երզնկայի հայոց թաղերը զօրքերով պաշարւած են՝ իբր թէ հայերի սլաշտպանութեան համար:

Մուշում բանտարկեածների մի մասը ազատւած է. բայց մեծ մասը, թէ հներից և թէ նորերից, մնում է արգելւած:

Կարինի բանտում, եղածները բաց թողնելուց յետոյ, մնացել են 21 հայ բանտարկեալներ. դոցանից ոմանց մահւան վճիւր բերդարգելութեան է փոխւած. միւսների դատաւարութիւնը դեռ շարունակւում է, նկատւած լինելով ոչ որպէս քաղաքական յանցաւորներ, այլ ոճրագործներ:

### Օգնութիւններ Հայաստանում

Տիկին Սոմերսէթի և «Բարեկամների ընկերութեան» ուղարկած հաղուստեղէնից 91 հալ, ներկայացուցիչ Ադամս'ի կարգադրութեամբ գեկտ. վերջերքը ուղարկեց Վան, Խարըքերդ և Ասիական թիւրքիայի զանազան տեղեր:

Անգլո-հայկական նպաստող ֆոնդի զանձապահ Շւոն, իբրև սնդամ աչն պատգամաւորութեան, որ ֆոնդի կողմից ներկայացաւ յուն. 6-ին տիկին Գլադստոնի 85 ամեայ տարեդարձը շնորհաւորելու համար, Գլադստոնի և ընտանիքի առաջ պարտք համարեց յայտնել, որ Գլադստոնի աջակցութիւնը մեծապէս օգնեց նպաստներ ժողովելու գործի յաջողութեանը: (Վատգամաւորութիւնը տիկին Գլադստոնին նէր աւաւ վեհափառ. Կաթողիկոս Մկրտիչ I-ի իւղաներկ մեծ պատկերը, որ նկարել էր Կրակովի ղեղարւեստական ճեմարանի պրոֆեսոր Թէսլոր Աքսէնսովի):

Նիւ-Իորկում լոյս տեսած *How to Save Alive the Orphan Childern of Marturs in Armenia* գրքում ցոյց է տրւած:

Էրզրումի զաւառում օգնութիւն են ստանում 50.000 հոգի, չհաշւած հազարաւոր այլ խնդրողների, որոնց ստիպւած են մերժել. «կառավարութիւնը, ասւած է այդտեղ, չի միջամտում մեր գործերին և հացը իսկապէս տրւում է կարօտեալներին»:

Ուրֆա: Օրիորդ Կորիննա Շատուկ (ամերիկուհի) ձմեռը չսկսած գրում է Վենք այժմ մեր ոյժերը ներածին չափ օժանդակում ենք 2.500 հոգու, որոնք ոչ որդի ունին, ոչ դուստր, որ ընդունակ լինեն աշխատանքի: Այս րոպէին ինձ մօտ ապաստանել են 70 որբեր, և այս շաբաթ պէտք է կրկին 10 հոգի ընդունել: ... Լաւ կը լինէր, որ մենք կրկին 300 որբեր ընդունէինք: Մինչև այժմ միայն անգլիացիք և գերմանացիք են մեզ նպաստներ ուղարկել: Բացի դրանցից, ահագին թւով որբեր ունինք, որոնք ոչ հայր ունին ոչ մայր:

Վանից Ամերիկա վերադարձած դոքտոր օրիորդ Բիմալ յունւարի 5-ին Բոստօնի մեծ եկեղեցիներից մէկի մէջ մեծ բազմութեան առաջ քանախօսութիւն արաւ հայերի մասին. թշւառութեան մէջ գտնուող հայերի թիւը, նորա կարծիքով, 80.000-ի է հասնում:

Բրիտանական «Շերամապահական ընկերութիւնը» առաջարկել է փախստական հայերին օգնելու համար, որ անգլիական կառավարութիւնը նպաստէ շերամապահութեան զարգացմանը Կիպրոս կղզում, գործը յանձնելով հայ կանանց և մանուկներին: Կորնեաների մինիստր Չեմբերլէն լաւ ընդունելութիւն արաւ ընկերութեան պատգամաւորութեան, որը յայտնեց նաև՝ որ Կիպրոսում յաջողութեամբ կարելի է մշակել նաև բամբակ, կտաւատ և զիրաւ:

Անգլիացում շորերով նւիրատուութիւններ հաւաքելու և Հայաստան զրկելու գործի վրայ են տիկ. Սոմերսէտ, Բեքէր, Մարշալ, օրիորդ Դարլինգ, Արթուր, Ուեբ և ուրիշներ:

Եղեւսիայում, ինչպէս ծանուցեց թիւրք կառավարութիւնը, որ և տպւեց Կ. Պոլսի թերթերում, 3000 հայ կան. նոցա սկսել են բաշխել Զիցերիայի ժարդասէրներից ստացած հանդերձեղէնները:

Սայմաթովրուկի մէջ, Կ. Պոլսի թերթերի ասածով, 70-ի չափ ընտանիքներ կան, որոնք տառապում են ծայրայեղ աղքատ:

տութեան մէջ. մի անգլուհի, Ալեանսարի ջաղացքը բանեցնող գործարանատիրոջ կինը, տիկին Հէլուտ, ամեն շաբաթ 25 ոսկու չափ նսրատ է բաշխում նոցա. նորան գործակցում է Պալատու Միքայէլ քահանան:

Արաբկիր են եկել, Կ. Պոլսի թերթերին նայելով, Կարմիր Խաչի բարեգործական ընկերութեան ներկայացուցիչները, որոնք արհեստների գործիքներ բաշխեցին այն հայ արհեստաւորներին, որ «հրդեհի մէջ» (ասւած է Կ. Պոլսի թերթերում, որոնց հարկաւ արգելւած է «կոտորած» բառը գործածել) կորցրած էին իրենց գոյքերը: «Վերջերս նոյն մարդասէր հաստատութեան կողմէ բաւական քանակութեամբ մանած զրկեցաւ որպէս զի գործ հայթայթւի հայ մանուսայագործներուն, որք արհեստաւորներու շատ աշխատասէր, ճարպիկ և համակրելի դասակարգմ'ն Արաբկիրի, Երզնկայի մէջ և այլուր: Սուլթանին կողմէ յանուն Խարբերդի նահանգին շնորհւած նսրատէն 250 ոսկու չափ գումար մը Արաբկերի հայ աղքատներուն բաժին որոշւած ըլլալով, այս նսրատ պիտի բաշխւի յատուկ մասնախմբի մը միջոցաւ իրենց կարօտութիւնն ստուգւած 4—5.000 աղքատներու: Ուրեմն 250 ոսկի = մօտ 2000 ու. 4—5 հազար հոգու!

Բայագէղի հայերից ւօգնութեան ու պաշտպանութեան կարօտ աղքատ տղայոց թիւը կը հասնի 300-ի, գրում են Կ. Պոլսի թերթերը:

Մարաշում Գրիգոր Բեհեսնիլեանը հաստատել է մի որբանոց աղքականներից զրկւած հայ աղջկանց համար:

Վանում ամերիկացի միսիոնարները ներկայումս դարմանում են 600-ից աւելի հիւանդներ. հաստատել են որբանոց, ուր ընդունւած են 200-ի չափ որբեր. բացի դորանից ամսական 7—800 ոսկու չափ ծախսում են աղքատներին փող, հաց կամ գործ տալով: Անգլիական հիւպատոսը միսիոնար Ալէն'ին ուղարկել է Պարսկաստանի Խօյ նահանգը եղներ գնելու, որ պիտի բաշխւին հայ գիւղացիներին. եղների ճակատներին և ականջներին դրոշմ է դնելու՝ քիւրդերի յափշտակումից ապահով պահելու համար!

Սեպտեմբերից սկսած մինչև յունւարի վերջերքը Անգլիայից և Ամերիկայից 5000 ֆունտ ստերլինգ (մօտ 50 հազար ուտրլի) է

Ծախսել Վանի վիլայէթում գտնւած հայ կարօտեալներին նպաստ քաշխելու:

Ահա մի նամակ, որ ստացել է Վաչագանի բարեկամները կոչւած ընկերութիւնը մի միսիոնարից, որ երկար տարիներ դործել է Փոքր-Ասիայում և այժմ զբաղւած է Խարբերդում նպաստների բաշխման և կազմակերպութեան գործով. նա տպւած էր «Դէյլի Նիւս» լրագրում 20 փետրւարի. դորանով ստացւում է մի պատկեր թէ ընդհանուր թշւառութեան և թէ նպաստամատոց մարմինների դործունէութեան: Նամակը գրւած է Խարբերդից և տեղեկութիւններ է տալիս Խարբերդից, Պալուից, Արաբկերից, Մալաթիայից. ահա նամակի կարեւոր կէտերը:

«Անցեալ տարւաչ կոտորածի միջոցին հաւանաբար ոչ մի տեղ մեր սահմաններում աչքան ծանրապէս չլինասեց, որքան Պալու քաղաքը, որն ունէր 43 գիւղ. Մի քանի շաբաթ առաջ լսելով թէ այս գիւղերում շատ հիւանդութիւն կալ, մենք ջանացինք բազմ չափողեցանք մի բժիշկ ուղարկել աչք տեղերը. ստիպեցանք ոչմասնագէտ բժիշկ ուղարկել, որ բաւականաչափ փորձառութիւն ունէր: Մի գիւղում, որ 200 տուն ունէր, նա գտաւ 170 հիւանդ, մի ուրիշ գիւղում, որ 14 ամիս առաջ 280 տուն ունէր՝ կար 250 հիւանդ, և սուտւմ է թէ կոտորածից դէս 400 հոգի մեռել են աչք գիւղում: Այսպէս է առհասարակ միւս գիւղերում ևս. մարդիկ հիւանդանում են և մեռնում ոչ թէ հիւանդութիւնից, այլ չբաւորութիւնից: Մեր բարեկամները, իրենց ամբողջ կարողութեամբ, աշխատում են պատրաստել ուտելիք, հանդերձեցէն և անկողին՝ այս աղէտի առաջն առնելու համար: Պր. Բրոուն պատմում է թէ գիւղացիք բնակւում են աղտոտ խրճիթներում շատ խռնւած՝ նման անասունների: Ամենացուրտ օրերումն իսկ, անկողին չլինելու պատճառով, շատերը, մինչև իսկ հիւանդներ, պառկում և մնում են խոնաւ գետնի վրայ, երբ մի քիչ լարդ գտնելով՝ վրէն պառկում են—իրենց բարեբաղդ են համարում. և երբ բացի աչք մի ծածկոց էլ են ունենում, նոցա վիճակը դառնում է նախանձելի: Ես ալստեղից (Խարբերդից) անկողնի համար նիւթեր եմ ուղարկում նրանց որքան կարելի է արագութեամբ, առանց գները բարձրացնելու: Մենք շատ զբաղւել ենք որբերի համար պատրաստութիւններ տեսնելով, քանի որ աչք նպատակի համար սկսել է արդէն փոք գալ: Տիկին Բարնըրը հակում է այս ճիւղին. բազմ գործը աչքան ընդարձակւել է, որ նա միապէս անկարող է որբանոցի բոլոր պէտքերը հոգալ: Քաղաքի այս թաղում երկու տուն չատկացրած են աչք երեխաների համար, որոնք իսպառ զրկւել են բոլոր ազգականներից, ուստի կատարեալապէս անտէր են: Իոյա Վրաչ հոգատար ենք կարգել մի ազնիւ և վստահալի մարդու և նորա կնոջ:

Այս տարաբախտ դասակարգից ամեն օր մեծ թւով խռնւում են մեր շէնքերի շուրջը. մինչև իսկ այժմ ինձնից չաճախ խնդրում են ազատել թիւրքերի կամ քիւրդերի ձեռքից տարաբախտ երեխաներ: Արաբկիրի երէցը գրում է թէ այժմ այդ քաղաքում կան 829 որբ տղա, և 882 որբ աղջիկ, այրի կանանց թիւը 683, որոնցից 368-ը կարօտ վիճակի մէջ: Այս ձմեռւալ ընթացքում ազդեցիկ նպաստներով ապրողների թիւը եղել է 3000:—Մալաթիայի երէցը գրում է թէ ազդեցիկ կան 2—2.500 որբեր և ալրիներ: Մեղրէլի եկեղեցին, որ կառավարութեան հրամանով մի քանի ամսից ի վեր փակւել էր, վերաբացւեց մասամբ կարծեմ սեօր Ֆ. Կերրի'ի (անգլ. դեսպանի) միջամտութեամբ, տիկին Ռէնտէլ Հարրիս և պ. Ֆոնտանախնդրած էին, որ նա ալը մասին միջամտէր: 75 բանտարկեալներ հէնց նորերս արձակեցան. սոցանից 42 քրիստոնեաներ էին, որոնք բանտարկւել էին առանց որ և է չալտի լանցանքի. 33 թիւրքեր և քիւրդեր բանտարկւել էին կոտորածից չետոյ՝ քրիստոնեաների դէմ գործած սպանութիւնների և ուրիշ ոճիրների պատճառով. նոցա թւումն էր մի չէլիս, որ վերջերումս զրդեց մի կոտորած եկեղեցում և շատերին իւր իսկ ձեռքով սպանեց:—Իբրեւ արդիւնք անցեալ տարի կառավարութեան ձեռքով կարօտեալների համար բացած հանդանակութեան ալժմ տեղիս (Խարբերդի) կառավարիչն ունի իւր ձեռքում մօտ 2.500 լիրա. ալը դումարից 1000 լիրա նշանակւել է մզկիթների նորոգելու, մնացածը բաշխւում է մարդագլուխ 6—10 զրուշ տալով, մեր անցեալ տարւալ անուանների ցուցակը իբրեւ հիմք ընդունելով»:

### Հայ փախստականները

Ռուսիայում և մասնաւորապէս Կովկասում ապաստանածների մասին մենք տեղեկութիւններ տալիս ենք ամսագրիս «Լուրերի» բաժնում, սկսած Մուրճի անցեալ № 1-ից:

Բոլղարիայում ապաստանած հայ փախստականներին օգնութիւն տուող անգլիական նպաստող Ֆոնդի նախագահ Ուէստմինստարի դքսի կողմից Բոլղարիա ուղարկւած Սրթուր Հէյտէր, ղեկտեմբերի վերջերքը ղեկուցեց, որ Բոլղարիայում անգլ. նպաստող Ֆոնդից օգնութիւն ստանում են 8000 փախստական, աղամարդ, կին, երեխայ, որոնք գտնւում են Վարնա, Ռուսսուք, Բուրգաս, Շումլա և Ֆիլիպոպոլ քաղաքներում: Բոլոր այս տեղերում օրական հացի բաժնին աւելցրած է օրամէջ մսի բաժին. մթերքներ ամբարւած են բոլոր այն տեղերում, ուր ապրում են փախստականներ թէ վարձւած տներում և թէ կառավարութեան կողմից շնորհւած բնա-

կարաններում. վառելիքը տրւում է կանոնաւոր կերպով. հագուստ — կարօտութիւն ունեցողներին. շատ է պահանջւում կօշիկ և գուլպա, որ և տրւում է. կարի արհեստանոցներ էին հիմնւած բոլոր քաղաքներում, բացի Ռուսնուքից, ուր պիտի բացւէր նոր տարուց. կանայք և աղջիկները կարում են հագուստ այն նիւթերից, որոնք ուղարկւում են Բարեկաֆների Ընկերութեան կողմից: Բժշկական օգնութիւն է տրւում այժմ. Վարնայում կառավարութեան կողմից նշանակւած են երկու բժիշկ և բացւած է մի ձրի դեղատուն: Բոլգարիայի իշխանը և մինիստրութիւնը շնորհակալութիւն են յայտնել Սրթու Հէրտէրի մէջոցով դուքս Ուէստմինստէր'ին օգնութեան գործի համար: Հէյտէրը իւր այցելութիւնը գաղթականներին արել է իւր կնոջ և մայր Սըրթիա'ի հետ, վեց շաբաթւայ ընթացքում:

Պէտք է ասած, որ փախտականների դրութիւնը այնու ամենայնիւ շատ խղճալի է. նկատւած է, որ շատ քչերն են արհեստաւոր, որոնք կամենում են արհեստով իրենց գլուխը պահել. մնացածներից նոքա, որոնք չեն կամենում բեռ դառնալ՝ ապրանք են գնում և ամենափոքր վաստակով վաճառում փողոցէփողոց պոտեյով:

Անգլիայում դոքտոր Բերնարդս, որ երեսուն տարի է ինչ իրեն նւիրած է որբերի խնամատարութեան գործին, պատրաստականութիւն է յայտնած մի քանի հազար հայ որբեր Թիւրքիայից Անգլիա փոխադրելու դէպքում, խնամել իւր որբանոցների մէջ, այն ծրագրով, որ դաստիարակելուց յետոյ՝ նոքա ուղարկեն Վանապա, ուր նոցա հողեր և բնակարաններ կը տրւին:

Հայ որբերի համար մտածում է նաև պ. Քըրիլըր, շոտլանդացի, որ վերատեսուչ է շոտլանդական որբանոցներին:

Անգլիայի արտաքին գործերի մինիստրը սակայն հակառակ է, որ այնքան մեծ թւով հայ որբեր բերեն Անգլիա, վերադասելով, որ նոքա Թիւրքիայում հաստատւած որբանոցների մէջ մեծանան և կրթւեն:

Լոնդոնի Փրկութեան Ըսնակ (Salvation Army) Ընկերութեան շինութեան մէջ, Թաուտ Բրիջի մօտ, Բիրմինգհում, խնամւում էին 42 փախտական հայեր, մեծ մասամբ Կ. Պոլսից. արևստաւորներ և լեզւի տեղեակ միայն երկուսն էին. օրական կանոնաւոր սնունդ ստանում էին և աչտեղ գիշերները քնում երկու շարք

անկողինների վրայ. շատ են կամենում զործ գտնել, ոմանք էլ մտածում էին Ամերիկա երթալ: Դորանից առաջ ոմանք Կանադա էին գնացած հողացին առանձնաշնորհումներ ստանալով. բայց առհասարակ Կանադայի կառավարութիւնը հայ դաղթականներ մեծ թւով ընդունելու դէմ է: Փրկութեան բանակ մեծ ընկերութիւնը մինչև այժմ ամիսներից ի վեր 60-ից աւելի հայերի ապաստան է տւած, որբեւայրիներին ու ընտանիքները առանձին տների մէջ պահելով: Ապաստանեալների օգտին փետրւարի սկիզբը Լոնդոնում հանդէս տրւեց ընկերութեան ժողովարանում, նախագահութեամբ պ. Սթիթի:

Եգիպտոսում մինչև յունւարի վերջը ապաստան են գտած 2.000-ից աւելի հայ փախստականներ, որոնցից մինչ 500 հոգի ապրուստի միջոցներով են և արհեստաւոր. մնացածները օգնութեան կարօտ են. վերջիններից 800 հոգի խնամւում են Ալեքսանդրիայի հայոց եկեղեցում, տեղական ազգային վարչութեան միջոցներով (զոյանից 140-ը երեխաներ են, մօտ 40 ը կանայք և աղջիկներ, մնացածները տղամարդիկ). Կայիրէյի եկեղեցում ապաստանած են մօտ 250 հոգի և խնամւում են նոյն վարչութեան միջոցներով:

Երդիւի թոյլտւութեամբ հանգանակութիւն է բացւած. անգլիական գաղթականութիւնը սիրողների խմբով ներկայացումներ տւաւ խղիւական օպերայի մէջ, և որքան յայտնի է, երկու ներկայացումների զուտ արդիւնքը եղած է 300 անգլիական ոսկի (մօտ 3.000 ռուբլի):

Տեղական «Ընթերցասիրաց ընկերութիւնը» նոյն նպատակով մի ներկայացումն է տալու Թուրեանի խմբով, որ Կ. Պոլսից է եկած:

Երուսաղէմում մինչ 50 որբ հայ մանուկներ 7—13 տարեկան, մեծ մասամբ Կ. Պոլսից, ուր նոցա ծնողները զոհ գնացին անցեալ տարի, բերւած են և յանձնւած տեղական գերմանական ընկերութիւններին. նոքա ցրւած են գերմանական արհեստանոցների և դպրոցների մէջ: Տեղական լատին կրօնաւորների մօտ ևս հայ մանուկներ կան, հայկական գաւառներից շրջւած: Երեխաները թէ գերմանացոց և թէ լատինների մօտ կրթւում են օտար լեզուով և ոգով:

Պարսկաստանում Թիւրքիայից փախած հայերի թիւը 2.000 է:

Դոքա ապաստանել են Սալմաստի գիւղերում: Մի թղթակցութեան մէջ գրւած Սալմաստից, որ մենք գտնում ենք Մշակում, ահա թէ նոցա դուրսիւնը ինչպէս է նկարագրւած.

«Ահա մի փոքր փալախ (գոմ), ուր ութ ընտանիք են ապրում: Մտնում ես գոմը. սկզբում ոչինչ չես տեսնում, աչնքան մուտք է. լոյսը միայն փոքրիկ ղռնով է ներս մտնում. երեխայ, կին, տղամարդ իրար վրայ թափւած, մի կերպ տեղաւորւել են հողի լատակի վրայ: Աչտեղ և կերակուր են նիւում, և լացք են անում, և թաց շորերը չորացնում, և փոքրիկ մանուկները իրանց բնական արտաթորութիւններն անում. մի անկիւնում պառկած են մի քանի հիւանդներ: Օդն աչնքան ծանր է և փչացած է աչտեղ, որ անսովոր մարդը քառորդ ժամ անկարող է մնալ աչք նողկալի մթնոլորտում, գլուխդ սկսում է պտտւել և սիրտդ խառնել: Զարմանում ես, թէ ինչու աչք որջի բնակիչները բոլորն էլ չեն կոտորւում... Կոտորւում են, աչն էլ հարկւրներով: Մինդի պակասութիւնը և վատ չատկութիւնը առաջացրել են գաղթականների մէջ զանազան հիւանդութիւններ. համարեա բոլորն էլ ենթակալ են մարսողութեան իւանգարման, իսկ թանջը (disenterie) տասնեակներով զոհեր է տանում: Բնակարանների նեղւած լուծիւնը և կեղտոտութիւնը պատճառ են դառնում նաև կաշւի զանազան հիւանդութիւնների. նամանաւանդ քոտը շատ է տարածւած. իրանց երկրում, լեռնոտ Աղբակում, երբէք տեսած չլինելով ոչ տենդ (մալարիա), ոչ հատկախտ (տրախոմ) հիւանդութիւններ, որոնք, ինչպէս չալտնի է, չատուկ են տափարակ երկիրներին, գալով ճանիւներով առատ Սալմաստ, գաղթականները ընկնում են տենդի անողոք ճանկերը: Մի ամսից չետոյ աչք հիւանդութիւնները աչնպէս են հուպ տալիս, որ առողջ լեռնականը բարակում, հազիւ է կարողանում ոտի կանգնել: Աղբակի մաշւած մարմնում զանազան հիւանդութիւններ հեշտութեամբ են բռն դնում: Վիւրդերի գազանութիւնները մաշել են նաև նրա հոգին. միայն Մահլամ գիւղում իրանց երկրում կատարւած սարսափների վախից մեռել են 18 հոգի գաղթականներ. իսկ վարակիչ հիւանդութիւնները առատ հունձ են անում մատաղահաս մանուկների մէջ:

.. Բացի Թաւրիզի «Հալուհեաց ընկերութեան» 300 թումանից և Ամինը-Դովլաի բնծաղած 100 թումանից, գաղթականները ոչինչ չեն ստացել, հաշւելով Սալմաստի հայերի մասնաւոր օգնութիւնը: Ամերիկացի Հովարդը մեծ զուժարով եկել էր աչտեղ թիւրքահայերին իրանց երկրից գաղթեցնելու ծրագիրը իրագործելու, բայց անաջողութեան հանդիպելով՝ գնացել էր Ուրմի և հայերի ջիգրու՝ ասորիներին օգնել: Այժմ Թաւրիզից բողոքականները ուղարկել են պ. Բրիչերին, և, ինչպէս ասում են, սա իր հետ դրամական օգնութիւն է բերել գաղթականների համար:

Իրաշտում, ուր 60 հայ կայ, ներկայացումներով, Վարդանանց տօնի առթիւ, հաւաքւել է 90 ռուբլի յոգուտ գաղթականների. գումարը վարդի հոգաբարձութեան մօտն է:

Ուրմիում, ապաստանած են մի խումբ վանեցի փախստականներ:

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ԼԻԱԶՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անւանական Բարձրագոյն Հրաման կառավարիչ սենատին:

Կովկասեան փոխարքայութիւնը վերացնելուց յետոյ, ի տէր հանդուցեալ Մեր ծնողի կամքով հաստատութիւն գտաւ, 26-ն ասորիւի 1883 թ., Կովկասեան երկրի կառավարութեան ներկայումս գործող կարգը:

Պահպանելով այդ կառավարութեան ընդհանուր սկզբունքները, որոնց նպատակն է Կովկասը կարելիին չափ աւելի մօտեցնել կայսրութեանը և չիշեալ երկրի կառաւարութեան առանձին ճիւղերի ու համապատասխան միջոցներով մէջ անմիջական կապ հաստատել, Մենք բարւոք գտնեցինք տեղական բարձրագոյն իշխանութեան ներկայացուցչին, տալ ան իրական միջոցները, որոնցով նա կարողանայ երկրի օգտի համար, օրէնքով նորան յատկացրած քննութեան և վերահսկողութեան իրաւունքը գործադրել, վերականգնել, ուր որ պահանջուի է, օրէնքի ոյժը, տեղական վարչական մարմինները ուղղել դէպի կատարումն ծառայողական պարտքի և պաշտպանել կառավարողներ ի խաղաղ բարգաւաճումը:

Ուստի, համաձայն միջոցների կոմիտէի որոշման, հրամայում ենք.

Կովկասի քաղաքացիական մասի Կառավարչապետի իրաւունքների և պարտականութիւնների նկատմամբ հետեւեալ ժամանակաւոր կանոնները ղենել, մինչև որ օրէնսդրական կարգով Կովկասեան երկրի կառավարութեան ներկայ կարգը կը վերափոխուի.

1) Կովկասեան երկրի քաղաքացիական մասի Կառավարչապետը, Կովկասեան երկրի վարչական կամ հասարակական հաստատութիւնների մէջ որ և է անկարգութիւններ և բացթողութիւններ նկատելով՝ պարտաւոր է վճռողական միջոցների զիմել նոյա դադարեց-

ներու և գործերի օրինական ընթացքը վերականգնելու համար, տեղեկացնելով այդ մասին մինիստրներին և առանձին մասերի գլխավոր կառավարիչներին, ըստ պատկանելոյն:

2) Արտակարգ հանգամանքներում Կառավարչապետը կարող է կասեցնել վճիռները նահանգական և օրլաստային ատեանների (Օրինագիրք, հատոր II, հրատ. 1892, Նահանգների ընդհանուր հաստատութեան յօդած 14) և Կովկասեան երկրի հասարակական հիմնարկութիւնների և ապա իւր կարգադրութիւնները այն առարկաների մասին, որոնց վերաբերում էին կասեցրած վճիռները, գործադրել՝ իւր պատասխանատուութեամբ բոլոր հետեւանքների համար, այնու, որ Կառավարչապետը անմիջապէս հաղորդէ Կառավարիչ Սենատին և տեղեկացնէ մինիստրներին և առանձին մասերի կառավարիչներին, ըստ պատկանելոյն, այն պատճառները, որոնք դրդեցին նորան այդ միջոցին դիմելու:

3) Ֆայտնի կացուցւած անխտահեղիութեան, ակնյայտնի զեղծումների դէպքում՝ որ և է վարչութեան Ռէջ և Կոնստաբակ կարեւոր և անչեռածգելի դէպքերում, Կառավարչապետին, անկարգութիւնները կասեցնելու համար, իրաւունք է տրուած անմիջապէս հեռացնել պաշտօններէից, մինչև պաշտօնազուրկ անելը սահմանած կարգով, Կովկասեան երկրի վարչական ատեանների և հասարակական հիմնարկութիւնների պաշտօնեաներին, ի բաց առած առանձին մասերի կառավարիչներին, ազնականաց նահանգական և գաւառական առաջնորդներին և այն պաշտօնեաներին, որոնք ցոյց են տրւած կառավարութեան կողմից նշանակւած ծառայութեան կանոնադրութեան 169 յօդածի մէջ (Օրէնագիրք հատոր III, հրատ. 1896):

4) Այն անձերին զատական պատասխանատուութեան ենթարկելու համար, որոնց նկատմամբ Կառավարչապետին, համաձայն այս կանոնների 3-րդ յօդածին, իրաւունք է տրւած ծառայութիւնից հեռացնելու, Կառավարչապետը, գործի հանգամանքները Կառավարչապետի խորհրդում քննելուց յետոյ, օգտուում է այն իրաւունքներից, որ ցոյց են տրւած Բարձրագոյն հրամանի 22 սեպտեմբ. 1880 թ. պարագր. 2 ձ, նահանգների ժամանակաւոր քննութեան համար նշանակւած սկնաւորների իրաւունքների և պարտականութիւնների մասին:

5) Կառավարչապետին իրաւունք է տրւում, այն դէպքերում, երբ ինքը այդ հարկաւոր կը գտտի, պահանջել Կովկասեան երկրի ճիւղերի առանձին մասերի կառավարիչներից, որ սոքա իւր նախնական հաւանութեանը ներկայացնեն իրենց մտադրութիւնները անձեր նշանակելու մասին այն տեղերի համար, որոնց նկատմամբ պաշտօնատարներ նշանակելը այժմեան կարգով նոցա իշխանութեանն է տրւած:

6) Ներկայ կանոնների 1—5 յօդւածներում նշանակւած որոշումները, վերաբերեալ վարչական և հասարակական հիմնարկութիւններին և նոցա ծառայող անձերին, չեն տարածւում պետական կոնտրոլին և պետական բանկի հիմնարկութիւնների և ծառայող անձերի վրայ:

7) Բացի այն լիազօրութիւններից, որոնք տրւած են Կառավարչապետին Կովկասեան երկրի կառավարութեան հաստատութեան 26-րդ յօդւածով և 27-րդ յօդւածի 1 և 2-րդ պարագրաֆներով (Օրինագիրք հատոր II, հրատ. 1892 թ.), նորան իրաւունք է տրւում արգելել բնակութիւնը Կովկասեան երկրի որ և է տեղում և առհասարակ երկրի սահմաններում այն անձերին, որոնց այնտեղ լինելը Կառավարչապետի կողմից վնասակար ճանաչւած կը լինի, գործի հանգամանքները Կառավարչապետի խորհրդում քննելուց յետոյ:

Կառավարիչ Սենատը չի յապաղիլ սորա կատարման համար պաշտած տնօրինութիւնն անելու:

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրւած է՝

«Ն Ի Կ Ո Լ Ա Յ»

Ի Յանսկոն Սելճ,

3-ն մարտի 1897 թ.

Վերոյիշեալ հրամանի մի քանի կէտերի մասին կարող ենք հետեւեալ ծանօթութիւնները տալ.

1. «Կովկասեան երկրի կառավարութեան հաստատութիւնը» (Учреждение управления Кавказскаго края) տրւած է 1883 և 1887 թւականի օրէնքներով:

Անցեալ 1896 թւականի սկզբին նախկին Կառավարչապետ այժմ հանգուցեալ գեն. ադ. Ս. Ա. Շերեմետև խնդիրք էր յարուցած կառավարչապետի լիազօրութիւնները ընդարձակելու համար. խնդիրքը յարգուեց Պետերբուրգում. նոյն անցեալ տարւոյ սկզբում և նոյն ժամանակ Կովկասեան կառավարութիւնը սկսեց նոր օրինագիծ հշակել. Շերեմետևի մահամբ մի փոքր ժամանակ ընդհատուեց գործը:

2) Վերոյիշեալ կանոնների 2-րդ կէտում յիշւած է ճանաչողական և օբյեկտային վարչական տեղեր և մասնանիշ է եղած ընդհանուր նահանգ. հաստ. յօդւած 14-ի վրայ (Օրէնսգիրք հատ II, հրատ. 1892 թ.), արդ այդտեղ նահանգական տեղերը համարւած են.

Նահանգի գլխաւոր պետը (главный начальник губернии). նահանգապետը. նահանգական ատեանը. ստատիստիկական կոմիտէն. նահանգական ատեանը քաղաքային գործերի համար. նահանգական ատեանը զեմստաւին և քաղաքային գործերի համար կամ նահանգական ատեանը զիւղական գործերի համար. նահանգական ատեանը զինւորական ծառայութեան համար. նահանգական հարկային ատեանը. նահանգական ատեանը խմիչքի գործերի համար. արքունական պալատը (казенная палата). նահանգական տնօրէն կոմիտէն (губерн. распорядительный комитетъ). պետական կալւածների կառավարչութիւնը. Մի քանի նահանգներում կան ևս նահանգական ատեան գործարանական գործերի համար. անտառապահական կոմիտէ. ժողովրդական ուսեաստի լանձնաժողով (комиссия народн. продовольствия), հասարակական խնամատարութեան հաստատութիւններ (приказы обществ. призрения), նահանգական զեմստաւին ժողովներ և նահանգական զեմստաւին կառավարչութիւններ:

3) Վերոյիշեալ կանոնների 3-րդ կէտում յիշւած է ծառայու. թեան կանոնադրութեան 169-րդ յօդւածը, որը հետեւեալն է ասում.

Նկատմամբ 4-րդ կլասի պաշտօնեաների և նոցա, որոնք, 4-րդ կլասից ստոր լինելով հանդերձ, պատշաճաւոր կանոնադրութիւնների հիման վրայ նշանակուած են Նոյնին Կալսերական Մեծութեանց Բարձրագոյն բարեհաճութեամբ, — մինիստրներին և առանձին մասերի գլխաւոր կառավարիչներին թուլատրուած է Նոյնին Կալս. Մեծութեան ամենապատկօրէն զեկուցումներ տալ՝ պաշտօնի ենթադրւած թեկնածուների ցուցակը Բարձրագոյն բարեհալիցողութեանը ներկայացնելու համար. Յետոյ Բարձրագոյն հրամանների նախագիծները, ալ և կարճ ցուցակները չիշւած անձերի տեղեկութիւններով հաղորդուած են Նորին Կալսերական Մեծութեան Սեփա.

կան ղիւանատան կառավարչին՝ քաղաքացիական բաժնի պաշտօնեաների ծառայութեան և պարգևատրութեան կոմիտէին առաջադրելու համար:

4) Քննութեան նշանակած սենատորների լիազօրութիւնները, որոնց մասին խօսք կայ վերոյիշեալ Բարձրագոյն հրամանի 4-րդ կէտում, ակնարկւած օրէնքի համաձայն հետեւեալն են.

Պաշտօնեաներին, որոնք ծառայութեան են նշանակուած նահանգական կամ սոցա հաւասար իշխանութիւնների, ալ և մինիստրների և զըլխաւոր կառավարչութիւնների ձեռքով, պատասխանատուութեան ենթարկել ալն կարգով, որ որոշւած է քրէական դատավարութեան կանոնադրութեան 1098 և չաջորդ չօղւածներով, նոցա վրայ քննութիւն նշանակել դատաստանական քննիչների միջոցով, ալն պալմաններում, որ ցոյց են տրւած 1101 չօղւածում, և յետեւեալ իշխանութեամբ նոցա դատի ենթարկել, հեռացնելով, եթէ հարկ լինի, պաշտօններից, համաձայն նոյն կանոնադրութեան 1112 չօղւածի:

5) Բարձրագոյն հրամանի 7-րդ կէտը վերաբերում է վարչական աքսորին: Մինչև այժմ կառավարչապետի լիազօրութիւնները ալդ հասին սահմանւած ինչպէս կասեան երկրի կառավարութեան հաստատութեան» 26-րդ չօղւածով և 27-րդ չօղւածի 1 և 2 պարագրաֆներով, որոնք ահա.

Յօդ. 26: Կովկասի որ և է տեղում եթէ ուժեղանալու լինին հետեւեալ չանցանքները՝ ընդդիմադրութիւն կառավարչական իշխանութիւնների, սպանութիւններ, առաջակութիւններ, կողոպտոսներ, անասնազոհութիւններ և ապաստանատուութիւններ—կառավարչապետին իրաւունք է տրուած տեղական (ТЪЗЕМНІЙ) ժողովրդին պատկանող անձերին, որոնք, տեղական վարչութեանը չալտի ճշգրիտ տեղեկութիւնների համաձայն, չիշեալ չանցանքներին մասնակից են և դորանով վնասակար են լինում հասարակական կարգի և ապահովութեան համար—հեռացնել Կովկասեան երկրի սահմաններում ընտրւած տեղեր, արգելելով նոցա հեռանալ մի որոշ ժամանակամիջոց, բալց ոչ աւելի քան 5 տարի. ալ և երկրից հեռացնել նոյնքան ժամանակամիջոցով ալն տեղերը, որ կը նշանակեն ներքին գործերի մինիստրի կողմից: Երկու դէպքերումն էլ գործը նախ քննուած է կառավարչապետի խորհրդի մէջ: Ալդ չօղւածում ցոյց տրւած դէպքերում կառավարչապետին իրաւունք է տրուած, իւր անձնական պատասխանատուութեամբ, հանդամանքներին նախած, նաև ալ համապատասխան կարգադրական միջոցներ ձեռք առնել՝ հասարակաց կարգը և ապահովութիւնը վերականգնելու համար, բալց ալդ մասին նա ներքին գործերի մինիստրի միջոցով անպապաղ հապնում է ի տեղեկութիւն Նորին Կալսերական Մե-

ծուծեան, թէ իւր արած կարգադրութիւնների և թէ սոցա գրդիչ պատ-  
ճառների մասին:

Յօդած 27. Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին,  
անկախ ալն իրաւունքներից և պարտականութիւններից, որոնք չատկաց-  
րան են նրան ներկայ հաստատութեան լօգ. 1—26-ում որոշած կանոններով,  
իրաւունք է տրւում իրեն ստորադրած երկրում հետեւեալ կարգադրութիւն-  
ներն անել. 1) զուրա քչել օտարահպատակներին, որոնք, իրենց վատ  
վարքով, կասկածելիութեամբ, կամ որ և է ալ պատճառներով, չեն կա-  
րող տանելի լինել պետութեան մէջ, իւրաքանչիւր դէպքի համար անչա-  
պաղ զեկուցանելով ներքին գործերի մինիստրին. 3) արգելել ոչ-տեղական  
ծագումով անձերին, որոնք յնասակտր են հասարակաց կարգի և ապահո-  
վութեան համար, բնակել թիւրքիային և Պարսկաստանին սահմանակից  
տեղերում:

Այսպէս էր մինչև այժմ:

Այժմ ուրեմն Բարձրագոյն Հրամանի 7-րդ կէտով շատ ըն-  
դարձակում են կառավարչապետի լիազօրութիւնները աքսորելու  
նկատմամբ: Այժմ վերացում է խորութիւնը տեղացիների և ոչ-  
տեղացիների մէջ և յանցանքները մի առ մի չեն յիշւած Բարձրագոյն  
Հրամանի մէջ. բացի այդ, Հրամանի մէջ չի յիշւած աքսոր ուղարկե-  
լու ժամանակամիջոցի մասին, որ առաջ 5 տարով էր սահմանա-  
փակւած:

## ԳՐԱԿԱՆ ԱՐԱԲԵՍԿ

(80-ական թվականների մամուլի ու գրականության առիթով.—Մի դէմք մամուլի մէջ—Լէօ-Բաբախանեան):

Մուրճի լօղւածը «ինչ էինք ժառանգել» առանց աչն չէ, որ աղմուկ չհանէր. կարգացին, կոմենտարիաներ արին, չամենաչն զէպս ոչ ոք անտարբերութեամբ չվերարեւեց: Ներկայացրած էր 80-ական թվականների մամուլի ու գրականութեան վիճակը, և որպէս զի չմեղադրեն աչառութեան մէջ—ղիտմամբ տրւած էին հեղինակների անուններ, որպէս զի ընթերցողները միջոց ունենան ստուգելու և նկատելու, եթէ որ և է բան պակաս ու չիչւած լինէր լօղւածի մէջ: Կա մի փորձ էր գրական տեսութեան մի որոշ շրջանի (80-ական թվականներին) Անշուշտ երբ մէկը փորձում է ընդհանուր տեսութիւններով համադումարներ կապցնել անցած շրջանների, որոնք, սակայն, ոգով չեն մեռած, ալ սերտ և նուր ևսկ ամենաանբար կերպով կապում են ներկայիս կեանքի ու գործիչների հետ,—ալդ տեսակ փորձերը չեն կարող մեծ կամ փոքր ցնցումներ չառաջացնել ժամանակակիցների մէջ: Անցեալ լօղւածի մէջ ալդ ճախատեսման էր իսկ. «...չատերը (ասած էր լօղւածում, էջ 8) չահ են տեսնում անցեալը՝ հէնց որովհետեւ անցեալ է, փառաբանելու»: Նուր երեսում, մի փոքր ներքեւ ասած էր՝ «ինչորի մէջ հակառակ ուղղութեամբ շահագրգռւած անձեր, տեսնելով հակառակ իրենց ընդլիմադրութեան և առանց իրենց մասնակցութեան կատարող գրական շարժումը, անհամբարտութեան մէջ ընկած՝ արդէն սկսել են անցեալով ներկան սեպնել, վատ քողարկւած զխառնութեամբ ամեն ինչ ուրանալ, ինչ իրենց արածը չէ»:

Ալդ ուրացողները կան. մենք ալդ գիտէինք. և մեծ գաղտնիք չէր ալդ ոչ ոքի համար. ալդ երեսում էր շատերի գրածների տոնից: Բայց իրօք շատերի և շատ շատերի համար գաղտնիքի պէս բան էր թէ ինչ էին ներկայացնում 80-ական թվականների մամուլն ու գրականութիւնը: Ասենք նոյն իսկ դա գաղտնիք չէր, բառիս սովորական մտքով,—որովհետեւ «գաղտնիքը» աչն կը լինէր, և թէ մարդ հարց տալիս լինէր թէ ինչ էր աչս ինչ շրջանը, և պատասխանէր թէ «չգիտեմ»: Բայց բանն էլ հէնց աչն

է, որ ամենքը կարծում էին թէ «գիտեն»։ ի՞նչ որ անցեալում գրել են Արծրունի, Պատկանեան, Նազարեան, Նալբանդեան, Բաֆֆի, Արծրունի, Շահազիզ, Պառչեան, Սունդուկեանց, Բարխուդարեան, Աղաբեան, Ներսիսեան և այլ մեծ ու փոքր անուաններ. և ահա երբ խօսքը ներկային է գալիս, 90-ական թւականներին, մէկ էլ կը տեսնէք այս որ և է 6—7 տարիների դէմ կանգնեցրին մի շարք չալտրի անուաններ, որոնք իբր թէ պիտի գալին ներկայիս սերունդը ջախջախելու համար։ Էլ հարցնող կ'ար, թէ ախար, օրինակ, Պատկանեան և Նազարեան իրենց առաջին գրողութիւններով և անուն հաստատելովը 50-ական թւականների մարդիկ են, Շահազիզ, Նալբանդեան, Պառչեան,—60-ական թւականների, Արծրունի, Բաֆֆի—գլխաւորապէս 70-ական թւականների և ալլն։ Եւ ահա, երբ հերթը գալիս է 80-ական թւականներին, հետաքրքիր էր իմանալ՝ թէ հաջորդաբար միմեկը ինչ էր ներկայացնում. ինչ էին արտագրում ալլ բոլոր անուանները, գոնէ կենդանիքը, և թէ ինչ գրական նոր սերունդ կարող էր առաջանալ, եթէ բանը մնար հրապարակում ալլ ժամանակ բարձր խօսողների—հրապարակասունների—բռնած ուղղութեանը։ Չէ որ գրականութիւնն ու մամուլը, մանաւանդ մեզնում, ձեռք ձեռքի են ընթանում և երբ մամուլը փռւած է—իմացէք որ դորա ազդեցութիւնը գրականութեան վրայ անխուսափելի է լինելու. առողջ է մամուլը—և ալլպիտի մամուլ կենդանութիւն է տալու նաև մի առողջ և կենսունակ գրականութեան։ Եւ ահա, երբ մէկը ալլ հարցը տալիս է—այն հարցը թէ ինչ էին ներկայացնում ութսունական թւականները—ալլ ժամանակ ստացում է այն պատասխանը, որ ընթերցողները կարդացին «Ինչ էինք ժառանգել» չղաժժում, որի կրկնողութիւնովը չենք զբաղւիլ։

Հարկաւ, ալլտեղ ի նկատի չէր առնւած ամբողջ գրականութիւնը, ալլ միայն մամուլը և գեղեցիկ գրականութիւնը՝ բանաստեղծութիւն, վիպասանութիւն և դրամա—ինքնուրոյն և թարգմանական։ Բալց թէ հետաքրքրական և թէ միանգամայն ցաւալին սա է, որ ոչ միայն գեղեցիկ գրականութիւնը, ալլ և առհասարակ ընթերցանելի գրքերի սպառողութեան դործը մեզնում շատ ամուլ էր ալլ տարիների ընթացքում—ի հարկ է համեմատելով նոցա անմիջապէս չաջորդած 90-ական թւականներին։ Եւ ինչպէս մեռած էր նոյն իսկ Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը! Չնայած որ նա մի նորարոգութիւն էր, բալլ ձեռաց ընկալ սպանիլ ձեռքերի մէջ—և բոլորովին ընկան լիւրպով, իսկ և իսկ 80-ական թւականների ոգուն համաձայն, ալլպէս որ ալլպիտի մի ընկերութեան անդործութիւնը ոչ մի խնդիր չէր չարուցանում. շատ-շատ՝ մի մի ծաղրում էին. բալլ լուրիւ, զաւրանալ, հաւաքել դործ կատարելու համար—ալլքանը ոչ! դորա համար պէտք էր որ հրապարակասունութիւնը իրան

դաւաճանէր—չէ որ ալդ մամուլի բնորոշ գիծը տրւած էր Մուրճի անցեալ համարումս...

Մուրճի «Ինչ էինք ժառանգել» լուսածով, ուր է նկատի էր առնուած միմիայն մամուլն ու զեղեցիկ գրականութիւնը (բանաստեղծութ., վէպ, դրամա), իմ մէջ հետաքրքրութիւն չարժեց իմանալու թէ ինչ հալումն էր 80-ական թւականների հալոց ժամանակակից պատմագրութիւնը կամ գոնէ պատմական հարցասիրութիւնը, լանձին Ալեքսանդր Նրիցեանի, Լեխուզարիութեանն հետեանքը ապշեցուցիչ էր ալդ մարդն էլ 80-ական թւականներին հալոց գրականութեան համար «ծակն էր մտած»։ Նորա շատ թէ քիչ կարևոր պատմական հարցասիրական լուսածները կանգ են առնում 1883 թականին. էլ դէնը—և ալդպէս մինչև 1890 թականը—հալոց բանասիրութեան համար առհասարակ Նրիցեանը չկար, եթէ գոչութիւն չհամարենք այն, որ նրա անունը մի-մի երևում էր մանր-մունր լրագրական աննշան լուսածիկների տակ։ Նրա դարձը դէպի հալոց պատմական գրականութիւնը սկսում է նորից 1890-ից, բայց այս անգամ արդէն մեր օրերում խոշոր հատորների հասնելու համար։

Բայց գիտէք Նրիցեանի ալդ հատորներից ինչ «նշանաւոր» օգուտ քաղեց 80-ական թականների հրապարակախօսական և կրիտիկական խեղկատակութիւնը, այս մեր 90-ական թականներին? Նա անամօթ կերպով եկաւ—Քալանթարների ու Մալումեանների բերանով—այս ապշեցնող եզրակացութիւնը դուրս բերելու, թէ Նրիցեան զրեւ է ալդ գրքերը (Ամենայն Հալոց Կաթողիկոսութիւնը և ալն) Ներսէսին տոտրացնելու համար և ալդ ասում էր մի թերթում, որը, իւր 25 տարեալ գոչութեան ընթացքում մի հատ լուսածիկ չի տուել ժամանակակիցներին ծանօթացնելու համար թէ ով էր այն Ներսէս V, որին կեղծ պաշտպանութեան տակ են ուզում առնել ալդ պիգմէները ընդդէմ մի մարդու, որը Ներսէսին ամենամեծ արձա՛նը կանգնեցնելու գործի վրայ է ալմա։ Ոչոք, իհարկէ, չհաւատաց խեղկատակութեան ձայնին. բայց տեսէք միայն, թէ մեր այս 90-ական թականներին որպիսի անախորդմ է թւում 80-ական թականներին իշխող կեղծ հրապարակախօսութիւնն ու կեղծ քննադատութիւնը, որ իւր գոչութիւնը դեռ քարշ է տալիս մեր օրաթերթային լրագրութեան մէջ...

Եւ անա մենք դառնում ենք նորն ալդ շարաքաղղ մամուլին։ Բանից դուրս է գալիս որ «Ինչ էինք ժառանգել» լուսածի հեղինակը «անարդար» է եղել 80-ական թականների մամուլի նկատմամբ. ալդպէս է վկայում Մշակ'ը, որը, փրփուրը բերնին, հաջուանքներով լի (իսկ և իսկ 80-ական թականներին վալել) մի երկար բողոք գրեց Մուրճի դէմ։ Բայց դա կա-

տարեալ կեղծաւորութիւն է՝ կեղծաւորութիւն է ալդ, եթէ Մուրճի գէմ գրած չօղածը վերագրելու լինենք այն անձերին, որոնք կաղմում են ալդ թերթի խմբագրութիւնը և ղեկավարում նորա հրապարակախօսական և քննադատական բաժինը. սկի չօղածը խմբագրական էր բառիս բուն նշանակութեամբ, և անստորագիր էր, երևի ցոյց տալու համար թէ ալդ նկատմամբ խմբագրութեան մէջ կարծիքների տարբերութիւն չկալ։ Փաջութիւն են համարել Մուրճը հաշուելու. դէհ քաջութիւն ունեցէք ալժմ մեզ լսելու։

Մուրճի ընթերցողներին անհաճու չի լինիլ եթէ մի հատ օրինակ բերենք թէ ինչպէս 80-ական թւականների մամուլի ուղղութեան գէմ ծածուկ բողբոջը այսօր կեղծելով Մուրճի գէմ դաւեր սարքողներին է ընկերացել։

Այդ մարդը ոչ ալ ոք է, բալց եթէ Լէօ, ալս ալժմնան Մշակի Լէօն, որը ահա թէ ինչ կարծիքներ էր գրում Մուրճի խմբագրին անցեալ տասնամակի մամուլի մասին։ Նախ նորա մի կարծիքը 1889 թւականից 13 ղեկաներին։

«Եմ բարեկամներից շատերը (գրում էր Լէօ-Առաքել Բաբայանէան), իմանալով որ ես պիտի աշխատակցեմ «Մուրճ» ին, գիմել են ինձ նամակներով և յայտնել իրանց ցանկութիւնը որ Մուրճը... միանգամայն հեռու պահել մեր այժմեան պարբերական մամուլի ուղղութիւնից... Շատ լաւ իմանալով որ մեր լրագիրների այժմեան ուղղութիւնը սաստիկ ճանճրութիւն է պատճառում ընթերցող հասարակութեան, թէ չասեմ զայրոյթ, ես, իբրեւ Մուրճի բարձաւաճման նախանձախնդիր...»

Երբ Լէօն գրում էր ալդ տողերը, Մուրճի առաջին համարը ղեւ միայն չարում էր։ Բալց ահա լոյս տեսաւ ալդ համարը, և մի քանի ամիս անց, 28 մալիսի 1889 թ., Լէօն, ակնարկելով ալդ ժամանակ սկսած պատկերազարդ թերթերին, գրում էր.

«Յամենայն գէպս ես կարծում եմ որ եթէ երկու թերթերն էլ յսկեն հրատարակել, նրանց բաժանորդները պիտի շատանան ոչ թէ ի հաշիւ Մուրճի, ալ ի հաշիւ մեր օրաթերթերի, որոնք օրէցօր անասելի կերպով տաղտկացուցիչ եւ տխուր են դառնում իրանց դատարկութեամբ, անբովանդակութեամբ։ Մուրճը, իմ կարծիքով, բոլորովին սուսնձին տեղ ունի գրաւած։ Նրա ամենագեղեցիկ յատկու-

թիւներինց մէկն այն է, որ ... եթէ նրան կարողանայ վնասել որևէ... թերթ, կ'սսենք թէ հայ ազգի միտքը բոլորովին փչացած է»:

Մի ալլ նամակով, լուսիս 12 1890, Լէօն, իհարկէ ի նկատի ունենալով դրական անդաստանում աշխատողների անբաւարարութիւնը, գրում էր թէ՝

«Շատ ցանկալի էր որ Մուրճ'ը, իբրեւ միակ ամսագիր, պատրաստէր նոր ու թարմ գրողներ...»

Դորանից էլ մի տարի անց, Լէօն, ակնաւորելի կերպով ակնարկելով Մշակում Արծրունու բռնած զիրքը զէպի Մուրճ'ը, և ընթերցողների մեծամասնութեան կողմ հետևողութիւնը, գրում էր փետր. 7 1891 թ.

«Ես հիմա գիտեմ որ հոսանքը բաւական զօրեղ է, որ փտած ու անտանելի ուղղութիւնը շատ պինդ է հաստատուած, որ կարելի լինի նրա գէմ մաքառել»:

Եւ տեսէք շարունակութիւնը.

«Ես այն մտքին եմ, որ եթէ Մուրճ'ը վնասել է իսկապէս իր անկողմնապահութեան պատճառով, այդ միայն փառք ու պատիւ կարող է բերել նրան. նրան կը աշտովանէ ապագայ պատմութեան մէջ մի զեղեցիկ անկիւն, եթէ անգամ զոհ զնայ. իր անկողմնապահութեան... այդ անկողմնապահութիւնը, չպէտք է ուրանալ, գնահատուել է մեր մէջ, բաւական հզօր զէնք է եղել հակառակորդներին ջարդելու համար»:

Եւ ապա, նամակի վերջում.

«Ես բոլորովին համոզւած եմ, որ դուք իմ այս երկարաբանութիւնը նոյնպէս կ'ընդունէք իբրեւ բարեկամական զգացմունքի թելադրութիւն: Զգիտեմ թէ ինչպէս է ճշմարիտը, բայց ես մինչև այժմ միայն Մուրճ'ի լաւութեան, բարօրութեան մասին եմ մտածել»:

Եւ երբ Լէօն գրում էր ազգ վերջին տողերը, նա արդէն պատճառ ունէր նեղացած լինելու Մուրճ'ից, որը չէր տպել նորա մի երկար, շատ երկար գրածքը, ուր նա շատ վատ, ձանձրալի և տաղտկալի ձևով (աւելի տաղտկալի, քան նորա «Տատիս պատմածները» անցեալ տարւոյ Մշակի համալրներում) բողբոջում էր ժամանակի բոլոր օրաթերթերի, և չատկապէս Մշակի ուղղութեան զէմ, ճիշդ որպէս 1888 ին գրած նամակում. Չտպւած

զօղւածի առիթով զբաժնաւորումնա կրկնում էր լօղւածի զլիսաւոր իմաստը, վկայելով որ մամուլի ալդ ուղղութեան շնորհիւ—

«Նոյն իսկ այժմ ոչինչ մի բան չի զլուխ դալիս...»

Այսպէս էր զգում, ալդպէս էր մտածում, ալդպէս էր գէթ ծածուկ բողոքում Լէօն 80 ազան թւականների մամուլի և մասնաւորապէս Մշակի, ալդ, Գրիգոր Արծրունու Մշակի զէմ, շարունակելով մնալ նոյն ալդ թերթի աշխատակիցը ապացուց, որ նա կարծիք էր չալանում ոչ թէ անձնական հակառակութիւնից զէպի ութսունական թւականների մամուլի զլիսաւոր ներկայացուցիչը, ալլ որ իրօք այն զրութիւնը նա անտանելի էր գտնում։ Աստաւը դադարաւորական էր,—ա՜նա թէ ինչն է անկասկածելի։

1888 թ-ին նա վկայում էր թէ ալդ մամուլի բռնած ուղղութիւնը «ոստոիկ ձանձրութիւն է պատճառում, եթէ չասենք զայրոյթ»։ 4—5 ամիս դորանից լետու 1889-ին նա վկայում էր թէ «մեր օրաթերթերը օրէցօր անասելի կերպով տաղակացուցիչ և տխուր են դառնում իրանց զուտարկութեամբ, անքովանդարութեամբ» և որ Մուրճը, իրա կարծիքով, «բոլորովին առանձին տեղ ունի գրաւած»։ 1891-ին նա լուսահատւած վկայում էր թէ 80-ական թւականների մամուլի «փտած ու անտանելի ուղղութիւնը շատ է պինդ հաստատւած, որ կարելի լինի նրա զէմ մաքառել»։ և, կից դորա հետ, նոյն Լէօն, տեսնելով մեր մաքառումը ալդ փտած ու անտանելի ուղղութեան զէմ, գտնում էր որ «նրան (Մուրճին) կը պատկանէ ապագալ պատմութեան մէջ մի զեղեցիկ անկիւն, եթէ անգամ զո՛հ դնալ» և ալլն. և նոյն ալդ 1891 թւականին նա նոյն Մուրճում կամենում էր ալդ մտքերը մի երկար և ձիգ բալց սաստիկ քօղարկւած ու անասելի մութ լօղւածով արտապալտել, բալց Մուրճը անտէր չէր որ իւր մի աշխատակցին հաճոյանալու համար նորա մութ, անհասկանալի մինչ անիմանալիութիւնը քօղարկւած լօղւածներն էլ տպէր, մինչդեռ նորա մասնաւոր նամակները այնքան պարզ էին...

Սոքա—զոկումէնաներ են, անհերքելի փաստեր այն բանի համար, թէ ինչ էր մտածում Մշակի ներկալիս խմբագրութեան մի սիւնը, պ. Լէօն, զեռ ևս Արծրունու կենդանութեան միջոցին, նորա մեծահանդէս լօրելիանից թէ տարի ու կէս առաջ և թէ մի տարի լետու և թէ լօրելեանի ժամանակները—80-ական թւականների մամուլի ու մասնաւորապէս Մշակի, ալս հէնց Գրիգոր Արծրունու Մշակի մասին!

Ընթերցողներս թող ներողամիտ աչքով նալեն, որ ես բաւականաւորում եմ ալդ մի հատ տնծի կարծիքների հետ ծանօթացնելովը... Աւելին գէթ ալսմ ինչներով է պէտք։ Բալց ինդրեմ չալիք բարոյական անկման խորութիւնը, երբ նոյն Լէօն, ընկերովի մի քանի ալլ, ամեն պատասխանատուութիւնից իրենց ազատ համարող, պարոնների հետ Մշակում (ՁՅ 19)

կեղծ, այն հարկեր անգամ կեղծ պաթոսով չափարարում է աշխարհի բան. «Մարդ չի կարող առանց խորին զգւանքի ձեռք առնել ինչ էինք ժառանգել չօգւածը, ուր օրը ցիրեկով, առանց կարմրելու նա (Արասխանեանց) ասում է թէ՛ մենք դժւար ենք երեակալում մի աւելի մեծ ամալութիւն, քան ինչ տիրում էր մեր մամուլի ու գրականութեան մէջ 80-ական թւականներին: Սոսկալի է այդ ամալութիւնը...»

Նա, որ երէկ մեզ վկայում էր թէ 80-ական թւականների մամուլը տաղտկալի էր, ծանծրալի, զայրոյթ պատճառող, անբովանդակ, դատարկ, նա որ զաւրանում էր այդ մամուլի ուղղութեան դէմ, — այսօր «առանց խորին զգւանքի» չի կարող լսել աշխարհի մի խօսք թէ՛ 80-ական թւականներին մամուլն ու գրականութիւնը մեծ «ամալութիւն» էին ներկայացնում...

Փարիսեցիներ, հասարակութիւնը մի օր ձեր հախից կը գաջ. այդ հատուտ է. բաւց ես առաջիմ կ'ուզէի որ հասարակութիւնը իմանար թէ ինչ գին պիտի տա՞յ ձեզ, երբ դուք ազատ համարձակ «խորին զգւանք» էք չափում սր եւ իցէ մի բանի դէմ...

Լ Ո Ւ Ս Ւ Ն Ի

## ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

### Հ. Ս Ե Ի Ե Ա Ն Ի

#### XI

Թիֆլիսի ղերասանները եւ նրանց ներկայացումը.— Բազայ ղերասանական խումբը.— Մի նոր տաղանդի առիթով.— Մի միջադէպ.— պ. Պետրոսեանի մասնակցութիւնը Թիֆլիսի հայերէն ներկայացումներին:

Թատրոնի բարեկամները ուրախութեամբ լսեցին, որ պ. Պետրոսեանը պիտի մասնակցի Թիֆլ. ղերասանների ներկայացումներին եւ անտարակոյս կը տրւէին քիչ թէ շատ տանելի պիէսներ, բայց զժբաղդաբար մինչ օրս (իւետր.) դեռ չտրուեց եւ ոչ մի ներկայացումն նրա մասնակցութեամբ:

Տ. Աւետեանի վարչութեամբ կազմած ղերասանական խումբը լուծարի 4-ից սկսեց իւր ներկայացումները Բազայում: Հետզհետէ ներկայացւեցին 1. «Ժան-Բոդրի», 2. «Սամէլ» եւ «Սիրահարը սեղանի տակ», 3. «Հրէուհի» եւ «Պոմպարդոնի պանդոկը», 4. «Գոկտոր Շտոկման» (ի նպաստ Ա. Վրոլրի), 5. «Պէպօ» եւ «Բաղդասար աղբար», 6. «Ղարաբաղի աստղադէտը» եւ «Միկիձի հարսանիքը» (ի նպաստ պ. Ստեփանեանի): Խումբը կը մնայ Բազու մինչեւ բարիկենդան:

Վերջերս մի լոգւած տղւեղ «Երծաղանք» ում, որը աւետում էր աշխարհին մի տաղանդաւոր երիտասարդի բեմական արւեստը ուսումնասիրելու համար Փարիզ ուղարկելը: Յօղածագիրը ղրաւսում էր ալդ երիտասարդի ձիրքերը, եւ դէմքի աջնպիսի ծամածռութիւնները՝ որից օր. Պապանան—չալտնի հաչ երգչուհին—եւ վախեցել է: Մենք չենք կարծում, որ պ. Մոցիկեան, (ալլպէս է «Արծաղանքի» լոգւածագրի ազգանունը) հաչ Թատրոնի շահերը, նրա աստիճանաբար առաջագիտութիւնը, զարդացումն

է աչքի առաջ ունեցել, ալ լոկ մի տեսակ համակրանք, բարեկամական զգացմունք դէպի ալդ երիտասարդը. ալլապէս մենք մի պատճառ չենք գտնում ամբողջ սիւնակ ու կէս դրելու մէկի տաղանդը գովաբանելու համար, տաղանդ՝ որի հետ ամբողջ Թիֆլիսը ծանօթացած է շօշափելի կերպով, սկսեալ ճաշարաններից մինչև խմբադրատները: Մենք կարծում ենք, որ եթէ կան թատրոնի բարեկամ անձինք, որոնք նիւթապէս պատրաստ են օգնելու ընդունակ երիտասարդներին, որպէս զի նրանք աւելի լաւ պատրաստած գան գործելու մալրեցի բեմի վերալ, մենք ալդպիսիներին կառաջարկենք մի շատ գործնական միջոց, աչն է, հնար տալ հալ դերասաններին—ի հարկէ ընտրելով—որ նրանցից իւրաքանչիւրը հերթով մէկ-մէկ սէզոն անցկացնէ Մոսկւալում կամ Պետերբուրգում, չաճախէ միշտ տրուող ներկայացումներին, պարապէ թատրոնական գրականութեամբ, հետէ մինչև անգամ ներկայացումների կրկնութիւններին (ալդ ի հարկէ սկզբում, որպէս զի սովորեն թէ կանոնաւոր խումբերը ինչպէս են պատրաստում ներկայացնելի պիէսները). և մենք հաւատացած ենք հաստատապէս, որ 5—6 տարի ցետոյ հասարակութիւնը ինքը կը տեսնէ մեր առաջարկութեան գործնականութիւնը և նրա տւած շօշափելի օգուտը: Ապա թէ ոչ պատահական տաղանդ կարծւածները վրայ հազարները ի դուր կը վատնեն և հալ բեմը մի շօշափելի օգուտ չի ունենալ: Մենք օրինակներ ունենք մեր աչքի առաջ:

Վերջին ըոպէին լսում ենք, որ դերասանները պ. Պետրոսեանի մասնակցութեամբ խաղացին Զուգերմանի «Պատիւ» փայտի պիէսը: Սրանով նրանց գործունէութիւնը մտաւ մի որոշ, աւելի կանոնաւոր շրջան, թէև շատ կարճ ժամանակի համար:

Փետրւար 1897 թ.

## XII

Թիֆլիսի ներկայացումները.—Բազույ խմբի ներկայացումները.—Նրանց վախճանը.—Ֆէլէկեան քոյրերի ներկայացումները.—Ապագալ խմբի վարիչներ եւ այդ առիթով երկու խօսք:—«Բեմական գործիչների համառուական առաջին ժողովը»:

Թիֆլիսի դերասանները հետզհետէ ներկայցրին «Պատիւ», «Ապահարզան», «Էս էլ քի մոցիքլութիւն», «Դոկտոր Թաթոս» «Դամոկլեան սուր» «Օրթաճալու քէփը», (ի նպաստ պ. Սարգսեանի), «Օթէլլօ», «Պէպօ», «Ստարներ» (ի նպաստ պ. Պետրոսեանի), «Արչակ Բ.», «Փաստաբանի մօտ»: Ներկայացումները շաքաթական մի անգամ էին, հինգշաբթի օրերը:

Տ. Մ. Աւետեանի վարչութեամբ կազմակերպւած խումբը Բագուում հետզհետէ ներկայացրեց հետեւեալ պիէսները. «Բարեգործական զիմակի տակ», (չօգուտ Թիւրքիայից Ռուսաստան փախած հայերի), «Հրէուհի», «Մկնիկը» (ի նպաստ օր. Ախաշեանի), «Ասլան բալասի», «Պոմպարդոնի պանդոկը», «Պարիզի շրջմուկը», «Չարաճճի» (ի նպաստ պ. Աւետեանի), «Արշակ Բ.», «Բաղդասար աղբար», «Օթէլլօ» (ի նպաստ պ. Արշէնի), «Մեծագատիւ Մուրացկաններ», «200,000», «Սմբատ Ա.», «Ասլան բալասի», «Տիկիներ ննջում է», «Միկիճի հարսանիքը»։ Ներկայացումները տըրուում էին շաբաթը երկու անգամ, չորեքշաբթի և շաբաթ օրերը։

Թիֆլիսի ներկայացումները մեծ մասամբ ապահովւած էին դերասանների նպաստներով. զժառուրթիւն էին կրում դերասանները ալն խաղերի համար՝ որոնց տոմսակները կասսայում պիտի ծախէին։ Տ. Աւետեանը ևս, վերջին ներկայացումից չետոյ բոլոր դերասանների հաշիւները վերջացնելիս չափեւէ է, որ առանց վնաս կրելու, ներկայացումների արդիւնքով կարողացել է խումբի թէ ճանապարհածախսերը և թէ ռոճիկները լիովին վճարել։

Միւս կողմից օր. օր. Վարդիթեր և Մարի-Հրանուշ Ֆէլէկեանները Երևանում հետզհետէ ներկայացրին «Հրէուհի», «Պարիզի շրջմուկը», «Մարական սէր», «Սիւզան Խմբէր»։ Դեկտեմբերի սկզբից օրիորդները իրանց ներկայացումները սկսան Վարս քաղաքում, «Չաւակ», «Պարիզու շրջմուկի», վոդիլներ (ի նպաստ Բարեգործ. ընկերութեան ձիւղի) «Անջէլօ», «Թուզան», «Չարաճճի» և «Օրլէանի կոյսը»։ Օրիորդները մտադիր են կրկին Թիֆլիս վերադառնալ։

Լսում ենք, որ թէ Թիֆլիսում և թէ Բագուում, դանազան անձինք կամ առանձնակի և կամ միացած կամենում են խումբեր պահել։ Ուրախալի է անշուշտ ալզ ձգտումը. բալց միւս կողմից մեզ շատ տխուր մտածութիւնների առիթ են տալիս ալս լուրերը՝ ի նկատի ունենալով նրանց նախորդների, թատրոնայան մասնաժողովների գործունէութիւնը, որոնք մսխելով հազարներ, չկարողացան դոնէ քիչ թէ շատ ամուր հիմքերի վերալ ղնել թատրոնի գործը։ Մեր շատ հիմնարկութիւնների նման թատրոնական գործիչներն էլ մտածեցին միմիալն իրանց մասին, իրանց ժամանակի, իրանց օրերի մասին. ում ինչ գործն էր թատրոնի աստիճանաբար, ամուր հիմքերի վերալ ծաղկիւն ու բարգաւաճիլը. բաւական էր, որ իրանք ռոճիկներ էին վճարում դերասաններին, լաւ ուժեր էին հրաւիրում, տըրուում էին փառաւոր ներկայացումներ... և ալսքանը բաւական էր. և երբ անգոնը վերջանում էր, ալզ մասնաժողովի անդամները կամ գործիչները

(աննշան բացառութեամբ) ոչ միայն խզում էին իրանց թատրոնի հետ միացնող կապերը, այլ և մի լաւ աքացի էլ էին տալիս ալդ հիմնարկութեան.—«Մնաք բարեհաւ ակսուհետե, մալրենի բեմ, զեղարեւոտ, և ալ ուրիշ աչսպիսի գեղեցիկ և ոգևորող իդէաներ, մենք մեր հաշիւը վերջացրինք ձեզ հետ. մեզնից չետոյ եկողներն էլ իրանք իրանց մասին թող մտածեն. մնաք բարեհաւ...» Եւ երբ ամեն կողմից չուահատ, զերասանները կսմեցան մի ընկերութիւն կազմել մասնաժողովների թողած աւերակների վերալ, «Թատրոնական դումար» անունով փողերից մի կոպէկ անգամ չկար զերասանների ձեռքին, որ կարողանալին գոնէ սկզբնական ընթացիկ ծախսերը հողալ. մի շորի կտոր անգամ չկար, մեր աշխատանքի շաւաթ—բայց ճգնաժամին զերասաններին հաց մատակարարող—պատմական ողբերգութիւնները ներկայացնելու չկալին զգեստներ նոյնպէս միջին և վերջին դարերի Ներոպական հեղինակները ներկայացնելու համար. Ել չենք խօսում հազարներ արժող ուէպէրտուարի մասին՝ որ թալանած էր բառի իսկական նշանակութեամբ:

Այս բոլորը ստիպում են թատրոնի բարեկամներին ի նկատի ունենալ ապագայում կազմակերպ մասնաժողովների ժամանակ: Նրանք որոշ պարտաւորութիւններ պէտք է չանձն առնեն զէպի ընդհանուր գործը:

Այս մեծ պատառ ընթացքում Մոսկալում կաշահալու է «բեմական գործիչների համառուական առաջին ժողովը»: Ժողովի նպատակն է բազմակողմանի կերպով պարզել Ռուսաստանի թատր. գործի ալթմեան բոլոր կարիքն ու պահանջները: Ժողովը Ն. Կ. Մեծութեան Թագաւոր Կալսեր հովանաւորութեան տակ գտնուող «Ռուսաց թատերական ընկերութեան» նախաձեռնութեամբն է կազմակերպւում: Ժողովին մասնակցել կարող են բեմական բոլոր ճիւղերի աշխատաւորները, զերասաններ, զերասանուհիք, խորխտներ, երաժիշաներ, ղեկորատորներ, և ալքս Բացի սոցանից, որ և է թատր. ընկերութեան մասնակցող թատերասէրներ, գրողներ, խմբագիրներ և ալն: Մասնակցել կարելի է գրաւոր ղեկուցումով կամ ժողովի նիստերին անձամբ մասնակցելով: «Ռուսաց թատեր. ընկերութեան» միջոցով ժողովի լիակատար արձանագրութիւնը (3 օրինակ) պիտի մատուցուի ներքին գործոց պ. Նախարարին: Ի միջի ալ խնդիրների՝ քննւելու է հանրահատչելի թատրոնների եւ թատրոնական լուրջ ուէպէրտուարի, նրա կըրթական նշանակութեան, թատրոնը ղեկւարեւտօրէն բարձրացնելու եւ բեմական գործիչներին ապահովելու խնդիրները: Նիստի զբաղմունքները ամենօրեայ են, և երկու շաբաթ պիտի տեսնեն:

Որքան մեզ չաւտնի Լ՝ հալ բեմը իւր ներկայացուցիչը չունի ալդ ժողովում:

## ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՅՔԸ ԿՐԵՏԷԻ ԽՆԴՐՈՒՄ

Գնդապետ Վասսոս, որի հրամանատարութեան ներքոյ յունաց կառավարութիւնը Կրետէ ուղարկեց մի գունդ զօրք, յայտարարեց, որ Կրետէն միացրած է Յունաստանի հետ:

Պետութիւնները հակառակելով Յունաստանին՝ վճռեցին բռնել չորս կէտ՝ Կանէա, Ռետիմնօ, Կանդիա և Սիտիա: Այդ մասին հաղորդեց յունաց հիւպատոսին Կրետէյում փետրւարի 6-ին:

Յունաց հիւպատոսը, եւրոպական նաւախմբերի ծովապետների պահանջով՝ վար իջեցրեց յունական դրոշակը Կանէյում: Բայց Յունական կառավարութիւնը հրամայեց հիւպատոսին նորից դրօշը կանգնեցնել:

Կրէտէի ընդհանուր նահանգապետի պաշտօնը, ի տեղի Բերովիչ փաշի, որը թողել է պաշտօնը և ապաստանել Տրիեստում, սուլթանը առաջարկեց Գարաթէոդորի փաշին (ազգով յոյն): Բայց նա ևս հրաժարեց: Վերջը այդ պաշտօնը յանձն առաւ Փոտիադէս փաշան (9 փետր.):

Գերմանական կառավարութիւնը առաջարկութիւն արու պաշարել նաւերով նաև Յունաստանի նաւահանգիստները. առաջարկութիւնը սակայն ընդհանուր հաւանութիւն չգտաւ միւս մեծ պետութիւնների մէջ. բայց յայտնեց, որ այդ միջոցին կը դիմեն միայն իբր ծայրայեղ միջոցի՝ Յունաստանի հակառակութիւնը կտրելու համար:

Յունաց հիւպատոսը Կանէյում (9 փետրւար) դնաց յունաց զօրքերի բանակը իբր յունաց թագաւորի կոմիսար:

Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ պետութիւնների (նահանգների) սենատը վճռեց Յունաստանին համակրութիւն չայտնել (9 փետրւար):

Թիւրքիան զէնքեր է բաժանում հարաւային Ալքանիայի մահմեդականներին, Յունաստան ներս խուժելու, եթէ Յունաստանը զօրք անցկացնի ցամաքի սահմանով:

Անգլիական, գերմանական, աւստրո-ունգարական և ռուսաց նաւերը Կանէյում կրակ բացարին կրէտական ապստամբների դէմ, որոնք կռիւ էին սկսել Թիւրք զօրքերի հետ. կրակը դադարեցրին երբ յունական դրօշակը հեռացրին ապստամբները: Ֆրանսիական և իտալական նաւերի մասնակցութիւնը չեղաւ միայն այն պատճառով, որ կրակելը դադարեցնելու հրամանը աւելի վաղ տրւեց:

Անգլիական պարլամէնտում Լաբուշէրի հարցապնդումը այդ զէսքի մասին մերժեց 243 ձայնով ընդդէմ 125-ի:

Անգլիական, ռուս և իտալական հիւպատոսները առաջարկեցին պատերազմող կողմերին Սելինոյում 7 օրւայ զինադադար, որ և ընդունեցին թէ քրիստոնեաները և թէ մահմեդականները:

Սիտիայում «Սիւշէ» նաւը վերցրեց 300 վիրաւորեալներ քրիստոնեաներից և մահմեդականներից:

14 փետրւարի (նոր տոմարով 26 փետրւ.) լորդ Կիմբերլէյի հարցապնդման առիթով արտաքին գործերի մինիստր լորդ Սալիսբիւրի պարլամէնտում հաղորդեց այն հեռագրի մասին, որ մի օր առաջ նա ուղարկել էր միւս մեծ պետութիւններին. հեռագրի մէջ ցոյց է տրւած բրիտանական քաղաքականութիւնը Կրետէի մասին այսպէս. Կրետէի վարչական ինքնավարութիւն, իբր պաշտան միջազգային գրաւման վերացմանը. այդ պաշտանով Կրետէն պիտի կազմի Օտտոմանեան կայսրութեան մաս. այդ որոշման մասին տեղեկացնել Թիւրքիային և Յունաստանին. եթէ Յունաստանը կամ Թիւրքիան հրաժարեն, բան է եթէ պահանջի, որ նոքա իրենց ծովային կամ ցամաքային ոյժերը հեռացնեն կղզուց, պետութիւնները այդ զէսքում իրենց որոշումը գործադրեն ոյժով. ենթադրւում է, որ Թիւրքիան կը թողնի Կրետէյում միայն մի վաշտ զօրք լոկ իբր նշան իւր գերիշխանութեան, ինչպէս այդ իւր ժամանակ արաւ Սամոս կղզու. և Սերբիայի նկատմամբ:

Ռուսիան ներկայացրեց իւր բանաձեւը Կրետէյում միահամուռ գործելու մասին, որին միացան նախ Գերմանիան, ապա Աւստրո-Ունգարիան, Ֆրանսիան և Անգլիան ու Իտալիան:

Կ. Պոլսում ոստիկանութիւնը հրահանգեց Գալաթայի զաւար-  
ճութեան տեղերից վերցնել յունական զրօշակները:

Աթէնքում, պետութիւնների դեսպանները խմբադրեցին յու-  
նաց կառավարութեանը տրեւիք նոտան, ուր ասւած է թէ պե-  
տութիւնները վճռել են Կրետէին ինքնավարութիւն տալ, և այդ  
պատճառով առաջարկում են Յունաստանին՝ յետ կանչել իւր նա-  
ւերը և զօրքերը:

Ծովապետները վճռեցին յիշեց պաշտպանութեան ներքոյ առ-  
նել նաև Սելինո, Կանդանո և Հիերապետրու (18 փետր.):

Դեսպանները յանձնեցին Բ. Դրան խմբական նոտան Կրետէի  
մասին, ուր ասւած է թէ պետութիւնները բաց են թողնում  
օգոստոսի 13-ի (1896) ռեֆորմների ծրագիրը. Կրետէն չի միա-  
ցընելու Յունաստանի հետ, յունական զօրքերը պիտի հեռացնեն  
և Կրետէին ինքնավարութիւն պիտի տրւի (18 փետր.): Թիւրք  
զօրքերի հեռացման համար պետութիւնների և Թիւրքիայի միջև  
առանձին համաձայնութիւն (կոնւենցիա) պիտի կայացուի:

Նոյնատեսակ բաց աւելի խիստ խօսքերով նոտա յաջորդ օրը  
ներկայացւեց նաև Աթէնքում՝ յունական կառավարութեան:

20-ն փետրարի հեռագրի համաձայն՝ ժանդարմերիայի ռե-  
ֆորմը Կրետէյում բոլորովին չաջողւեց. նոր ընդունւած քրիստո-  
նեաները ժանդարմերիայի մէջ, բացի երկուսից, ամենքը թողին ու  
անցան ապստամբների շարքերը: Թիւրք ժանդարմները ռոճիկ չստա-  
նալու պատճառով ապստամբեցին. իտալական և գերմանա՝ան զօրքերը  
կրակ արին նոցա վրայ և զապարեցին, երբ ապստամբները սպիտակ դրօ-  
շակ բարձրացրին. ապա ապստամբեցին կոնակի մօտ եղած պահակ-  
ները, որոնք հրաձգեցին պալատից դուրս եկող օֆիցերների վրայ:

Սկսւում են բանակցութիւններ պետութիւնների և Բ. Դրան  
միջև Կրետէի նոր ընդհանուր նահանգապետ նշանակելու մասին.  
Դուռը պնդում է, որ նա պիտի թիւրք հպատակ լինի:

Յոյն նաւերին ծովապետները իրաւունք տւին (21 փետր.):  
Կրետէից յոյն վիրաւորեալներին Յունաստան տեղափոխել:

Բ. Դուռը (24 փետր.) պատասխանեց պետութիւնների խմբ-  
բան նոտային, թէ համաձայն է նոյա ընդհանուր բովանդակու-  
թեանը և ցանկանում է, որ Կրետէին տրեւիք ինքնավարութեան

մանրամասնութիւնների մասին յետոյ իրա հետ համաձայնութիւն կայացնելի:

26 փետրւ. վեց պետութիւնները նախնական թուղթ տւին յունաց կառավարութեան՝ թէ յունական զօրքերը ինչպէս պիտի թողնեն Արեւէն և ինչ տեղերում:

Արեւելցում Մալաքսա ամրոցը պաշտեցնելու փորձ արին քրիստոնեաները առանց յաջողութեան:

26-ն փետրւարի Թալման՝ հրատարակեց յունաց պատասխանական նոտացի բնագիրը. յունաց կառավարութիւնը մասնակցում է պետութիւնների հոգածութեանը հանրային խաղաղութիւնը պահպանելու համար և կամենում է պահպանել Արեւէն կատարեալ կործանումից. նա կարծում է, որ Արեւէի ինքնավարութեան ծրագիրը չի արդարացնիլ պետութիւնների մեծահոգի գիտողները, և որ նորան վիճակած է նոյնը, ինչ եղաւ այդ կղզու կառավարութեան այլ պրոէկտների հետ, որ ղուր ջանացին իրագործել: Եթէ նոր առաջարկը անպէտք լինի կարգը վերականգնելու համար, ապա անիշխանութիւնը և մոլեռանդութիւնը նորից կ'աւերեն կղզին: Այդ հիման վրայ յունաց կառավարութիւնը պնդագին համոզում է պետութիւններին, չպնդել ենթադրած ինքնավարութեան վրայ և գերադասել նորանից Արեւէն Յունաստանի հետ միացնելը: Ինկատի առած միացեալ նաւախմբերի ներկայութիւնը կրետական ջրերում, յունական նաւախմբի մնալը այնտեղ կարելի է անօգուտ համարել. սակայն կղզու վրայ յունական զօրքեր թողնելը ցանկալի է թւում կարգը վերականգնելու համար: Յունաստանի սրբազան պարտքը հրամայում է, որ կրետական ժողովուրդը չթողնւի մահմեդականներին: Եթէ յունական զօրքերը պետութիւններից յանձնարարութիւն ստանան կարգը վերականգնելու, ապա պետութիւնների ցանկութիւնները շուտով ի կատար կ'ածւեն: Ի վերջոյ նոտան գլխում է պետութիւններին խնդիրքով, որ կրետական ժողովրդին թողնւի յայտնել թէ ինչ կառավարութիւն է նա կամենում:

Յունաց կառավարութիւնը պատւիրեց զնդուպետ Վասսոսին՝ խոցս տալ պետութիւնների գինւած ոյժերից և քաշել կղզու խորքը:

Թիւրքիան զօրքեր է կենտրոնացնում յունական սահմանի մօտ, Էդհեմ փաշայի հրամանատարութեամբ, պատուիրելով միայն պաշտպանողական զիրք բռնել:

Բ. Դուռը հրաժարեց այլ ևս պնդել, որ Կրեոէի ընդհանուր նահանգապետը տաճկահպատակ լինի:

Սիրիայում (Կրեոէ) մահմեդականաց կոտորած եղաւ քրիստոնեաների կողմից:

Կանդանոյում մահմեդականները պաշարւած էին քրիստոնեաների կողմից. եւրոպական միացած զօրքերի մի մասը (200 բրիտանական, 100 ֆրանսիական, 100 աւստրիական, 150 ռուսական, 50 իտալական) 4 թիւդանթով, գլխաւորութեամբ անգլիական կապիտան Ռոդնէջի, մտաւ Կանդանո, ուր մնաց 6 ժամ. մահմեդականները դեռ դուրս չեկած՝ քրիստոնեաները (յոյն ազգաբնակութիւնը) ներս խուժեցին և կողոպտեցին, ապա հալածեցին փախչող մահմեդականներին մինչև ծովափը, բռնեցին մի աղջիկ, բազածի մի մասը և զէնքեր: Երբ փախչողները հասան Սելինո, հալածող զինւած ամբոխը (քրիստոնեաներ) սպառնական զիրք բռնեց, այրեց քաղաքը երբ փախչողները շոգենաւր չմտան: Եւրոպական ծովապետները յանձնեցին յունական գնդուպետ Ռէյնեկին պետութիւնների յայտարարութիւնը Կրեոէի ինքնավարութեան մասին, որ նա հաղորդի ապստամբներին:

Անգլիական պարլամենտում արտաքին գործերի մինիստրի օգնական Կերզոն յայտնեց թէ Կրեոէյում, պետութիւնների նաւախումբերով կղզին պաշարւած լինելու պատճառով, 30.000 կրետացիք ծայրացեղ կարօտութեան մէջ են:

Ակրոտիրիյում, Իտալական, Անգլիական և Ֆրանսիական ծովապետների բանակցութիւնների միջոցին ապստամբների առաջնորդների հետ երևաց, որ սոքա ցանկանում են ազատուել թրքական լծից, բայց յօժար են ինքնավարութեան (հեռագիր 28-ից փետրւարի):

Պարիզի «Թան» կիսապաշտօնական լրագրում Հիւսիսային Ամերիկայի վաղեմի հիւպատոսը, որը ինքը դործոն դեր էր կատարում բանակցութիւնների մէջ 1869 թ., գրեց թէ այդ տարի Կրեոէն, եւրոպայի ջանքերի շնորհիւ, քիչ էր մնում որ ինքնավարութիւն ստա-

նար, մինչդեռ Յունաստանը, զեկավարելով շահասիրական ձգտումներով, խանդարեց այդպիսի բարեչաջող ելքին և ստիպեց Կրետէն դեռ 28 տարի ևս թիւրքական լծի տակ չարչարել: Գերմանական թերթերը արտասպեցին Քանի երկար յօււածը (մարտ 1.):

Միացեալ Նաւախմբերը ստիպեցին ապստամբներին Կադանան ազատել պաշարումից (բլոկադ) և ազատեցին 200 թիւրք զինուոր և 1500 տղամարդ, կին և երեխայ: Նաւախմբերը նոյնն են անում միւս Փորտերի (մանր ամրոցների) համար: Հիերապետրուի առաջ իտալական պատերազմական նաւը ռմբակոծումով ստիպեց ապստամբների առաջնորդ Կորակին պաշարումը լուծել և ետ նահանջել (մարտ 1.):

Սուլթանը իւր սեփական միջոցներից խոշոր զոււարներ է վճարում կապալառուներին՝ զօրքերին մթերքներ հայթաթելու: Ձիւների և վատ եղանակների պատճառով զօրքերի փոխադրումը դէպի յունական սահմանը դանդաղ է կատարւում:

Յունաստանը պետութիւններին տւած պատասխանի մէջ, որ յայտարարեց անդլիական պարլամէնտում մարտի 2-ին (հին տոմ.), ասում է, որ եթէ միացեալ պետութիւնները յօժար լինեն, որ յունաց զօրքերին Կրետէյում լիազօրութիւն տրւի կղզին խաղաղացնելու, այն ժամանակ Յունաստանը ուրախութեամբ կը մասնակցի եւրոպական նաւախմբերի հետ, բացի այդ, եթէ ժողովրդական քւէտարկութեան (պլեբեսցիտ) սկզբունքը ընդունի, Յունաստանը յօժար է մինչև քւէտարկութեան կատարւելը՝ ճանաչել թիւրքիացի գերիշխանութիւնը Կրետէյում:

Յունաստանը կոչում է իւր պահեստի զօրքերը:

Պետութիւնները բաւարար չեն ընդունում Յունաստանի տւած պատասխանը պետութիւնների տւած նոտային և վճռում են նաւախմբերով պաշարել Կրետէ կղզին, թոյլ չտալու համար, որ ապստամբներին և յունական զօրքերին օգնութիւն հասցնի զրսից: Առաջինը պաշարման հրաման տւողներ եղան Գերմանիան և Աւստրո-Ունգարիան, իսկ Ռուսիան (վերջինս մարտի 2-ին)։ Անգլիան և Իտալիան պաշտօնաւոր են յայտնել իրենց մասնակցելու մասին. Ֆրանսիայից հաստատապէս սպասւում է նոյնը:

Մովսպետները Կրետէի ջրերում պահանջեցին իրենց տէրու-

թիւններից նորից զօրք ուղարկել՝ հաւասար Կանէյում, Ռետիմպէյում, Կանդիայում և Սիտիայում ափ իջեցրած զօրքերին:

Մարտի 4-ին (հին տոմ.) Ֆրանսիական պարլամէնտում արտաքին գործ. մինիստր Հանոտո՛ի յայտարարութիւններից երեաց, որ մեծ պետութիւններին զբաղեցնող խնդիրը այժմ սա էր թէ պէտք է յոյն զնդապետ Վասսոսին իւր զօրքով հեռացնել Կրետէից, թէ ոչ. պետութիւնները միաձայն են, որ Վասսոսի ներկայութիւնը կղզում խանգարում է դրութեան լաւանալուն և այդ պատճառով պահանջում են Յունաստանից նորա հեռացումը: Պետութիւնների համաձայնութիւնը կայանում է այս կէտերում. Կրետէի ինքնավարութիւնը սուլթանի գերիշխանութեամբ. հեռացումը յունաց և տաճկաց զօրքերի, բացառութեամբ այն զօրքերի, որոնք կենտրոնացած են պետութիւնների կողմից բռնած կէտերում. կարգի համար ամեն պետութիւն (եւրոպական մեծ պետութիւն) աւելցնում է եղածի վրայ ևս 500 կամ 600 զինւոր. եթէ Յունաստանը կը պնդի, որ իւր զօրքերը մնան Կրետէյում, Կրետէն կ'ենթարկւի խիստ պաշարման և, եթէ հարկ լինի, ծովապետները կը պաշարեն (բլոկադ) Յունաստանը կամ նորա ցամաքային մի քանի կէտերը:

Սելինի (Կրետէյում) գալմազամ Հուսէյն յայտարարում է թէ ողջունում է եւրոպական զօրքերով կղզու գրաւումը և որ խաղաղութիւնը Կրետէում կ'ապահովւի միայն՝ երբ կղզու կառավարութիւնը կ'ենթարկւի 'Եւրոպայի իսկական հսկողութեան. յոյս է յայտնում, որ եւրոպական զօրքերի թիւը բաւականաչափ կը լինի, որ իրենց սեփականութիւնը իրենց վերադարձնւի:

(Համեմատեցէք նեղն ընկած թիւրքի այդ յայտարարութիւնները, որ հեռագրւած են գերմանական Կետնիշէ Ֆայտունգ լրագրին, այն յափշտակումների հետ, որ տեղի ունին փոքր Ասիայում թիւրքերի կողմից, որոնք բնաւ յայտարարութիւններ չեն անում և եւրոպական պետութիւններին կոչումներ չեն անում!):

Ռուսաց «Սիսոյ Վելիկիյ» պատերազմական նաւի հետ, մարտի 5-ին աղէտ է պատահում. վառօդի ամբարները պայթում են, վնասելով նաւին. սպանւում է ինժեներ-մեխանիկոսի օգնականը և 14 մատրոս, վիրաւորւում են 3-ը:

Կանդիայից լուր է գալիս թէ քրիստոնեաները կոտորեցին

960 մահմեդականների: Դաֆնէսում 30-ից աւելի հոգի մահմեդական սպանւած են: Մահմեդականները բորբոքած՝ առաջւանից աւելի յափշտակութիւններ են անում:

Պետութիւնները սկսում են ուղարկել լրացուցիչ զօրքերը (ամեն մէկը 500—600):

Բոլոր ծովապետները իրենց պետութիւններից հրաման ստացած լինելով՝ կիրակի մարտի 9-ին յայտարարեցին Կրետէի պաշարումը:

---

Յաջորդ անգամ կը շարունակենք անցքերի արձանագրութիւնը:

Ա. Ա.

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ. Մուրճի ներկայ գիրքը լույս ենք ընծայում իբր  
№№ 2 և 3, 236 երեսով. անցեալ № 1-ով հրատարակած են ու-  
րեմն 416 երես, որով 3 միջակ համարների բովանդակութիւնը լրա-  
նում է. միացնելու նպատակն էր միջոց ձեռք բերել № 4-ը մինչև  
Զատիկը հասցնել:

ԱՂԵԼՆԱՆԻ ՎԷՊԸ «Տգիտութեան զոհեր» վերջանում է ներկայ համարում:  
Սա մեր աշխատակցի առաջին փորձն է մեծ վէպ գրելու. նա ար-  
դէն մի շարք մանր վիպական պատմածքներ է տւած, սկսելով  
«Ներհակ Առաքելից», որը նոցա մէջ թէ խոշորագոյնն է և թէ ամե-  
նայայտնին, թերես և ամենաշողաժը. (այդ պատմածքը թարգ-  
մանւեց նաև ռուսերէն, թիֆլիսում հրատարակող «Կապագսկայա  
ժիզն» պատկերազարդ վեցամսեայ հանդիսում): Աղելեանի բոլոր  
վիպական գրւածքները, նոցա մէջ նաև «Տգիտութեան զոհեր»-ը,  
գիւղական կեանքից են և աչն էլ՝ միևնույն Մեղրի գիւղից. բայց  
այդ գրւածները զուտ բարձրագրական չեն, ալ նոցա մէջ շօշափում  
են հասարակական խնդիրներ, որոնք բղխում են գիւղական հան-  
գամանքներից ի դէմս աչն տիպերի, որոնց բնորոշ գծերը Աղելեանը  
դուրս է բերում: Մեր կարծիքով Աղելեանին չաջողում է մեծ կեն-  
դանութեամբ իւր գիւղական տիպերը դուրս բերել, և մեզ թուում են  
չաջողած մանաւանդ համակրելի դներով օծուած տիպերը: Ինչ վե-  
րաբերում է լատկապէս «Տգիտութեան զոհեր» ին, մենք գտնում ենք,  
գլխաւորապէս առաջին մասում, ձգձգւածութիւն, որից սակաւն զերծ  
պիտի համարել երրորդ մասը: Մինչև այժմ կատարւած փորձերը մեզ  
չու են տալիս, որ պ. Աղելեանին կ'աջողւի, գեղարւեստական կողմը  
մշակելով, հաստատ գիրք բռնել մեր վիպագրութեան մէջ: Այդ վէ-  
պին նւիրւած կը լինի մի աւանձին քննադատութիւն:

«ՄՈՒՐՃ» ՆԻՒՐՈՂՆԵՐ. (սկիզբ տես № 12 և 1897 № 1): Տիկ. Յ. Ա.,  
մի օրինակ մեր կարգադրութեանը թողած լինելով՝ ուղարկում ենք  
Մոսկուայի հայ ուսանողութեանը (библиотека Лазаревича). պ. Գէորգ  
Թամաճեան— թիֆլիսի Հաւարարի թաղի Էմանազին ընթերցարա-

նին. պ. Ալէքսանդր Մանթաշեան—Թիֆլիսի Էթանագին գրադարանին, Վէլեամյանեան փողոցում. — Տիկին Աննա Ալէքսանդր. Ղորղանեան — մի օրինակ թողած է մեր կարգադրութեան. — պ. Գաւիթ Խարազեան — նույնպէս:

#### ՏԱՃԿԱ-ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ:

Կովկասի Կառավարչապետի շրջաբերականը. Կառավարչապետի օգնականը լուսարի 10-ին, № 289-ով մի շրջաբերական ուղղեց երկրի նահանգապետներին և շրջանների գլխաւորներին, ուր, հիմնւելով բարձրագոյն հրամանի վրայ, որ չափունած է ներքին գործերի միւնիստրի կողմից նահանգապետներին ղեկո. 19-ին և Կովկասի Կառավարչապետի օգնականին գրութեամբ ղեկո 19-ին № 21702., կարգադրեց. 1) Յանձնել հաշիւախոստականների համար հաւաքւող նւերները զաւառական, քաղաքային և նահանգական ոստիկանական վարչութիւններին, հրատարակելով ալը մասին տեղական թերթերում, 2) Ալը կարգից դուրս չթողատրել նւերների ընդունելութիւն ուրիշ հաստատութիւնների, մասնաւոր անձերի և ընկերութիւնների ձեռքով, և 3) Յաջորդել ամեն երկու շաբաթը — մէկ կովկասեան գլխաւոր իշխանութեան ճիշտ տեղեկութիւններ հաւաքւած նւերների և կարիքի քանակի մասին, ալը նաև նահանգի կամ շրջանի իշխանութեան և թաղարկութիւնները ալը նւերները կարօտ փախստականներին բաշխելու մասին:

Թիֆլիսում տաճկա-հաշիւախոստականների թիւը, որոնք կարօտ են օժանդակութեան, հաշւում են 800-ից մինչև 1000 հոգի:

Թիֆլիսի տաճկա-հաշիւախոստականներին օգնելու համար Թիֆլիսի նահանգապետը կազմել է մի մասնաժողով, նախագահութեամբ երդւեալ հաւատարմատար Կ. Ն. Ռէյտէր'ի, և անդամակցութեամբ լժկ. Յովսէփ Անանեանի, պ. Ալէքս. Մանթաշեանի և քաղաքամասի պրիստաւ (քաղաքամասի գլխ. ոստիկան) պ. Լոլաձէ'ի: Փետրւարի 16-ին մասնաժողովը ունեցաւ առաջին խորհրդակցութիւնը՝ քաղաքում ապաստանած հաշիւախոստականներին օգնելու համար, և ալը խորհրդակցութեան հրաւիրւած էին նաև քաղաքի ոստիկանապետը, մինչ հինգ հոգի ալ քաղաքացիք, և ուս ու հաշիւ օրաթերթերի ներկայացուցիչներ: Յանձնաժողովը բացել է գրասենեակ Աբաս-Աբաղի հրապարակում, Արեշեանի տանը, ուր նիստեր է ունենում շաբաթը 3 անգամ և ուր կարող են ղիմել փախստականները: Յանձնաժողովը որոշել է լատով նոցա համար ճաշարան բանալ Հաւաքար կամ Զուղուրէթ քաղաքամասերում:

Մինչև ալը չանձնաժողովի կազմելը՝ փախստականներին օգ-

նոդը եղել են գլխաւորապէս Հայոց Բարեգործական ընկերութեան կենտրոնը (Քիֆլիս) և Սուլակի (տիկ. Մովսէսեանի) էժանագին ճաշարանը, Հայոց Բարեգ. ընկերութիւնը, չկարողանալով աւսուհետեւ փախստականների աճունով նւերներ ընդունել, պիտի շարունակի իւր սեփական միջոցներով օգնել, ուղարկելով նաև ճիւղերին Նրևան, Ղարս և այլն), 1897-ի համար նախահաշւով պիտի գործադրի այդ նպատակով 10.000 ռուբլի, աւելին թողած Խորհրդի բարեհալեցողութեան, եթէ միջոցներ լինեն:

Ինչ վերաբերում է նահանգապետի կազմած լանձնաժողովին, նորա գործունէութեան մասին տեղեկութիւն կը տանք գալ անգամները:

Նրևան, Բարեգործական ընկերութեան ճիւղը, որպէս գրում են մեզ, 1896 թվականի ընթացքում չօգուտ փախստականների ստացել էր 761 ռ. 45 կոպ. դրամով, 1000 ռուբլու կարած չորեղէն. աչւ. 2500 ռուբլու հագուստեղէնից գոյացել է 2.741 կտոր հագուստ, որ բաժանւել է (մինչև վերջը 1896 թ.) 208 ընտանիքի՝ 883 հոգուց բաղկացած: Գաղթականաց գումարից տրւած է մօտ 9.000 բաժին կերակուր և 1.000 բաժակ թէյ, առանձնապէս հագուստեղէն է բաժանւել 725 ռ. 73 կ., տան վարձ է տրւել 74 ռ., ճանապարհածախս ու արհեստաւորներին միանւագ նպաստ է տրւել 202 ռ. 62 կոպէկ:

Տալանդոզում, մինչ վետրարի վերջը հաւաքւած էր 1730 ռ. 80 կ., որ և լանձնւել է տեղական ոստիկանապետին:

Փոթի՛ում կան փախստականներ, գլխաւորապէս Տրապիզոնից եկած. թիւը մեզ չալանի չէ, օգնողները նոյնպէս տրապիզոնցի հաւերն են, որոնք օգնում են նոցա բնակարան, կերակուր տալով և գործ գտնելով. իսկ բուն կովկասեցի հաւերը կատարելապէս սառն են և անտարբեր. ոստիկանատունը հրաման է ստացել հանգանակութիւն բանալու:

Ախալքալքում քաղաքային աւագ Արշակ Գրիգորեանի նախաձեռնութեամբ, հանգանակութիւն բացւեց լուսնարի վերջը. կալին 40 և 50 ռ. նւիրողներ. գումարը հասաւ 700 ռուբլու:

Ջալալօղլում «աւետիս» մանգալով ծննդեան տօներին ժողովւել էր 72 ռ., որի վրաւ պակասը լրացնելով՝ 100 ռուբլի ուղարկւեց Կարսի չաջորդին՝ գաղթականների համար բացւելիք արհեստանոցի օգտին:

Մոսկայում, Նորին Կալս. Բարձր. Մոսկւայի զենեւալ-նահանգապետի առաջարկութեամբ, լուսն. 20-ի քաղաքային գումտն վճռեց ստորագրութիւն բանալ թիւրքիայից փախած հաւերի օգտին:

Ասխաբադում (Անդրկասպեան երկրում) փախստական-գաղթականները 10 տուն են թւում 39 հոգի. ապրում են եկեղեցու բազում

գտնւող սենեակների մէջ, ստանում են ամեն օր տաք կերակուր և ալ անհրաժեշտ պիտուքներ: Յունւարի 26-ին տրւած մի ներկաւացման զուտ արդիւնքի կէսը, 300 ռուբլի, չափաւորաձ էր փախստականներին: Ներկաւացման ներկալ էր նաև երկրի կառավարիչը: Փետրւ. 16-ին և 20-ին տրւեցին նոյնպէս հալոց ներկաւացումներ, որոնց արդիւնքը եղաւ 500 ռուբլի:

Ալէքսանդրապոլում փախստականները շինական են և արհեստ չգիտեն. խղճալի դրութեան մէջ են. անցեալ ամիս մեր հաղորդածի վրալ կ'աւելցնենք, որ Հալոց Բարեգ. ընկերութեան ճիւղը մարդագլուխ 2 ռուբլի տաւ Նրանց, որ չնչին օգնութիւն է.—Վաղաքում բանակ դրած Բաքուեան զուռը զինւորական մունդիրներ, իսկ Կաբարդեան զուռը՝ մունդիրներ, շինէլներ և հաց նւիրեց, լանձնելով ալ դ բոլորը Հալոց Բարեգ. Ընկերութեան տեղական ճիւղին:

Խարկովում մի ներկաւացումից մնացած 140 ռուբլի զուտ արդիւնքը լանձնեց Նահանգապետին, որը պիտի ուղարկի ուր հարկն է՝ հալ փախստականներին հասցնելու համար. ներկաւացումը գնւել էր մի խումբ գերմանացի վարժուհիների կողմից, հալ ուսանողների աջակցութեամբ:

Նոր-Նախիջեւանում, Ռեստովում եւ Տաղանդոտում, անցեալ անգամ հաղորդածի հետ միասին, տեղական հալոց չաջորդի միջոցով հանգանակւել է ընդամէնը 9.884 ռուբլի:

Սիմֆերոպոլում (Ղրիմ), ուր 100 ի չափ հալ կաթոլիկ տուն կալ, հալ կաթոլիկաց առաջնորդ Յովսէփ Վ. Մարգարեանի մօտ, նորա մի ազդու քարոզից չետու, որ խօսեց եկեղեցում, ստորագրութեամբ փետրւարի 2-ին հաւաքեց 315 ռուբլի հալ փախստականների օգտին:

Պետտիգորսկում (Հիւս. Կովկաս), փետրւ. 9-ին չօգուտ հալ փախստականների ուսւ սիրողների տւած մի ներկաւացումից զուացաւ մօտ 150 ռուբլի:

Ղզլտրում (Հիւս. Կովկաս), չօգուտ հալ փախստականների տւած երեկոթից ընդհանուր արդիւնք եղաւ 375 ռ., ծախս 105 ռ., զուտ արդիւնք 260 ռուբլի, որ տեղական ոստիկանապետի ձեռքով ուղարկւել է Թիֆլիս:

Գորիսում (Չանգեզուրի գաւառ, Ղարաբաղ) կան գաղթականներ. նոքա մնացել էին անօգնական. հարուստներից և աստիճանաւորներից ոչ ոք չէր օգնում. դաւաճապետը ալ անտարբերութիւնը տեսնելով, առաջարկեց հանգանակութիւն անել: Տեղական ոստիկան Նատան 13 հալ ծառաւորները տւին 175 ռուբլի:

Սուխումում, վրացի իշխանուհի Նլիսաբ. Կ. Մերեթելի'ի Նա-

խաճեռնութեամբ, փետր. 20 ին սիրողների ներկայացում տրւեց վրաց և ռուս լեզուներով, որի ընդհանուր մուտքը եղաւ 300 ռ., զուտ արդիւնքը 210 ռուբլի. արդիւնքը ուղարկւեց Թիֆլիս, Կառավարչապետին:

Ստաւրոպոլում (Հիւս. Կովկաս) փետր. 21-ին չօգուտ հալ փախստականների սարքւեց մի «քաղար-պարահանդէս», որից զուտ արդիւնք մնաց մօտ 400 ռ., հանդէսը սարքւեց մի խումբ արկիւնների և օրիորդների ջանքերով:

ՆՈՐ ԿՈՏՈՐԱԾ. Թոկատում նոր կոտորածներ են եղել: Ըստ հեռագրական լուրերի՝ հաջորից կոտորել են 400 հոգի, իսկ ըստ տեղեկութեան Կ. Պոլսի հաջոց պատրիարքարանի՝ 700 հոգի: Դեռ պահները պահանջել են բանտարկել և դատի ենթարկել նահանգապետին և զօրքերի պիսարներին: Զօրքը մասնակից է եղել կոտորածին:

ՍԻՍԻ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Թիւրք կառավարութեան օգնութեամբ, հակառակ օրինասահման կանոնների, հռչակել է իրեն Գաղանձեան եպիսկոպոսը, իւր դործին օգնական ունենալով Աբրահամ եպիսկ. Մամիկոնեանին, որ Պոլսում աշխատում է կալսերական ֆիրման ձեռք բերելու. մի ալլ աջակից է Ֆրնուզի վանահայր Նիկողոս եպիսկոպոսը: Գաղանձեանի անունը Սոռոկ եկեղեցիներից շատերի մէջ չի լիշատակում, չնայած կառավարութեան ստիպումներին:

Հանգուցեալ կաթողիկոսի աղգականները պահանջում են հանգուցեալի բոլոր ժառանգութիւնը՝ թէ աչն ինչ իւր սեփականն էր և թէ՛ ինչ եկեղեցապատկան է. Կ. Պոլսի պատրիարքը, իհարկէ, ալլ պահանջը չի ընդունում:

ԻԶՄԻՐԼԱՆԻՆ ԹՈՇԱԿ է նշանակել Թիւրք կառավարութիւնը ամսական 2000 զրուշ, որի մասին պաշտօնական չափարարութիւն է տպւել Կ. Պոլսի թերթերում:

ԽՈՐԷՆ ԵՊ. ՍՏԵՓԱՆԷ, ՎԷՆ. Կաթողիկոսի կոնդակով նշանակւած է Ատրպատականի թեմակալ առաջնորդ:

ԺԱՆՏԱԽՏ. Ռուսիայում կարանտիններ են նշանակւած՝ Թէոդոսիայում, Կերչում, Բաքում և Աստրախանում. կարանտինալին աղէնտութիւններ՝ Օդեսայում, Սեւաստապոլում, Նովոռոսիսկում, Բաթումում և Փոթիում. ալլ նաւահանգիստներում՝ բժշկական-դիտողական կաշարաններ:

ԲԺ. Խաւկինի սիճուկը հրաշալի ներգործութիւն է անում. մինչև մարտի 7 ը ալլ սիճուկից պատւառուել են Բոմբէլում 2.341 անձի, որոնցից միայն 2-ը հիւանդացան, և դժբա էլ կենդանի են:

ՀԱՅՏԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ է կազմում Լոնդոնում, նախագահութեամբ Ռոչէստէրի եպիսկոպոսի և քարտու-

ղարութեամբ չալտնի օ իկին Սոմերսէտի: Ընկերութիւնը բիւրօ է հաստատում, ստանալու համար հալերի մասին ամեն տեսակ հրատարակութիւններ, ցուցակ է կազմում դասախօսների, քարոզիչների և ալլ գործողների, տեղեկութիւն տալու համար ուր պահանջ կը լինի. ցանկացողներին նիւթեր են տալիս հալերի մասին. նւէրներ է ընդունում հալերին նպաստող գործակալութիւններին չանձնելու համար. խորհրդակցութեան է հրաւիրում հալերին նպաստող ընկերութիւններին. հրատարակում է ճիշտ տեղեկութիւններ հալերի մասին, հիւպատոսական զեկուցումներից, նամակներից և այլն և այլն:

**ՌՈՒՍ-ՀԱՅԱՍՏԱՆ** մի ընկերութիւն է կազմում Պետերբուրգում, նպատակ ունենալով հալերին ուսումնասիրելը: Կազմակերպութեան գործը ղեկ չալտնի չէ: Պետերբուրգում մի ալլալիսի ընկերութիւն մեզ թէ ուրախացնում է և թէ զարմացնում:

**ԿԱԻԿԱՋ ԼՐԱԳՐԻ ՔԻՍ-ՔԻՍԸ:** Մուրճ'ի անցեալ համարում մենք առիթ ունեցանք զբաղելու թիֆլիսի քաղաքալին բնորութիւնների խնդրով, և մասամբ ծանօթացրինք այն հալեացիների հետ, որոնց հետեւում է Կաւկազ լրագրի ներկայ խմբագրութիւնը: Արդ, Կաւկազը դորանից դէս մի ամբողջ խուզարկութիւն սկսեց թիֆլիսի քաղաքալին խորհրդարանից և վարչութիւնից կախած քաղաքալին պաշտօնականների ազգութեանց մասին, ջանալով ապացուցել, որ դոցա մէջ հալերը շատ աւելի մեծ թւով են քան վրացիք և ռուսները, որոնք իբր թէ աննշան տոկոս են կազմում. (նկատեցէք, որ նոյն իսկ Կաւկազում «ռուսները» խօսքը ալլ խնդրում միշտ գալիս է «վրացիներ» խօսքից չետոյ, իբր թէ Կաւկազ լրագրի գլխաւոր հոգար նախ վրացիների մասին է և ապա ռուսներին!): Մենք կ'աշխատենք դալ անդամ օգտել ալլ առթիւ Կաւկազ, Նովոե Օբոդրենիե և Տիֆլիսսկի Լիստոկ լրագիրների մէջ եղած և շարունակող բանակում հաստատուած թւանշաններից. սակայն ալլմեանից պիտի ասենք, որ վրացիների եռանդը ալլ բանակոււի մէջ մեզ ուղղակի ծիծաղելի է թւում ալլ իրողութեան առաջ, որ վրացիք իրենց զիրքը թիֆլիսում կորցնում են շատ աւելի կարեւոր կողմից. մենք հաշուել ենք, որ նոր հրատարակուած ընտրողական անւանական ցուցակով 1500 ռուբլուց աւելի արժէքի և բաժանուած կաշք ունեցող թիֆլիսում կան 961 հալ, 520 ռուս, 279 վրացի, 32 թուրք, 23 լեհացի, 17 հրէայ, 11 հոգի մեզ անչալտ ազգութիւններ և 129 գերմանացի, իտալացի և ալլ եւրոպական ազգութիւններ: Թւանշանները մօտաւոր ճշտութիւն ունեն:

Ալլ պարզ ի պարզոյ ցոյց է տալիս, որ ռուսները արդէն ալլ կրկնապատիկ աւելի շատ արժէքաւոր տներ ունեն թիֆլիսում, քան վրացիք: Վրացական «Յնոբիս Պուրցելի»-ի և «Իւերիալի» նիզակա-

կցութիւնը կաւկազի հետ ալդ մեր ցոյց տւած մի հատ իրողութիւնով շատ աւելի որոշ գոյն է ստանում, քան ալն ամբողջ բանակըւով, որ վարւում է ալժմ և երկու ամսից ի վեր ռուս թերթերի էջերում: Պէտք է խոստովանել, որ պ. Վելիչկո'ն զիտէ ում հետ նիւզակակցութիւն հաստատէ. գիտէն նոյնքան նաև վրացիք՝—that is the question!

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:**

Ալեքսանդրապոլ: Նորընտիր խորհրդարանի իրաւասունները, նախագահութեամբ հաշտարար դատաւոր Լուարսաբ Նաղիրաձէի, ժողով ունեցան առաջին անգամ փետրւարի 27-ին, ուր ծանօթանալուց չնայ քաղաքի ելք ու մուտքի և ապառիկների հետ, խօսւեց ապաղայ ծառայողների ռոճիկների մասին. մարտի 1-ին քէշարկութեամբ որոշեց ռոճիկներ՝ քաղաքագլխին 2.400 ռուբլի. վարչութեան ալ անգամներին 2000-ական ռուբլի. ատենադպրին 1000 ռ., հաշւապահին 800 ռ., գործավարին 500 ռ., գործադրիչ մասնաժողովի անդամին 500 ռ., ճարտարապետին 300 ռ., չուկալի վերահսկողին 300 ռ., երեք հարկահաւաքներին 240 ռ., երեք ծառաներին 360 ռ., զիւանական ծախսերին և գրագիրներին 500 ռ., չինութեան, լուսաւո-րութեան և վառելիքի 2500 ռ., սկզբնական կահաւորութեան համար 1000 ռ., ընդամէնը 12.400 ռուբլի:

Մարտի 2-ին կատարւեցին պաշտօնատարների ընտրութիւնները: Քաղաքագլխութեան համար քէշարկեցին Գեղամ Տէր-Պետրոսեանց և գեներալ Պրոսկուրիակով. Գեղամ Տէր-Պետրոսեանց ընտրւեց քաղաքագլուխ 21 ձախով ընդդէմ 12-ի (Պրոսկուրեակով ստացաւ հակադարձը՝ 12 սպիտակ և 21 սև):

Վարչութեան անգամներ ընտրւեցին Մովսէս-բէգ Տէր-Սարգըսեանց (27 ձախով), Գէորգ Տէր Մարտիրոսեանց (22 ձախով) և Յովհաննէս Գէորգեան Կոստանեանց: Ուրիշ քէշարկւողներ չկային:

Սիմֆերոպոլ (Ղ.րիմ) փետրւար 4-ին կատարւած քաղաքային ընտրութիւններին, որին 500 հոգուց մասնակցեցին միայն 165 հոգի, ընտրւեցին ալդ օրը միայն 27 իրաւասու, որոնցից 5-ը հայեր են: Յաջորդ օրւայ ընտրութիւնները արդիւնք չուին և լրացուցիչ ընտրութիւնները չետաձգւեցին մինչև մարտ ամիսը:

Նոր-Բայազէդի աւաղ ընտրւած է Բարութիւն Մամիկոնեանց, օգնական՝ Գէորգ Արծրունի:

**ՔԱՂԱՎԱՏՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՇՈՒՄ:** Իւր նիստերից մէկում Շուշալ քաղաքային խորհրդարանը ընդունեց պարտաւորիչ ձրի ծաղկահատութիւնը երեխաներին: Քաղաքային բժիշկ և խորհրդարանի անդամ պ. Բահաթրեանի զեկուցումից երեսց, որ Շուշում ամեն տարի ծաղկից

մեռնում է 100 երեխայ, որ կազմում է ծնւածնների 10%-ը: Խորհրդարանը որոշեց վարձել չատուկ քաղաքային ծաղկահատ, 500 ռուբլի ռոճիկով, տալով նրան ամեն տարի 50 ռուբլի շինուկ ձեռք բերելու համար: Նաև ընտրւեց մասնաժողով—երեք բժիշկ և երեք իրաւասու—խնդիրը աւելի մանրամասնօրէն մշակելու համար, մասնաժողովին իրաւունք է տրւած հրատարակել հաւերէն և թուրքերէն ձրի բրոշիւրներ ծաղկահատութեան նշանակութեան և օգուտի մասին:

**ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆԸ** Ռոստովի հետ միացնելու (ալսինքն Նոր-Նախիջևանի քաղաքային ինքնավարութիւնը Ռոստովինի հետ միացնելու) խնդիրը շարունակում է վերլուծել մալրաքաղաքի թերթերում: Պետերբուրգի «Ղուչ» թերթում Նոր-Նախիջևանցոց երկիւղը ալդ մասին արդար փաստարանութիւն է գտնում:

**ՈՒՐՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ** նշանակւած է գեներալ Զմշուտ խանը, Ուրմիոյ հին հռչակաւոր զերդաստաններից, Սուլալի դովլէ տոհմից, չահը նրան, ինչպէս չալտնի է, նւիրել էր Էմիրի-Փումանի բարձրագոյն տիտղոսը:

**ՆԻԷՐՆԵՐ ՆԻ ԿՏԱԿՆԵՐ:**

Նղբարք ժամհարեանների, չուշեցիք, չալտնի իրենց բանկալին տնով Մոսկւալում, Շուշում մի հիւանդանոց հիմնելու համար նւիրել են իրենց հայրենի Շուշի քաղաքին, ալդտեղ գտնուող իրենց մի մեծ երեքլորկանի տունը, 100.000 ռուբլի դրամ, իբր հիմնական դրամազլուխ և 10.000 ռուբլի ևս նախնական ծախքերի համար:

Տիգրան Գարակեօղեանի կտակի դէմ (Վ. Պոլսում) հանդուցեալի ժառանգները հերքմնադիր են ներկայացրել Պատրիարքարանը, պնդելով, որ կտակը թէև ամսաթիւ ունի, բայց տարեթիւ չունի, հետեալէն ժառանգներից էր կախւած կտակը եղած թէ չեղած նկատել, ուրեմն եթէ հաւանեն կտակին՝ իրենց կողմից մեծ շնորք պիտի արած լինեն՝ հաւասար Տիգրան Գարադեօղեանի արած շնորհքին: Բայց հանդուցեալի նամակի մէջ, որով նա ներկայացրած է եղել կտակը պատրիարքարանին, կան թէ տարեթիւր և թէ ամսաթիւը: Կարծւում է, որ ժառանգների հերքմնադրի նպատակն է ստիպել աղբալին վարչութեանը՝ իրենց հետ համաձայնութեամբ վարել:

Կտակի համաձայն՝ թողած կարողութեան  $\frac{1}{3}$ -ը ազգին է թողնւում ալս պալմանով, որ նա 16 բաժին անւի, որից 3-ը գործածի ազգալին շէնքերի կառուցման, 9-ը դրամազլուխ մնալ մի հիմնելիք վաճառականական վարժարանի, 4-ը չատկացնել ազգալին հիւանդանոցի համար կալւածներ չինելու և Գալֆալիան որբանոցին տարեկան 100 ռսկի վճարելու:

Կտակողի գուքերի և ստացածների ալն մասը, որը ազգին է թողնւած, ըստ ոմանց 50, ըստ ալւոց 70 հազար ոսկի է ենթադրուում (ուրեմն 4—5—600.000 ռուբլի):

Ալւրի տիկին Աննա Աթամալեան և որդիք, ի վիշատակ փետրւար 15-ին Մոսկւայում վախճանւած Միլոզա Աթամալեանի (ալւրի ամուսնու), նւիրաբերել են 7000 ռ. ալս կերպ. 1) Էջմիածնի ճեմարանին 4.000 ռ., որի տոկոսիքով մի որդեգիր պիտի պահւի չանուն Աթամալեանի, 2) Վեհ. Կաթողիկոսին 700 ռ., 3) Բազալ ս. Լուսաւորիչ եկեղեցուն 500 ռ., 4) Շուշու Մեղրեցոց եկեղեցուն 300 ռ., 5) Ռուսիայի սահմաններն ապաւինած տաճկահալ գաղթականներին 500 ռ., 6) Բաքալ աղքատանոցում գետեղած տաճկահալ մանուկների շորերի համար 250 ռ., 7) Բաքալ գիմնազիոնում ուսանող չքաւոր աշակերտներին 250 ռ., 8) Խաչատուր Աբովեանի թոռների ապահովութեան ֆոնդին 500 ռուբլի:

Աճեմնան Նիկողայոս, Նոր Նախիջևանում, կտակել էր իւր հարստութիւնը քաղաքին՝ տեխնիկական ուսումնարան հիմնելու հալ աղքատ տղաւոց համար: Նորա կտակակատարների դէմ (Ալւրի տիկին Աճեմեան, Ս. Խ. Յարութիւնեան և Պ. Խ. Վեչեճեան) տեղական քաղաքալին խորհրդարանը վճիռ է կալացրել անկանոն կերպով իրենց պաշտօնը վարած լինելու համար, հաշիւ ու բացատրութիւն պահանջել:

ՆԵՐՍԷՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՅԻ տարեկան ակտը կատարւեց փետրւարի 14-ին: Տեսչի կարդացած հաշւից երեսց, որ 1895—96 ուսումնական տարւալ սկզբում զպրանոցի աշակերտների թիւն էր 396, օգոստոսին ընդունւել են 129, ընդամենը ուրեմն տարւալ ընթացքում կար 490 աշակերտ, որոնցից 25 գիշերօթիկ են և 40 հոգի երթեկներէից ամսական 6—7 ռուբլի նպաստ ստացողներ. բացի դոյանից 20 աշակերտ ստացել են ձրի ճաշ: Ուսուցիչների թիւն էր 27, որոնցից 16-ը Ռուսիայի բարձրագոյն զպրոցներում աւարտած:

Կպրանոցի եկամուտները եղել են՝ անշարժ կալքերից 43.541 ռ. մոմավաճառութիւնից 6.700 ռ. և զանազան վաւքի բից նպաստներ 3.065 ռ.: Տարեկան ամբողջ եկամուտը եղել է 62.893 ռուբլի, ծախք՝ 70.483 ռուբլի:

ՂԱՄԲԱՐԵԱՆ ՄՐՅԱՆԱԿ'ը, 400 ռուբլի, տրւել է Դէորդեան ճեմարանի նախկին աշակերտ Առաքել Մնացականեանցին (Վարդաշէնցի) «Ուտի և ուտիերէն» ձեռագիր աշխատութեան համար: Դա Ղամբարեան զրամազլիսի առաջին մրցանակաբաշխութիւնն է:

Դրամազլիսիւն, ինչպէս չալունի է, Ներսիսեան զպրոցի հոգաբարձութեան մօտ է, իսկ մրցանակի գրաւծները քննում է նոյն զպրոցի ուսուցիչների ընտրութեամբ կազմւած չանձնաժողովը:

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՏՆՍՉՈՒԹԻՒՆԸ (фабричная инспекция) սկսել է իրականացնել գործ դնել Բալախանում: Առաջարկած է Բալախանում հանքատէրերին իրենց գրաւոր պայմանները քանութիւնքի ու ծառայողների հետ ներկայացնել տեսութեան, որը պիտի պարտաւորիչ դարձնի հանքալին վարչութեան կազմած կանոնադրութիւնը:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ: Թիֆլիսում զանազան դասակարգեր ունին իրենց չափուկ ջուլ-ջուլ միութիւնները, որոնցից ամեն մէկը ունի իւր վարչութիւնը, համաձայն կառավարչական կանոնադրութիւնների. ալսպէս՝ կալ արհեստատէրների միութիւններ (համքարներ), որոնք միասին ունին արհեստատէրաց վարչութիւն. մանր վաճառականները (որ ուսաց պաշտօնական ընդուն միջանուններ են կոչւում) ունին իրենց միութիւնը և վարչութիւնը (միջանունով սկոն պրաւենիս). վերջապէս աւելի խոշոր վաճառականները, ալսինքն նոքա, որոնք առաջին և երկրորդ գիլդիայի վաճառականներ են, ունին իրենց միութիւնը և վարչութիւնը: (Ռուսաստանում, վաճառական ճանաչելու համար, կառավարութիւնից պէտք է չափուկ իրաւունք ստանալ, որի համար փող է վճարում (գիլդիայի վճար) նալած առևտրի ընդարձակութեանը, առևտրականները վճարում են 3-րդ, 2-րդ և 1-ին կարգի կամ գիլդիայի վճար):

Համաձայն ալդ միութիւնների՝ կալ արհեստատէրաց աւագ միջանների աւագ և վաճառականների աւագ, որոնք ընտրւում են միութիւնների ընդհանուր ժողովներում:

Ալդ բոլոր միութիւնները, ալսպէս, ինչպէս նոքա կան և գործում են Թիֆլիսում, անկնդան կամ փոած մարմիններ են, նալած որ կանոնադրութիւններով նոքա որոշ իրաւունքներ են վալելում և կարող են, եթէ լուս ու միտք թափանցի ալդ դասակարգերի մէջ, մեծ ծառայութիւններ մատուցանել թէ իրենց և թէ ընդհանուր չառաջդիմութեան գործին:

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ ԸՆԴ. ԺՈՂՈՎԸ: Վերը տեսանք, որ առաջին և երկրորդ գիլդիայի վաճառականները ունին իրենց միութիւնը կամ ընկերութիւնը: Մարտի 2-ին կալացաւ ալդ վաճառականների ընդհանուր ժողովը, նախագահութեամբ առևտրականների աւագ Ե. Ա. Դաւթեանի (Դաւիդով): Կարդացած հալից երեաց, որ առ 1-ն լուսարի 1896 թ. ընկերութիւնը ունէր 123,010 ռ. 64 կոպէկ. տարաւ ընթացքում ստացւեց գիլդիական անդորրագրերով 13,528 ռ., տոկոսներ 5,618 ռ. 50 կ., ալսպէս որ առ 1-ն լուս. 1897 թ. կար 142,156 ռ. 64 կ.: Հաշւատարաւ ընթացքում մսկել է—վաճառականաց դասակարգի վարչութեան տան համար 1,915 ռ. 14 կոպէկ, առևտրական և մանուֆակտուրային կոմիտէի պահպա-

նութեան համար 2.737 ռ. 13 կ.: Մնաց առ 1-ն չունւ. 1897 թ. 137.504 ռ. 37 կ.: Բաց քւէարկութիւններով միաձայն նորից ընտրւեց վաճառականաց աւագ նոյն Ե. Դաւիդով. նորան ընկերներ՝ Յ. Շաղինեան և Ե. Մ. Յակոբեան: Ընտրւեցին և վերաստուգող մասնաժողովի անդամներ:

**ՅՐՏԵՐԸ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ** չարունակեցին նաև փետրւար ամսին. չորդ և չաճախ ձիւները զարմանք ևն պատճառում նոյն իսկ տեղացիներին: Արաքսի վրալ պատել է հաստ սառույց:

**ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆԻ** որբացած 3 թուների օգտին թուլտուլեամբ վէհ. կաթողիկոսի Գէորգեան ճեմարանի տեսուչ պ. կարապետ կոստանեանցի բացած հանգանակութեամբ մինչև մարտի 1-ը հաւաքւել է 1064 ռ., ալրի Աթամալեանի տւածով 1564 ռ.:

Պր. Իսահակ Ժամհարեանցի հրատարակած «Խաչատուր Արովեանի երկերը» 3600 օրինակից գոյանալիք հասուլթը, որպէս չալտնի է, պիտի հասնի միծանուն գրողի թուներին:

Միւս կողմից պ. Ալէքս. Մանթաշեան որոշել է Աբովեանի թուներից անդրանիկին, որ 18 տարեկան է և ալս տարւալ մալիսին աւարտում է Գէորգեան ճեմարանը, իւր թոշակաւոր ընդունել և ուղարկել Գերմանիա բարձրագոյն ուսման համար:

**ՆՈՐ ԼՐԱԳԻՐ ԲԱՔԻՈՒՄ:** Պր. Ռըթովին թուլատրած է Բաքւում հրատարակել մի նոր ռուսական լրագիր «Բակինսկիլ լիստոկ» (Բաքւալ թերթ) անունով:

**ԲԱՔԻԱՅ ՄԱՐԴԱՍ. ԸՆԿ. ԵՐԵՒԱՆԹԸ,** որ տրւում է ամեն տարի, ալս անգամ, փետրւ. 20-ին, Ժողովարանի զահլիճում, տւաւ մինչ ալծմ մեղնում և ոչ իսկ Բաքւում չտեսնւած արդիւնք, ալն է 5,880 ռ., որից մօտ 3,900 ռ. ծաղիկներ վաճառելուց և բուֆէտից. ծախքը զուրս գալով՝ մնաց զուտ արդիւնք մինչև 4500 ռ.: Երեկուլթին մասնակցում էր երգչուհի օր. Պապալեան, Երեկուլթի կարգադրիչներն էին տ. տ. Սոֆիա Աղամեան, Հեղինէ Աղամեան, Մարիամ Թաղիանոսեան: Երեկուլթը տրւում էր չօգուտ ընկերութեան Գրաղարանընթերցարանին:

**ՄՈՍԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՒԱՆԹԸ,** որ կալացւում է ուսանողների կողմից իրենց չքաւոր ընկերներին օգնելու համար, տրւեց անցեալ դեկտեմբերի 5-ին «Ազնակասների ժողովում»: Զուտ արդիւնք, համաձայն մեր թղթակից Ա. Տ.-Յ.-նի զբուլթեան, գոլացաւ մօտաւորապէս 1.500 ռուբլի: (Մեր թղթակիցներին խնդրում ենք, ամեն անգամ ձերը գրել իսկական և ոչ մօտաւոր ճշուլթեամբ, երբ իսկականը չալտնի է: Մեր թղթակցի գրութիւնից, ցաւում ենք, որ չկարողացանք օգտուել չունւարի №-ի համար): Երեկուլթը զուտ հալկական

բնաւորութիւն չէր կրում, ալ խառն էր, շնորհիւ աչն բանի, որ երեկոյթը կազմուեց մասնակցութեամբ Մոսկւայի Կալսեր. թատրոնների ղեկաւորներն էր տ. Ֆոստրէմի, որը գլխաւոր դերը խաղաց, Զիարլոնէ'ի և պ. պ. Սորինովի, Խզուժնովի և Գուրինսկու. Երգեցիկ խումբը բաղկացած էր Մեծ թատրոնի երգիչ ու երգչուհիներէ, կառավարութեամբ Լազարեան ճեմարանի երգեցողութեան ուսուցիչ Լաքեօր'ի: Օտար երգիչները հակակաւ տարազի շորեր էին հագած, բայց արտասանութիւնը հակակաւ չէր (ցաւն տուր, ով ցովակ. զար-դիր սիրտ իմ վիշտս և ալն) բացի աչն, որ երգած կտորները ժողովրդական հակակաւ չէին. մինչդեռ Մոսկւայի հալոսանողներ թիւը 150-ի է հասնում և կարելի կը լինէր նոցանից մի երգեցիկ խումբ պատրաստել, մանաւանդ որ Մոսկւայում կան կոնսերւատորիա աւարտած հալ օրիորդներ, որոնք կը մասնակցէին: Երեկոյթին փոքր ի շատէ հակակաւ բնաւորութիւն տւողները Պետերբուրգի ուսանողներն էին, որոնք հրաւիրւած էին զորա համար:

Վարդանանց տօնի օրը տրուեց դրամատիկ-երաժշտական երեկոյթ, որից չետոյ պարեր եղան: Զուտ արդիւնք մօտաւորապէս 500 ռուբլի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ: Պետերբուրգի հալ ուսանողութիւնը երկու տարի է, որ հակակաւ մեծ կոտորածներ չպատճառուի, երեկոյթներ չի սարքում, ալ, դորա փոխարէն, Նէր-ներ է ընդունում չքաւոր ընկերներին օգնելու համար: Պետերբուրգի հալ ուսանողութեան ներկայացուցիչները հրատարակեցին աչ սար-աչ համար ընդունած Նէրների ցուցակը, որոնց գումարը կազմում էր ց 1-ն փետրարի 1.644 ռուբլի, 70 կոպէկ: (Գորանից 780 ռ. 70 կ. Պետերբուրգի հալ հասարակութիւնից, 575 ռ. Բաքուից, մնացածը Թիֆլիսից, Գանձակից և Աստրախանից):

ԳՐԱԳԷՏՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՄԻ ԽՆԴԻՐ: Բաքուի Հալոց Մարդասիրական ընկերութիւնը իւր ներկալ տարւալ ընդհանուր ժողովում 30 և 31 յունւարի, զբաղւեց ի միջի ալոց զբաղէտներին օգնելու խնդրով: Ի նկատի ունենալով աչն տարբեր մեկնութիւնները, որ տրւում էին ընկերութեան կալացրած վճուի, Մուրճ'ի խմբագրութիւնը դիմեց ընկերութեան վարչութեան, խնդրելով արձանագրութեան աչն մասը, որ աչդ խնդրին է վերաբերում, հաղորդել մեզ: Ընկերութիւնը կատարեց մեր խնդրքը, ուղարկելով մեզ արձանագրութեան ալդ կտորը, որ աչա.

...«Գրական ֆոնդի համար նախահաշւի մէջ նշանակւած 200 ռ. « գումարի մասին ժողովականներից ոմանք ղիտողութիւններ անե-  
« լով՝ ցանկութիւն չափանցին կարելուն չափ նպաստներ չատկաց-

« Նեւ լաւտնի գրազէտներից նրանց, որոնք ալսօր չքաւորութեան  
 « մատնւած՝ ոչ միայն գրականութեամբ չեն կարողանում պարա-  
 « պել, այլ նոյն իսկ միջոց չունին ապրելու: Անդամներից մէկի  
 « առաջարկութեամբ, ժողովը հաւանութիւն տւեց այն մտքին, թէ չքաւոր  
 « գրազէտներին օգնութիւն հասցնելու խնդիրը չպէտք է ջոկել ընկե-  
 « րութեան ցոյց տւած ընդհանուր օժանդակութեան խնդիրներէրից:  
 « Նրանց վրայ ես պէտք է նաեւ իբրեւ՝ օգնութեան կարօտներին և  
 « օգնել, նպաստել, որքան կարելի է: Իսկ գրական ֆոնդի անունով նշա-  
 « նակած 200 ռուբլին մտցնել բարեգործութեան անունով նշանակ-  
 « ւած գումարների մէջ և չետ աչտու գրական ֆոնդ անունը չլիշա-  
 « տակել առանձին հաշիւների և նախահաշիւների մէջ»:

« Ուղիղ է ընդ իսկականին՝ ատենադպիր Խորհրդի

Ա, Գալստեան»:

Ընկերութեան ընդհանուր ժողովի ալս պաշտօնական արձանա-  
 գրութիւնից երևում է, իբր անկասկած մի բան, որ ընկերութիւնը  
 վճռել է չքաւոր գրազէտներին օգնել, նպաստել որքան կարելի է:  
 Չափ ու սահմանը, ակներև է որ, թողնւած է ընկերութեան խոր-  
 հրդիւն որոշելու: Բայց ալս սահմանի minimum-ը մի հանգամանքով  
 որոշւած է երևում. գրական ֆոնդ անունով երեք տարի է, ինչ 200-ա-  
 կան ռուբլի գումար է չետաձգւում. տոկոսներով միասին ալս գու-  
 մարը ց1-ն յունւարի 1897 թ. կազմում էր 643 ռ. 11 կոպէկ (ալս  
 երևում է ընկերութեան նոր հրատարակած հաշիւից): Քանի որ գրա-  
 կան ֆոնդի գումարը վճռւած է միացնել ընդհանուր բարեգործական  
 նպատակներին չափացրած գումարին, (որը ալսպիսով ալս տարի  
 կազմում է 2.200 ռ.), հետևապէս ալս գումարից առնւաճն 643 ռ.  
 11 կոպէկը պիտի նկատել իբր չքաւոր գրազէտներին տրւելիք գու-  
 մար: Ալս է թելադրում հանգամանքների լոգիկան:

Ապշեցուցիչ տպաւորութիւն գործեց ալս, որ Մարդասիրական  
 ընկերութեան վերը առաջ բերած վճռի դէմ աշխատեցին թմբուկ-  
 ներ զարնել, և հիւ էր թմբուկ զարնողը, — Մշակ լրագիրը: Մենք բնաւ  
 չենք կամենում մանել քննութեան մէջ թէ ինչ կողմնակի հոգսեր  
 կարող էր ունենալ Մշակի՝ մարտնչելու համար ալս բանի դէմ, որ մի  
 ընկերութեան աչքում մի չքաւոր (գուցէ և ընտանիքաւոր) գրող  
 առնւաճն հաւասար լինէր մի ալս չքաւոր ոչ-գրող մարդու, լինի  
 ալս գրողը մի զառամիալ, թէ մի երիտասարդ, որին դժբաղդ հան-  
 դամանքները կարող են ստիպել ծալրալի միջոցի դիմելու: Չենք  
 քննում Մշակի՝ կողմնակի հոգսերը, եթէ նոյն իսկ խօսքը աւելի  
 լալն օգնութեան մասին լինէր: Պէտք է միայն ցաւել, որ մարդա-  
 սիրական ընկերութեան կանոնադրութիւնը թոյլ չի տալիս գրա-

դէտներին օգնելու գործը աւելի մեծ ծաւալով հասկանալու եթէ կանոնադրութիւնը թույլ տար—ընկերութիւնը շատ լաւ կարող կը լինէր գրադէտներին օգնել ոչ թէ միայն թշուառութեան դէպքերում, այլ և ալն դէպքերում, ուր գրադէտի խնդիրքը՝ իրեն օգնել՝ կապուած կ'լինէր աւելի լաւն բարոյական և գրական շահերի հետ, առանց որ ալիպիսի օգնութիւններ խնդրող գրադէտներին ձրիակերութեան սովորեցնէին: Բաքւայ Մարգասիրական ընկերութիւնը, աչքի առաջ ունենալով ընկերութեան աւելի բարձր շահերը, (կանոնադրութիւնը), իրեն ստիպւած է տեսնել գրական ֆոնդի լօգւածը իւր նախահաշիւներից ջնջել և գրադէտներին օգնելու գործը սովորական բարեգործութեան սահմանների մէջ պարփակել: հետևապէս Մշակ'ի մարտնչումը չեղած վճիռների դէմ—կատարեալ դոնքիշոտութիւն է: Բայց Մշակ'ի թմբկահարութիւնը կարօտ գրադէտներին աւելի լաւն մտքով օգնելու գաղափարի դէմ—կալ և կը մնալ հալ մամուլի ամօթալի դործներից մէկը—թէկուղ ալդ ամօթը վերաբերում լինի հալ մամուլի օրգաններից միայն մէկին:

Տարօրինակ էր նաև Մշակ'ի Բաքւայ թղթակից Ն. Գաւթեանի գրութիւնը: Խօ ընկերութիւնը ստիպւած է եղել որոշելու որ գրողների օգնութիւն տրւի սովորական բարեգործական հիմքի վրայ, ալիքն երբ խնդրատու գրողը ուղղակի չքաւորութեան մէջ է. բայց արիք ու տեսէք, որ ընկերութեան ընդհանուր ժողովի քարտուղարը (նոյնը և Մշակ'ի թղթակիցը) նոյն խոսք ալդ գրութեան մէջ զանազաններին կամենում է օգնութիւն ստանալու լոյսից զրկել գրելով (Մշակ № 25) հետեւեալը.

«...Ներկայ տարւալ ընթացքում, ընկերութեան խորհուրդը, համաձայն ընդհանուր ժողովի որոշման՝ ունի բարեգործական նպատակների համար 2.200 ռուբլի, որի գործածութիւնը մնում է միանգամայն խորհրդի հաշիցողութեան: Ալդ գումարի զիմաց արդէն ուղղւած են խորհրդին տասնեակ խնդիրներ (ստորագծումը մերն է) ուսանողների, աղքատ ընտանիքների, զանազան չքաւորների, հիմնարկութիւնների կողմից և օգնութիւն ու նպաստ են խնդրում: Ամեն բարեգործական հաստատութիւններում խնդրողների թիւը առատ է լինում, և բնաւ զարմանալի չէ, եթէ Բաքւայ Մարգասիրական ընկերութեանն էլ զիմողներ միշտ կան և պահանջները զերազանցում են ընկերութեան կարողութիւնից. հետևապէս ալս խօսքով թէ «արդէն ուղղւած են տասնեակ խնդիրներ» և ալն լօգւածագիրը պարզ ասել է ուղում թէ լիչեալ 2.200 ռուբլին արդէն բռնւած է և աւելորդ է, որ չքաւոր գրողները որ և է զիմումն անեն... էլ ուր մնաց հապա ընդհանուր ժողովի վճիռը՝ կարօտ

գրողներին օգնել, նպաստել... Ինքն ըստինքեան շատ չնչին խնդիր — որովհետև հազիւ թէ շատ գրողներ գտնւեն, որոնք սովորական բարեգործութեան հիմունքով ողորմութիւն խնդրեն մի ընկերութիւնէից, — բայց սա անհետաքրքրական է, որ մի թերթի խմբագրականը քարոզում է զրադէաներին բնաւ չօգնել, երբ սոքա առողջ են, և նոյն թերթի թղթակիցը, գոնէ իբր ընկերութեան ընդհանուր ժողովի ատենադպիր, փոխանակ հրաւէր կարդալու որ չքաւոր գրողները օգտուին ընկերութեան որոշումից, ընդհակառակը զգուշացնում է նոցա չգիմել ընկերութեան, ասելով որ ուրիշ կարօտեալներ շատ կան։ Իրար սաղում են, չէ։

ՕԳՆՈՒԹԻԻՆ ԳՐԱԳԵՏՆԵՐԻՆ։ Բաքուէ Մարդասիրական ընկերութեան խորհուրդը իւր վերջին նիստերից մէկում վճռել է, որպէս մեզ հաղորդում են, որդեգրել պ. պ. Ղազարոս Աղայեանի, Շիրանզադէի և Յովհ. Թումանեանցի որդիներից մի-մի հոգի, վճարելով փչեալ անձերից առաջիններին՝ 300-ական և երրորդին՝ 240 ռուբլի. վճար մանրամասնութիւնները մեզ չաւտնի չեն, բայց պէտք է կարծել որ, եթէ աղ կերպ է վճիռը կաւացել, նպաստը պիտի շարունակւի մինչև որդեգրածների ուսման աւարտը. Ուրախութեամբ ենք արձանագրում աչո իրողութիւնը։ Սա առաջին դէպքն է որ որ և է հաշկական ընկերութիւն նպաստ է տալիս աչո մարդոց, որոնց զխաւոր արժանիքը նոցա տաղանդն է ու գրական գործունէութիւնը։ Եւ ընտրութիւնը Մարդասիրական ընկերութեան կողմից գէթ սկզբի համար, մեզ թւում է և չաջող և բնորոշ։ Մեր զիտեցածովը, ալդ երեք գրադէտներն էլ ծանրաբեռնւած են բաղմանդամ ընտանիքներով. փչեալներից երկու վերջիները պ. պ. Շիրանզադէն և Յովհ. Թումանեանցը, սոսկ գրադէտների տալարներ են, զըժուար չարմարուղ մասնաւոր ծառայութեան պալմաններին, և հետևապէս նոցա համար դժուար է կողմնակի վաստակ ունենալը. պ. Աղայեանցը, ճիշդ է, ունի նաև մանկավարժական կոչում, և չաւտնի է թէ իբր գրադէտ և թէ իբր ուսուցիչ, տարածած դասագրքերի հեղինակ և փոքրերի դաստիարակ, մի հանգամանք, որ գալիս է օդնելու գոյութեան կռոււմ, բայց վաստակաւոր գործիչի տարիքը, կից զպրոցական վատ հանգամանքների հետ, զղալապէս զէջօքացնում են ալդ մեծ առաւելութիւնները։

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. տարեկան ընդհանուր ժողովը Թիֆլիսում տեղի ունեցաւ ներկալ մարտի 2-ին և 16-ին, քաղաքալին խորհրդարանի դահլիճում, Լեւոտորնի և ճիւղերի նախահաշիւները քննելուց չետոջ եղան ընտրութիւններ. Ընդհանուր ժողովի նախագահ վերընտրւեց Բժշկ. Բագրատ Նաւասարդեանց (38 ձաւնով ընդդէմ 24 ի)։

Նա մինակ էր քւէարկւում. ընդհանուր ժողովի քարտուղար՝ պ. Ստ. Լիսիցեան (53 ձաջնով ընդդէմ 8-ի). Խորհրդի անդամներ ընտրւեցին՝ պ. պ. Ալեքսանդր Անանեան (59-ով ընդդէմ 3-ի, վերընտրւած), Փիլ. Վարդազարեան 54-ով ընդդէմ 6-ի (վերընտրւած), Զաչտ. դատ. Ա. Երիցփոխեան 53-ով ընդդ. 9-ի քւէարկւեց անդամութեան համար նաև պ. Առ. Սարուխանեան, բայց ձաջների  $2\frac{3}{8}$ -ականը չստանալով (37 սպ., 24 սև), չընտրւեց: Փոխանդամութեան համար քւէարկւողներից ընտրւեց միայն պ. Նազարեթ Տիգրանեան, որը ստացաւ 55 սպ. և 6 սև. Յովսէփ քչ. Տէր Պետրոսեան (35 սպ. և 26 սև), երկու երրորդականից պակաս ստացած լինելով, չընտրւեց. իսկ Նիկ. Աբրահամեան, որ նույնպէս քւէարկւում էր փոխանդամութեան համար, վաստակեց 40 սև և միայն 21 սպիտակ: Վեյաստուղող լանձնաժողովի անդամներ ընտրւեցին Ա. Վարդապետեան, Արշակ Տէր Գրիգորեան և Չաթախաչեան: Գրադարանական մասնաժողովի անդամներ ընտրւեցին պ. պ. Ստ. Լիսիցեան (58 սպ. 3 սև), Ալ. Երիցեան (56 սպ.), Յար. Գաղրաչեան (55 սպ.): Միսաք Ասիլեան (51 սպ.) և Սիմէօն Հախումեան (31 սպ., 29 սև),

**ՄԻ ՀԵՐՔՈՒՄ ԵՐԵՒԱՆԻՑ:** Չենք կարող մեր կատարեալ բաւականութիւնը չգաղտնել այն ընդարձակ և հանդամանորէն զբաժ հերքման առիթով, որ Հալոց բարեգործական ընկերութեան Երևանի ճիւղի Նախկին վարչութիւնը, խնձին նորա նախագահ Գէորգ Ղարաջեանի, անդամներ Հռիփսիմէ Տէր-Մկրտչեանի, Տիգրան Յակոբեանի, Սարգիս Ա. Ետիսեանի և Սիրական Տէր-Մարտիրոսեանի, տպագրել տւեց Մշակ լրագրում, ընդդէմ Մշակի «անկեղծ բարեկամ» Տիգրան Յովհաննիսեանի, որը նույն տեղում փորձել էր անուանարկել վիշալ վարչութիւնը: Տիգրան Յովհաննիսեան վստահացել էր մի վարչութեան, որը ընդամէնը 5 հոգուց է բաղկացած, դրամի և նորագործածութեան նկատմամբ, կասկածելի դարձնել հասարակութեան առաջ, վարչութեան անդամներից «մի քանիսի» մասին հրատարակելով անպատ անձերի անփաստ կարծիքը, թէ իբր նոքա «անվստահելի» են: «Մի քանիսը» չէր կարող 1-ը և 2-ը լինել, ալ առնւազն 3 հոգի, որ կ'անէր հին վարչութեան մեծամասնութիւնը. Տիգրան Յովհաննիսեան, ուրեմն, ակներև կերպով արատ էր դնում Նախկին վարչութեան վրա, առանց որ եւ է փաստի. մինչդեռ բանից զուրա և գալիս, որ վարչութիւնը հէնց ալ 1896-ին քոլոր նախորդ տարիներից ամենամեծ զործունէութիւնն է ցոյց տւել. մուտք ունենալով 7.000-ից աւելի ոտիւրի և բաշխելով ալդ. զումարը նպատակաւարմար եղանակով, առանց կորուստի:

Ալդ առիթով Մուրճի Երևանի թղթակցի մեզ գրած նամակից:

քաղում ենք հետևեալ տողերը. «Շատ ցաւալի է որ աչք տեսակ տիպեր են դուրս գալիս համայնարաններից և կեանքի մէջ մտնելով՝ վալը են գցում հասարակութեան առաջ ինտելիգէնտ, բարձրագոյն կրթութիւն ստացած առաջաւոր դասակարգի պրեստիժը»:

**ՀԱՋԻ ԱԿՈՒ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ**, որը Մակար կաթողիկոսի ծառան լինելով, գողացել էր հանգուցեալ կաթողիկոսի թանկագին իրեղէնները և տոկոսաբեր թղթերը, Երևանի Նահանգ. դատարանի վճռով դատապարտել էր բանտարկութեան մի տարի և 3 ամիս ժամանակով և որոշեց որ դատապարտեալի մօտ գտնւած թանկագին իրեղէնները և 15.000 ռուբլւ տոկոսաբեր թղթերը վերադարձնեն Ս. Էջմիածնի վանքին: Գործը, դատախազի բողոքի և դատապարտածի դանդաղորդման վրա, անցաւ դատաստանական պալատը՝ Թիֆլիս: Մեղադրւածը վախճանւած լինելով՝ պալատը քննեց միայն դրամական պահանջը, որ Էջմիածնացի վանքը հաշւել էր 30.225 ռ.: Պալատը հաստատեց նահանգական դատարանի վճիռը:

**ՎԱՆԵՑՈՑ ԾԱԾԿԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ**: Արձագանքի № 17-ում մի վանեցի՝ «Աղբար» ստորագրութեամբ, ծանոթացնում է «ճնճղկան» (ծտի), ազնաւալին կամ «կըռկներէն» կոչւած ծածկախօսութիւնների հետ, որ, ըստ Աղբարի, վանեցիք «կատարեւապէս սովորած են, որպէս զի փոքր մանուկներու ներկայութեան իրար կարողանան գաղտնիք չալտնել», և չուկապական ծածկախօսութեան հետ՝ որ գործ է ածւում տաճիկներից, քիւրդներից չհասկացելու համար: Որ լուսաւորութեան կենտրոններից հեռու ընկած վանում կարող են ծաղիկէլ աչքալսի ծածկախօսութիւններ—աչդ անքան զարմանալի չէ, բաց ասպհով պիտի լինել որ աչդալսի ծածկախօսութիւնները միայն զգւելի բաներ են:

**ԹԻՒՐԲԻԱՅԻ ՆԼՄՏԱՅՈՅՑԸ** 1897-ի համար հրատարակեց եւրոպական թերթերում դեռ ևս դեկտեմբերի վերջը. բիւջէտային տարին սկսում է մարտի 1-ից: Մուտք հաշւած է 18 միլիոն 500.000 ոսկի, ծախքը 82.000 ոսկով պակաս: Գլխաւոր խնայողութիւնը պէտք է լինի զօրքի ծախքերից. որոշւած է խաղաղութեան ժամանակ պահել 150.000 մարդ միայն, աչնպէս որ 220.000 զինուոր պէտք է տունները արձակէին:

**ԿԱՆԱՆՅ ԻՐԱԽՈՒՆՔԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ** նոր նւիրադործումն ստացաւ համալսարանների ժողովում (պարլամէնտ), ուր ձախների բազմութեամբ ընդունեց կանանց իրաւունք տալ պարլամէնտական ընտրութիւններին մասնակցել:

**ՄԱԴԱԳԱՍԿԱՐԻ ԹԱԳՈՒՂԻՆ** ֆրանսիական տէրութեան կարգադրութեամբ ուղարկւած է աքսոր Բուրբոն կղզին:

ՍԵՐՔԻԱՅԻ ԹԱԴԱՒՈՐԸ 18 փետր. եկաւ Բողարիալի մալրաքաղաք Սոֆիա՝ ալցելութեան Բողարիալի իշխանին: Ընդունելութիւնը ժողովրդի և իշխանի կողմից ջերմագին էր: Անկասկած է որ տեսակցութեան միջոցին խօսացել է համաձայնութեան մասին՝ թէ ինչ դիրք բռնեն քաղաքական ներկայ պարագաներում Յունաստանի և Թիւրքիալի վերաբերմամբ:

ՏՐԱՆՍԻԱՆԻ Նախագահ Կրիզէր ալցելեց Օրանժեան հանրապետութեան Նախագահին, Բլումֆոնտէնում: Այդ երկու հանրապետութիւնները հարաւային Ափրիկայումն են և ընդհանուր շահ ունին պաշտպանելու Անգլիայից, որի հարաւային Աֆրիկայում ունեցած մեծ կալածանքի (Կապլանդիալի) հարեաններն են: Կրիզէրը կամենում է երկու հանրապետութիւնների մէջ միութիւն հաստատել. Օրանժեան հանրապետութեան նախագահը ջերմագին խօսեց ալդ միութեան համար (Հեռագիր 1-ից մարտի):

† ՄԱՅԿՈՎ.—Ուռուաց տաղանդաւոր բանաստեղծը, վախճանեց Ներկայ մարտ ամսում: Նորա գրած քնիւրի նիւթն ու ողին հեռու էին ժամանակակից կեանքից և ալդ պատճառով Մալկովը քիչ է ծանօթ ընթերցող մասսային:

† ՄԱՆՍՈՒՐՈՎ, Նիկ. Ս., ինքնասպանութեամբ վերջ դրեց իւր կեանքին, փետր. 12-ին: Հանգուցեալը երկար տարիներ Նովոե Օբոդրենիեի, Ռուսկիեա վեդոմոստի՛ի և Կասպի՛ի և ալ թերթերի թղթակիցն էր Վլադիկաւկազում: Նորա թղթակցութիւնները ջոկում էին, բացի բովանդակութիւնից, նաեւ գրական արժանաւորութիւններով: Կուսելով տեղական նեղ պալմանների դէմ, նա վերջը չաղթեց, աւաւ իրան խմողութեան, և ընտանեկան անախորժութիւնների մէջ ինքը վերջ դրաւ իւր կեանքին:

#### ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

- 1) ԻՆԳՐԱՀԱՄ, Ի. Հ. պրոֆես.—Աղինալի Նամակները: Թարգմ. Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանի: 1897, Թիֆլիս, տպարան Մարտիրոսեանցի, գինն է 1 ռուբլի:
- 2) ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅ, Յովհաննէս.—Ժողովրդի ընթերցանութիւնը (Արտատպած «Մուրճ» ամսագրից): Թիֆլ, տպար. Մ. Գ. Ռօտինեանցի, գինն է 25 կոպէկ:
- 3) ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ, Ա. և ՌԱՇՄԱՅԵԱՆ, Տ.—Կենդանիների բնագիտ. հասկացողութիւնը: Հրատ. տիկ. Նզիսարէթ Արամեանցի: 1897 թ., Ալեքսանդրապոլ, տպ. Գ. Սանդեանի, գինն է 8 կոպէկ:
- 4) Ք. Ա.—Բուսերի կեանքը (ըստ Ֆիզիէլի և Տիմիրեազեւի): 1897 թ.,

Պետերբ., տպ. Լիբերմանի (հրատ, Պետերբուրգի հալ ուսանողների).  
գինն է 8 կոպէկ:

- 5) ԲԱՐՍԱՄԵԱՆ, Բ.—Կալքերի փոխադարձ ապահովագրութիւնը կրակից  
և ալդ սպահովագրութեան առաւելութիւնները և օգուտները: (Հր.  
Թիֆլ. փոխ. ապահ. ընկ. վարչութեան): 1897 թ., Թիֆլ. տպարան  
Մ. Վարդանեանցի:
- 6) ԲՈՉՈ, Արման, փոխադր. Վրուրի.—Մկնիկը (La souris). Վոդուիլ  
մէկ արարածով: 1897 թ., Բաքու, տպ. Արօր. գինն է 20 կոպէկ:
- 7) ԱՆՆԵՆՍԿԱՅԱ, Ա.—Դասընկերներ. (պատանիների ընթերցանութեան  
համար): Ռուսերէնից թարգմ. Կ. Գիւլնազարեանց, Հրատ. Թիֆլիսի  
Հալ. Հր. ընկ.:—1897, Թիֆլիս, գինն է 50 կոպէկ:

#### ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՂ:

Արմաւիր: Պր. Հմ. Մաթինեանց, Ստացանք Ձեզնից պատճէնը  
ալն Նամակի, որ ուղարկել էիք Մշակ'ին, որը զրպարտիչ լեզուով  
լալտնել էր թէ հալ փախստականների մասին անցեալ անգամ մեր  
հաղորդած բոլոր լուրերը Երևանից, Ագուլիայից, Արմաւրից, Շուշուց,  
Մոսկուայից և ալլն, ալն էլ ամբողջապէս, Մշակ'ից քաղած լինէինք,  
չնայած որ մի քանի տեղերի նկատմամբ մենք յիշել էինք մեր թղթա-  
կիցներին: Դուք կամեցաք հերքել ոչ թէ ալն, ինչ Արմաւրին է վերա-  
բերում,—և տեսաք որ Մշակ'ը ալդ հերքումը չտպեց, ալլ բաւականա-  
ցաւ մի մութ, հեռու ընթերցողների համար անհասկանալի ակ-  
նարկով, ալն էլ «պատասխանների» մէջ: Նույնը կը պատահէր եթէ  
հերքումներ եկած լինէին Նաև ալլ տեղերից: Ներկալ զէպքում միակ  
Ձեր քալլն էլ բաւական է:

Խուսմուք Երիտ. ընթ. ընկ.—Ձեր ուղարկած թղթադրամ 33  
ռուբլուց չանձնեցինք եւթ խմբագրութիւններին ինչպէս գրած էիք:  
Մուրճի համար մնում էք պարտ 3 ռուբլի:

Ժընև: Պր. Յ. Տէր-Գէորգեան. Սպասում ենք Պուշկինի «Պալ-  
տաւա» պոէմալին և Օոսիանի պոէմալին: Աֆրէդ զը Միւսէի «Մա-  
լիսեան գիշեր» պոէման ստացանք: Ի դէպ, «Բաղմալէպ»-ի մարտի  
համարի մէջ, որ նոր ենք ստացել, կալ Օոսիանից մի թարգմանու-  
թիւն:

# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

## I

### Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

Թիֆլիսից-Բաքու. ա) ելք—1 ժ. 10 ր. օրւայ, հասնում է Բաքու—7 ժ. 30 ր. առաւ. բ) ելք—10 ժ. 50 ր. երեկ. հասնում է Բաքու—4 ժ. 49 ր. օրւայ:

Բաքուից-Թիֆլիս. ա) ելք—2 ժ. 30 ր. օրւայ, հասնում է Թիֆլիս—8 ժ. 21 ր. առաւօտ. բ) ելք—11 ժ. 5 ր. գիշերւայ, հասնում է Թիֆլիս—5 ժ. 50 ր. գիշերւայ:

Թիֆլիսից-Բաթում. ա) ելք—9 ժ. 10 ր. առաւ., հասնում է Բաթում—9 ժ. 45 ր. գիշերւայ. բ) ելք—6 ժ. 50 ր. երեկոյեան, հասնում է Բաթում—8 ժ. 15 ր. առաւօտեան:

Բաթումից-Թիֆլիս. ա) ելք—9 ժ. 40 ր. առաւ., հասնում է Թիֆլիս—9 ժ. 55 ր. երեկոյեան, բ) ելք—11 ժ. 20 ր. գիշերւայ, հասնում է Թիֆլիս—12 ժ. 25 ր. ցերեկւայ:

## II

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ԽՃՈՒՂՈՎ, ԹԻՖԼԻՍԻՑ ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ  
ԳՆԱՑՈՂ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից—Հինգ տեղով կառքեր. ա) Դուրս է գալիս առ ժամը 7-ին, գիշերում է Մլէթում և միւս օրը երեկոյեան ժամը 6-ին հասնում է Վլադիկաւկազ: բ) Դուրս է գնում առաւ. ժամը 9-ին, գիշերում Պասանաուրում և միւս օրը գիշերւայ ժամը 8-ին հասնում է տեղ:

Վեցտեղով հանրակառքեր (օմնիբուս) գնում են երկու անգամ, առանց գիշերելու, ա) 9 ժ. 30 ր. առաւօտ և բ) 7 ժ. երեկոյեան: Հասնում են Վլադիկաւկազ, առաջինը՝ միւս օր 12 ժ. օրւայ և երկրորդը՝ 8 ժ. 50 ր. երեկոյեան:

ՎԼԱԴԻԿԱՆԿԱԶՈՅ—Հինգ տեղով կառք. ա) Գուրս է զալիս առաւ. 7 ժ., զիշերում է Մէթ, հասնում է Թիֆլիզ միւս օրը երեկոցեան 6-ին. բ) Գուրս է զալիս ժամը 9-ի ն, զիշերում է Գուրսուր, հասնում է Թիֆլիզ միւս օր ժամը 7-ին երեկոցեան:

Վեց տեղով հանրակառք. երկու անգամ, առանց զիշերելու, ա) առ. ժ. 10-ին և բ) երեկ. ժ. 7-ին. հասնում են Թիֆլիզ. առաջինը՝ միւս օր առ. ժամ 11-ին առ., երկրորդը՝ ժամը 8-ին երեկոցեան:

Գնեցին նաւ. Կառքի ներսում իւրաքանչիւր անձի համար 19 ռ. 60 կոպէկ: Կառքի կից կարբիօլետում՝ 13 ռ. 20 կ. կառապանի մօտ՝ 5 ռ. 40 կոպէկ:

Մէթի կայարանում գտնւում են ամեն կառքի համար մանուկների և կանանց համար առանձին համարներ զիշերելու՝ առանց վարձի, իսկ տղամարդիկ կարող են զիշերել ընդհանուր սենեակում կամ վճարելով՝ մասնաւոր համարներում:

## „Ա Ր Յ Ր Ի“

Պատկերազարդ սեղանի օրացոյց 1897 թ.

«Արօր» տպարանի հրատարակութեամբ լոյս տեսաւ սեղանի պատկերազարդ օրացոյց, 1897 թ.: Բացի օրացոյցի մասից և զանազան վիճակագրական տեղեկութիւններից օրացոյցը ունի և հարուստ յաւելւած:

Գինը ծանապարհածախքով 1 ռուբլի:

Դիմել՝ Բագու, տպարան «Արօր»:

Միամսեալ պատկերադարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար:

Պատկերադարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար:

## Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՂԲԻՒՐԸ լուս է տեսնում իւրաքանչիւր ամիս 2—3 թ., տարեկան 12 №№:

ՏԱՐԱԶԸ լուս է տեսնում ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1—2 թերթ. տարեկան 48—50 №№:

**Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ.** Մանկավէպ, Զրոյց, Հէքիած, Ճանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն: Գիտութիւն եւ արեւստ: Նոր լուրեր: Այլ եւ այլք: Զուրմալիք: Մանկական, Ֆրեթբլեւսն, շախմատի եւ այլ խաղեր, Ռերուսներ, Քաղաքական խընդիրներ, Անեկդոտ, Հանելուկ, Նրդեր նոտաներով:

**Բ. ԲԱԺԻՆ.** Կրթութեան եւ դաստիարակութեան վերաբերեալ յօդածներ եւ տեղեկութիւններ: Առաջարկութիւններ: Խորհուրդներ: Մատենախօսութիւն եւ նոր քեր: Խառն լուրեր: Պատասխաններ: Յայտարարութիւններ:

Գեղարեստ եւ գիտութիւն: Պատմական, Ժամանակակից վէպեր, պատկերներ, Քատրոնական գրածքներ: Բանաստեղծութիւն: Քենսագրութիւն: Կենսագրութիւն: Կար, ձեւ, ձեռագործ եւ առն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային, արդիւնագործութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկած: Նրաժշտութիւն եւ Քատրոն: Լուրեր, տեղեկութիւններ: Յօդածներ եւ այլն: Ֆելիտոն, ծաղր, առակ եւ կատակ: Շախմատի եւ այլ խաղեր: Ռերուս: Հարցեր: Խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուրհանդակ: Յայտարարութիւններ:

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ խմբագրութիւնը անմիջական և սերտ չարաբերութիւն ունենալով Ներդաշնակ կլիշէ պատրաստող Նշանաւոր գործարանների հետ, արդէն կարելի է դարձրել բաւական արագութեամբ սպագրել օրաւ հարցերի, դէպքերի հետ համարեա զուգընթաց և նրանց վերաբերեալ նկարներ, տեսարաններ, պատկերներ: Բացի այն՝ որ ՏԱՐԱԶԸ ընթերցանութեան շատ նիւթ է տալիս բեւեռութիւնակալից, պակաս էջեր չեն զարգարում և կրիտիկական լօղածներով:

ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ միեւնոյն հասցեով 1897 թ. ստորագրողը իրաւունք ունի 1 ռ. ուղարկելով ճանապարհածախս՝ ստանալ Տարազի № 1-ի հետ. 1) Միքաէլ Նուրանդեանի (խկական եւ վերջին ֆոտոգրաֆիայից) մեծագիր գրաւիւր: 2) Մարիկի ննջարանում, շքեղ խրոմօ, 3) Հարեմի աղջիկ, ղլօգրաֆիական պատկերները:

Բացի այդ իւրաքանչիւր ամիս եւ Պարիզի մոդաներ:

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ռ. (արտասահման 4 ռ. կամ 12 ֆր.) ՏԱՐԱԶԸ 6 ռ. (արտասահման 10 ռ. կամ 30 ֆր.):

Հասցէն՝ Редакция „Арбура“ կամ „Таразъ“ Тифлиса. Rédaction des journaux „Agbur“ et „Taraz“ Tiflis (Caucase).

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

**ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ**

|     |                                                                                               |                               |      |
|-----|-----------------------------------------------------------------------------------------------|-------------------------------|------|
| 1.  | ՊՈՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ՅԵՅԵՐ» (վէպ). . . . .                                                         | 1                             | —    |
| 2.  | ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (ՂԶԼարցի)՝ «Մանուկների մարտողութ. գործարանների հիւանդութիւնները» . . . | —                             | 05   |
| 3.  | ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս.—«ԽԵԻ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկե-ների կեանքից . . . . .                          | 1                             | —    |
| 4.  | ԼԷՅ.—«ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ). . . . .                                                                | —                             | 50   |
| 5.  | Մ.—ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս.—«ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ», (Կեանքից պատկեր). . . . .                         | —                             | 40   |
| 6.  | ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ԱՅՅ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ».                                                   | —                             | 60   |
| 7.  | ՊՈՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ԲՂԴԵ», վէպ . . . . .                                                          | 1                             | 20   |
| 8.  | ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.—«ԽԱԹ-ՍԱԲԱ» (հայ բողան. կեանքից                                                  | —                             | 15   |
| 9.  | ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԼԻՆ Մ.—«ՀԵՂԻՆԵ» (մեծ վէպ), ա. մասը                                                | —                             | 50   |
| 10. | »                                                                                             | բ. մասը                       | — 75 |
| 11. | ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, Յ.—«ՍԵՒ-ԼԵՌՆՅԻՔ» (տոհմագ. պատկ.)                                                | —                             | 15   |
| 12. | ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵԲՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ».                                                            | —                             | 03   |
| 13. | »                                                                                             | «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ».                 | — 03 |
| 14. | »                                                                                             | «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ» . . . . .       | — 03 |
| 15. | »                                                                                             | «ԾԱՆՐ ՔԱՐԸ» . . . . .         | — 03 |
| 16. | »                                                                                             | «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ».             | — 03 |
| 17. | »                                                                                             | «ՄԵՐ ԻՆԶԸ ԿԸ ՊԱԿՍԻ» . . . . . | — 03 |
| 18. | ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ.—«ԲՈՅՍՅԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ» . . . . .                                                | —                             | 15   |
| 19. | ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈԻԷԼ.—«ՄԻԿՐՈԲՆԵՐԸ» . . . . .                                                     | —                             | 10   |
| 20. | ՄԱՆՁԻԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ԶԱՍԱՐԻՆԵՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ».                                                   | —                             | 10   |
| 21. | ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ.—«ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ» . . . . .                                                 | —                             | 15   |

22. ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ». . . . . — 20
23. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊԵՆՈՏԻՍՄ», Մասն ա. . . . . — 50
24. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ՏԻԳՐԱՆՈՒՀԻ». . . . . — 50
25. ՇԻՐՎԱՆՁԱԴԷ.—«ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ». . . . . 1 50
26. ՍԵՆԿԵԻԶ, ՀԵՆՐԻԿ.—«ԱՌԱՆՅ ԴԱԻԱՆԱՆՔԻ». . . . .
27. ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ.—«ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՌ ԴԷՊՔԵՐԸ»,
28. «ԱԴԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԱՆԴՐՈՒՆ», յառաջաբանով  
և ընթարցթեամբ ՎՐՈՅՐԻ . . . . . — 20
29. ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺ. Վ.—«ՀԻՊԵՆՈՏԻՍՄ», մասն բ. . . . . — 50
30. ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԷՈՐԳ.—«ԲԱՆԻՈՐԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՅՈՒՄԸ  
Արևմտեան Եւրոպայում և Ռուսիայում». . . . . — 50
31. ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԴ.—«ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿ. ԻՐԱԻ.  
ՀԻՆ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ». . . . . — 40
32. ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.—«ՏՈՒՐԻՍՏԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՅ» (պատ-  
կերներ) . . . . . — 40
33. ՇԱՆԹ.—«ԴՈՒՐՍԵՅԻՆԵՐ», Վէպ. . . . . — 50
34. » «ԵՐԱԶ ՕՐԵՐ». . . . . — 40
35. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅ, Յ. - «ԺՈՂՈՎՐ. ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ», — 25

## ՓՈՏՈԳՐԱՓԻԱ ՅՈՎ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ

Բացւած է 5-ից մայիսի 1896 թ.

Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Զուբալովի, № 8

Աշխատակիցներ Ս. Պետերբուրգից: Ամենակատարելագործւած ապ-  
պարատներ ԴԱՄԷՅԵՐԻ և ՐՈՍՍԱ:

## ФОТОГРАФИЯ И. БАШИНДЖАГІАНЪ

Открыта съ 5-го Мая 1896 г.

На Головинскимъ проспектъ, въ домъ Зубалова, № 8.

Сотрудники изъ С. Петербурга. Самые усовершенство-  
ванные аппараты ДАЛЬМЕЙЕРА и РОССА.

0  
0  
0  
0

0  
0

0

0

0

0

0

0

0

0

0

0


0

0

0

0

0



ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻՒԿԱՆԻ ՀԱՍՍՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ տարեկան 10 ռուբլի, կամ 30 ֆռանկ:  
ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Վելեամինեան փողոց, տուն № 8: Այլ քաղաքներ.  
րից՝ Тифлисѣ. Въ Редакцію журнала „МУРЧѢ“. *Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue*  
„MOURTCH“. և կամ հեռուստալանձերին.

ԲԱՔՈՒ—պ.պ. Ֆրիդրիխ Մարդանեան՝ Հ. Միլիբեանի զրասենեակ:  
ԲԱԼՍԻԱՆԻ.—պ. Մկրտիչ Էհրամձեան:  
ԲԱԹՈՒՄ—պ. Սարգիս Մակաչեան և պ. Ալեքս. Խոջամիրեան:  
ԵՐԵՒԱՆ—պ. Գեորգ Ղարաջեանց:  
ԿԱՐՍ—պ. Աբել Ասրեսեան:  
ԱԽԱԼՔԱԼԱՔ.—պ. Զաւար Տէր-Գրիգորեան:  
ՆՈՒԻԻ.—պ. Աբրահամ Բուսիաթեան:  
ՂԶԼԱՐ—պ. Ստեփ. Սողոմոնեան:  
ՆՈՐ-ՆԱԻԻՋԵԻԱՆ.—պ. Յովհ. Տէր-Միրաքեան:  
ՄՈՍԿԻԱ—պ. Ալեքսանդր Մատուրեան:  
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—պ. Քրիստ. Բաշինջաղեան:  
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—պ. Ալեքս. Յովսէփեան, Ռէշտ, անգլիական բանկում: